

ԳԱՄԻԼ ՖԼԱՄՄԱՐԻՈՆ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԱՆՀՈՒՆԵՆ

ԼՈՒՄԵՆ

Թ ա Ր Գ Վ ա Ն Ե Գ

ԵՐ. ԽՈՐԱՍԱՆ

ՅԿ

Ֆ-68



*Donated
to the*

*St. Nerses Shnorhali Library
of
The American Prelacy*

by

MR. AND MRS. KARL SOGHOIAN
of

DETROIT, MICHIGAN

Տպագրութեան միջոցին դժբաղսաբար տեղի
ունեցած ԳԼԽԱԻՈՐ վրիպակաց ցուցակը՝ յար-
գելի ընթերցողներէն, նկատի առնուիլը ջերմա-
պէս կը խնդրուի:

Ֆ-68 97 JUL 2011
Վանահանրագրի Մասնաճար 4. Ս. ԲԻՐԱՏ ԹԻՒՆՑ

ԳԱՄԻԼ ՅԼԱՄՄԱՐԻՈՆ

ԴՈՒԱԳՆԵՐ ԱՆՉՈՒՆԵՆ

Լ Ո Ւ Մ Ե Ն

ՀՈԳԻՈՅ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՓԻՍԱԿՈՐԻ ՄԸ ՊԼՏՄՈՒԹԻՒՆԸ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՒ ՅԱՒԻՑԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԹԱՐԴՄԱՆՆՑ Ի ՀԱՅ ԼԵԶՈՒ

Ի ԳԻՏԱԿՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳԻՆ ԵՒ Ի ՄԱՍՆԱԿՈՐԻ

ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՍԱՆՈՒՑ

ԵՐ. ԽՈՐԱՍԱՆ

Տպագրիչ—Հրատարակիչ Ա. Լադիյանի Ա. Բիւրոս
Կ. Պոլիս Առլթոն Համալ Մօլա Թաշը Թիւ 31

1913

ՍՈՒՐԵ ՆԵՐՄԵՍ ԸՆՈՒՂԱՆ
ST. NERSES SHNORHALLI
LIBRARY
ԳՐԱԳԱՐԱՆ

Ան՝ յայտնիք ի մտնս
Սիւնոս Գրոց Էջի Սիւնոս
Սիւնոս Գրոց Էջի

Ամեն հրատարակութեան իրաւունք վերապահ-
ւած է քարգմանչին, որուն կնիքը չկրօյ օրհնակ-
ները անվաւեր են :

Եր. Բազում

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԱՆՇՈՒՆԷՆ

ԼՈՒՄԷՆ

ՊՍՏՂԱՐՍՇԻԱԿԱՆ ԱՆԴԷՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

06 SEP 2013

7633



29.10.2011



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Ն

Ի հին ժամանակաց տիեզերագրական կամ աստղաբաշխական ուսումը՝ միշտ և մի միայն բարձր անձնուսուրութեանց յատուկ գիտութիւն մը եղած է զժրագրարար, իր դժուարին և ծանր, չոր ու ցամաք և կնճռոտ հաշուց և բազմատեսակ հետազոտութեանց և երկարատեւ դիտողութեանց կաթուր ըլլալուն պատճառաւ. սովորական մահկանացուաց համար ուշադրութենէ զուրկ և նոյն իսկ անհետաքրքիր կացութեան մը մէջ թաղուած է, այն աստիճան՝ որ ընդհանրապէս, երբ աստեղալից երկնից երեսը նայինք, այդ սքանչելի տեսարանը՝ ամենակատարեալ անտարբերութեամբ մը կը դիտենք և միայն երբեմն ինչ գեղեցիկ երկինք է ըսելէն անդին չենք անցնիր, այս մասին գէթ ամենահնչին խորհրդածութիւն մը կամ անդրադարձում մը իսկ չընկրով:

Յիրաւի շատ ցաւալի է այս: Երկնակամարին ուսումնասիրութիւնը ամենակատարեալ զրական և ընական գիտութեանց գերագոյնն է՝ որ մարդս իր էութեան, մտաց և հոգեկան կարողութեան բուն նպատակին բարձրութեանը կը հասցնէ: Դժբաղդարար, գրեթէ աշխարհիս ամեն կողմը, այս ուսումը՝ ինչպէս որ պէտք էր ընդհանրացնել և ուսուցանել, այդպէս չ'ուսումնասիրուիր, գրեթէ

կատարելապէս զլացուած է, մանաւանդ մեր հայկական կրթարանաց մթնոլորտին մէջ բոլորովին անգոյ է:

Այս անտարբերութեանը պատճառ՝ մեզի բնական երեցած ամենօրեայ երեւոյթները՝ սովորական, աննշան, անկարեւոր և ուշադրութենէ զուրկ բաներ նկատելնիս եղած է:

Այս զիտութիւնը նուազ հետազօտութեան և անհետաքրքրութեան առարկայ եղած է, որովհետեւ մեր նախապաշարունակներն ի ծննդէնէ անտի աւստպելական և անտեղի պատմութիւններով մերակաջները խլացուցած և անդգայ դարձուցած են. ա՛յ աւելի զօրաւոր պատճառ մ'ալ սա է թէ՛ (ցաւօք սրտի յառաջ կը բերենք) այդ ուսումը՝ նիւթական և շօշափելի հասոյթ մը հայթաթող հանգամանքէ զուրկ է:

Մի միայն երբ աստղարաչխք, այս կամ այն գիտաւոր աստղին՝ այս ինչ ժամանակին երեւումը և կամ այս ինչ օր՝ Արեւու կամ Լուսնի խաւարման տեղի ունենալը, լրագրաց միջոցաւ, հրատարակելու ըլլան, այն ժամանակ մարդկանց ամենափոքր մի մասը ժամանակաւոր կերպով, տղայական հետաքրքրութեամբ մը միայն կը գոհանայ, առանց այլ ևս այդ երեւմանց վրայ անդրադառնալու իսկ թէ՛ ինչ են ատոնք և ինչ է այդ երեւմանց և այդ դէպքերուն պատճառը:

Զիմ վարանիր նաև ըսելու թէ՛ կան մտրդիկ ալ, նոյն իսկ գիտնական և խելացի կարծեցեալներ, որ երգիծարանօրէն, կամ նոյն իսկ հեզնական ոճով՝ «Ինչէ՞ն գիտցեր են այս ինչ գիտաւորին»

երեւումը կամ արեւուն խաւարումը, այդ բաները միթէ կարելի՞ է գիտնալ. ատոնք պարա՛պ խօսքեր են, մարդուս փորը չեն կշտացներ» կ'ըսեն և կատարեալ յերիւրանք ենթադրելով՝ ծագու նշաւակ կ'ընեն. աւա՛ղ... իրենց սոսկալի տգիտութեան և աններկի յուսախաբութեան ասպայցը ստղով այսպէս:

Այս բարձր և միանդամայն օգտակար զիտութեան ուսումնական դժուարին և հաշուական կնճառ մասը՝ որ սովորական մահկանացուաց համար զիւրաւ հասկընալի չէ, զանց առնելով, Տիեզերագրական զիտութեան և աստղային դրութեանց նկարագրականը ժողովրդականացնելու բաղձանքով, Ֆրանսայի փաստց թագին ակունքներէն մին, հանրածանօթ աստղարաչխ Պ. Գամիլ Յլամմարիտն, որ միանդամայն քաղցրալիզու քաջ գրագէտ և իմաստասէր մըն է, իր բազմաթիւ գրուածոց մէջ՝ այնպիսի հեշտ և զիւրահասկընալի սճով, այդ սքանչելի բարձր ուսումը՝ ամենապարզ և զուտրճալի կերպով կը ներկայացընէ որ հետաքրքրաշարժ ըլլալով հանդերձ՝ ինքնաբերաբար շինիչ և հրահանգիչ հանգամանք մը ունի:

Իր բազում գրուածոց մէջ, ունի վիպածև գրութեան հատոր մը Լուսնի վերնագրով որ կը պարունակէ երեք մասեր: Առաջինը, Հոգւոյ մը՝ իր մահէն վերջ իր հոգեկան վիճակին և տիեզերաց մէջ, լուսոյ ճառագայթից միջոցաւ, տեսած սքանչելիքներուն պատմութիւնը կ'ընէ: Երկրորդ, միշտ գիտական սահմանին մէջ մնալով, տիեզերաց անհունութեան մէջ թափառող Գիտաւոր

աստղի մը՝ աշխարհիս Ասեղծագործութեան քայլ առ քայլ և դանդաղաբար յառաջացման և մեր արեգակնային գրութեան կազմակերպութեան պատմութիւնը և նկարագիրը ընկ կուտայ անոր քոյր մանրամասնութիւններովը:

Ուրիշ երրորդ մաս մ'այ կայ Անհունութեան մէջ վերնագրոյն տակ, որուն մէջ, միշտ գիտական սահմանի մէջ, Ոգիի մը ըրած յայտնութիւնները յառաջ կը բերէ, ամբողջ տիեզերաց՝ միշտ և անդադար շարժման մէջ գտնուելուն և անհամար և զանազան աստղային գրութեանց հետզհետէ ձեւացման և քայքայման ու վերստին կազմութեան և ժամանակին անվերջ ու յաւիտեակից ըլլալուն, և մարդուս Հոգւոյն՝ անեղծ և յաւիտեան անմահ մնալուն վրայ կը ճառէ:

Այս վիպածն գրութեան հատորը՝ հետաքրքրաշարժ և միանգամայն կրթիչ, գիտական հեղինակութիւն մը ըլլալով, փափագեցանք, ըստ կարի, թարգմանելով ի լոյս ընծայել, յօգուտ ուսումնասէր մերազնէից և ի բարձունս նախապաշարմանց:

Դիտողութիւն մը. —

Ամեն իրողութիւն կամ գրութեան կամ աստղագրութեան, իրենց մէջ, միշտ երկու իմաստ կը պարունակեն. մին իր արտաքին ձեւը, սճը, նիւթականութիւնը կամ պատմութիւնն է՝ որ կրնայ հաճելի ըլլալ կամ ո՛չ, և անհամ բան մը նկատուիլ. իսկ երկրորդը՝ անոր բնագանցակից թաքուն ու խորին իմաստն է՝ որ միայն լուրջ քըն-

Տութեամբ և հետազօտութեամբ կրնայ ի լոյս գալ. այս վերջինն է բուն իրողութեան կամ գրութեան թաքուն նպատակը, որ շատ անգամ կը վրիպի հարեւանցի նայուածքէ մը:

Հեղինակները՝ երբ գրութեան մը կը հրատարակեն, շատ անգամ ուղղակի իրենց թաքուն գաղափարը չեն արտայայտեր. վասն զի՝ շատ չոր և գուցէ մէկէն ի մէկ անըմբռնելի և անմարտելի կրնան ըլլալ, այլ պատշաճաւոր հիւսուածքով՝ ըլլա՛յ նոյն իսկ վիպական ձեւին տակ, կամ բանասեղծական սճով, և ապացոյցներով և աստղագրութեան զարգացումով, կ'ուզեն անոնց ներքին իմաստը թափանցել տալ բնթերցողաց և այն ալ մի միայն անոնք կրնան ըմբռնել՝ որ կը հաճին հիմնովին ուսումնասիրել, և այն ժամանակ քանի՛ հետազօտեն՝ այնքան այն գրութեան թաքուն իմաստին և ճշմարտութեանց վերահասու կ'ըլլան:

Եւ անոս այդպէսով, հեղինակը իր նպատակին հասած կ'ըլլայ հանրութեան մատուցած ծառայութեամբը:

Ուստի, այս գրութեան հետեւող ուսումնասէրներուն ուշադրութիւնը պէտք է զբաւէ՝ ո՛չ թէ նիւթական պատմութիւնը և ձեւը, որ ինքնին կրնայ մտքի հակասակ գալ (թէ և ըստ ինքեան այնպէս չէ), այլ անոր բնագանցակից եռթիւնը, որով ցոյց տալ կ'ուզուի թէ՛ մեր այս աշխարհին զրոյս գիտցածը, ոչինչ է բաղդատմամբ տիեզերաց ամբողջ արարչագործութեան մէջի բնութեան կրթութեան և անցուղարձին: Վանդի, ինչպէս պիտի

տեանուի գրքին ուսումնասիրութեամբը, մարդու-
կարողութիւնը՝ այս աշխարհիս կազմակերպու-
թեանը համեմատութեամբ ստեղծուած է: Բնու-
թեան մէջ պէտքիսութիւնք անհամար և անսահ-
ման են, մինչ երկրաւոր մարդկային տկար իմա-
ցականութիւնը կարող կ'ըլլայ երեւակայել իրմէ
տարբեր աշխարհներ, կեանքեր և ձեւեր, միթէ
կարելի է ենթադրել որ՝ Գերագոյն արարչագործ
Իմացականութիւնը՝ ի յաւիտենից անտի մտածած
ու գոյացուցած չըլլայ զանոնք, ինչպէս Եզնիկ
Կողբային շատ գեղեցիկ ըսած է. «Ու ամն ի չղոյե-
ի գոյ զչղոյսն»:

Ուստի, ուսումնասէր ընթերցողք պէտք չէ
կառչին մի միայն պատմութեան ձեւին և պար-
զած դէպքերուն:

Այս գրութիւնը՝ ո՛չ միայն ներքին թաքուն
գաղափարներ կը պարունակէ, այլ գիտութեան
գաղանհաց վրայ աճողին տեսութիւններով,
կ'ուսուցանէ և կը պարզէ իր միտքը:

Հեղինակը Ֆրանսայի ըլլալով, իրր աւարկայ
իր պատմած վէպերուն՝ Ֆրանսայի պատմութեան
դէպքերն ի մէջ բերած է բնականորար, և անով
կը բաւականանայ իր նպատակին հասնելու և
էութիւնը բացատրելու համար:

Ինչպէս պիտի տեսնեն ընթերցողք՝ հեղինակը
Լումեն (Lumen լատիներէն Լոյս կը նշանակէ)
ծածկանուան տակ մ.արմնա լեքծ հոգի մը խօսեցը-
նել կուտայ, հարց-պատասխանի ձեւին տակ, ի
կեանս եղող և խնդրող կամ հարցնող նշանակող
(Quaerens խնդրող) անձի մը հետ, և սրովհետեւ

մեր Հայոցս մէջ խնդի յորջորջումը բաւական գոր-
ծածական է, յարմար դատեցինք փոխանակ խընդ-
րողի խնդիր անունը գործածել, մարմնագլեքծ հոգ-
ւոյն ծածկանունը միշտ անփոփոխ Լումեն պահելով:

Թարգմանիչ

ԵՐՈՒԱՆԴԻ ԽՈՐԱՍԱՆ

Բերս, 10 Յուլիս 1912

Ն Ա Խ Ա Բ Ա Ն
Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Յ Ե Ա Ն

Այս հրատարակութեան նպատակն է՝ անհուն-
անսահմանութեան մէջ՝ երկրիս բռնած տեղը և
ՎԱՐԿՈՒՍ՝ տիեզերաց ու յաւիտենական կենաց մէջ՝
ունեցած դիրքը ծանուցանել :

Այս գիրքը «Բազմաբիւն բնակեալ աշխարհայ»,
անուն գրքին և նոյն հեղինակին ձեռնարկած այլ
և այլ երկերուն շարունակութիւնն է : Գիտու-
թեանց գերագոյնն հզօղ Ասաղաբաշխութիւնը՝
այսօրուան օրս չբաւականանար՝ անգործ (inerte)
նիւթին դատարկութեան մէջ ունեցած շարժում-
ները ցոյց տալով միայն՝ այլ միջոցին մէջ տա-
րածուած միւս աշխարհաց մէջի անսահման կեանքը
կը նախատեսէ : Ճշմարիտ երկինքը մեզի կը յայտնէ,
նոր փիլիսոփայութիւն մը կը հիմնարկէ, վերջա-
պէս մեզի կը սորվեցընէ թէ ի՞նչ ենք, ուսկի՞ց կու-
գանք և ո՞ւր կ'երթանք. թէ ի՞նչ է մեր ճակա-
տագրին վիճակը նիւթական և բարոյական աշխարհի-
զրութեան մէջ :

Հետեւեալ վէպերուն ձեւարկութիւնը՝ գուցէ
յանկարծակիի պիտի բերէ շատերը. թէպէտև ան-
ղընդոց եղերքը չրջենիս պարտկելու համար,
ճարտասանական նախազգուշութիւններ ձեռք
առնուած են, սակայն յայտնի է թէ՛ ընթերցող-
ներէն ոմանք երբեմն՝ աչաց շրտումով և խելա-
ցնորութեամբ, յանկարծ կանգ պիտի պռնեն :

Յիրաւի ներկայ երկին նիւթն ալ՝ ատոր կ'առաջնորդէ: Իմաստակ և արհամարհոտ ու խեռ ոգւոյ (esprit fort) տէր մարդն է միայն՝ որ կրնայ անտարբեր մնալ և չյուզուիլ անհուն անսահմանութեան հանդէպ, որ մեր ստից տակ կը պարզուի և որ կը յայտնուի անյեղիլ օրինաց ձեռամբ՝ որոնց բովանդակ ստեղծագործութիւնը կը հնազանդի:

Քանի մը տարի առաջ, այդ օրէնքներէն միջանկարծ՝ հեղինակին մտացը վրայ ազդած էր, յեղակարծօրէն անոր առջև այնպիսի հեռանկարներ պարզելով, զորս և ոչ իսկ մտքէն անցուցած էր, և որոնք իրեն բարեկամ աստղագիտաց և փիլիսոփայից և զրագիտաց ալ անձանօթ էին: Այդ հեռանկարները՝ նախ և առաջ շատ անհաւատալի և երեւակայական երեւցան իրեն, ինչպէս Ափրիկէի անապատին մէջ, պապակեալ կարաւանին տեսած այն կրկներեւոյթն որ՝ որքան յառաջանաս, այնքան կընկրկի առջեւէդ: Բայց ուշադրութեամբ անդրադառնալով անոնց վրայ և ուսումնական մեթոտով՝ ամենախիստ վերլուծումներ կատարելով, անոնց իրականութիւնը ստուգեց և խելամուտ եղաւ թէ՛ նիւթական աշխարհին ծանօթութիւնը կրնայ մեզի օգնել նոր աշխարհ մը ուսումնասիրելու՝ որ մինչև այս դարս, անըմբռնելի գերբնականութեան մէջ դասուած էր:

Հանրածանօթ պարբերական թերթ մը՝ այս վէպերը հրատարակեց, որոնք հետզհետէ հեղինակին մտքին մէջ ծնունդ կ'առնէին: Լրագրական յօդուածները՝ որոնց տնօրէն տուաւ այս հրատարակու-

թիւնը, և ատոր առաջին տպագրութիւնը, ցոյց կուտան՝ թէ նոյն իսկ գիտնական ընթերցողներ, մի միայն անոնց ձեւագրութեանը վրայ յենլով, երեւակայական խաղեր և աստղաբաշխական զուարճալիք նկատեցին զանոնք:

Ասանց հակասելու՝ ճշմարիտ է թէ պէտք և խիստ անհրաժեշտօրէն օգտակար է, աստղաբաշխական ուսումը ամէն մաքի մէջ թափանցել տալ՝ պատկերացնող լեզուաւ մը և նոյն իսկ խանդավառ և դիւբայտօղ սճով: Եւ անա՛ ինչ որ հեղինակը յաջողութեամբ կատարած է իր հրատարակութեանց մէջ. վասն զի գիտէ և կը պնդէ թէ տիեզերաց պարզ ծանօթութիւնը պէտք է անհրաժեշտ հիմ կազմէ ժողովրդոց կրթութեան և զաստիարակութեանը:

Բայց այս յայտադիրը իրականացնելով և հեռադիտակաց զօրութեան հասանելի և հաշուով չափուած, հեռաւոր սահմանաց մէջ. մտքի թռիչքով ճամբորդելով և աստղային գիտութեան նօքրագոյն գիւտերը յիշելով հանդերձ, դարձեալ այս հրատարակութեան նիւթը՝ պաշտօնական ուսուցման սահմանէն դուրս կը վտարուի:

Դիմում կ'ընէ արդ, այն բարձր հոգիներուն որք ինքզինքնին ազատ կացուցած են և գիտն ըմբռնել ընթան մեծամեծ ճշմարտութիւնները և կը սիրեն անոնց խօրը թափանցել: Արդարեւ սա իսկապիս գիտական ուսումնասիրութիւն մըն է, անհուն անվերջ Տիեզերաց մեջի յախտեցական կեանաց բնախօսական պայմանաց:

Եթէ՛ մէկ կողմանէ զրքիս պարզած տեսու-

Պ

թիւնները՝ տիեզերաց պատկերը ձեւայընելու կը ծառայեն, որք անխոնջ աշխատութեանց և երկնից վսեմ գիտութեան վրայ եղած փնտռութեան շնորհիւ արգիւնքն են, միւս կողմանէ փոյթ տարւած է՝ առաջարկեալ խնդրոց լուսաբանութեանը համար, ներկայել ժամանակակից բնաբանութեան խորին, լուրջ և հիանալի ուսումնասիրութեանց գրաւոր հաստիքը:

Այս յայտարարութիւնները ընելէ վերջ, հեղինակը ընթերցողին կը թողու ուսումնասիրել այս գիրքը առանց նախապաշարեալ մտքի ենթարկուած ըլլալու: Մինչև այսօր անլուծելի սեպուած խնդիրները լուծելու համար զբաղած ժամանակներս՝ ի հարկէ մեր հնօրեայ հաւատալիքներէն ու մանց անկուճը և կործանուճը պիտի տեսնենք:

Բայց սա՝ ամէն բանի ճակատագրին պայմանն է:

Յաստիցիմութիւնը չկրնար իրականանալ առանց փոփոխութեան: Հետվմայ հեթանոսական նախնի տաճարները սեղի տուին՝ աւելի մաքուր օրինաց սեղաններուն: Միջին դարու քարակիր եկեղեցեաց՝ այսօր յաջորդեց մասձութեան ըզձանքը, որ նիւթական գործէթներէն գեր ի վեր կը բարձրանայ, նոյն իսկ աստեղագաբղ Հաստուքեհեհ վեր և ազատարար թռիչք կ'առնէ դէպ թանհուն անսահման միջոցը, մեծ և ասուածային բնութիւնը նոյն ինքն նոր տաճարը կը կառուցանէ, ուր ստեղծագործ Հոգին իւր անքննելի զօրութեամբը ի յայտ կուգայ:

Ուրեմն, այսուհետև բարձրանանք այս վեհ

վերացումներուն մէջ: Երկրագունախ խափութիւնները և յեղաշրջումները պիտի կործանեն մարդկանց ձեռագործները. իսկ մեր հոգիները՝ մարմնոց և իրաց աւերակներուն ետեւէն պիտի երթան և միշտ ապրին հաստատ և անսասան յաւիտենականութեան մէջ:

Ի ուրբէի, յամի 1873:

2410-2011



ԼՈՒՄԷՆ

ԱՌԱՋԻՆ ԴՐՈՒԱԳ*

ՎԵՐԱԿԵՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Խնդիր. — Ո՛վ Լումէն, դու որ ինձ խօստացած ես քու վերջին շունչիդ յաջորդող օտարոսի ժամուն պատահած դէպքին պատմութիւնն ընել և ըսել թէ՛ ի՞նչպիսի բնական, բայց միանգամայն եզակի օրինօք կրցար անցեալը՝ ներկային մէջ տեսնել և թափանցել և վերահասու ըլլալ այնպիսի դաղանի խորհրդոց որք մինչեւ այսօր մթնութեան մէջ մնացած են:

Լումէն — Ս.յո՛, հնօրեայ բարեկամս, խօստմունքս պիտի կատարեմ: Ծնորդիւ մեր մէջ եղած երկարժամանակեայ յարաբերութեանց, կը յուսամ որ պիտի կարենաս հասկնալ, ինչպէս դու կ'անուանես, այդ «օտարոսի» երեւոյթը: Հիացումներ կան որոնց ազդեցութեանցը շատ դժուարաւ կրնայ զիմանալ մահացուներուն աչքը: Մահը՝ որ զիս ազատեց սկար և յոգնութեանց ենթակայ մարմնական զգացումներէն, դեռ իր ազատարար

* Գրեալ 1866.

ձեռքը կարկառած չէ քու վրադ. դու դեռ կը պատկանիս ողջերու աշխարհին: Այդ արքայական Սէն-Փաքի մենարանիդ մէջ առանձնանալովդ հանդերձ, ուր պիղծ ագէսը չգար զքեզ վրդովել խոկերուդ մէջ, և սակայն երկրային կենաց և անոր հարեւանցի և վարկպարազի զրազմունքներուն ենթակայ ես:

Մի՛ զարմանար երբ իմ գաղանի խորհուրդներս պիտի ծանուցանեմ քեզի, պիտի խնդրեմ որ աւելի եւս առանձնանաս արտաքին ազմուկներէն և հոգւոյդ կատարեալ բոլոր ուժովը ուշադրութիւնդ կեղբոսնացնես ինքզինքիդ մէջ:

Խնդիր. — Ո՛վ Լուսին, բարբ հոգւովս, բարբ մարմնովս քեզի եմ. և պիտի քննամ քեզ ունկնդրել և հասկնալ. խօսէ՛ ուրեմն տնվախ կիրպիւր և սասնց դարձուածքի և շնորհ՝ բրէ՛ ծանօթացընել զիս այդ անձանօթ ազդեցութեան, որ կենաց դադարման կը յաջորդէ:

Լուսին. — Ո՞ր կէտէն կուզես որ սկսիմ իմ պատմութեանս:

Խնդիր. — Եթէ կը յիշես դեռ, այն կէտէն որ իմ դողոցուն ձեռքերս քու աչքերդ գոցեցին. խնդրեմ, և երախտապարս կ'ըլլամ եթէ այդ կէտէն սկսիս:

Լուսին. — Ո՛հ մտածող տարրին ջգային յօրինուածէն բաժանուած հոգւոյն մէջ յիշատակ մը չթողուր, իբր թէ ուղեղի ապաւորութիւնը՝ որ յիշողութեան ներգաշնակութիւնը կը կազմէ, ամբողջովին չանհետանար. ուրիշ ձեւի մը տակ նորէն կազմուելու համար: Մահէն վերջը ինքնութեան

առաջին զգացումը՝ կը նմանի այն զգայնութեան որ կենաց մէջ, քունէ արթննալու ժամանակ, տառաւորուն տակաւ առ տակաւ ինքզինքին կուզայ մարդս զիշերային անընց ազդեցութենէն: Ապագայէն և անցեալէն հրապուրուած հոգին կ'ուզէ կատարելագէտ ինքզինքը դանել, միանգամայն կուզէ նուազեալ և անցեալ երազներուն խուսափուել ազդեցութիւնը ըմբռնել. դեռ իր ինքնութեան մէջ կը տեսնէ անսոց նկարներուն և եզբութեանց թափօրին անցքը:

Ինչպէս կենաց մէջ՝ մարդս՝ գերող երազներուն յետահայեցողութեան մէջ ընկղմած, իր աչքի կուպերուն գոցուելուն պէս, դարձեալ կը տեսնէ սեսիլքին շարունակութիւնը և տեսարանը կը կրկնուի, կերպով մը կէս քուն կէս արթուն միանգամայն, նոյն անընց մէջ կիյնայ:

Ահա՛ այսպէս ալ մեր մտածութեան կարողութիւնը՝ կեանքէն հեռացած ժամանակ, կը տատանի իրականութեան մը որ դեռ չըմբռներ և երազի մը միջև, մինչև որ դեռ ամբողջովին անհետացած չէ:

Այլ և այլ տպուորութիւններ իրարու կը խառնուին և կը ձուլուին. և եթէ եղծանելի զգացման մը տակ ճնշուած, աւաղէ այն երկիրը՝ ուսկից արտաքսուած է, այն ժամանակ անբացատրելի տըխրութեան մը կը մատնուի, որ մտքին վրայ կը ճընչէ, խաւարը կը պատէ զանի և յստակատեսութիւնը կը յապաղի:

Խնդիր. — Մահէն անմիջապէս վերջը՝ ունեցար այդ զգացումը:

Լուսմեն. — Մահէն վերջը... բայց մահ չկայ. այն դէպքը զոր դու այդպէս կ'անուանես, այսինքն հոգւոյն մարմինէն բաժանումը, ճշմարիտ ըսելով, անիկայ նիւթական ձեւի մը տակ չգործադրուիր՝ որ բազմաթիւ ըլլայ անջատ տարրերու քիմիական բաժանման, ինչպէս ֆիզիքական աշխարհիդ մէջ կը կատարուի: Այդ բաժանումը՝ որ ձեզի դժնդակ կերեւի, այնքան նշմարելի է որքան աղու մը ծնունդը իրեն զգալի կըլլայ: Մենք երկնային կենաց ծնունդ ենք, ինչպէս երկնային կենաց ծնունդ էինք նախապէս. միայն թէ այլ ևս հոգին մարմնաւոր չորերով փաթկուած չըլլայով՝ իր վիճակը և իր անձնաւորութիւնը աւելի արագութեամբ կը մտնէ: Կան որ իրենց մարմնաւոր կենաց մէջ՝ երբէք դէպի յերկինս վերացում մը ունեցած չեն և երբէք անձկութիւն մը ունեցած չեն սակղճագործութեան օրինաց թափանցելու, այդպիսիք՝ որք զեւ ընկճուած են մարմնաւոր ճաշակին առկ, երկար ժամանակ պղտոր և անգիտակից վիճակի ենթակայ կը մնան:

Բարերազգարտը կան աշխարհիներ այ՛ որ այդ կեանքին մէջ իսկ, իրենց թեւտար ըզձանաց վրայ կը թռին դէպի յաւիտեական գեղեցիկը, ահա այդպիսիք լրջմասթեամբ և զւարթութեամբ կ'սպասեն բաժանման ժամանակին, գիտեն թէ՛ յատջղիմութիւնը գոյութեան օրէնքն է և թէ՛ ասդեմակնէն աւելի բարձրագոյն անդեմակն կենաց մէջ պիտի մտնան. դէպի իրենց սիրտը յատջացող թմբութեան (télhargie) քայլ առ քայլ կը հետեւին և երբ զանդազ և անզգայի՞ յետին բա-

բախումը ևս կասի՝ արդէն իսկ գեր ի վեր կը գանսւին իրենց թմբալ մարմինէն և ազատելով մազնխական կապերէն, անձանօթ ուժէ մը մըղուած, շուտով կը տարուին արարչագործութեան այն կէտին վրայ ուր իրենց ըզձանքը, իրենց զգացումը և իրենց յուր վերինք կը քաշեն:

Խնդիր. — Քեզի հետ բացուած այս խօսակցութիւնը, սիրելի՛ ուսուցիչ, կը յիշեցնէ ինձ Պըղասոնի մէկ խօսակցութիւնը հոգւոյ անմահութեան վրայ, և ինչպէս Փետրիս (Phèdre) իր վարժապետին Սոկրատայ կը հարցընէր՝ նոյն իսկ այն օրը ուր Աթենացւոց ապիրատ վճռոյն հնազանդելու համար, մոլեխինդը պիտի ըմպէր, ես ալ նոյնպէս քեզի, ս'վ գու, որ այդ անհոգութիւն սահմանէն անցար, կը հարցընեմ թէ՛ ի՞նչ էական և իրական տարրերութիւն կայ հսկող և մարմնոյ մէջ, քանի որ սա կը մեռնի և առաջինը չմեռնիր:

Լուսմեն. — Սոկրատի պէս բնագանցական պատասխան մը չպիտի տամ և ս'չ ալ վարդապետական՝ ինչպէս կ'ընեն աստուածաբանները, այլ գիտնական պատասխան մը. վասն զի դու՛ ինչպէս ես ալ, կարեւորութիւն չենք ընծայեր այն իրողութեանց որ զբական մեթոտով հաստատուած չեն: Այդ, մարդ էակին մէջ, իրարմէ տարրեր, միանգամայն միացեալ, երեք սկզբնական տարրեր կան: Ա. մարմինը, Բ. կենսական ոյժը, Գ. Հոգին, այս կարգաւ կը նշանակեմ վերջինէն սկսող (à postèriori) մեթոտին հետեւելու համար:

Մարմինը մասնիկներու հաւաքում մըն է, որոնք իրենք եւս իրենց կարգին հիւլէներու ժո-

զովածոններ են: Հիւլէները՝ անշարժ, անգործ, անփոփոխ և անեղծ են: Մարդուս յորինուածքին մէջ՝ այդ հիւլէները շնչառութեամբ և սննդակաշտութեամբ թափանցելով, կը նորոգեն անդադար ըլլոր մարմնոյն հիւսքը (tissus) և անոնց տեղ ուրիշներ կը փոխանակուին և ապա կենաց ընթացքէն վտարուելով կ'երթան ուրիշ մարմիններ կազմելու: Քանի մը ամսուան մէջ՝ մարդկային մարմինը ամբողջովին նորոգուած կ'ըլլայ, ո՛չ արեան մէջ և ո՛չ ալ մարմնոյն, ո՛չ ուղեղին, ո՛չ սակերտտեաց մէջ չմնար քանի մը ամիս առաջ մարմինը կազմող հիւլէներէն, և ո՛չ մին: Գլխաւոր միջնորդ (medium) եղող միջնորդը մասնաւոր սննդադար զանոնք կը փոխադրէ մէկ մարմինէ միւսը: Երկաթի հիւլէն՝ միեւնոյն է, ըլլայ երեւելի անձի մը քունքին տակ բաբախող արեան մէջ խառնուած կամ ստորին և ժանգոտած երկաթի կտորին մէջ: Սիրահար օրիորդին տեսութեանը առջև փայլող թթուածին կազին հիւլէն՝ միեւնոյնն է այն հիւլէին հետ որ ջրածին կազին միանալով բարիդեան գիշերներու հազար ու մէկ լոյսերը կը փայլեցընէ և կամ ամպերու ծոցէն կաթիլ կաթիլ իջնող ջրոյն մէջ կը գանուի:

Արդի կենդանի մարմինները մեռելոց աճիւնովը ձեւացած են և եթէ բոլոր մեռեալները յարութիւն առնեն՝ շատերը պակ ամ պիտի գաննն իրենց հիւլէները, որոնց արդէն ուրիշներ տիրացած պիտի ըլլան, կենաց մէջ նոյն իսկ շատ մը փոխանցումներ կը կատարուին՝ ինչպէս բարեկա-

մաց նոյնպէս Ֆշնամեաց, մարդկանց և կենդանեաց միջև և բուսոց որք վերլուծող աչաց զարմանք կը պատճառեն: Ինչ որ կը շնչես, ինչ որ կ'ուտես և կը խմես, արդէն հաղարաւոր անգամ շնչուած, կերուած և խմուած է: Ահա՛ այս է մարմինը, նիւթական հիւլէներու ժողովածոյ մը որ շարունակաբար կը նորոգուի:

Կենսական ոյժը՝ կեանքը՝ այն սկզբնական տարրն է՝ որուն հիւլէները, մասնաւոր ձեւի մը տակ, պարտին միանալ և մարմնոյն հիւստեածքը կազմել: Զօրութիւնը, անգործ հիւլէն որ անկաբող է ինքն իրեն գործելու և անշարժ է, առ ինքն կը ձգէ, կը բերէ, կ'առնէ, կը տեղաւորէ, կը կարգադրէ մասնաւոր կանոններու միջոցաւ և կը ձեւացընէ այն սքանչելիօրէն յորինուած մարմինը՝ որուն վրայ մարմնաղնէնք և բնախօսք կը հիանան: Հիւլէները անեղծ են, բայց կենսական ոյժը՝ ո՛չ: Հիւլէները տարիք չունին, բայց կենսական ոյժը կը ծնի, կը ծերանայ և կը մեռնի: Մէկ ութսուեամեան աւելի տարէց է քան քսանամեայ պատանին: Ինչո՞ւ. վասն զի զանի կազմող հիւլէները՝ առ առաւելն, քանի մը ամիս է որ անոր մէջն են, որք արդէն ո՛չ ծեր են և ո՛չ ալ երիտասարդ, եթէ վերլուծուին, կը տեսնուի թէ՛ անոր մարմինը կազմող տարրերը տարբէք չունին:

Արդ, ի՞նչ է որ կը ծերանայ անոր մէջ. իր կենսական ոյժն է. որ տիեզերական ընդհանուր ոյժին մէկ կերպարանափոխութիւնն է, որ հիւստեած և մաշած է անոր մէջ:

Կեանքը ծննդագործութեամբ կը փոխանցուի, կենսական ոյժը բնազգմամբ և առանց գիտակից ըլլալու մարմինը կը պահպանէ. սկիզբ մը ունի և նոյնպէս ալ վերջ մը. վերջապէս մարմինը կարողադրող, պահպանող, բնական անգիտակից ոյժն է:

Հոգին իմացական էակ մըն է. մտածող և աննութական, գաղափարաց աշխարհը յարում կը բնակի ան, հիւլէին աշխարհը չէ: Տարիք չունի և չծերանար: Մարմնոյն պէս մէկ երկու ամսուան մէջ չփոխուիր. վասն զի ամիսներէ, տարիներէ, տասնեակ տարիներէ վերջ՝ կ'ըրգանք դարձեալ որ մեր նոյնութիւնը պահած ենք և մեր Նքը կայ և կը մնայ: Ապա թէ ո՛չ եթէ հոգին անգոյ ըլլար և եթէ մտածութեան կարողութիւնը միայն ուղեղին մէկ յատկութիւնը ըլլար, այն ժամանակ չէինք կրնար ըսոյ թէ մարմին մը ունինք ալ մեր ուղեղն և մեր մարմինն է որ զմեզ կ'ունենայ:

Դարձեալ ժամանակ ժամանակ մեր խիզճն ալ պէտք էր փոփոխութիւն ունենար. մեր ինքնութեան հաստատիքը, նոյն իսկ զգացումը չպիտի ունենայինք և այդպէս այլևս պատասխանատու չէինք կրնար ըլլալ մեր ուղեղի հիւլէներուն ամիսներ ատա՛ջ արտադրած որոշողութեանց: Հոգին կենսական ոյժը չէ. վասն զի սա, այսինքն կենսական ոյժը, չափակցելի է և ծննդագործութեան կը փոխանցուի. ինքզինքին ճանաչողութիւնը չունի, կը ծնի, կը մեծնայ և կը նուազի և կը մեռնի... Ըրտրովին հակասեալ զիրք մը

ունի Հոգւոյն հանդէպ՝ որ աննութական, առանց չափակցութեան, անփոխանցելի և ինքնաճանաչ է:

Կենսական ոյժին ծաւալումը կարելի է երկրաչափօրէն, իլիկով մը ներկայացընել որ մինչև միջտեղը անզգալարար կ'ընդլայնի և ապա կը նուազի և կ'ոչնչանայ: Կենաց կէս ճամբուն վրայ Հոգին օղապարիկի նման չամբիր (եթէ կարելի է այս բացատրութիւնը գործածել) իլիկը նուազեցնելու և վերջ մը ունենալու համար, այլ բնականապէս կը շարունակէ իր բնութացքը անհունութեան մէջ խոյանալով միշտ ընդլայնմամբ:

Այսուհանդերձ Հոգւոյն գոյութեան եղանակը իսկապէս ասորեր է կենաց եղանակէն. ատիկա Հոգեկան եղանակ մըն է:

Արդարին և անարգարին, ճշմարտին և սուտին, բարւոյն և չարին զգացումն է. ուսումնասիրութիւնը, չափադիտական ուսումը, վերլուծումը, համադրութիւնը, հայեցողութիւնը, հիացումը, սէրը, գութը կամ առելութիւնը, յարգանքը կամ անարգանքը, ի մի բան, բոլոր հոգւոյն զբաղումները, ինչ որ ալ ըլլան, բոլորն ալ իմացական և բարոյական կանոններ են, զորս ո՛չ հիւլէները և ո՛չ ալ բնական ուժերը կրնան ունենալ և ասոնք իսկապէս գոյութիւն ունին ինչպէս բնական օրէնքները կան: Երբեք ուղեղի մէկ բլթի մը ատրարբանական կամ մեքենական աշխատութիւնը, որքան ալ նրբացած երեւակայէք, չկրնար իմացական դատողութիւն մը արտադրել, օրինակի

համար, չկրնար գիանալ թէ 4 անգամ 4ը՝ 16 կ'ընէ և թէ եռանկեան մը երեք անկեանց գուժամարը հաւասար է երկու ուղիղ անկեան :

Մարդկութեան անձին այս երեք սարերքը ակեղերաց ամբողջութեանը մէջ ալ կը գտնենք :

Ա. անշարժ, անգործ ճիւղեր, նիւթական աշխարհները :

Բ. բնական ուժեր՝ գործող և աշխարհները վարող և իրարու մէջ փոփոխուող :

Գ. Աստուած՝ անվերջ յախտնական Հոգին, չափազիտութեանց իմացական կազմակերպիչը որուն՝ բոլոր ուժերը կը հնազանդին... անձանօթ էակը՝ որուն մէջ կան նեմարտից, գեղեցկից և բարւոյն յարձրագոյն սարերքը :

Հոգին մարմնոյն չկրնար կապուած մնալ՝ բայց եթէ միջնորդ եղող կենսական ուժով : Եւր կեանքը կը մտրի՝ բնականապէս հոգին կ'անջատուի՝ հիւսուածքէն և կը զաղրի միջոցի և ժամանակի հետ անմիջական վերաբերութիւն ունենալէ : Ո՛չ իստութիւն ունի ան և ո՛չ ալ ծանրութիւն : Մահէն վերջը, Հոգին երկնից միջոցին մէջ կը մնայ հոն, ուր երկիրը կար՝ իր անջատման միջոցին : Գիտես որ Երկիրը Բոլորակ մըն է ինչպէս Սրբուհակը և Լուսնթագը : Երկիրը կը շարունակէ իր ընթացքը շրջագծին վրայ ժամը 12700 քիլոմէտր վազալով, որով մահուանէ ժամ մը վերջը՝ Հոգին նոյնչափ հեռացած կ'ըլլայ իր մարմինէն, պարզապէս նիւթի օրէնքներուն ազդեցութենէն ազատած և միջոցին մէջ անշարժ

կեցած ըլլալուն պատճառաւ : Սրբ ուրեմն, մեր մահէն անմիջապէս վերջը՝ երկնից մէջ կը զբառնուինք, միայն թէ ա՛լ այն ժամանակ ծանրութիւն մը չունինք որ զմեզ գամուած պահէ մոլորակին վրայ : Բայց սակայն կը յաւելում թէ՛ ընդհանրապէս Հոգին քիչ մը ժամանակ կը դնէ ջրային հիւսուածքէն բոլորովին անջատուելու համար, և երբեմն օրերով, մինչև անգամ ամիսներով, մագնիսաբար կապուած կը մնայ իր հին մարմնոյն, չուզելով անկից զատուիլ : Այսու հանդերձ, մասնաւոր յատկութեամբ մը օժտուած, կրնայ միջոցին մէջ արագապէս տեղափոխուիլ տեղէ տեղ :

Խնդիր. — Առաջին անգամն է որ զգալիօրէն կը մտնենք մահուան ոչ-գերբնական դէպքը և կը հասկնամ հոգւոյն անհատական գոյութիւնը, իր մտքինէ և կեանքէ անկախութիւնը, իր անձնութիւնը, իր վերկենցաղումը և երկնից մէջ իր պարզ դիրքը : Յուսամ թէ այս համադրական հայեցումը քս զիս կը պատրաստէ ունկնդրելու և գնահատելու քու յայտնութիւններդ :

Նախապէս ինձ ըսիր թէ՛ յախտնական կենաց մէջ մտած ժամանակդ «եղական պատաճար մը ազդած էր քեզի», ո՞ր ժամանակ պատահեցաւ այն :

Լուսնեց. — Ահա՛ւատիկ, բարեկամս, թո՛ղ որ շարունակեմ պատմութիւնս : — Ինչպէս գիտես, սենեկիս մէջ իմ հին պատկերազարդ ժամացոյցս կէս գիշերը հնչելու վրայ էր և լուսինը իր ամբողջական սկաւառակին ազօտ լոյսը՝ մահուան ան-

կողմնոյս վրայ կը ցոյցայրնէր՝ երբ աղջիկս և թու-
նիկս և իմ մօտաւոր բարեկամներս հեռացան քու-
վէս, փոքր ինչ հանգիստ առնելու համար: Գուն
ուզեցիր անկողնոյս անարքը չթողուլ և խոստացար
աղջկանս՝ որ մինչև առաւօտ պիտի հսկես: Քեզի
չնորհակալ պիտի ըլլայի այդ քաղցր և խոնդակաթ
անձնուրութեանդ համար՝ եթէ ճշմարիտ եղբայր-
ներ չըլլայինք: Կէս ժամ մը կար որ միայնակ մը-
նացած էինք՝ երբ քու ձեռքդ բռնելով իմացուցի
քեզի թէ կեանքը կը հեռանար ինձմէ, զղայա-
բանացս ծայրերէն սկսեալ: Գու հակառակը կը
հաստատէիր, բայց ես հանդարտութեամբ իմ բնա-
խօսական վիճակս կը զիտէի և զիտէի թէ քիչ
ժամանակ մնացած էր շնչառութեան համար: Գուն
կամաց մը դէպի ալիցս յարկարածինը ուղղուեցար,
բայց չեմ գիտեր ինչ սլօն կեդրոնացումով մը
կրցայ բարձրածան կեցընել զքեզ: Վերադարձար,
բարեկամ, աչքերդ արցունքով լեցուն էին և ինձ
բար. «Յիրաւի վերջին կամքդ յայտնած ես ար-
« դէն, մինչև վազն առաւօտ դեռ ժամանակ կայ
« զաւակներդ կանչելու»:

Այդ խօսքերուդ մէջ, առանց յայտնի ընելու,
հասկըցայ որ հակասութիւն մը կայ: Կը յիշե՞ս,
այն ժամանակ ազաչեցի քեզ որ պատուհանը բա-
նաս: Հոկտեմբերի ինչ գեղեցիկ գիշեր էր. աւելի
գեղեցիկ՝ Սկովաիայի Օսիան բանաստեղծին երգա-
ծէն: Հորիզոնին վրայ և աչացս առջև մշուշի
մէջ մնացած, կը տեսնուէր Եօթն Եղբարք հա-
մաստեղութիւնը, Բասթօրը և Փօլիսը երկ-
նից երեսը յաղթական կը ցոլային, քիչ մը հ. ուն

և վերօք, հախկիններուն հետ եռանկիւնի համաս-
տեղութիւն մը ձեւացնելով: Կառավար համաստե-
ղութեան մէջի ոսկեփայլ ճառագայթով այն սքան-
չելի աստղը՝ որ զոլակասեան քարտէսին վրայ Գա-
փիլլա (այծիկ) կը կոչուի, կ'զմայլեցընէ զիս: Կը
տեսնես որ յիշողութիւնս պակասած չէ:

Երբ պատուհանը բացիր՝ գիշերային թեւոց
տակ ննջող վարդենիներու քաղցր բուրումը մին-
չև ինձ հասու և խոսնուեցաւ աստեղաց լսիկ
ճառագայթներուն: Կարողութիւնէս վեր է բացաս-
րել թէ ինչ աստիճան անուշութիւն մը զգաց հո-
գես, յետին զգացում մ'էր որ իմ ձերացեալ ան-
զամներս կունենային, յետինը՝ զոր երկիրը ինձ կը
մատուցանէր: Ամենաքաղցր ժամերուս՝ այնքան
ուրախութիւն, այնքան երկնային հրճուանք զգա-
ցած չէի՝ որքան այդ վերջին յափշտակութեանս
վայրկեանին ծաղկանց բուրմամբ խոսնուած այդ
հեռաւոր աստեղաց տեսութիւնը պատճառեց հոգ-
ւոյս

Այն ատեն դուն վերադարձար դէպի ինձ. ար-
դէն ես դէպի արտաքին աշխարհը դարձած էի,
ձեռքերս կուրծքիս վրայ ամփոփած, տեսութիւնս
և միտքս թողուցի ալօթիկ միասին և թռչիլ մի-
ջոցին մէջ: Եւ որովհետև տկանջներս յաւէտ պի-
տի խընային, կը յիշեմ վերջին խօսքերս զորս
չըթուէքներս արտասանեցին՝ Մնաս բարեաւ . . .
« հնօրեայ բարեկամս, մնաս բարեաւ. կ'զգամ որ
« մտքը կը յափշտակէ զիս . . . դէպի այն անձանօթ
« սահմանները ուր որ մը զիրար պիտի գտնենք:
« Երբ արշալոյսը ծագի և այդ աստղերը կորնչին,

« հոս մի միայն իմ մահկանացու մարմինս պիտի
 « մնայ: Ըսէ՛ աղջկանս որ իմ յետին փափագս է՝
 « որ իր զուակները յաւիտենական բարեաց ուս-
 « ման մէջ սնուցանէ մեծցընէ»:

Եւ սրովհետեւ անկողնոյս առաջքը, ծնկա-
 գուճ, կ'արտասուէիր, խնդրեցի քեան արտասանել
 Յիսուսի գեղեցիկ աղօթքը, և դուն ալ գողգոջուն
 ձայնով կրկնեցիր « Հայր մեր..... թող մեզ...
 « զպարտիս մեր..... սրպէս և... մեք... թո-
 զու՛մք... մերոց պարտապանաց..... »:

Ահա ասանք են վերջին մտածութիւններս՝ որք
 զգայարանաց միջոցաւ հոգւոյս աղղեցին: Գրափրա-
 ատագը զիտելով՝ աչացս լոյսը պղտորեցաւ ալք
 եւս և հետեւեալ պահուն ալ չեմ գիտեր ինչ պա-
 ատանցաւ:

Տարիները, օրերը, ժամերը երկրին շարժ-
 մունքներէն յառաջ կուգան, այս շարժմունքներէն
 դուրս՝ ձեր ժամանակ ըստը՝ միջոցին մէջ գոյու-
 րիւն չունի. բացարձակացէս աննարին է այդ
 ժամանակին գաղտնիարր կաղմել: Բայց սակայն՝
 կարծեմ թէ նոյն իսկ մահուանս օրն էր՝ որ հիմաջ
 պատմելիք գէպքս պատանեցաւ, վասն զի, ինչ-
 պէս պիտի նշմարես պատմութենէս, մարմինս
 դեռ թաղուած չէր երբ անսկզբ ներկայացաւ
 հոգւոյս:

1793ին ծնած ըլլալովս 72 տարեկան էի, և
 զարմացման ենթարկուեցայ՝ երբ անակնկալ կեր-
 պիւ պատանեկութեանս գեղեցիկ օրերուն մտա-
 ւոր թեթեւութեամբը և կրակոտութեամբ կենդա-
 նացած զգացի ինքզինքս: Մարմին չունէի, բայց

և այնպէս անմարմին ալ չէի, վասն զի կ'զգայի և
 կը տեսնէի թէ նիւթ մը զիս կը գոյացընէր, սա-
 կայն այդ նիւթը ո՛չ մի աննշուած չունէր երկ-
 րային մարմինը՝ ձեւացընող նիւթին հետ:

Գրտակից չեմ թէ ինչպէս երկնային միջոցնե-
 րը կը կարէի կ'անցնէի և թէ ինչ ուժի միջոցաւ,
 յանկարծ սակեփայլ սքանչելի արեւու մը մօտը
 գտնուեցայ, որուն պայծառութիւնը՝ թէպէտ չէր
 շլացընէր զիս, և ինչպէս հետուէն կը թուէր ինձ,
 ան շրջապատուած էր շատ մը աշխարհներէ որոնք
 մէկ և կամ աւելի մանեակներէ պարփակուած էին:
 Միևնոյն անձանօթ ուժին միջոցաւ, անակնկալ կեր-
 պով, այդ մանեակներուն միայն վրայ գտնուեցայ
 յանկարծ (իրը հանդիսատեսս այդ լուսաւոր և ան-
 բացատրելի տեսարանին) որոնք աստեղագարդ մի-
 ջոցին մէջ կամրջածեւ ծրածաններ ձեւացուցած
 էին: Այլ եւս սակեզօծ արեւը չէի տեսնար, և տե-
 սակ մը բազմերանգ գիշերուան մէջ թաղուած էի:

Անրազպատելիօրէն բարձր էր հոգւոյս աստու-
 թիւնը քան նորոգ թողած երկրային հիւսուածքիս
 աչքին աստութիւնը, զարմանալին եւս կայ՝ այդ
 աստութեանս զօրութիւնը ըստ կամս էր: Հոգւոյ
 սյս կարողութիւնը այնքան հրաշալի է՝ որ այսօր
 չպիտի կարենամ երկարօրէն բացատրել զայն: Սա-
 չափ միայն կ'զգացընեմ որ փոխանակ պարզացէս՝
 երկնից մէջ, միայն աստղերը տեսնելու, ինչպէս
 գուք, անոնց բոլորակքը դարձող աշխարհներն ալ
 կ'որոշէի: Դարձեալ, ինչ որ տարօրինակ է, երբ
 ուղիքի աստղը չտեսնել, սրպէս զի արդելք չըլլայ

չուրջը եղած աշխարհները զննելու, այդ աստղը կ'անհետանար աչքիս տեսութենէն որպէս զի գե-
րազանցօրէն կարենայի քննել այդ գունտերը: Գարձ-
եալ երբ տեսութիւնս կը կեդրոնանար մասնաւոր
աշխարհի մը վրայ, մակերեւոյթին մանրամասնու-
թիւնները, ցամաքները, ծովերը, ամպերը և գե-
տերը, և թէպէտ և հեռադիտակի միջոցաւ եղածին
պէս զգայի կերպիւ մեծցած չէին, բայց և այնպէս
հոգւոյս տեսողական զօրութեան յատուկ կեդրո-
նացմամբը, կրնայի զանազանել, օրինակի համար,
քաղաք մը, գիւղ մը, և այլն:

Այդ մանկեակաձեւ աշխարհին վրայ հասնելով՝
անոր բնակչաց կերպարանքովը հիւսուած գտնուե-
ցայ, իբր թէ հոգիս առ ինքն ձգած ըլլար հիւ-
լէները նոր մարմին մը զգենլու համար: Երկրիդ
վրայ կենդանի մարմինները իրարու անկապ մաս-
նիկներէ ձեւացած են՝ որք անդադար կը նորոգ-
ւին շնչատութեամբ, աննդականութեամբ և փո-
խարկմամբ. իսկ հոս, հոգւոյն պատեանը շատ ա-
ւելի շուտով կը ձեւանայ: Ինքզինքս աւելի լաւ
կենդանացած զգացի՝ քան այն գերբնական ան-
ձինքը, որոնց տարիանքը եւ վիշտերը երգեց
Տոնգէ բանաստեղծը: Այս նոր աշխարհին մեծ
յատկութիւններէն մին անշուշտ հեռուն տեսնելն
էր:

Խնդիր. — Բայց, ո՛վ բարեկամս, (ներե՛ այս
միւսմիտ խորհրդածութեանս) այդ մեծ հեռաւորու-
թեան մէջ՝ աստղի մը շուրջը զլորող մոլորակները
կամ աշխարհերը, այդ աստղին հետ չէն շփոթուիր.
օրինակի համար, արդեօք այդ հեռաւորութեանդ

մէջ ուր կը գտնուէիր, մեր դրութեան մոլորակ-
ները չէն շփոթուիր մեր աստղին՝ Արեւուն հետ.
Ե գու կրցա՞ր որոշել Երկիրս:

Լուսնն. — Կը տեսնեմ որ՝ անմիջապէս զգա-
ցիր վերոյիշեալ դիտողութեանցս հակառակօղ զի-
տական միակ դժուարութիւնը. յիշաւ՛, այն ինչ
հեռաւորութեան մէջ մոլորակները՝ իրենց արեւուն
ճառագայթման մէջ կընկզմեն եւ ձեր երկրային
աչքերը դժուարութիւն կը քաշեն զանոնք զանա-
զանելու:

Գիտես արդէն իսկ թէ Երեւակի զիրքէն սկսու-
եալ, Երկիրդ չորոշուիր, բայց մտածելու է նաեւ
թէ այս դժուարութիւնները նոյնքան կախում ու-
նին ձեր տեսութեան կարողութենէն՝ որքան երկ-
րաչափական օրէնքէն՝ որ հեռաւորութեան առա-
ւելութեամբը առարկայից մակերեւոյթը պզտիկ
կը ցուցընէ:

Արդ, այն աշխարհին մէջ, ուր հասայ, էակ-
ները որ կոշտ պատեանով մը մարմնացած չեն,
այլ ազատ եւ վերին աստիճան ընդհայեցութեան
կարողութեամբ օժտուած, կրնան, ինչպէս ըսի,
մեկուսացրնել զիտելի առարկան լուսոյ աղբիւրէն,
և աւելին կայ, մանրամասնութիւնները կը տեսնեն
որոնք այդ հեռաւորութեան մէջ երկրային յօրին-
ւածոց տեսութենէն բացարձակապէս կը վրիպին:

Խնդիր. — Այս բանիս համար, արդեօք մեր
հեռադիտակներէն աւելի զօրաւոր եւ աւելի կա-
տարեալ գործիքներ կը գործածեն:

Լուսնն. — Եթէ այդ հրաշալի յատկութիւնը
կ'ըմբոստացընէ քու միտքդ եւ անընդունելի կը

թուի, տեսականորէն աւելի զիւրին է գտնանք գործիքներով օժտեալ նկատուի. կրնաս երեւակայել զիտակներ որոնց ստանաձեւ շարք մը ապակիներու յաջորդութեամբը եւ խափանարար թիթեղին (diaphragme) մասնաւոր յարդարումովը, կարելի ըլլայ, հեղձեալէ մօտեցնել աշխարհները. եւ ուսումնասիրութեան առարկայ եղող միակ աշխարհն ալ մեկուսացընել լուսաւորող կեդրոնէն: Բայց կը ծանուցանեմ քեզի՝ որ այդ էակները իրենց սովորական տեսողութենէն դատ, մասնաւոր զգայութիւնով մը օժտուած են որ տեսագիտութեան հրաշալի միջոցներով՝ կրնան զարգացընել այդ զգայութիւնը: Այս ալ աւելցընեմ թէ՛ այդ տեսողութեան զօրութիւնը եւ տեսագիտական միջոցները՝ այդ աշխարհին համար բնական բաներ են եւ ո՛չ թէ գերբնական:

Դիտէ՛ անգամ մը միջատները. որոնց աչքերը հեռագիտակի փողերու նման, կրնան երկընցընել կամ կարճեցընել եւ իրենց աչաց բիւրեղակը ուղածնուն չափ կրնան ուսեցնել կամ տափկեցընել, այլ եւ այլ աստիճանի ստանակներ, այսինքն խոչարացոյցներ ձեւացընելով, եւ թէ կրնան նոյն իսկ ի մի կէտ ուղղել եւ կեդրոնացընել շատ մը աչքեր իբր այնքան մանրադիտակներ, ամենափոքրիկ, աննշմարելի առարկաները տեսնելու համար. եւ ահա այն ատեն շատ աւելի զիւրութեամբ կըրնայ ըմբռնել այդ անդէնական էակաց ունեցած յատկութիւնը:

Խնդիր. — Առանց կարենալ ճշդիւ նկարելու մաքիս մէջ, քանի որ իմ կացութեանս կարողու-

թենէն դուրս է. բայց կրնամ երեւեկայել անոր կարելութիւնը: Արդ, այդ բարձրութենէն կրցա՞ր ուրեմն որոշել Երկիրը եւ նոյն իսկ քաղաքները եւ զիւրերը:

Լուսեմ. — Թող որ շարունակեմ: Ուստի վերջիչեալ մանեակին վրայ հասնելով (որուն մակերեւոյթին լայնութեանը վրայ տասը հատ ձեր Երկրին չափ գունտեր քով քովի միասին կրնան զըլորել), լերան մը վրայ հապաստուած բուսական պալատի մը մէջ գտնուեցայ, գուցէ ինծի այնպէս թըւեցաւ թէ այդ զիւթական դղակները բնականօրէն գեանէն բուսած էին, կամ թէ ծառ. ճիւղերով գիւրութեամբ ձեւացեալ կերտուածք մըն էին: Բաւական բաղմամբը քաղաք մ'էր այն: Երբ լերան վրայ հասայ՝ քսանըհինգ կամ երեսուն ձերունիներու խումբ մը նշմարեցի որ ամենայն յամառ ուշադրութեամբ եւ յուզեալ, Ծիրկաթինի սահմանաց վրայ, հարաւային Սեղան համաստեղութեան գեղեցիկ մէկ աստղը կը դիտէին: Այնքան զբաղեալ էին այդ աստղին կամ անոր զրութեան մի մշտրակին քննութեամբը՝ որ իմ հոն հասնելս անգամ չնշմարեցին:

Իսկ ես, երբ այդ միջնորդութիւն մէջ հասայ, անոնց նման նիւթական մարմնով մը զգեստաւորեալ գտայ ինքզինքս. եւ ճշմարիտ՝ զարմացումս մեծ եղաւ երբ դիտեցի որ այդ ձերերը Երկրիդ նկատմամբ կը խօսակցէին. այս՝ Երկրիդ վրայօք կը խօսէին այն հոգեկան ընդհանուր լիզուով որ ամեն արարած կը հասկընայ, սկսեալ հրեշտակներէն մինչեւ անտառաց յետին ծառը: Ո՛չ միայն երկրիդ վրայ էր խօսակցութիւննին այլ, Ծրանսայի

վրայ. « Աւսղ ինչո՞ւ այս կանոնաւոր կոտորածները, կ'ըսէին իրարու, քանի՞ մէկ այդ տմարդի ու բիրտ ոյժը իշխանաբար պիտի թագաւորէ. արդեօք քաղաքական պատերազմը պիտի կատարէ՞ այդ ժողովրդան մինչև յետին պահպանը. սակաւիկ մի առաջ այդքան զուարթ և փառաւորապէս զարդարուած մայրաքաղաքին ստրայատակները տրեան ալիքներով պիտի լուացուին» :

Եւ որ Երկրէդ. եկած էի մտքի արագութեամբ և և աակաւին երէկ այդ խաղաղ և և հանդարտ մայրաքաղաքին մէջ կը շնչէի, չէի կրնար բան մը հասկնալ այդ անձանց խօսակցութենէն : Անոնց խաւճիկն մօտեցայ և իրենց պէս ես ալ սկսայ զիտել այդ գեղեցիկ աստղը, անոնց խօսակցութիւնը լսելով և անյապարար զիտելով՝ սրոշելու համար այդ արտաքոյ կարգի դէպքերը : Աստղին ձախ կողմը ամբողջ կապոյտ գունաւոր նշմարեցի. Երկիրն էր այն :

Բարեկամս, առ երևոյիմ օարակերպութեամբ (paradoxe) հանդերձ, անձանօթ չէ քեզի ի՞նչ երկիրդ ալ երկնից մէջ ճշմարիտ աստղ մ'է, ինչպէս որ ալ յիշեցուցի քեզի բիչ մը առաջ : Հետեւն, այսինքն ձեր գրութեան մերձակայ աստղերէն մէկէն զիտելով, վերոյիշեալ հոգեկան անստեղծամբ, ձեր մոլորակային գրութիւնը՝ Արեւ աստղին բոլորաիբր խմբուած իրր և աստղային բնասանիք մը կերելի :

Աչքառու են, իրենց մեծութեամբը, Լուսնը-թաղը և Երեւակը, յետոյ կը նշմարուին նաև Ու-

բանսը և Պոսիդոնը, յետոյ Արեւ-աստղին մօտ Հրատը և Երկիրդ : Արեւսեակը դժուար է նըշմարել, իսկ Փայլածուն անասանելի է Արեւուն շատ մօտ գտնուելուն պատճառաւ. անա այս է մոլորակային գրութիւնը երկնքին մէջ :

Իմ ոչաղբութիւնս մի միայն երկրային այդ փոքրիկ, գունաին վրայ կեդրոնացաւ, որուն քովիկը անսոյ նաև լուսինը : Յայնժամ հիւսիսային բեւեռի ձիւները, դեղնագոյն Արիլիկեան ցամաքը Ովկիանոսի շրջապատը պարզուեցան աչացս և ինչպէս բոլոր ուչաղբութիւնս առած էի մի միայն ձեր մոլորակին վրայ, Արեւ-աստղը բոլորովին անյայտացաւ : Յետոյ քիչ քիչ սկսայ որոշել գունաին վրայ կապուածոյն մասանց մէջ, միտադոյն հատուածի պէս բան մը և շարունակելով հետազոտութիւնս, այդ հատուածին մէջ քաղաք մը գտայ : Դժուարութիւն չունեցայ ճանչնալու ի՞նչ այդ անսած ցամաքային հատուած Պարսսան և քաղաքն ալ Բարիզ էր : Առաջին նշանը՝ սրով կարողացայ ճանչնալ մայրաքաղաքը, արեւմտեան կողմը արծաթեայ մաղախնաձև սրբ մոլոր, պարանքով ընթացող Սէն գետն էր : Տեղացուց անաղիտական (optique) գործիներէն օգտուելով ամենաիւրաք մանրամասնութիւնները կրոյս հետազոտել :

Նոգր-Տամի ասճարը և անոր ոչտարակները գորս բարձրէն կը զիտէի, Սիլիէին (միջնաքաղաք) ծայրը լատինական խոչաձևը կը կաղմէին : Դէպի հիւսիսային կողմը պուլըվարները (ծառաղարդ պողոտայ) կ'երկարէին : Հարաւակողմին մէջ Լուք-

սամպուրկի պարտէզն և Դիտարանը նշմարեցի, Բանթէննի գմբէթը՝ Սէն-Փրնէլիէլ՝ մթազոյն բըլըակին գագաթը կը բարձրանոր: Արեւելակողմը Շան-ղէլիդէի ծառաղարդ մեծ պողոտան ուղիղ գծով կ'երկարէր. աւելի հեռուն կը նշմարուէր Պուլճնի անառքը, Սէն-Քլուի շրջակայքը, Մէտտոնի անառակը, Սէվրը, Վիլ-ա'Սուրէ և Մոնթրթու: Այս ամբողջ տեսարանը փոռաւոր արեւով մը լուսաւորուած էր. զարմանալի ուրիշ կէտ մը եթէ կար՝ այն ալ բոլոր բլրակները ձմեռուան պէս ձիւնով ծածկուած էին. մինչդեռ հսկաների ամբողջական կանանչազարդ եղանակին հետացած էի Երկրէն: Այլեւս ապահով եղայ՝ թէ տեսածս Բարիզ քաղաքն էր. բայց որովհետեւ չէի կրցած հասկնալ մերձակայ անձանց բացողանջութիւնները, բոլոր ոյժս ի սպաս դրի մանրամասնութիւնները աւելի սրտը կերպով տեսնելու:

Տեսութիւնս մասնաւորապէս աստղարաշխական Դիտարանին վրայ կայացաւ, իմ սիրական թաղս էր այդ. քառասուն տարիներու միջոցին հազիւ քանի մը ամիս միայն բացակայած եմ անկէց: Արդ, մտածէ՛ անդամ մը թէ ի՞նչ ատտիճան եղաւ զարմանքս, երբ տեսութիւնս աւելի վարժուեցաւ այդ տեսարանին, նշմարեցի թէ Լուքսամպուրկի պարտէին և Դիտարանին միջև եղած պողոտան չկար այլեւս, թէ այդ գեղեցիկ և մեծղի մաշկամրդեղինեով զարդարուն պողոտան ալ տեղի տուած էր վանքի մը պարտէղին: — Իբր արուեստագէտ՝ Բարիզեան քաղաքապետութեան զէմ միս և անեղութիւնս շարժեցաւ, իայց շուտով

հանդարեցայ: Աւելի զօրաւոր մտահոգութիւններէ դրուած Պարտէզներուն մէջ մեծ մենարան մը կանգնած էր, Սէն-Միշէլի պուլըվարը չկար, նոյնպէս ոչ ալ Մէտիչի փողոցը. փոքր փողոցներու խառնակութիւն մը կ'իշխէր հոն. կարծես հնորեոյ Արեւելեան փողոցը և Սէն-Միշէլի հրապարակը կը տեսնէի՝ ուր ժամանակին վաղեմի աղբիւր մը այդ թաղի բնակչաց ջուր կը մատակարարէր, և գեռ խել մը փոքր փողոցներ զորս ասեռօք տեսած էի: Նոյն խակ Դիտարանին զըմբէթները չկային, նոյնպէս անոր երկու կողմի թեւերուն շէնքերը կորսուած էին: Տակաւ առ պակաւ զննութիւններս շարունակելով՝ տեսայ որ Բարիզ իր մանրամասնութիւններուն մէջ, անհունապէս փոփոխուած էր, էթուալի (աստղ) յաղթական կամարը մէջտեղ չկար և ո՛չ ալ այդ գեղեցիկ և փայլուն պողոտան որ դէպ ի հոն կ'երկարէր, նոյնպէս Սէվրաթարը պուլըվարը կորսուած էր. ո՛չ արեւելեան երկաթուղեոյ կայարանը և ո՛չ ալ միւս կայարանները կը տեսնուէին: Սէն-Փաքի աշտարակը հին ու մին խառնակ տուներու մէկուն բակին մէջ կանգնած էր և Յաղթութեան կոթողը անոր մօտը կը գտնուէր: Պատիլի կոթողը նոյնպէս չկար, որովհետեւ անոր ծայրի ոսկեղօծ արձանին՝ արեւուն մէջ փայլէն շուտով պիտի կարենայի ճանչնալ:

Վանտովի կոթողն ալ տեղի տուած կ'երեւէր հեծելաւոր արձանի մը. Գասթիլեան փողոցը հնորեոյ վանքի մը վերածուած էր: Ռիվօլի փողոցը չկար, Լուվրի պաղատը կիսաչէն էր կամ կիսա-

կործան. Ֆրանչիսկոս Ա.ի հրապարակին և թիւյլըրի միջանկեալ տեղը խել մը աւերակ առններ կուտակուած էին: Քոնքորտի հրապարակին վրայ և ո՛չ մի կոթող կար, այլ շարժուն, խառնակ և ռամիկ ժողովուրդ ճը որ նախապէս չի կրցայ որոշել. Մատըլէնը և ոչ ալ Արքայական փողոցը տեսանելի չէին: Սէն-Լուի կղզիին ետին ուրիշ փոքրիկ կղզի մը ևւս կը տեսնուէր: Արտաքին պուրվարները հին ժամանակի շրջապատող պարիսպներու վերածուած էին:

Վերջապէս Ֆրանսայի մայրաքաղաքը իր կանգուն մնացած շէնքերէն և քանի մը անփոփոխ մնացած թաղերէն ճանչնալով, չեմ գիտեր ինչպէս բացատրել այդ հրաշագան հիմնական փոփոխութիւնները որ մի օրէն միւսը կատարուած էին այդ հնօրեայ քաղաքին վրայ:

Նախ և առաջ մտքիս մէջ այն գաղափարը ունեցայ թէ Երկրէն հոս գալու համար, փոխանակ խիստ քիչ ժամանակ դրամ բոլորու, արդեօք բազում ասորիներ և գուցէ նոյն իսկ դարե՞ր դրած էի այս ճամբորդութեանս համար:

Որովհետեւ ժամանակի գաղափարը ինչպէս յարարեալկան բան մըն է և տեսողութեան չափը էական և բացարձակ բան մը չէ. Երկրէն բաժնուելուս պէս, հաստատ չափակցութիւնը կորուսած էի և ինքնիրենս կ'ըսէի թէ առանց զգալու, ասորիներ, նոյն իսկ դարեր կրնային անցած ըլլալ: Վասն զի այնքան սաստիկ նեղաքրքրական շահեկանութիւն մը դրած էի այս ճամբորդութեանս համար որ՝ ժամանակը երկայն չերեւցաւ ինձ:

Ահա սովորական բացատրութիւն մը՝ որ այսզգացման, մտ հոգւոյն մէջ ունեցած յարարեալկանութիւնը կ'ապացուցանէ: Այս բանիս համար վստահութեան ուրիշ միջոց չունենալով վերջապէս ստիպեալ պիտի հաւատայի թէ շատ ասորիներէ ի վեր է որ բաժնուած էի երկրային կեանքէն և աչքիս առաջ ունէի քաներորդ կամ քաւնրմեկերորդ գարուն Բարիզը կթէ աւելուածով ևւ խորապէս այդ տեսարանին կրկին անգամ հետազոտութեանը ձեռնարկած չըլլայի:

Յիրաւի հեղհեանէ քաղաքին տեսարանացը վարժուեցայ ևւ աստիճանաբար սկսայ տեսնել իմ աղայութեանս ժամանակի ճանչցած փողոցներս ևւ շէնքերը: Տեսայ քաղաքապետական պալատը որ շաղարկեալ ևւ թիւյլըրի գղեակին կեղբունի գրմբէթը: Պզտի մանրամասնութիւն մը լրացոյց իմ հետազոտութիւններին շարքը: Սէն-Փաք փողոցին մէկ հին վանքին պարակցին մէջ երբ նշմարեցի փոքրիկ տաղաւար մը, սիրտս թուեց կաւ. հոն էր որ, իմ երիտասարդութեանս ժամանակ, ծանօթացայ այն կնոջը, իմ էվլիզիէս, որ զիս ստատիկ սիրով սիրեց այնքան գորովանօք ևւ այնքան նուիրմամբ, որ թողուց ամենայն ինչ. իմ ճակատագրիս հետեւելու համար: Կրկին անգամ տեսայ Դիտարանին դարատափին այն գմբէթը, որուն առաջքը գիշեր տան, միասին նստած, համաստեղութիւնները ուսումնասիրելով խոկանաց կ'ենթարկուէինք: Ահ. ի՛նչ հրճուանօք կը տեսնէի միտսին շրջադայած վայրերնիս ուր մեր քայլերը համազօպելով կը ճեմէինք, այն պողոտաները ուր

զմեզ զբառոցայ նախանձոտ նայուածքներէն կը խուսափէինք: Կը դիտէի այդ սաղաւարը եւ էր ինչ որ էր այդ ժամանակ, եւ կրնաս երեւակայել թէ միակ այս տեսարանը բաւական էր զիս համոզելու, անսասան կերպիւ, որ փոխանակ իմ մահուանս ժամանակի Բարիզը աչքիս ստաջ ունենալու. կորուսեալ Բարիզը ունէի: զարուս սկզբան հնաւուրց Բարիզը կամ անցեալ զարուս վերջաւորութեան Բարիզն էր որ կը պարզուէր առաջքս:

Դիւրութեամբ կ'ըմբռնես սակայն՝ թէ այս ամենը ակներեւ տեսնելովս հանդերձ, չէի կրնար աչքիս հաւատ ընծայել: Ինձ աւելի բնական կուզար ընդունիլ թէ՛ Երկրէն հեռանալէս ի վեր (ժամանակամիջոց մը սրուն տեսողութիւնը կատարելագոյն անձանօթ էր ինձ), Բարիզ այնքան հիւսցած եւ այնքան կերպարանափոխ եղած էր որ՝ ապագային Բարիզը տեսնել կը կարծէի: Չեմ գիտեր թէ այս բացատրութեամբս, կրցա՞յ հասկըցընել ինչ որ ներկայ կ'երեւէր ինձ: Շարունակեցի ուրեմն իմ ուշադիր դիտողութիւնս, հաստատելու համար թէ՛ իրապէս ճիշտ Բարիզն էր որ այսօր մասամբ կործանած՝ աչքիս ստաջ կը դրսնուէր, թէ ո՛չ, նոյնքան անհաւատալի երեւոյթով մը, ուրիշ Բարիզ մը, ուրիշ Թրանսա մը կամ ուրիշ երկիր մըն էր տեսածս:

Բ.

Խնդիր. — Քու վերլուծող հոգիդ, ո՛վ Լուսնն, արդեօք ի՞նչ արտաբոյ կարգի յուզման վիճակի ենթարկուած էր: Ի՞նչ միջոցաւ կարելի եղաւ քեզ իրականութիւնը գիտնալ:

Լուսն. — Լերան վրայի ծերունիները կը շարունակէին իրենց խօսակցութիւնը, մինչ իմ հոգւոյս մէջ, վերայիչեալ խորհրդածութեանց շարքը յաջորդարար կը փոխանակուէր: Յանկարծ մէջերնէն ծերագոյնը, յարգելի հոգի մը, որուն նեստարական ճակատը յարգանք եւ պատկասանք կը ներշնչէր, գոչեց ակրական մեծաղոյրդ ճայնով մը «Եղբարք իմ, ի ծունր իջէ՛ք, յաւիտենական Աստուծոյն ներուժը հայցենք, այդ Երկիրը այդ ազգը, այդ քաղաքը՝ արեան ճապողեաց մէջ կը թախտախտի. անա նոր գլուխ մըն ալ, թագաւորի՛ գլուխ մը եւս ինկաւ»: Իր ընկերները հասկըցան՝ վասն զի անմիջապէս ի ծունր իջեալ երկրպագին, իրենց սպիտակ գլուխները յերկիր խոնարհեցուցին:

Իսկ ես, դեռ չէի կրցած այդ հրապարակաց եւ փողոցներուն մէջի մարդիկը ազէկ մը նշմարել եւ թէ՛ ծերերուն մասնաւոր խորհրդածութեանց չէի հետեւած: յոտնկայս մնացի եւ աւելի ուժգին կերպով շարունակեցի քննութիւններս: «Օտարականն, ըսաւ ծերունին, քու եղբարցդ ըրածը կը պատարակե՞ս արդեօք, քանի որ աղօթակից չես բլար անոնց»:

— Այնպէս յարգելի ծերունի, պատաս-

խանեցի, չեմ կրնար ո՛չ պախարակել և ո՛չ ալ գովարանել այն բանը՝ ուսկից ծանօթութիւն չունիմ: Քիչ ժամանակէ ի վեր նորեկ մըն եմ. ձեր ծանր և նզովալից անէծից պատճառներուն անտեղեակ եմ:

Այն ատեն մտեցայ երիցագոյնին, մինչ իր ընկերները վերականգնած իրարու հետ կը խօսակցէին, հարցուցի և խնդրեցի իրմէ որ իր դիտողութեանց պատմութեանը մասնակից ընէ զիս:

Տեղեկացուց զիս՝ թէ այդ աշխարհը բնակող իրենց աստիճանի հողիները, իմացողութեան առանձնաշնորհեալ և յատուկ ընդհայեցութեան (appercption) կարողութեամբ մը օժտեալ ըլլալով, տեսակ մը մագնիսական յարարելութիւն ունին՝ մերձակայ աստեղաց հետ: — Մերձաւորագոյն աստղերը 12-15 հաս կը համրուին. այս սահմանէն դուրս ընդհայեցութիւնը սարսամ և մթին կ'ըլլայ: Մեր Արեւը մերձաւորագոյններէն մին է:

Կը ճանշնան ուրեմն, քիչ մը տարտամ, բայց զգալի կերպիւ, այդ Արեւէն կախում ունեցող մտւորակաց բնակիչները, անոնց վիճակը և անոնց իմացական ու բարոյական բարձրութեան յարաբերական աստիճանը: Նաև, երբ այդ բնակչութեանց մէջ խանգարում մը, վրդովում մը տեղի ունենայ, ըլլայ բնական՝ ըլլայ բարոյական, իրենք մասնաւոր ցնցում մը կ'զգան, ինչպէս լար մը, որ կը թրթռայ՝ մերձակայ ուրիշ լարն ալ կը թրթռուացնէ:

Տարիէ մը ի վեր (իրենց տարին մեր տարրերին հաւասար է) մասնաւոր յուզմամբ մը վե-

րաբերուած էին հանդէպ այդ երկրային մտորակին. դիտող հանդիսատեսները հետաքրքրութեամբ և հոգածութեամբ հետեւած էին այդ երկրին ընթացքին:

Իշխանութեան մը վերջաւորութեան և պայծառափայլ Աղատութեան տըշալոյսին, մարդկային իրուանց հաստատութեանը և վաւերացմանը ներկայ գտնուած էին:

Յետոյ տեսած էին նաև այդ Աղատութեան մեծ խնդրոյն վտանգութիւն այն անձանց ձեռամբ, որք պարտէին անոր օրոյսեան կանգնիլ և պաշտպանիլ. տեսած էին նաև անասնական ուժին՝ խոհականութեան և համոզման տեղը փոխանակութիւլ:

Անմիջապէս անդրադարձայ թէ՛ 1789ի Մեծ Յեղափոխութեան խնդիրն է բեմին վրայ: Նախն առջև քաղաքական հիմն աշխարհի մը անկումն էր ան: Բաւական ժամանակէ ի վեր ցաւակցարար հետեւած էին Արհա իրքին (Terreur) գործառնութեանցը և արիւնարբուներուն բռնութեանց: Երկրիս կենաց ապագային մասին կը վախնային, այլևս կը կասկածէին ազատեալ մարդկութեան յառաջդիմութեան վրայ՝ որ նոյն խակ ինքն իր ձեռամբ, իրեն յաղթանակած գանձը կը կորսընցընէր:

Ամենայն զգուշութեամբ ծերունիէն ծածկեցի իմ այդ երկրէն եկած և 72 տարի հոն ապրած ըլլայս:

Չեմ գիտեր թէ նախազգացում մը ունեցա՞ւ թէ՛ ո՛չ: Բայց ես այնքան յանկարծակիի եկած

էի այդ տեսիլքէն՝ որ բոլոր հոգւովս, ինքզինքս մոռցած, քնոր յարած էի:

Այլևս տեսողութիւնս վարժուեցաւ տեսարանաց և Քօնքորտի հրապարակին վրայ կը նշմարէի կատափնասեղի մը. պատերազմական սոսկալի գործիներով, թմրուկներով, ինդանօթիներով և նիզակաւորներով չըջագատեալ: Կարմրագլխատ մորդ մը, սալակի մը մէջ, Լուդովիկոս Ժ.Չ.ի մարմինը դէպ ի Աէն-տ'Օնօյէ թաղը կը փոխադրէր: Չիտար գօրաց խումբ մը, սուսերամերկ, ախրագին կերպով կը հետեւէր սալակին: Իսկ արբեցեալ խառնիճազանճ խումբան մը բուռնցքով երկնից կ'սպառնար: Անդին հետաքրքիրներու բաղմոթիւնը Շան դ'Էլիզէի խրամատներուն մէջ կը գլորուէին:

Բայց այս աղմկալից միջավայրին շարժումը՝ քաղաքին միւս մասանցը մէջ տարածուած չէր, որ մեռեալ և անապատացեալ կ'երեւէին. Արիաււիբը (Terreur) թմրութեան մասնած է զանոնք:

Ներկայ չէի 93 տարւոյն դէպքին, վասն զի նոյն տարին ծնած էի. բայց անպատում շահագրգռութիւն մը ունէի այդ տեսարանին ներկայ ըլլալու, որոնց վրայ պատմագիրները խօսած էին:

Շատ առիթներու մէջ հակաճառած էի ֆօն-վանսիօնի (convention) քուէարկութեանը վրայ. բայց կը խոստովանիմ թէ՛ քիմիադիտութեան ստեղծիչ Լափուազիէի պէս, աստղարաչխութեան պատմագիր Պայիի, քաղցրախօս բանաստեղծ Անարէ-Շէնիէի և փիլիսոփայ Քոնտորսէի պէս

անճնաւորութեանց դատապարտութեամբ զլիսատումը՝ զիս աւելի դարմացուցած է քան Լուդովիկոս Ժ.Չ.ի տանջանքը: Այս անցեալ ժամանակաց վկայ ըլլալու փափաքը ամեն շահէ աւելի կը զնազեցնէր զիս. բայց այդ փափաքը՝ որքան ալ մեծ ըլլար, կրնաս երեւակայել թէ՛ աւելի զօրաւոր զգացում մը կ'իշխէր այդ փափաքիս. աս էր 1864 ՏԱՐԵՍԿԻ ՎԵՐՉԱԼՈՐՈՒՔԵԱՆԸ մեջ գտնուելովս՝ ներկայսպէս իմ առաջն ունեւայ եւ տեսնել անցեալ դարուն վերջաւորութեան ժամանակ կատարած իրողութիւն մը:

Խնդիր. — Յիրաւի, կարծեմ թէ՛ այդ բանին անկարելիութեան զգացումը եզականապէս չափաւորած պիտի ըլլայ քու հիացումդ. վասն զի վերջապէս, այդ տեսիլքը հեմնականապէս խաբեպատիր բան մ'է, որուն իրականութիւնը նոյն իսկ տեսնալով հանդերձ, չենք կրնար ընդունիլ:

Լուսեմ. — Այո՛, բարեկամս, անկարելի՛... Սրբ, կրնաս հասկնալ թէ՛ աչքովս տեսնալով այդ տարօրինակ տեսիլքը, ի՞նչ վիճակի մէջ կը գըռնուէի: Ինչպէս ուամկական առած մը կայ «Մարդ էր աչացը հաւատալը չգար», ճիշդ այդ վիճակին մէջ էի: Սակայն անկարելի էր նաև տեսածս ալ ուրանալ և նոյնպէս ընդունիլն ալ անհնարին էր:

Խնդիր. — Բայց, արդեօք այդ տեսածներդ հոգւոյդ յղացումը, երեւակայութեանդ ծնունդը կամ քու յիշողութեանդ յիշատակը չէ՛ր արդեօք: Աղէկ համոզուած ես թէ՛ այդ տեսածներդ իրա-

կանութիւն էին և ո՛չ թէ յիշողութեանդ անհե-
թեթ մէկ ցոյքը :

Լուսնն . — Նախապէս ես այլ ճիշդ այդ մտա-
ծութիւնը ունեցայ . բայց այնքան յայտնի կերպով
աչացս առաջ ունէի 93ի Բարիդը և Յունւար 21ի
դէպքը՝ որ այլ եւս չէի կրնար տարակուսիլ : Ան-
կէ վերջ , այս բացատրութիւններս նախապէս ո-
չընչացած կ'ըլլան , քանի որ լերան վրայի ծերե-
րուն դիտողութիւնները իմինէս առաջ էին , որք
կը տեսնէին , կը վերլուծէին և ներկայ իրողու-
թեանց վրայ կը վիճէին և կը բանակցէին առանց
Յրկրիդ պատմութիւնը գիտնալու , և չէին ալ գի-
տեր թէ՛ ես այդ պատմութեան տեղեակ էի . ան-
կէց զատ՝ աչացս առաջ ներկայ գործ մը կար և ոչ
թէ անցեալ դէպք մը :

Խնդիր . — Բայց այն տառն , եթէ անցեալը՝
ներկային մէջ կրնայ խառնուիլ , եթէ իրականու-
թիւնը այս կերպով տեսիլքին հետ կրնայ միանալ ,
եթէ շատոնց մեռած անձնաւորութիւնք կրնան
դարձեալ ի բեմ գալ , եթէ նոր շինուածքներ և Բա-
րիդի պէս քաղաքի մը փոփոխմունք կրնան կո-
րընչիլ և իրենց տեղ հին աւուրց քաղաքը տես-
նուիլ , վերջապէս եթէ ներկայն կրնայ նսեմանալ՝
անցեալը յարուցանելու համար , այլ եւս ի՞նչ ստու-
գութիւն և ի՞նչ հաւաստիք կրնանք ունենալ . ո՛րք
կը մնան այդ վարդապետութիւնները՝ որոնց վրայ
հաստատապէս հիմնուած կերեւին մեր բոլոր ծա-
նօթութիւնները : Իսկ եթէ այս բաները ճշմարիտ
են՝ այլ եւս ամեն բանի վրայ պէտք է տարակու-
սիլ և կամ ամեն բանի հաւատալ :

Լուսնն . — Բարեկամս , այս դիտողութիւն-
ները և ուրիշ շատ մը մտածութիւններ զբաղեցու-
ցին և տանջեցին զիս . բայց այսու հանդերձ , տե-
սածնեւորուս իրողութիւնը ըլլալուն արգելք մը չե-
ղան : Երբ համողում գոյացուցի թէ՛ 1793ի տարին
ի ներկայութեան ունեի , անմիջական կերպիւ , մը-
տածեցի թէ՛ փոխանակ այս իրողութեան հետ
զբաղելու և պայքարելու , գիտութիւնը պէտք էր
անոր բացատրութիւնը տար , (քանզի երկու ճըշ-
մարտութիւն իրարու հակառակ չեն կրնար ըլլալ) .
քնադիտութեան դիմեցի և պատասխանին սպասեցի :
Խնդիր . — Ինչպէ՞ս ուրեմն այս եղելու-
թիւնը իրական է :

Լուսնն . — Ոչ միայն իրական՝ այլ նոյն իսկ
հատկնալի և ապացուցանելի : Հիմայ պիտի տես-
նես աստղագիտական բացատրութիւնը :

Նախ և առաջ վերոյիշեալ Սեղան համաստե-
գութեան մէջ Յրկրիդ դիրքը քննեցի : Ապա հիւ-
սիսային աստղին և զողիակոսին դրից բաղդատ-
մամբ շտկուելով՝ դիտեցի որ համաստեղութիւն-
ները Յրկրէդ տեսնուածէն շատ տարբեր կերպով
մը չէին տեսնուեր , մէկ քանի մասնաւոր աստ-
ղերէն զատ , իրենց դիրքերը գրեթէ մի և
նոյն էին : Հայկը (Orion) դարձեալ երկրային նախ-
կին-հասարակածին վրայ էր : Մեծ Արջը՝ իր բոլո-
րակ չըջանին մէջ մնալով , հիւսիսակողմը կը դըտ-
նուէր : Յայնմ հկտէ , այլ եւս զադրած առերեւոյթ
շարժմանց հալակարգեալ (coordonnées) գծերուն հա-
մեմատելով , կրցայ նախ որոշել թէ՛ կեցած վայրս ,
ուսկից Արեւուն , երկրիդ և մտրակաց խումբը կը

տեսնէի, պէտք էր որ աջակողմեան բարձրացման աստիճաններու ժամը կամ այսինքն մերձաւորապէս 256դ աստիճանը ցոյց տար (գօրծիք չունէի ի ձեռին՝ որ կարենայի աւելի ճիշտ չափել): Երկրորդ, դիտեցի որ այդ վայրը հարաւային բեւեռէն 44 աստիճան հեռաւորութեան մէջ կը գտնուէր:

Այս խուզարկութիւններս նպատակաւոր էին՝ գիտնալու համար թէ՛ արդեօք ո՞ր աստղին վրայ կը գտնուիմ:

Արդիւնքը այն եղաւ որ՝ այդ աստղը՝ պէտք էր աջակողմեան բարձրացման 76դ աստիճանին և դէպի հարաւային հակման (déclinaison boréale) 46րդ աստիճանին վրայ գտնուէր: Միւս կողմանէ՝ ծերունիին խօսքերէն իմացած էի թէ՛ այդ աստղը՝ որուն վրայ կը գտնուէի, ձեր Արեւէն շատ հեռու չէր, քանի որ անոր մերձաւորագոյն աստղերէն մին էր:

Այս հիմանց վրայ՝ դիւրութեամբ կրցայ յիշողութեանս մէջ փնտուել թէ՛ որ աստղը կը համապատասխանէր այդ վերոյիշեալ որոշ դրից: Մի միայն մէկ հատ մը կար որ այս պայմանները կը լրացընէր, այն ալ կառավար համաստեղութեան առաջին կարգի ալֆա աստղն էր որ և Գալիլիլէո կամ Այծիկ կը կոչուի: Այս մասին այլեւս տարաւ կուսելու կէտ մը չկար:

Ուստի համոզուեցայ հաստատապէս թէ՛ այդ աստղին դրութեան վերաբերեալ աշխարհաց միտն վրայ կը գտնուէի: Ատկից ձեր Արեւը՝ որ պարզ աստղի մը ազդեցութիւնը ունի, իր շրջանին բեր-

մամբը, երկրէդ նայելով, հեռանկարով, (enperspective կառավար համաստեղութեան ճիշտ ընդդիմակաց Սեղան համաստեղութեան մէջ կ'երեւէր:

Արդ ուրեմն, սկսայ յիշողութեանս մէջ փնտուել թէ՛ ի՞նչ է այդ աստղին տեղագանութիւնը (parallaxe): Կը յիշեմ թէ՛ բարեկամներէս մին, ոռու աստղագէտ մը, հաշուած էր և հաստատուած իսկ ըլլալով, այդ տեղագանութիւնը գտած էր, որ է 0", 046: — Գաղտնիքին լուծման մօտեցած էի այլեւս, ուրախութեանս սիրտս կը տրոփէր:

Ամեն երկրաչափ գիտէ թէ՛ լտեղագագանութիւնը, մաթէմատիքականապէս հեռաւորութիւն ցոյց կուտայ, իրր միութիւն առնուած քանակութեան համեմատութեամբ: Ուրեմն ջանացի յիշել ճշգրտապէս այդ աստղին երկրէդ ունեցած հեռաւորութիւնը և ի հարկին նոյն իսկ հաշուել. այս բանին համար պէտք էր փնտուել թէ՛ այդ 0", 046ին ո՞ր թիւը կը համապատասխանէր: — Այդ թիւն է 170,392,000,000,000ը:

Ուրեմն այն աստղէն, ուր կը գտնուէի, մինչև երկիր հեռաւորութիւնը 170 եռամիլիոն 392 միլեառ մղոն էր:

Այլ եւս խնդրոյն գլխաւոր երեք չորրորդը լուծուած էր: Արդ՝ հիմայ ուրիշ էական կէտ մ'ալ կայ, որուն վրայ քու յատուկ ուշադրութիւնդ կը հրաւիրեմ, վասն զի այդ օտարօտի իրողութեան բացատրութիւնը անոր մէջ կը կայանայ:

Գիտես որ լոյսը՝ մէկ տեղէն միւսը յանկարծակի կամ վայրկեանական չ'սլանար, այլ հետզհետէ յաջորդաբար: Գիտես նաեւ թէ՛ հանդարտ կեցած

շուրին վրայ, երբ քար մը նետես, շարք մը վէտ վէտ ծփանք յառաջ կուգան քարին ինկած կէտին շուրջը, այնպէս ալ ձայնը այն կերպով կը փութադուրսի օդին մէջ մէկ կէտէն միւսը. մի եւ նոյն կերպով է լոյսին տեղափոխութիւնն ալ միջոցին մէջ, հետզհետէ ծածանմամբ կը սլանայ:

Ուրեմն, աստղի մը լոյսը, մինչեւ երկրիդ երեսը հասնելու համար, ժամանակի մը կարօտ է, քնականապէս այնքան երկայն ժամանակ, որքան աւելի հեռաւորութեան մէջ կը գտնուի:

Ձայնը մանրերկրորդի մէջ 340 մէրը կ'ընթանայ: Թնդանօթի մը թնդիւնը՝ քովը կեցող թնդանօթածիղ գինւորին համար անմիջական է. իսկ 340 մէրը հեռուն կեցող մը մէկ մանրերկրորդ վերջը կը լսէ, երեք մանրերկրորդ վերջը՝ մէկ քիլոմէրը հեռուն եղողը. 12 մանրերկրորդ վերջը՝ 4 քիլոմէրը հեռաւորութեան մէջ եղողը. 2 վայրկեանէն միայն կը լսեն անոնք որ տասն անգամ աւելի հեռուն կը գտնուին. իսկ 5 վայրկեանէն՝ 100 քիլոմէրը հեռաւորութեանէն կը լսուի այդ մարդկային որոտումը:

Լոյսը շատ աւելի արագութեամբ կը տեղափոխուի, ըստ յոյ անմիջական կամ վայրկեանական կերպիւ, ինչպէս հիները կը կարծէին, լոյսը մանրերկրորդի մէջ 300,000 քիլոմէրը տեղ կը կարէ. և եթէ կարենայ կոր գծի ուղղութեամբ դառնալ, ութը անգամ երկրիդ շրջանը կ'ընէր մի եւ նոյն միջոցին մէջ, մէկ մանրերկրորդ և 1/3 պէտք է որ լուսնոյ լոյսը երկիր հասնի. իսկ արեւու լոյսին համար 8 վայրկեան և 13 մանրերկրորդ պէտք է:

Լուսնթագէն հոս 42 վայրկեան պէտք է. 2 ժամ: Ուրանոսէն գալու. և 4 ժամ, Նեպտոնէն: Ուրեմն երկնային մարմինները կը տեսնենք ոչ թէ ինչպէս են այն միջոցին որ կը դիտենք, այլ ինչպէս էին, երբ լուսնոյ ճառագայթները մեզի գալու համար ճամբայ ելած են անոնցմէ:

Եթէ, օրինակի համար, աշխարհաց վրայ հրաբուլի մը ձեւանայ, անոր բոցերուն ժայթքումը, եթէ լուսնոյ վրայ է, դէպքէն 1 1/4 մանրերկրորդ վերջը կը տեսնէք. եթէ Լուսնթագի վրայ է, 42 վայրկեան, 2 ժամ, եթէ Ուրանոսի վրայ և 4 ժամ վերջը՝ եթէ Նեպտոնի վրայ առաջ գայ այդ ժայթքումը:

Եթէ ձեր մոլորակային դուրթենէն դուրս ելնենք, հեռաւորութիւնները անրազգատելիօրէն շատ աւելի ընդարձակ են, որով լուսնոյ ընթացքին յետամնացութիւնն ալ շատ աւելի մեծ է: Այսպէս ուրեմն ձեզի ամենէն մօտ աստղէն, Յուլիանայի ալֆայէն, եթէ լուսնոյ ճառագայթ մը ելլէ, ձեզի հասնելու համար, չորս արիէն աւելի պէտք է, այն ճառագայթը որ Շնիկ աստղէն կուգայ, 8 արի պէտք է որ զձեզ այդ Աստղ — Արսէն անջատող վիշը կարենայ անցնել:

Գափիլլա աստղը, յիշեալ 170,392,000,000,000 մըրն, հեռաւորութեան մէջ կը գտնուի. դիւրին է հաշուել թէ, մանրերկրորդի մէջ 300,000 քիլոմէրը արագութեամբ, ո՛րչափ ժամանակ պէտք է որ անոր լոյսը կարենայ ձեզի հասնիլ: Հաշիւը ընելով կը տեսնենք որ 71 տարի 8 ամիս 24 օրուան մէջ կը հասնի ձեզի:

Նոյնպէս երկրէս մեկնած լուսոյ ճառագայթ մը մի և նոյն ժամանակին մէջ կը հասնի այդ աստղին :

Խնդիր . — Եթէ լուսոյ ճառագայթ մը՝ որ այդ աստղէն կը մեկնի և 72 տարի կը դնէ մեզի հասնելու համար, ուրեմն մեզի կը բերէ աստղին 72 տարի առաջուան լուսաւորեալ վիճակին ճառագայթը :

Լուսին . — Այո՛ . շատ լաւ հասկըցար : Եւ ճիշտ այդ կարեւոր խնդիրն է՝ որ պէտք է լաւ մտնենք :

Խնդիր . — Այսպէս, ուրիշ բացատրութեամբ մը, լուսոյ ճառագայթը սուրհանդակի կը նմանի որ ելած երկրին վիճակին վրայ մեզի լուր կը բերէ և եթէ 72 տարուան մէջ մեզի կը հասնի, ըսել է թէ իրեն ճամբայ ելած ժամանակին վիճակը մեզի կը ցուցնէ, այսինքն մեզի հասնելէն 72 տարի առաջուան վիճակը :

Լուսին . — Գաղտնիքը գուշակեցիր այլեւս, քու ըրած բազդատութիւնդ ցոյց կուտայ թէ՛ գաղտնեաց քողին ծայրը վերցուցիր : Աւելի չիտակը և աւելի ճիշտը ըսելու համար, լուսոյ ճառագայթը այն սուրհանդակն է՝ որ ո՛չ թէ գրաւոր լուրեր կը բերէ ձեզի, այլ լուսանկարներ կամ աւելի ճիշտը, այն երկրին, ուսկից կուգայ, նոյն ինն՛ն տեսնէ որ ձեզի կը բերէ :

Այդ տեսարանը կը տեսնուի այնպէս՝ ինչպէս որ էր, անոր ամեն մէկ կէտէն լուսոյ ճառագայթից մեկնած ժամանակ . և այդպէսով նոյն ժամանակի դէպքերուն վիճակին պատկերը ցոյց կուտան :

Ասկէ աւելի պարզ և անուրանալի բան չի կրնար ըլլալ : Արդ ուրեմն, երբ հեռադիտակին մէջէն՝ աստղի մը մակերեւոյթը կը դիտէք, անոր դիտած ժամանակնուդ վիճակը չէ որ կը տեսնէք՝ այլ, որ ձեզի եկած լուսոյ ճառագայթներուն անոր մակերեւոյթէն մեկնած թուականին վիճակը :

Խնդիր . — Ուրեմն, ենթադրենք աստղ մը, որուն լոյսը մեզի տասը տարուան մէջ կը հասնի, եթէ այդ աստղը յանկարծ այսօր շիջանի, զանի պիտի շարունակենք տեսնել տասը տարիներ եւս, քանի որ իր վերջին ճառագայթը տասը տարուան մէջ կը հասնի :

Լուսին . — Ճիշտ այդպէս է . ի մի բան, աստղերուն ձեզի դրկած ճառագայթները յանկարծակի չեն հասնիր, այլ ժամանակ մը կը դնեն՝ զձեզ իրենցմէ անջատող միջոցը կտրել անցնելու համար, և այդ ճառագայթները ձեզի ցոյց չեն տար՝ ինչ որ է արդիապէս, այլ տոյն վիճակը ուր այդ ճառագայթները մեկնած են և կը բերեն անոր տեսքը :

Ուրեմն զարմանալի կերպարանափոխութիւն մըն է այս, անցեալին ներկայի վերածուիլը : Դիտւած աստղին համար անցեալն է որ կորսուած է այլեւս, իսկ դիտողին համար ներկան է : Աստղին անցեալը դիտողին համար ճշդիւ և իրականապէս ներկան է : Որովհետև աշխարհներու տեսարանները մէկ տարիէն միւսը և գրեթէ մէկ օրէն երկրորդ օրը փոփոխութիւն կ'ունենան, որով կըրնանք համարել որ այդ տեսարանները անգամ մը որ մեկին միջոցին մէջ՝ յաւիտեանս կը յառա-

Չանան՝ անհունութեան մէջ և տյլեւայ հեռաւորութեանց մէջ գտնուող դիտողաց աչքերուն կը յայտնուին: Մէն մի տեսք կը յաջորդէ նախորդին: և այսպէս հետզհետէ, իբր թէ ծածանմունքներու շարք մը ըլլային որք աշխարհաց անցեալը կը տանին. իբր ներկայ ցոյց տալու իրենց ճամբուն վրայ կարգաւ շարուած դիտողաց: Ինչ որ ներկայացպէս տեսնել կը կարծուի աստղի մը վրայ, արդէն անցեալն է. իսկ ինչ որ արդիապէս կը կատարուի հոն, դեռ չեն կրնար տեսնուիլ: Բտրեկամս, աղէկ մը ըմբռնէ՛, նոյնացո՛ւր ինքզինքդ այս իրական դէպքին. վասն զի շատ կարեւոր է որ աղէկ մը տպաւորես մտքիդ մէջ լուսոյ յաջորդաբար և անընդհատ ընթացքը, և հասկընալ իր ճշգրիտ բնութեանը մէջ, այդ անուրանալի ճշմարտութիւնը. իրաց պատկերը որ լոյսը ձեզի կը բերէ, չէ՛ այն որ ներկայացպէս կայ, այլ այն է, ինչ որ էր նախապէս, բնականապէս լուսոյ գալստեան համար ժամանակի յապաղումը համեմատական ըլլալով այն հեռաւորութեանց, որ զձեզ կը զատեն նոյն առարկայէն:

Գուք աստղերը չէք տեսներ ինչպէս որ են, այլ ինչ որ էին, ձեզի եկող ճառագայթին անկից մեկնած ժամանակ:

Երկնից արդի վիճակը չէ՛ որ տեսնելի է, այլ անոր անցեալ պատմութիւնը: Նոյն իսկ աստղեր կան որ տասը հազար տարիէ ի վեր չկան, բայց դուք դեռ կը տեսնէք զանոնք, վասն զի իրենց ճառագայթները իրենց կործանմանէն շատ առաջ մեկնած են իրենցմէ:

Այս ինչ կրկնեակ աստղը որուն բնութիւնը և շարժումները կ'ըզեւ հետազօտել, հազար ու մէկ խնամք և աշխատութեամբ, արդէն իսկ անգոյ էր՝ աշխարհիս վրայ աստղագէտ գտնուելէն առաջ: Եթէ տեսանելի երկիրքը այսօր անհնամայնայ, կործանի, դուք զանի վաղն ալ կը տեսնէք, դեռ զալիք տարի ալ, հարիւր տարի վերջն ալ, հազար տարի, յիսուն հազար տարի և ա՛լ աւելի, միայն մերձաւորագոյն աստղերը հետզհետէ կը նուազին, կը կորնչին, երբ իրենց լոյսին ձեզի հասնելու ժամանակը՝ հեռաւորութեանը համեմատ, լրացած ըլլայ: Յուշկապարիկ համաստեղութեան ալքա աստղը ամենէն առաջ կը մարի և չորս տարիէն: Իսկ Շնիկը տասը տարիէն, եւն, եւն, եւն: Բարեկամս, հիմայ այլեւս շատ դիւրին է քեզի՛ իմ վկայ եղած տարօրինակ դէպքին մեկնութիւնը տալ և բացատրութիւնը գիտական օրինաց պատշաճեցունել: Եթէ Երկրէդ Գափիլա աստղը կը տեսնէք՝ ո՛չ թէ տեսած ժամանակնուդ վիճակը կը տեսնէք՝ այլ 72 տարի առաջուանը. նոյնպէս Գափիլայէն ալ՝ Երկրիդ 72 տարի՝ առաջուան վիճակը կը տեսնուի, լոյսը նոյն ժամանակին մէջ կը կտրէ այդ միջոց:

Խնդիր.— Տէ՛ր, ուշադրութեամբ հետեւեցայ քու բացատրութեանցդ: Ուրեմն Երկիրս հեռաւորութեան մէջ, աստղի մը պէս կը փայլի, սակայն լուսատու չէ՛:

Լուսմեհ.— Արեւէն առած լոյսն է որ կ'անդրադարձընէ: Ո՛րքան հեռաւոր տեղէ նայիս՝ այնքան ձեր մոլորակը աստղի մը կը նմանի. իր

մակերեւոյթին վրայ՝ Արեւէն տարածուած լուսոյ ճառագայթները կը կեդրոնանան և հեռաւորութեանց համեմատ հեռոճեակէ պզտիկ սկաւառակ մը ցոյց կուտան :

Այսպէս, լուսինէն նայելով՝ Երկրիդ մակերեւոյթը տասնըջորս անգամ աւելի լուսաւոր կ'երեւի քան լուսնոյ լրման ժամանակի լուսինը, վասն զի անկից 14 անգամ աւելի տարածութիւն ունի : Արուսեակէն նայելով՝ Լուսնթագի չափ փայլուն կ'երեւի : Հրատ մոլորակէն եթէ նայուի՝ Լուսաբեր կամ Գիշերավար աստղին (Արուսեակ) չափ, և փուշերով (phasse) կը տեսնուի, ինչպէս Արուսեակը ձեզ կ'երեւի : Արդ ուրեմն, ինքնիրմէ լոյս չունենալով հանդերձ, Երկրիդ լուսնոյ և մոլորակաց պէս երկնից մէջ կը փայլի արեւէն ստացած լոյսը անդրադարձնելով միջոցին մէջ :

Արդ, որովհետեւ Նեպտոնի դէպքերը ձեզի գալու համար 4 ժամուան յետամնացութիւն մը ունին, նոյնպէս Երկրիդ անտարանաց ճառագայթները՝ նոյնքան յետամնացութիւն կ'ունենան հոն հասնելու համար, ինչպէս Գափիլայէն՝ Երկրիդ մերձաւորագէտ 72 տարի յետամնացութեամբ կը տեսնուի :

Խնդիր. — Ո՞րքան ալ նոր և օտարտի ըլլան ինձ համար՝ այդ տեսութիւնները կատարելագէտ կը հասկընամ հիմա թէ ի՞նչպէս 1864ի Հսկտեմբերին, քու մահուանդ թուականին, Գափիլայի վերայ գտնուելովդ՝ այդ թուականին վիճակը չէիր տեսներ, այլ ինչ որ էր 1793ին, քանի որ լոյսին համար եօթանասունըմէկ քարի և ուրը ափս պէտք

էր՝ Երկրիս և աստղին միջեւ եղած անդունդը կարելի անցնելու : Եւ կը հասկընամ նոյնքան պայծառութեամբ թէ այդ տեսածդ ո՛չ տեսիլք, ո՛չ յիշողութեան արտադրութիւն և ո՛չ ալ հրաշալի կամ զերբնական գործ մը, այլ ներկայ, իրական և անուրանալի և աներկբայելի իր մըն է և թէ իսկապէս, ինչ որ, Երկրիս համար շատ ժամանակ անցած բան մ'էր, ներկայ էր այդ հեռաւորութեան մէջ գտնուող դիտողին համար :

Բայց ներէ՛ ինձ, միջանկեալ հարցում մ'ընել : Երկրէն հոն գացած ըլլալովդ, որպէս զի այդ տեսարանին ներկայ ըլլայիր, պէտք էր որ Երկրէս մինչեւ Գափիլլա եղած միջոցը, նոյնինքն լուսոյ արագութեանէն աւելի շուտ ընթացած ըլլայիր :

Լուսնի. — Ահա՛ ճիշդ, ա ըլլի խապես այդ բանին վրայ խօսեցայ քեզի ըսելով քե՛՛ կարծեցի որ այդ միջոցը մտքի արագութեամբ անցայ եւ քե նոյն իսկ մահուան օրը, այդ աստղին դուրեւանը մէջ գտնուեցայ որ զիս հեռացուց եւ զոր այնքան կը տիրէի երկրագունդին վրայ ազրած ժամանակս :

Խնդիր. — Ա՛հ... Տէ՛ր ուսուցիչ, ճշմարտեւ տուած բացատրութեամբ հանդերձ, այդ տեսարանը ո՛չ նուազ զարմացում կը պատճառէ ինձ : Յիրաւի արտաքոյ կարգի երեւոյթ մ'է այդ, և մի միայն այդ զարմանալի յետամնացութեամբ տեսնելը : Աստղերուն տեսնուած ժամանակի վիճակը չտեսնուելը և մէն մի աստղի վրայ՝ մի և նոյն ժամանակի մէջ եղած դէպքերը միանգամայն եւս չի տեսնուելը, այլ իրենց հեռաւորութեանց և լոյսին միջեւ Երկիր գալու համար պէտք եղած ժա-

մանակի համեմատութեամբ անոնց անցեալը տեսնուելը, յիբաւի շատ զարմանք և ապշութիւն կը կը պատճառեն ինձ :

Լուսին. — Այս ճշմարտութեանց վրայ հիաստախիտ հանդերձ, ունեցած արդարացի զարմացումը, կը համարձակիմ ըսելու, թէ այդ նախերգանքն է այն բանին որ հիմա պիտի պատմուի քեզի : Անտարակոյս, նախապէս շատ արտակարգ կերելի, միջոցին մէջ հեռանալով, իրականապէս անցած ժամանակաց դէպքերուն ներկայ գտնուել, բայց դեռ ասոնք շատ օտարոտի և անհեթեթ բաներ չեն, այլ անոնք՝ զորս պիտի հաղորդեմ քեզ, որք շատ աւելի երեւակայական պիտի երեւանքեզի, եթէ կ'ուզես սենկնդրել, քիչ մը վերջը, մահուանս յաջորդ օրուան պատահմանց պատմութիւնը պիտի ընեմ քեզի :

Խնդիր. — Խօսէ՛, խօսէ, Տէր իմ, կ'աղաչեմ, ծարաւի եմ քեզ լսելու :

Գ.

Լուսին. — Երբ Յեղափոխութեան հրապարակի արիւնալից տեսարանէն աչքերս դարձուցի, դէպի Նոդր-Տամի հրապարակին վրայ գտնուած հնօրեայ շէնքի մը վրայ ձգուելու զգացի, ուր ներկայիս եկեղեցւոյն առաջի գաւիթը շինուած է : Այդ ասն փոքրիկ դրանը առաջը հինգ հողի կը գտնուէին որ արեւուն տակ, գլխաբաց, փայտեայ

նստարանի մը վրայ կիսով մը ընկողմանած էին : Երբ յոտս կանգնելով հրապարակին վրայ յառաջացան, անոնց մէջէն ճանչցայ հայրս՝ որ երբէք այսքան երիտասարդացած չէի տեսած . իսկ մայրս աւելի և քան զհայրս, և եղբորդիներէս մին, որ քառասուն տարի առաջ, հօրս մահուան տարին ինքն ալ վախճանած էր : Ի սկզբան շատ դժուար է մարդ ճանչնալ, որովհետեւ փոխանակ երեսն տեսնուելու՝ բարձրէն ուղղաձիգ, գաղաթէն կը տեսնուին, տան մը վերնայարկէն տեսնուածի պէս :

Այսպիսի անսկիւկ հանդիպում մը՝ զիս շատ զարմացուց և այն ատեն յիշեցի թէ՛ պղտիկուց ծնողքէս լսած էի, թէ իմ ծննդնէս առաջ Նոդր-Տամի հրապարակին վրայ կը բնակին եղեր : Անբացատրելի ապշութեան մէջ՝ տեսնութեանս զօրութիւնը խոնջած և յօգնած զգացի . այլ հետ ինչինչ կրնայի որոշել, իբր թէ փոթորկի յորձանք մը զիս կը յափշտակէր . այլ՝ հետ, ինչպէս գիտես, ժամանակի գիտակցութիւնը չունէի :

Երբ վերստին սկսայ առարկաները տեսնել, Պանթէոնի հրապարակին վրայ խուճաք մը տղայոց վազվզելը նշմարեցի : Կերելի թէ այդ դպրոցականները՝ որ գրքերնին և քարտէս տախտակներնին թեւերնուն տակ կը կրէին, ցատկոտելով տուն կը վերադառնային : Մէջերնէն երկուքը՝ տաք տաք վիճաբանութեան մը բռնուած և մասնաբո յապառնական պայքարի մը պիտի սկսէին, երբ երբորդ մը յառաջացաւ զանոնք իբրբմէ զատուու, բայց հարուած մը ստանալով՝ գետին տապալեցաւ Նոյն ժամայն տեսայ կին մը՝ որ վազեց անոնց քով մայրս էր այդ կինը :

Եթե անասուն երկու տարուան իմ երկրային կենցաղիս մէջ՝ այնքան մանրամասն իրադարձութեանց, անակնկալներու անհեթեթութեանց և բոլոր դէպքերու, յիշակարժ պատահմանց մէջ, ա՛հ..... երբէք, ո՛չ երբէք այդքան ուժգին սասանութիւն և ցնցում մը չէի ունեցած, երբ այս տղուն անձին մէջ՝ զիս ինքզինքս ճանչցայ:

Խնդիր. — Ի՞նչ..... ինքզինքդ.....

Լուսեմ. Այո՛, նոյն իսկ ինքս, ես իսկապէս, այն վեցամիայ հասակիս չէկ խոպոպիքներովս, երկնազոյն շապիկովս, միշտ ձմրթկած թեւնոցնեղովս, և մօրս ձեռամբ ասեղնադործուած օձիկովս, այն մօրս, որ դէպի ինձ կը վազէր:

Ահա կատարելապէս հոն կայի, նոյն այն տղան, որ ինչպէս տանս վառարանին վերեւը եղած մանրանկար պատկերին մէջ կերեւի: Մայրս հասաւ և զիս գրկացը մէջ առնելով՝ յանդիմանեց ընկերներըս և յետոյ ձեռքէս բռնելով տուն առաջնորդեց, որ արդի Ուլմ փողոցին բերանը կը գտնուէր: Յետոյ տունէն անցնելով՝ երկուքնիս միասին պարտէզի մը մէջ գտնուեցանք, ուր բազմամարտիս ընկերութիւն մը կար:

Խնդիր. — Ներէ՛, Տէ՛ր ուսուցիչ, քննադատական խորհրդածութիւն մը պիտի ընեմ: Չեմ կրնար հաւանիլ թէ կարելի ըլլայ մարդուս, այսպէս ինքզինքը տեսնալ: Չես կրնար երկու անձ ըլլալ, քանի որ այսօր 72 տարեկան ես, քու տղայութիւնըդ անցած գացած է այլ եւս: Բան մը որ անցած է՝ այլ եւս չես կրնար տեսնել: Վերջապէս չեմ կրնար հասկնալ թէ ծեր ըլլալով, ներկայիս

կարենաս ինքզինքդ ի տղայ հասակի տեսնել: Լուսեմ. — Ի՞նչ պատճառ ունիս՝ նախապէս եղածներսն պէս չընդունելու եւս դասոնք:

Խնդիր. Վասն զի չես կրնար ինքզինքդ կրկնակի տեսնել, թէ՛ տղայ թէ՛ միանգամայն ծեր:

Լուսեմ. — Բարեկամս, կը տեսնեմ որ կատարելապէս չես անդրադառնար: Մինչև հիմայ, ընդհանուր կերպով, բոլոր եղածները հասկըցար և ընդունեցիր. բայց բաւականապէս չդիտեցիր թէ՛ այս վերջին դէպքն ալ, կատարելապէս առաջիններուն կրկնութիւնն է:

Ընդունեցիր անշուշտ, այնպէս չէ՞. թէ երկրիդ պատկերը՝ 72 տարուան մէջ հասած էր ինձ, և թէ դէպքերը նոյն ժամանակամիջոցին մէջ կուգան ինձի, իբր իրենց արդիութիւնը. ի մի բան երկիրը կը տեսնեմ, ինչ որ էր այդ ժամանակը: Կրնաս ուրեմն երեւակայել դարձեալ՝ թէ այն ժամանակի փողոցները տեսնելովս նոյն ժամոյն կը տեսնեմ նաև հոն գտնուող տղաքը: Այս այսպէս ըլլալը՝ միանգամ ընդ միշտ, ընդունած ես թէ ոչ:

Խնդիր. — Կատարելապէս ընդունած եմ:

Լուսեմ. — Արդ, տպա ուրեմն, քանի որ տղայոց խումբը կը տեսնեմ, և որովհետեւ այն ժամանակ անոնց հետ կը գտնուէի, ի՞նչ պատճառ կայ որ չկարենամ տեսնել ինքզինքս նոյնպէս ինչպէս կը տեսնեմ միւս տղաքը:

Խնդիր. — Բայց այդ խումբին մէջ չես այլևս:

Լուսեմ. — Ա... անգամ մը եւս, նոյն իսկ այդ խումբը գոյութիւն չունի հիմայ. բայց զանի կը տեսնեմ լուսոյ ճառագայթից մեկնած ժամա-

նակին վիճակին մէջ՝ որ հիմայ կը հասնի ինձ : Քանի որ տասնըֆինգ , քսան տղայոց խումբը կը նշմարեմ, վասն զի ես եմ որ կը դիտեմ՝ պատճառ է արդեօք որ այն տղան, որ ես էի, անյայտ ըլլայ այդ խումբէն : Ուրիշ դիտողներ պիտի տեսնային զիս միւս ընկերացոյ հետ միասին . ինչո՞ւ համար զարտուղութիւն մը ըլլայ երբ ես եմ զիտողը . զամենքը կը տեսնեմ , զիս ալ անոնց հետ միասին կը տեսնեմ և պէտք է որ տեսնեմ :

Ենկիր . — Ամբողջովին չէի ըմբռնած . ճշմարտիւ յայտնի է թէ տեսնելով այն տղայոց խումբը, որոնց մէջ դուն ալ կը գտնուէիր, բնականաբար պէտք էր որ միեւնոյն խումբին մէջ միեւնոյն ժամանակ ինքզինքդ ալ միասին պիտի տեսնէիր, ինչպէս միւսները կը տեսնէիր :

Լուսին . — Արդ , կը հասկընաս թէ ի՞նչ օտարտի անակնկալ մը եղաւ ինձ այդպիսի տեսարան մը : Այդ տղան իրապէս ես էի , հոգևով և մարմնով , ինչպէս կ'ըսէ ժողովրդական գրոյցը : Ճշմարտապէս ես էի այդ վեցամեայ տղան : Կրկնատեսութիւն մը, տեսիլք մը, ստուերապատկեր մը, կամյուշիկ (réminiscence) մը, պատկեր մը չէր այդ տեսածս՝ այլ իրականութիւնն իսկ , զրահանապէս մտածութեամբ և մարմնով իմ անձս էր, հոն կայի իմ աչքիս առջև : Եթէ միւս զգայարանքներս՝ տեսողութեանս չափ կատարելութիւն ունենային , կարձեմ պիտի կարենայի իսկ մօտենալ և լսել ինքզինքս :

Պարտէզի մը մէջ վանդակապատ աւազանի մը

շուրջը կը ցատկրտէի . քիչ մը վերջը պապս զիս իր ծնկացը վրայ առաւ և խոշոր գրքի մը մէջէն կարդացընել տուաւ :

Ո՛չ, ո՛չ, կը հրամարիմ ատոր տպաւորութիւնը քեզ նկարագրելէ : Քեզ կը թողում ինքզինքիդ մէջ զգալ զանի՝ եթէ այս դէպքին բնագիտական իրականութիւնը աղէկ մը ըմբռնած ես , մի միայն սա կը յայտարարեմ թէ՝ հոգիս երբեք նմանօրինակ անակնկալի մը առջև դռնուած չէր :

Ուրիշ մտախոհութիւն մը եւս զիս կ'ապշեցընէր, և ինքնիրենս կ'ըսէի . այս տղան արդարեւ ես եմ, կենդանի է , կը մեծնայ և դեռ 72 տարի ալ պիտի ապրի . անուրանալի կերպով իմ նստ է : Միւս կողմանէ ես ալ հոս եմ և 72 երկրային տարիքով , ես որ կը մտածեմ , և կը տեսնեմ ամէն բան . զարձեալ ես եմ նոյնքան այդ տղան , ուրեմն անա երկու եմ , հոն երկրին վրայ և հոս միջոցին մէջ :

Կատարելապէս երկու անձ , բայց տարբեր անձեր սակայն : Եթէ ուրիշ հանդիսատեսներ կայնած ըլլան իմ կեցած տեղս , պարտէզին մէջի այդ տղան պիտի կարենան տեսնալ , ինչպէս ես կը տեսնամ զանի . միանգամայն զիս ալ պիտի տեսնեն : Իմ հոգիս այդ տղուն մէջն է , նոյնպէս հաւասարապէս հոս ալ է . իմ միակ հոգիս միեւնոյնն է . մինչ երկու մարմին կ'ոգեւորէ զայն : Ի՞նչ տարօրինակ իրականութիւն , բայց չեմ կրնար ալ ըսել՝ թէ կը սխալիմ և պատրանաց մէջ կը զբտնուիմ կամ տեսագիտական յածանք մը , պատտարանք մը զիս կը մտորեցընէ : Թէ՛ բնականապէս ,

թէ՛ դիտականապէս ինքզինքս միանգամայն տղայ
և ծերացած կը տեսնեմ, հոն և հոս... հոն ան-
հոգ՝ իսկ հոս մտախոհ և յուզեալ :

Խնդիր. — Ճշմարտիւ շատ տարօրինակ և օ-
տարտախ է այդ :

Լուսնն. — Բայց դրականապէս իրական է Ամ-
բողջ արարչագործութեան մէջ վնասէ՛, նայէ՛ թէ՛
ասկէ աւելի ահաւոր տարակերպութիւն (paradoxe)
մը կրնա՞ս գտնել :

Այլ ի՞նչ աւելցընեմ այս պատմութեանս :

Հետեւեցայ ես ինձի. կը մեծնայի այդ լայ-
նատարած մայրաքաղաքին մէջ : Ինքզինքս 1804
տարին գտայ ուր վարժարան մտայ : Յետոյ առա-
ջին զինակրութիւնս կատարեցի երբ Առաջին Հիւ-
պատոսը կայսերական տիպոսով կը պսակուէր .
տեսայ զինքը իր իշխանական և մտախոհ ճակա-
տովը, երբ Քարուզէլի հրապարակին վրայ դորա-
հանդէս կը կատարէր :

Երկրային կենացս մէջ զինքը տեսած չէի,
որով շատ գոհ եղայ երբ արդի վիճակիս մէջ, տե-
սողութեանս չնորհիւ, կրցայ տեսնել զինքը :

Ինքզինքս կրկին անգամ տեսայ բաղմար-
ւետեան վարժարանին 1810ի դասարանին մէջ .
հոն իմ անուական ընկերոջս, Ֆրանսուա Արակօի
հետ խօսելու տեսայ : Այդ երիտասարդը արդէն
կաճառի անգամ եղած և վարժարանին մէջ Մօնժի
(Monge) տեղ անցած էր, Պինէի ճիզվիթակա-
նութեանը պատճառաւ՝ յորմէ գանգատ յայտնած
էր կայսրը : Այսպէսով պատանեկութեանս ամենա-
փայլուն տարիներուն մէջ կը գտնուէի, կը տես-

նէի Արակօի և Հիւմպոլթի հետ ուսումնական
խուզարկու ճամբորդութիւններու ծրագիրներ յօ-
րինելու, որոնց Հիւմպոլթ միայն ընկերացաւ ինձ :
Աւելի վերջը Հարիւր օրեաւ միջոցին ինքզինքս
տեսայ որ աճապարանօք հին Լուքսանպուրկի ծա-
ռաստանէն և Արեւելեան փողոցէն, Սէն-Ժաքի
փողոցէն և անոր պարտէզի ծառաստանէն կ'անց-
նէի, երբ տեսայ սիրուհիս որ առ իս կուգար,
զիս գրկելու ծաղկած եղրուանիներուն մէջ : Եր-
կուքնիս առանձնացած, սրտի արտայայտութեանց,
հոգւոյ յուսթեան, սիրոյ յափշտակութեանց, ե-
րկկոյտեան յարաբերութեանց մէջ գտնուելն՝ ի՛նչ
քաղցր ժամեր են, դու ալ ներկայացար իմ ապ-
շահար տեսութեանս, ո՛չ թէ հեռաւոր և մթագին
յիշողութեամբ՝ այլ կատարեալ ներկայ վիճակովդ :

Կրկին անգամ ներկայ եղայ Մօնմարգր բլրա-
կին վրայ՝ զինակիցներու պատերազմին, մայրա-
քաղաքին վրայ յարձակման, Վանտոմի արձանին
տապալման և խնդութեան աղաղակներու մէջ՝ ա-
նոր փողոցներուն երկայնքը քարշուտին :

Տեսայ անգլիական բանակատեղին և Շան-
զ'Էլիզէի մէջ Բրուսիացիները : Ներկայ եղայ
Լուվրի քանդումին, Կանի ճամբորդութեան և
Լուզովիկոս ԺԸ .ի վերադարձին : Էլպա կղզւոյն
դբօշակը աչքիս առաջ ծածանեցաւ և քիչ մը
վերջը՝ մինչ Ատլանդականի մէջ կը փնտռէի այն
ամայի մենաւոր կղզին, ուր թեւերը ջախջախ-
ւած Արծիւը շղթայակապ կը գտնուէր, Երկրին
թաւալումը աչքիս առջև բերաւ Սուրբ Հեղինէ
կղզին, նշմարեցի կայսրը ժանտաթղչնիին տակ
նստած, խոկերու մէջ խորասոյզ :

Ահա՛ այսպէս անցան աչքիս առջեւէն՝ ներկայապէս նախկին տարիները. հետեւելով միշտ իմ անձիս՝ ամուսնութեանս, ձեռնարկութեանցս, յարաբերութեանցս, ճամբորդութեանցս ուսումնասիրութեանց եւն, եւն, եւն. ներկայ ըլլալով, բոլոր ժամանակակից պատմութեան փուլերը ընդլայնմամբ տեսայ:

Լուղովիկոս Ժ.Ի վերականգնման (Restauration) յաջորդեց Կարոլոս Ժ.Ի առօրեայ կռուա վարութիւնը. 1830 Յուլիսի օրերը՝ շերտափակները (baricades) ցոյց առին: Այս տասնութը տարիները արագապէս անցան. ինքզինքս Լուքսանպուրկի մօտը գտայ այն միջոցին, ուր իմ այդ սիրական սրտոտան կը յարգարէին:

Կրկին անգամ տեսայ Արակօն Դիտարանին վրայ և մտամիտի ժողովուրդ մը՝ նոր ամիլիթատրոնին դրան առջևը խնուած էր: Քուզէնի (Cousin) և Կիզօյի (Guizot) ժամանակի Սորպոնը (համալսարան բնական և բարոյական գիտութեանց) տեսայ: Քիչ վերջը սիրտս ճմլեցաւ՝ մօրս թաղման թափօրը տեսնելով, այն խստակրօն կնոջ, գուցէ փոքր ինչ խիստ իր դատողութեանցը մէջ, բայց, ինչպէս գիտես, միշտ այնքան յարգած և սիրած եմ:

Տեսայ 1848ի փոքրիկ յեղափոխութիւնը որ առաջնոյն չափ զարմացուց զիս, որուն ներկայ գրտնուած էի արդէն: Սակարանի հրապարակին վրայ Լամօրխիտին հանդիպեցայ՝ որ անցեալ տարի մեռաւ. Շան-գ'էյիզէի վրայ ալ՝ հինգ, վեց տարի առաջ վախճանած Քալվանեալը տեսայ: Երկնային զիս արանէս տեսայ Դեկտեմբեր 2ի օրը, ինչպէս որ տեսած էի մենարան աշտարակիս վերեւ

ւէն. և վերջապէս բոլոր զիս ապշեցընող դէպքերը և դեռ ինձ անձանօթ եղածները՝ ամենքն ալ աչքիս առջեւէն մի առ մի հետզհետէ սահեցան անցան գացին:

Խնդիր. — Այս բոլոր դէպքերու տեսարանները արագութեամբ անցան:

Լուսն. — Ձեմ կրնար գնահատել ժամանակին չափը: Բայց բոլոր այս յետախաղաց համայնապատկերը անհրաժեշտ մէկ օրէն նուազ ժամանակի մէջ յաջորդաբար կատարուեցան... գուցէ նոյն իսկ քանի մը ժամուան մէջ:

Խնդիր. — Բայց... այլևս չեմ կարող բան մը հասկընալ և ըմբռնել քու ըսածներէդ: Ներքէ՛ննօրեայ բարեկամի մը. այսպէս խիստ կերպով ընդմիջելուս. ևս կ'երեւակայէի թէ՛ դէպքերն էին որ կը տեսնէիր և ո՛չ թէ ուրուական ստուերներ, միայն թէ լուսոյ ժամանման համար պէտք եղած ժամանակին համեմատ. դէպքերուն տեսութիւնը յետամնաց կը դանուէր, ահա այսչափ: Եթէ 72 երկրային տարիները աչքիդ առջեւէն անցան՝ պէտք էր որ դէպքերն ալ ճիշտ 72 տարի դնէին հետզհետէ տեսնուելու համար՝ և ո՛չ թէ քանի մը ժամ: Եթէ 1793 տարին՝ 1864 տարւոյն քանի մը ժամ: հետեւապէս ետ դարձ մէջ միայն կը տեսնուէր՝ հետեւապէս ետ դարձ ձիդ, պէտք էր որ այդ 1864 տարին ալ՝ 1936ին տեսնուէր քեզի:

Լուսն. — Այս նոր առարկութիւնդ հիմնաւոր է և կ'ազատեցանէ՛ թէ այս երեւոյթից տեսական սկզբունքը կատարելապէս հասկըցած ես, որով հիմայ պէտք է բացատրեմ թէ ի՛նչպէս եղաւ

որ պէտք չմնաց 72 տարի սպասելու իմ կենացս զէպքերուն շարքը տեսնելու համար, և թէ ինչպէս անգիտակից ոյժի մը զըզմամբ, բոլոր ատոնք իրականապէս մէկ օրէն պակաս ժամանակի մէջ տեսայ:

Շարունակելով իմ կենցաղիս շղթան՝ Բարիզի արմատական կատարեալ կերպարանափոխութեան վերջին տարին հասայ: Իմ բարեկամներս և նոյն իսկ զքեզ, աղջիկս և անօր սիրասուն զաւակները տեսայ. վերջապէս ժամանակը եկաւ՝ ուր ինքզինքս մահուան անկողնոյս մէջ տեսայ և ներկայ եղայ յեան տեսարանաց: Ըսել կ'ուզեմ թէ Երկրիդ վրայ վերադարձած էի:

Հոգիս յափշտակութեանց մէջ ընկղմած և շուտով մոռնալով Գափիլլան և Ծերոց Բլուրը, ձգուեցաւ, ինչպէս երբեմն երազի մէջ կը պատահի, զէպ ի իբ տեսութեանց նպատակը: Այնքան օտարօտի և զարմանալի տեսիլքները, բոլոր զօրութիւնս կապտած էին, որ զանոնք սկզբան չկրցայ նշմարել:

Չեմ կարող ըսել քեզ, թէ ի՞նչ օրինօք և ի՞նչ զօրութեամբ հոգիները այսքան արագութեամբ կրնան տեղափոխուիլ մէկ տեղէ միւսը. բայց ստոյգը սա է թէ, մէկ օրուան մէջ յերկիր վերադարձած էի և թէ նոյն իսկ թաղմանս պատրաստութեանց ժամանակ մահուան սենեակս մտայ:

Հիմայ միտ զի՛ր բացատրութեանս:

Քանի որ այս յետադարձ ճամբորդութեանս միջոցին լուսոյ ճառագայթից ընդ առաջ կ'ընթանայի, Երկրէն ունեցած հեռաւորութիւնս ալ հե-

տըզհետէ անդադար կը կորճնար. լոյսը հետզհետէ նուազ ճամբայ կ'ունենար կտրելու, որով դէպքերուն յաջորդութիւնն ալ կը սեղմուէր: Կէս ճամբուն վրայ լուսոյ ճառագայթները միայն 36 տարուոյ յետամնացութեամբ կը հասնէին ինձ, որով ո՛չ թէ 72 տարի առաջուան դէպքերը ցոյց կուտային այլ 36 տարի առաջուանը: Ճամբուն երեք չորրորդին վրայ տեսարանը այլևս 18 տարուան յետամնացութեամբն էր: Իսկ վերջին քառորդ ճամբուն կիսուն ալ մի միայն 9ը տարուան անցքերն էին որ կը ներկայանային և այսպէս հետզհետէ, այնպէս որ, բոլոր կենացս պարագահետքերն մէկ օրուան մէջ խտացած, սեղմուած գրտնուեցան իմ հոգւոյս արագ յետադարձովը, որ միշտ լուսոյ ճառագայթից ընդ առաջ կ'ընթանար:

Խնդիր. — Այս զուգարդութիւնն (combinaison) ալ նուազ զարմանալի երևոյթ մը չէ:

Լուսնի. — Զիս ունկնդրած ժամոնակիդ, մրտքիդ մէջ, ասկից զատ առարկութիւն մը տեղի չունեցաւ:

Խնդիր. — Կը խոստովանիմ թէ այս վերջինն էր. կամ թէ ըսեմ, պատմութեանդ այս վերջին մասը՝ այնքան սրաւած էր զիս, որ չթողուց ինձ ուրիշ մը բանաձեւել:

Լուսնի. — Ուրեմն կը յիշեցընեմ քեզի թէ՛ աստղարաշխական ուրիշ առարկութիւն մը ևս կայ որ հիմա պիտի պարզեմ, որպէս զի մթութիւն չմնայ և ամեն բան լուսաբանուի, սա ալ Երկրիդ շարժումէն առաջ կուգայ:

Ո՛չ միայն երկրագունտիդ օրական շարժումը,

գին կատարելապէս կ'ստանձնէ զանի առանց վերապահման և կը յարի անոր, կ'ըմբռնէ և կ'լիւրացնէ: Ամբողջ տիեզերքը կ'անյայտանայ իր յիշողութեանը առջև, հոգւոյն հիացման առարկային բացարձակ տիրապետութեանը տեղի տալու համար, ինչպէս եղաւ իմ դէպի Երկիր վերադարձիս պարագային: Հողին ուրիշ բան չտեսներ, բացի այդ առարկայէն, պատկերներու և գաղափարներու ընկերակցութեամբ, զորս կ'ստեղծէ և հետըհեատէ ի յայտ կը բերէ:

Խնդիր. — Ուրեմն, դէպի Գափիլլա արագընթաց ճամբորդութեանը և անկից դէպի Երկիր նոյնքան արագութեամբ վերադարձիդ պատճառը այդ հոգեբանական օրէնքն էր, և դու եղազի մէջ եղածէն աւելի ազատութեամբ զործեցիր, վասն զի քու հոգիդ՝ հիւսուածքիդ կազմով կաշկանդուած չէր այլ եւս: Մեր հին խօսակցութեանց մէջ կը յիշեմ թէ շատ անգամ կամքի ուժին վրայ կը ճառէիր:

Ուրեմն այսպէս մահկանացու պատեանիդ թաղումէն առաջ մահուան անկողինդ վերադարձար:

Լուսնն. — Վերադարձած եկած էի և ընտանեացս վիշտն ու հեծութիւնը կ'օրհնէի. քու վըշտացեալ բարեկամութեանդ ցաւերը կ'ամօքէի, կը ջանայի ներշնչել զաւակացս թէ այդ մարմնային պատեանը, ես չէի և թէ երկնային անհուն և անքննելի միջոցին, հոգիներու աշխարհին մէջ կը բընակէի:

Ներկայ եղայ յուղարկաւորութեանս թափօրին և հոն կը նշմարէի զանոնք, որ ինձ բարեկամ կ'ըս-

ւէին և որ անկարեւոր զբաղում մը պատրուակելով, նոյն իսկ իմ մարմինս իր վերջին բնակարանը առաջնորդելու շնորհը չըրին: Գաղափիս հետեւողներուն զանազան խօսակցութիւնները կը լսէի. թէպէտ խաղաղութեան եթերային գաւառաց մէջ գովեստից փափագող չեմք, այսուամենայնիւ երջանիկ զգացի ինքզինքս, տեսնելով լըտրը մտաց մէջ, բարի յիշատակ մը թողած ըլլալ երկրային անցքիս վրայ:

Երբ տապանաքարը դրուեցաւ և մահու ու կենաց աշխարհները իրարմէ զատուեցան, իմ աննընջող մարմնոյս վերջին ողջոյնը տուի, և որովհետեւ Արեւը՝ ոսկեծոպ ծիրանեգոյն մարը կը մոնար, մթնոլորտին մէջ մնացի մինչեւ խաւարին կատարեալ տարածումը. օդային գեղեցիկ տեսարանաց սքանչացման մէջ ընկղմած:

Հիւսիսայգը՝ բեւեռին վրայ իր արծաթագօծ ժապաւինեալ վարագոյրները կը պարզէր. Կասիւպէս սուււպներ կը թօթափէր երկնից տարածութեան մէջ: Լուսինը իրը կոհակաց մէջէն ելլող նոր աշխարհ մը, դանդաղաքայլ արեւելքէն կը բարձրանար: Տեսայ երկնային աստուածութեան մը իշխան շողջողուն Գափիլլան՝ որ իր ամբիծ և կայտառ նայւածքովը զիս կը դիտէր, նշմարեցի զինքը շրջապատող պսակներովը:

Յայնմամ մոռցայ դարձեալ Երկիրը, Լուսինը, Արեւը, գիսաւորները, այդ պայծառ աստղին ձգողական մեծ զօրութեան անվերապահ կերպով հնազանդելու համար, և դէպի ան տարուիլս զգացի ելեքտրական կայծերու արագութեամբ, միմիայն

իմ փափաքիս ազդեցութեամբը: Քիչ ժամանակ վերջը, որուն տեղում թիւնը կարող չեմ հաստատելու, մի և նոյն մանեակին և մի և նոյն բլուրին վրայ հասայ, ուր առջի օրը ձերունինքը տեսած էի, որ Երկրիդ 71 տարի և 8 ամիս յետաձնաց պատմութեամբը կ'ըրաղէին և հիմակ ալ Լիոնի 1793 Յունուար 23ի դէպքերը կը զիտէին: Խոստովանիմ արդեօք Գափիլյայի առ իս ունեցած ձգողութեան պատճառը: Ո՛վ սքանչելիք. արարչագործութեան մէջ անպիսի անտեսանելի կապեր կան, որ մանկանացուաց կապերուն պէս չեն խղուիր. այնպիսի սերտ յարաբերութիւններ կան հողիներու միջեւ, որ հեռուօր անջատումն անգամ միշտ հաստատ կը պահէ զանոնք:

Այս երկրորդ օրուան երեկոյին, երբ զմրուխտագոյն Լուսինը, երրորդ ոսկեփայլ մանեակին մէջ կը մերձուէր (այս է այն աստղին վրայ ժամանակ չափելու աստղագիտական եղանակը), անուշարոյր ծաղիկներով շրջապատուած ամալի պողոտայի մը վրայ գտայ ինքզինքս, կը յառաջանայի հոն ժամանակ մը մտածմանց մէջ խորատոյզ իմ սիրելի էվլիգս տեսայ որ առ իս կուգար, իր մահուան ժամանակի առոյգ տարիքը ունէր. իր կերպարանափոխութեամբը հանդերձ, սրտի զեղման, հազորդիչ և բարութեան նշանները յայտնապէս ցոյց կուտար, . . . նոր կեանքը խանդակաթ զգացում մը դրոշմած էր անոր ճակտին և անոր նայուածքին մէջ:

Հոս տեղը չէ՛, մեր իրարու հանդիպման ուրախութեան վրայ խօսելու. դուցէ օր յմբ, աս

մասին կը խօսիմ քեզի հետ և կը ճառեմ անդէնական սիրոյ յուզմանց վրայ: Հիմայ կ'ուղեմ միայն կապակցել այս ներկայ խնդրոյն հետ աւելցընելով թէ՛ իրեն հետ միասին փնտեցինք երկնից մէջ Երկիրը, որ մեր որգեգրած հայրենիքն էր, ուր խաղաղ և հրջանիկ օրեր անցուցած էինք: Հաճոյքով դարձուցինք մեր տեսութիւնը դէպի այդ լուսաւոր կէտը, մեր արդի վեճակի պայմանները կը ներէին մեզ այդ աշխարհը նշմարել:

Սիրելի էրմեզ միացընել մեր ներկան՝ անցեալ յիշատակներուն, որ լուսեղէն թեւերով մեզի կուգային. այս եղական և մեզ համար նորագոյն հիացման մէջ, ջերմապէս կը փափագէինք տեսնել մեր երիտասարդութեան դէպքերը:

Այսպիսով տեսանք ներկայապէս մեր թարմ սիրոյ տարիները, վանքին պարտէզին մէջի տաղաւարը, ծաղկազարդ պարտէզը, Բարիզի մերձակայ այնքան հաճոյատեսիլ և սիրուն ձեմելիքները, մեր գիւղական առանձնացեալ ճամբորդութիւնները: Այս տարիները դանելու համար, բաւական էր մեզ յառաջանալ միջոցին մէջ, Երկրիդ ուղղութեանը վրայ, մինչեւ այն կէտը՝ ուր այդ տեսարանը լուսոյ թեւերուն վրայ բերուելով, լուսանկարւան էին:

Ահա՛, սիրելի բարեկամս, խօստացած օտարոտի զիտողութիւններս բոլորն ալ քեզի յայտնեցի: Բայց ահաւասիկ արշալոյսը կը յայտնուի, Արուսեակ աստղը սկսաւ նսեմանալ ցօղատարափ այգին ազդեցութեանը տակ: Արդ կը վերադառնամ համաստեղութեանց մէջ:

Խնդիր. — Բառ մըն ալ, ո՛վ Լուսինն, խօսակցու թիւննիս չվերջացած: Քանի որ երկրային պատկերները յաջորդաբար կը տարուին միջոցին մէջ, ուրեմն յաւիտենական ներկայութիւն մը կայ, աստիճանաբար կարգեալ այդ միջոցին մէջ մինչև այն սահմանը, ուր միայն կը սահմանափակուի հոգեկան տեսողութեան զօրութիւնը:


Լուսին. — Այո՛, բարեկա՛մս, օրինակի համար, ենթադրենք առաջին դիտող մը լուսնոյ մէջ, երկրային զէպքերը իրենց գործադրութենէն մէկ և 1/4 մանրերկրորդ վերջը պիտի տեսնէ: Երկրորդ դիտող մը դնանք չորս անգամ աւելի հեռուն, ան ալ հինգ մանրերկրորդ յետամնացութեամբ պիտի տեսնէ: Իսկ երրորդ մը, տասը մանրերկրորդ գործադրութենէն վերջը առաջինէն երկու անգամ աւելի հեռուն մէկ չորրորդ մը քսան մանրերրորդ յետամնացութեամբ և այսպէս հետզհետէ: Արեւուն հեռաւորութենէն, արդէն ութը վայրկեան և տասներեք մանրերկրորդի ուշանալ մը կայ: Ինչպէս տեսանք, մոլորակաց վրայ հասնելու համար բազում ժամերու կարօտ է: Աւելի հեռուն՝ ամիսներու և տարիներու պէտք կայ:

Յուշկապարկի ալֆայէն՝ երկրային արարքները տեղի ունենալէն երեք քարի և վեց ամիսէն կրնան տեսնուիլ: Աստղեր կան այնքան հեռուն, ուր լոյսը հասնելու համար բազում տարիներու պէտք ունի, և նոյն իսկ բազում հազարաւոր տարիներու: Որգամածներ կան, ուր լոյսը միլիոնաւոր տարիներ ճամբորդելէն վերջը կը հասնի:

Խնդիր. — Ուրեմն, պատմական կամ երկրա-

բանական անյեղալ զէպքի մը վկայ ըլլալու համար բաւական է, այդ սուր տեսողութեամբ, հեռանալ ըստ բաւականին: Ուրեմն կարելի չէ՞ արդեօք՝ Ջրհեղեղը, Դրախքը, Ագամբ Էլն. Էլն. ճշմարտապէս տեսնել:

Լուսին. — Ըսի քեզի, ո՛վ ի՞մ հնօրեայ բարեկա՛մս, թէ երբ Արեւը այս կիսագնտին վրայ ծագի: ոգիները խոյս կուտան: Օր մը՝ երկրորդ խօսակցութեամբ մը պիտի կարենամ աւելի խորը թափանցել խնդրոյ մը, սրուն այսօր մի միայն ուրուագիծը ներկայեցի, այդ խնդրոյն հորիզոնը շատ ընդարձակ է որ թէ՛ նոր է և թէ՛ բերրի: Աստղերը զիս կը կանչեն, և արդէն իսկ անյայտացան, մնաս բարեկա՛ւ, Խնդիր, մնաս բարեկա՛ւ:



ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԳՐՈՒԱԳԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԴՐՈՒԱԳ (*)

ՄԱԿՐՆԹԱՑՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԻ Ա.

Խնդիր. — Ո՛վ Լուսին, արշալոյսին ծագումովը քեզի հետ ունեցած յարաբերութեանս ընդհատումը՝ երկայն ժամանակէ ի վեր տարօրինակ գաղտնիքներու խորը թափանցելու ցանկացող ըրաւ Հոգիս: Ինչպէս աղայ մը, որուն փափագած համեղ պատուը ցոյց արուելով, կը ցանկայ զանի խածնել և երբ անգամ մը ճաշակէ, կրկին անգամ կը բողձայ, այնպէս ալ իմ հետաքրքրութիւնս կը խնդրէ և կը փափաքի ընութեան նորանոր տարակերպութիւնները լիովին ըմբռնել:

Արդեօք յանդուգն անգաղանապահութիւն կ'ըլլայ եթէ քանի մը յաւելուածական հարցումներ ընեմ զորս բարեկամներէս ոմանք ինձ հաղորդեցին երբ մասնակի ըրի զիբրնք, մեր նախորդ յարաբերութեանց արդեանցը. ուստի կը խնդրեմ որ շարունակես քու անդենական սպասուրութեանց պատմութիւնը:

Լուսին. — Որքան ալ քու հոգիդ կատարելապէս պատրաստ ըլլայ իմ խօսքերս լաւ ընդունելու, չեմ կրնար հաւանիլ այդպիսի պարզ հետաքրքրութեան մը. այսու ամենայնիւ, համոզ-

(*) Գրեալ 1867:

ւած եմ թէ խնդրոյն ամեն մանրամասնութեանց բացայայտ իրականութիւններ ըլլալը հաւասարապէս աչքիդ զարկած չէ: Միտթիքական ալտորանութիւններ ըսելով ամբաստանեցին այս վէպերս: Կատարելապէս չկրցան հասկընալ թէ՛ ասոնք ս'չ վիպասանութիւն են. ս'չ ալ քմածին ստեղծումներ, այլ գիտական ճշմարտութիւններ, բնագիտական իրողութիւն մը, որ ապացուցանելի, ապացուցուած և անվիճելի է, և թէ նոյնքան դրական է, որքան երջնաքարի մը անկումը կամ թնդանօթի սոււրին շարժումը:

Դուն և բարեկամներդ ատոնց իրականութիւնը լաւ չէք հասկնար, որովհետև այդ իրականութիւնները, օտար շրջանակի մը մէջ և ձեր ապաւորութենէն դուրս կը կատարուին, և ձեր երկրային զգայարանաց անհասանելի են: Բնական է որ չկարենաք հասկընալ ներքէ համարձակութեանս, բայց հողեկան աշխարհին մէջ միշտ համարձակախօս են, նոյն իսկ մասձութիւններն ալ տեսանելի են): Դուք լսկ ա'յն կը հասկընաք ինչ որ ձեր ապաւորութեանց աշխարհին կը պատկանի:

Եւ որովհետև պատրաստ էք միջոցի և ժամանակի վրայ ձեր ունեցած գաղափարներն իբրև բացարձակ նկատել, որոնք մի միայն յարաբերական են, ձեր շրջանակէն արտաքոյ ճշմարտութեանց և այն ամեն բաներուն, որոնք երկրային գործարանական կարողութիւններէն դուրս են, անուշաղիբ և անունկնդիր էք: Այսպէս ուրեմն, բարեկա'մս, ճշմարիտ ծառայութիւն մը մատուցած չեմ ըլլար:

Իթէ շարունակեմ անդենական դիտողութեանցս պատմութիւնը:

Խնդիր. — Հաւատա՛, ս'վ Լումեն, թէ պարզ հետաքրքրութեան ոգւով չէ որ կը համարձակիմ զքեզ ոգել անտեսանելի աշխարհին ծոցէն՝ ուր վե՛հ հոգիները անճառելի վայելք մը կը ճաշակեն: Բայց ես շատ լաւ կը հասկընամ թէ, այսպէսով առաւել եւս իմացընել կ'ուզես խնդրոյն գերի վերոյ մեծութիւնը. ես ալ ուսումնասիրելու աննչով է որ, առաջիններէն աւելի նոր, և թէ կրնամ ըսել, աւելի յանդուգն, աւելի խիզախ և անհասանելի տեսիլքներ կը փնտռեմ: Մտածելով, մտածելով վերջապէս հաւատացի թէ, ինչ որ գիտենք ոչինչ է և չգիտցածնիս ամեն ինչ է, որով պատրաստ եմ ամենայն ինչ ընդունելու, ուստի կ'աղաչեմ, կը սղաղատիմ, քու տեսութեանցդ և ապաւորութեանցդ մասնակից բրէ՛ դիս:

Լումեն. — Ճշմարտե՛ կ'ըսեմ քեզի, բարեկա'մս, կա'մ ամենեւին պատրաստ չեմ զիս լսելու և կա'մ չափազանց յօժարակամ ես: Առաջին պարագային հասկացողութիւնդ կը պակսի. իսկ երկրորդին մէջ՝ շատ զիւրաճաւան կ'ըլլաս և արժէքը չպիտի կարենաս գնահատել, ուստի կը մեկնիմ:

Խնդիր. — Մի՛ այդպէս... ս'վ դուն, երկրաւոր կենացս ամենասիրելի ընկերակիցը:

Լումեն. — Աւելին կայ, այն դէպքերը զորս հիմա պիտի պատմեմ, առաջիններէն շատ աւելի արտակարգ են, գիտցած եղիր:

Խնդիր. — Ես ծարուի եմ ինչպէս Տանտուլոսը, իր լճին մէջ, ինչպէս Քաւարանին Չէրդ

Երգին ոգիները, ինչպէս Հէսպէրեան Քոյրերուն հոգաւէտ ինձորներուն կարկառուած բազուկները, ինչպէս նաև Եւայի տենչանքը:

Լուսինն. — Երկրէն մեկնելէս քիչ մը վերջը, հոգուս աչքերը փրօթէն կը տարուէին դէպ ի այդ հայրենիքը, երբ հիւսիսային լայնութեան 45 աստիճանին և երկայնութեան 35 աստիճանին հասման կէտին վրայ ուշադիր զննութիւն մը կատարելով, Սև Ծովուն վերջ մոխրագոյն հաստատուն եռանկիւնաձև ցամաք մը տեսայ, որուն արևմտեան կզերքին վրայ, իմ երկրաւոր հէք կզրայրները կատարարար գիրար կրօպանելին:

Սկսայ մտածել այս բարբարոս սփորութեան վրայ, որ իր թէ Պասերազմի վառք մը, զեռ ձեր վրայ կը ծանրանայ, և ճանչցայ թէ Խրիմի այդ անկիւնին մէջ 300,000 մարդիկ կը խորտակուէին, առանց գիտնալու զիրար ջարդելու պատճառներն:

Եւրոպայի վրայէն միին ամպեր անցան: Այդ պահուն Փափիլլայի վրայ չէի, այլ միջոցին մէջ, Երկրիդ և այդ աստղին միջև, գրեթէ Վէկայի հետաւորութեան կէս ճամբուն վրայ: Երկրէդ մեկնելէս ի վեր կ'ուզողուէի դէպ ի այն սասեղաց կոյսը, որ ձեր երկրէն տեսանելի է Վէկայի ձախակողմը: Բայց սակայն մտածութիւնս երբեմն երբեմն դէպի Երկրիդ կը վերադառնար: Վերոյիշեալ դիտողութեանէս քիչ մը վերջը, աչքերս դէպ ի Բարիդ ուղղուեցան և զարմացման մէջ մնացի, երբ տեսայ ժողովրդական ապստամբութիւն մը, աւելի յարատև ուշադրութեամբ մը դիտելով, քաղաքապե-

տարանին մօտ ծառազարդ պողոտաներուն վրայ տեսայ շերտափակներ բարձրացած, ուր քաղաքացիներ իրարու դէմ հրացաններ կը պարպէին: Նախ այնպէս կարծեցի թէ ուր յեղափոխութիւն մը տեղի կունենար և թէ Նարոյէտն Գ.ը տապալած էր: Բայց հոգիներու զազանի յարաբերութեանց շնորհիւ, տեսութիւնս Յոպուր Սէնդ-Անդուանի կողմի շերտափակին վրայ ձգուեցաւ, ուր Տընի-Օկիւտ Աֆի արքեպիսկոպոսը տեսայ դիտապատտ, որուն հետ փոքր ինչ ծանօթութիւն ըրած էի. իր չէկ աչքերը առանց տեսնելու, կը նայէին Երկինքը, ուր ես կայի, ձեռքերուն մէջ կանանչազարդ ճիւղ մը բռնած էր: Ուրեմն 1848ի օրերն էին և մասնաւորապէս Յունիսի 25ի օրն էր որ կը տեսնէի: Քիչ մը վերջը — զուցէ քանի մը ժամ — երբ երեւակայութիւնս և միաքս կը փընտուէին՝ 1848ի ապրիլն՝ 1854 ապրիլն վերջը տեսնելուս մեկնութիւնը, յանկարծ դարձեալ Երկրիդ ձգուեցայ և Լիոն քաղաքին մեծ հրապարակին վրայ կուտայն դրօշակաց բաշխումը նշմարեցի: Զանացի սրօշկ այդ բաշխումը կատարող պաշտօնական անձնաւորութիւնը, անոր համազգեստը ճանչցայ և յիշեցի թէ Լուի-Ֆրիլիփի գահ բարձրացումէն վերջ, երիտասարդ Օրլէանի դուքսը, Քրոնսական ճարտարարուեստի (Լիոն) մայրաքաղաքին մէջ ծագած շփոթութիւնները խաղաղեցընելու համար հոն դրկուած էր: Ասկից կը հետեւի թէ 1854էն և 1848էն վերջը, աչքիս առաջ ունէի 1831ի մէկ դէպքը:

Յետոյ տեսութեանս հանդիպեցաւ Բարիլի մէջ

հանրային խրախճանութեան մէկ օրը : Գէր, մեծափոր և կտրմրայտ թագաւոր մը, սքանչելի քառանիւ թեթև կառքի մը մէջ նստած, Բօն-Նէօֆէն (նոր կամուրջ) կ'անցնէր : Գեղեցիկ օդ մը կար այն օրը, օրիորդներ և փոքրիկ աղջկուհիք, ճերմակ եղբււանիսով (lilas) զարդարուած կողովի նման, կամուրջին մէջտեղի հողատափին վրայ կայնած էին, այլանդակ գոյն զգոյն կենդանիներ օդին մէջ Բարիդի վրայ կը ծածանէին, ի հարկէ, անտարակոյս Պուրպոնեան ցեղին Ֆրանսա վերադարձն էր այս, վերջին մանրամասնութիւններէն բան մը չպիտի հասկընայի՝ եթէ չյիշէի թէ այն օրը կենդանակերպ շատ մը օգտապարիկներ օդին մէջ արձակած էին. երկնից բարձրութենէն՝ անոնց օդին մէջ անձարակօրէն, Բարիդի ասնեաց վրայ ծածանելը կը տեսուէր :

Անցեալ դէպքի մը տեսութիւնը կը հասկընամ լոյսի օրինաց միջոցաւ. բայց տեսնել զանոնք իրենց իրական կատարման հակառակ կարգաչարութեամբը, ահա այդ էր որ ցնորական կ'երեւէր ինձ և զիս ստեղծողի ապշութեան մէջ կը թողուր :

Բայց սակայն քանի որ դէպքերը առջեւ էին և չէի կրնար ուրանալ, ուրեմն սկսայ փնտոնել թէ ի՞նչ ենթադրութեամբ կրնայի մեկնել այսպիսի եզականութիւն մը :

Առաջին ենթադրութիւնը որ ըրի սա էր թէ՛ յիբաւի Երկիրդ էր որ կը տեսնէի. ճակատագրական կերպով (որուն դատմելիքը մի միայն Աստուծոյ ծանօթ է) Ֆրանսայի պատմութիւնը վերստին կ'անցնի միեւնոյն անցեալ փուլերէն և յա-

ռաջանալով մինչև իր փայլման գագաթնակէան հասած՝ ի հիացումն ազգաց, և հիմա տատանմամբ կը վերադառնայ դէպ ի իր ծագումը. ինչպէս մագնիսացեալ ասեղին ատտանումը, ինչպէս նաև աստեղաց շարժումները : Այն անձնաւորութիւնները որոնք Օրլէանի դուքսը և Լուզովիկոս ԺԸ-ը կը թուին ըլլալ, գուցէ ուրիշ իշխաններ էին, որոնք կը կրկնէին ճշտութեամբ ինչ որ հիները ըրած էին : Այս ենթադրութիւնը սակայն շատ արատաւարգ երեւցաւ ինձ և կանգ առի, աւելի բանաւոր ենթադրութիւն մը բնելու համար :

Ինքնիրենս կ'րտէի թէ՛ միջոցին այսքան բազմաթիւ աստեղաց և անոնց բոլորաթիքը չըլլայ մօլորակաց մէջ արդեօք ինչ պատահականութեամբ կարելի կ'ըլլայ Երկրին յարեւմտան աշխարհ մը գտնել :

Հաւանականութեան հաշիւը այս հարցման կը պատասխանէ : Ո՛րքան մեծ է աշխարհաց թիւը՝ ա՛յնքան հաւանականութիւն կայ, որ բնութեան զօրութիւնները ծնունդ տուած ըլլան Երկրից նման աշխարհներու :

Արդ, աշխարհաց իրական թիւը, մարդկային գրաւոր թուահաշիւէն կամ կարելի եղած թուարկութենէն շատ վեր է : Եթէ կարենայինք անհունութիւնը հասկընալ և բմբոնել, գուցէ ներելի պիտի բլլար մեզ բոնի թէ այդ բիւր անհուն է : Ուստի կը հետեցընեմ, ի նպատակ այն ենթադրութեանս թէ մեծ հաւանականութիւն մը կայ Երկրիդ յար և նման, մէկէ աւելի աշխարհաց գոյութեան, որոնց մակերեւոյթին վրայ, մի և նոյն դէպքերու յաջորդութիւնը տեղի ունեցած ըլլայ

և թէ համայնը կենդանեաց և բուսոց տեսակներով բնակութեամբ ըլլան, նոյնպէս մի և նոյն մարդկութեամբ, մի և նոյն անձնաւորութեամբ և մի և նոյն ընտանիքներով:

Երկրորդ, ինքնիրենս կը հարցնէի թէ, արդեօք այս աշխարհը, Երկրին կատարելապէս նման ըլլալով հանդերձ, կտրելի չէ Երկրին ընդդիմակաց (symetrique) ըլլալը ենթադրել: — Հոս երկրաչափական ձևերու և բնականցական սկզբանց մէջ կը մտնեմ. — Վերջապէս սա եզրակացութեան եկայ թէ, կտրելի է որ այս տեսած աշխարհս Երկրին յար և նմանը ըլլայ, բայց սակայն ցերեակ կարգաշարութեամբ: Ինչպէս, երբ հայելիի մը մէջ կը դիտես ինքզինքդ, կը տեսնես որ քու աջ ձեռքիդ վրայի մատանին, ձախ ձեռքիդ մատին փոխադրուած է. որով անոր նշանակութիւնը կը փոխուի. նոյնպէս, երբ աջ աչքդ դոցես, պակերդ ձախ աչքը կը դոցէ, և երբ աջ թևդ շարժես, նա ձախը կը վերցնէ: Արդեօք անկտրելի՞ է որ այս անհամար աստեղաց մէջ, ճիշդ հակառակը ըլլալով, աշխարհ մը գտնուի: Ընդհակառակն, անշուշտ անհամար աշխարհաց մէջ անկտրելից չկայ և աւելի հաւանական է որ ո՛չ թէ միայն մէկ՝ այլ Եստեբ կան իրարու նմանող: Բնութիւնը ո՛չ թէ միայն կրկին արտադրութիւններ ըրած է, այլ ամեն տեսակ ձևեր և սակզմագործական խաղեր գործած է: Վերջապէս կը մտածէի թէ այս աշխարհը, որ կը տեսնէի այդ անցքերը, Երկիրը չէր, այլ անոր նմանը, որուն պատմութիւնը ճիշդ ձերինն հակառակն էր:

Եւնդիր. — Ես ալ այդ գաղափարը ունեցայ թէ այդ բանը կարելի է: Արդեօք զիւրութիւն չունին քննելու, աստղագիտականօրէն ճշդելով անոր գիրքը և ստուգել ճշմարտապէս թէ՛ յիշուի Երկիրն է թէ ո՛չ ուրիշ սասալ մը որ կը տեսնուի:

Լուսնու. — Ծիշդ, ես ալ այդ ըրի անմիջապէս և այս քննութիւնը, իմ ունեցած գաղափարին մէջ հաստատեց զիս: Այն աստղը, որուն մէջ երկրի դէպքերուն նման, բայց հակառակ կարգու չորս դէպքերը տեսայ. իր նախնական գիրքին մէջ չէր տեսնուիր:

Այդ պղտիկ Սեզան համաստեղութիւնը անյայտ եղած էր: Կը յիշես իմ սոջի գրուագիս մէջ Երկիրը՝ երկնից այդ կողմը տեսած ըլլալս ըսած էի քեզի. հիմա հան անձանօթ աստղերու անկանոն բազմանկիւն մը ձևացած է: Այսպէս, ալ համադրուեցայ թէ, տեսածս Երկիրը չէր, այլ եւս ատրակուսելու տեղի չկար. հաւանեցայ թէ հիմա աչքիս առած եզամը Երկրէն աւելի հեռաքրքրուշարժ աշխարհ մըն էր և կերևի թէ անոր պատմութիւնը ձերինն հակառակ կերպով կը պատկերանայ:

Յիշուի քանի մը պատահարներ, Երկրին դէպքերուն համադրատուիան չերեցան ինձ, բայց ընդհանուր կերպով անոնց զիպակցութիւնը շատ նշմարելի և նշանակելի էր. այնքան աւելի որ, այն արնա Եստեբն ըր, զոր կը տածեմ պատերազմը հաւրոշներուն դէմ, զիս յուսադրած էր թէ ուրիշ աշխարհներու վրայ այդ աղէտը չպիտի գտնուէր:

այց ընդհակառակն, վկայ եղած դէպքերուս մեծ մասը պատերազմներ և կամ անոնց պատրաստութիւններն էին:

Ճակատամարտէ մը վերջ, որ Վաթիբըրօնին շատ կը նմանէր, բուրգերուն պատերազմը տեսայ, Նարպէտն կայսեր նման մէկը Առաջին հիւպատոս եղաւ, անկից վերջ խռովութիւն մը ծագեցաւ: Քիչ ժամանակ յետոյ Վերսայլի զգեակին հրապարակին վրայ շատ մը սգազարդ կառքեր անտայ. Վիլ-տ'Ալբրէի նեղ ճամբու մը մէջ տեսայ, իր գանդաղ գնացքովը, բուստրան ժան-ժաք-Ռուսան, որ ի հարկէ նոյն միջոցին Լուզովիկոս ժե. ի մահւան վրայ կ'իմաստասիրէր: Անկից վերջը ամենէն աւելի ուշադրութիւնս գրուող զէպքը եղաւ, Լուզովիկոս ժե. ի իշխանութեան առաջին տարիներուն մէջ ամենական հանդէսներ, Խնամակալութեան ամենաբարձր, ուր Ֆրանսայի գանձը երեք կամ չորս պաշտեցեալ պալատական զեղուհիներու մասներուն մէջ մարգարտի կաթիլներու պէս կը սահէր կ'անհետանար: Ֆէրնէի իր ծառատանին մէջ Վոլթէրը տեսայ իր սովորական բամբակէ գրտակովը. անկից վերջը Պոսիւէն, որ Մոյի եզիտ կոպոսական պալատին պզտիկ տափին վրայ կը շրջադաշէր, այն տեղը՝ ուր երկաթուղին կը կարէ կանցնի, բայց ստիպոյն ևս չէի նշմարեր այդ տեսակ ձեւարուեստի մը հետքը:

Դէպքերու շարքին այս շարունակութեանը մէջ տեսայ ուղիներու և ճանապարհաց վրայ ձեւալընթաց կառքեր: Շոգիի գործածութիւնը արդի գործարաններովը միասին անյայտացած էր: Հեռագրութիւնը բնաջինջ եղած էր: Ինչպէս նաև բոլոր ելեքարական գործառնութիւնները: Օղապարիկները որ մերթ ընդ մերթ տեսութեանս կը

դիպէին՝ այժմ կորսուած էին. վերջինը որ տեսայ Աննոնէի մէջ, տէրութեան պաշտօնէից ներկայութեանը, Մոնկոլֆիէ եղբորց ամուսնու գունտին վերելքն էր: Աշխարհին երեսը փոխուած էր: Բարիզ, Լիոն, Մարսէյլ, Հավր, մանաւանդ Վերսայլ անճանաչելի դարձած էին. ասոնցմէ առաջինները իրենց անաղին գործունէութեան շարժումը կորուսած էին. իսկ վերջինը՝ Վերսայլ՝ անբաղդատելի փայլ մը ստացած էր: Անկատար գաղափար մը ունեցած էի Վերսայլի թագաւորական հանդէսներուն պայծառութեան վրայ. գանոնք հոնկէ տեսելու համար շատ գոհ եղայ. ոչ նուազ գոհունակութեամբ տեսայ նոյն ինքն Լուզովիկոս ժե. ի քարեմտեան դարտաստիին վրայ՝ շրջապատեալ շքազգեստ բազում աւագանի պարոններէ: Երեկոյեան զէմ էր, բոցավառ արեւու մը ճառագայթները կը ցրլանային թագաւորական շէնքին ճակատը. պերճաշուք զսցեր մարմարեայ սանդուխներէն կիջնային լրջադէմ կամ լսին ու մթին ծառագարդ պոլոսայից մէջ կը հեռանային:

Տեսութիւնս նախապատուութիւն տուաւ Ֆրանսայի կամ աւելի լաւ ըսեմ, այդ անձանոթ աշխարհին այն մասին, որ Ֆրանսայի կը համապատասխանէր. վասն զի մարդս, որքան ալ հեռի ըլլայ իր հայրենիքէն, միշտ գտնի կը յիշէ, և ամենայն երջանկութեամբ կը ձգուի սու այն ամեն անգամ որ գայն կը մատնէ: Մի՛ կարծեր թէ անմարմին հոգիները անտարբեր վիճակ մը կ'ունենան:

Ո՛չ: Վերսայլին մեր յիշողութեան աղատ կարողութիւնը կը պահենք և մեր սիրտը մի միայն

հոգեկան կենաց մէջ չընկղմիր: Ուրեմն ներքին վայելքի զգացումով մըն է — որուն գնահատումը քեզ կը թողում — որ կրկին անգամ կը տեսնեմ ծառայիլ աչքիս առջեւ մեր Յրանսոյի բոլոր պատմութիւնը և որ կը կատարուի ներհակ կարգաշարութեամբ:

Ժողովրդի միաբուռն վերջը՝ ինքնակալի մը վեհապետութիւնը տեսայ: Ապա իշխանական աւատակետութիւն. Մազարէն Ռիչլիէօ, Լուզովիկոս ԺԳ, և Հենրիկոս Դ. Սէն-ժէրմէնի մէջ ի յայտ եկան: Պարպոնները և Կիզերը վերստին սկսան իրենց թերամարտը, նշմարեցի Սր. Բարթոլոմէոսի ղէպքը: Երևցան նաև պատմական մասնաւոր քանի մը ղէպքեր, օրինակի համար, Սր. Յովնանու եկեղեցւոյն առաջքը, Շօմոնի քանի մը կախարդական արարքը և Վաստի մէջ բողոքականաց կոտորածը:

Մարդկային կատակերգութիւնն որ շատ անգամ սղորդութեան կը վերածուի:

Յանկարծ՝ միջոցին մէջ 1577ի իրաձեւ սրանչելի գիտաւորը ցցուեցաւ աչքիս առաջ: Պայծառափայլ գաշախի մը վրայ, նշմարեցի Յրանսուա Ա.ը և Կարոլոս Ե.ը, որ զիրար սղջագուրեցին: Լուզովիկոս ԺԱ.ը տեսնուեցաւ Պատթիլլի մէկ դարատափին վրայ իր երկու տխուր գործակիցներովը: Քիչ վերջը՝ երբ տեսութիւնս Ռուսնի մէկ հրապարակին վրայ տարուեցաւ, հոն մուտի և բոցերու մէջ, Օրլէանի Կոյսին մարմնոյն լափուիլը տեսայ:

Համոզուելով այլ ևս որ այս տեսած աշխարհաճերկին հակամասն է, զուշակեցի ասկէ վերջը

ներկայանայիք ղէպքերը: Այսպէս, Սր. Լուզովիկոսը Թունուզի եզերքը, մոխրի վրայ, հոգեվարք վիճակի մէջ պատկած տեսնելէս վերջը, ութերորդ խաչակրութեան ներկայ գտնուեցայ, յետոյ երրորդին, ուր իր շէկ մօրուսէն ճանչցայ Փրեանքիկոս Պարպարուսան. յետոյ վերջապէս ներկայ եղայ առաջին խաչակրութեան, ուր Պետրոս ճրգնաւորի և Կոստոնթնուպոլիսի տեսութիւնը յիշեցուց ինձ զԹասոսն. այս ամենքը շատ զարմանայի չէին, արզէն կ'սպասէի անոնց: Յետոյ տեսայ Հիւկ-Քարէլը, որ շուրջառազեհատ, եկեղեցական թափօրի մը կը նախազանէր, և Թօրեաքուսի ժողովին մէջեղած սրտումը, որուն համաձայն տատաւածային արդարութիւնը պիտի յայտնուէր Ֆոնթանայի պատերազմին մէջ և թէ Կարոլոս ճաղաքը հարիւր հազար մարդ ջարդել պիտի տար Մերովնիկեան աշնուականութեան հետ: Մեծն Կարոլոսի, Հուովմի մէջ թագադրութիւնը տեսայ: Մաքսոններու և Լոմպարդացիներու ղէմ պատերազմը. Ծորը Մարթէլի զՄարակինոսները ջախջախելը. Տակոպեր թագաւորին Սէն-Տընի արայարածը կառուցանել տալը, ինչպէս նաև Ալէքսանդր Գ. Պապին՝ Նոթր-Տամը հիմնարկելը: Վիսիքոթներուն, Վանտահներուն, Օսթրոքոթներուն, Կովիսի և Մէրուվէին՝ Սալեանց երկրին մէջ երեսուճը. վերջապէս Յրանսոյի պատմութեան սկզբնաւորութիւնէն միշտ հակառակ կարգով, յաջորդութեանց բոլորումը. և ահա՛ ինչ որ կատակած էի, ամբողջը կատարուեցաւ: Դեռ շատ մը պատմական կարեւոր խնդիրներ, որոնք մինչև ևս յայժմ ինձ մուտ մնացած

էին, տեսանելի եղան: Այսպէս, ստուգեցի ի մէջ
այլոց՝ թէ Ֆրանսացիները Հռենոս գետին աջա-
կողմեան եզերաց բնիկներն են և թէ Ալմանները
իրաւունք չունին այդ գետին սեպհականութեան
և եւս առաւել անոր ձախակողմեան եզերաց:

Յիրաւի ինձ համար վերջին ծայր չա՛ն մը
կ'որ. որ չեմ կրնար բացատրել այս կերպով, այ-
ցելիլու շատնոց վերափոփոխեալ երկիրները և ներ-
կայ ըլլալ այնպիսի դէպքերու՝ որոնց վրայ պատ-
մոյթեան առած յաճախ խորէական ծանօթու-
թիւնները տարտամ զազախար մը ձգած էին: Ըն-
դարձակօժտու այ և փայլուն արդի քաղաքականու-
թեան մայրաքաղաքը արագապէս ծերացած էր,
մինչև փոքրիկ հասարակ քաղաքի մը վերածուելու
չա՛: պղտկցած էր. սակայն առամնաւոր պա-
րկայներ կը շրջապատէին զանի: Հեազհեաէ հիա-
ցուց զին ժե.րդ դարուն գեղեցիկ քաղաքին հե-
տաքրքրաշարժ ճարտարապետութիւնը, անուանի
Նէպի աշաարակը, Սէն-ժէրմէն- աէ-Բրէի ընդար-
ձակ վանատունը, հոն՝ ուր այսօր Սէն-ժաքի աշ-
տարակին պարտէզը կը ծաղկի. տեսայ նաև ալ-
քիմիագէտ Նիքօլա Յլամէլի մթին բակը: Սե-
պաձև և գլանաձև գետեզերքի վրայ բուսած սուն-
կերու նման, տանիքները եզական երևույթ մը
կուտային:

Յետոյ այդ աւատականութեան տեսարաններն
ալ անյայտացան, տեղի աւալով Սեն գետին մէջ
չինուած պարզ պարսպապատ զղեակի մը՝ շրջա-
պատեալ քանի մը անակներէ և վերջապէս՝ ճշմա-
րիտ ազատ դաշտի մը վերածուեցաւ, ուր մի միայն
քանի մը ցանցառ հիւղակներ կը տեսուէին:

Քարիզ այլևս չէր մնացած, Սէն գետի ջրերը խո-
տերու և ուտիներու մէջէն լո՛րիկ մնչիկ կը փախ-
չէին: Նոյն միջոցին կը տեսնէի թէ՛ այն քաղա-
քակրթութեան կեդրոնը տեղափոխուած զէպի
հարաւ իջած էր: Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, սիրելի
բարեկամս, երբէք և մ'չ մի անթիւ այնքան ուժ-
գին հրճուանք զգացած չէի, երբ իր փառաւո-
րութեանը մէջ տեսայ կեսարներուն Հոովմը:
Յաղթական օր մըն էր, անսարակոյս Ստրական
խշխաններուն օրով, վտան զի արաքին պերճու-
թեանց մէջ, հոյակապ գերանդազէն կառաց, ծի-
րանդոյն՝ զրօշներու, և վայելչադեղ կանանց
բազմութեան և թատերական ջոջերու մէջ սակե-
ղօծ կառքի մը վրայ, մեղկօրէն տարածուած,
կնչսր մը նշմարեցի, որ գոհարներով ծածկուած,
սնկեճամուկ զգեստաւորուած էր, և այն միայն,
արևու ջուրմը, Հելիոկաբալը կրնար ըլլալ: Կո-
ւիտներ, Անտոնիոսի աւճարը, Տրայանոսի կո-
թողը կը կանգնուէին. և Հոովմ իր հնագիտական
գեղեցկութեան վերին կէտը կը հասնէր. վերջին
գեղեցկութիւնն մը, որ թատերական տեսարան մըն
է թագազի խղկատակներու: Քիչ մը վերջը ներ-
կայ գտնուեցայ վեսուլի հրարուղիին անգնա-
ցայս ժայթքումին, որ Հերքիւլանում և Բոմբէյի
քաղաքները մոխիրով ծածկեց: Միջոց մը Հոովմ
քաղաքը բոցերու մէջ տեսայ: Թէպէտև Ներոնը
իր դարաստիկին վրայ չէր տեսներ, բայց ապա-
հով էի թէ տեսածս 64 թուականին եղած հրդէհն
և Քրիստոնէից հալածանաց սկզբնաւորութեան
նշանն էր այդ: Քանի մը ժամ վերջը, աչքերս,

Տիրերիոսի ընդարձակ պարտէզներով զբաղած, տեսայ որ կայսրը վարդենիներու ամուլին կը մօտենար, և երբ Երկրին թաւալման հետեւանքով, Հրէաստան ներկայացաւ տեսութեանս անձկութեանը մէջ. և անմիջապէս Երուսաղէմ և Գողգոթի լեռը զիմացս եկան: Յիսուս շրջապատեալ քանի մը կիներէ, այդ լեռը կ'ելլէր, պահպանութեամբ խումբ մը զինւորներու և հրէական խումանի մը՝ անոր հետէն: Այս տեսարանը երբէք չպիտի կարենամ մոռնալ: Ինձ համար այս տեսարանը, այն ժամանակ ներկայ եզոզներուն տեսնուածէն բոլորովին տարբեր կերպով կը ներկայանար, վասն զի Քրիստոնեայ Եկեղեցւոյն ապագայ (թէպէտ անցեալ) փառքը կ'երևէր հոն՝ իբր աստուածային զոհարերութեան լրումը...: Աւելի չեմ պնդեր, կրնաս երեւակայել թէ, ինչ տեսակ զգացումներով հոգիս կը տառապէր այդ գերագոյն տեսարանին առջև:

Յետոյ վերադառնալով Հաովմ, Յուլիոս Կեսարը անշուշտ տարածուած իր խորոյկին վրայ, Անտոնինոս անոր զլիտուն վերեւ կանգնած էր և կարծեմ ձեռքը պապիւրոսէ գլան մը բռնած էր: Դաւածանները անպարանօք Տիրեր գետին լողերքն ի վար կը փախչէին: Արդարացի հետաքրքրութեամբ մը, Յուլիոս Կեսարի կենաց պարագաները քննելով, Գալլիայի մէջ գտայ զինք Վերսիկէթօրիխի հետ անոր տեսակցութեան մէջ և կրցայ հաստատել թէ՛ Ալէզիայի ստոյգ զիրքը որոշող ժամանակակից գիտնոց ենթադրութիւններէն. ո՛չ մէկը ճիշտ է, զի այդ բերդը կը գտնուէր...

Խնդիր. — Ներէ՛. տէ՛ր, խօսքդ մեղրով կըտրեցի, բայց առիթը ներկայացաւ որ խնդրեմ քենէ, մասնակի լուսարանութիւն մը այդ զիկտատորին վրայ: Քանի որ Յուլիոս Կեսարը տեսար, խնդրեմ ըսէ՛ ինձի թէ արդի Գաղղիոյ վրայ իշխող Նաբոլէոն Գ.ի հրատարակած «Կեանք Յուլիոս Կեսարի» գրուածքին մէջ նկարագրածին կը նմանի՞ այդ երևելի զօրավարին դէմքը:

Լուսնեմ. — Շատ երջանիկ պիտի ըլլայի, վաղեմի բարեկամս, լուսարանել զքեզ այդ կէտին վրայ, եթէ կարելիութիւն ունենայի, մտածէ՛ անգամ մը որ հեռանկարական (perspective) օրէնքները կ'արգելին:

Խնդիր. — Հեռանկարական... քաղաքական ըսել կ'ուզես:

Լուսնեմ. — Ո՛չ: Հեռանկարական, (թէպէտ և այս երկու բառերը իբրբու շատ կը յարմարին)՝ վասն զի այդ մեծանուն անձնատրութիւնները երկնից բարձրութենէն, ռամիկներուն դատածէն տարբեր կերպով կը դատուին: Երկինքէն նայուած ժամանակ, երկրաչափապէս դադարթէն կը տեսնենք զանոնք և ոչ թէ ճակատէն, այսինքն երբ ոտքի վրայ կեցած են, անոնց հորիզոնական ստորածգումը կը տեսնենք: Միաքի կուգա՞յ, երբ քեզի հետ միասին օդապարիկով Բարիդ Վանտոմի կոթողին վրայէն կ'անցնէինք, խորհրդածութիւն մը ըրեր թէ Նաբոլէոնը այդ բարձրութենէն զիտելով, հասարակ մարդկանց զիրքէն տարբերութիւն մը չունէր: Միեւնոյնն է Յուլիոս Կեսարի համար: Անդենականի մէջ նիւթական չա-

փերը կ'անյայտանան, և մի միայն իմացական չափերը կը մնան: Վերջնայէս Թուլիոս Կեսարի հիւպատոսութիւնը տեսայն Լանտինի թագաւորաց շարքին մէջ յառաջացայ տնտեսութեամբս և պահ մը կանգ առի Սարինաց ասեւանգման, որ մեծ գոճունակութիւն պատճառեց ինձ, այսպիսի հնօրեայ տիպար սովորութեան մը ուղղակի կերպով ներկայ ըլլալուս:

Պատմութիւնը միշտ կը զարգարէ և կը գեղեցկացրնէ ղէպերը: Հիմա տեսած պատմական իրողութիւններս, մեծաւ մասամբ, իրենց իրականութեանէն բոլորովին տարբեր կերպով ներկայացուած են պատկերացրնողներու կողմանէ:

Նոյն միջոցին տեսայ Լիւդիոյ Քանաու (Candaule) թագաւորը, Եթովպացոց ղէպի Եգիպտոս արշաւանքը, Կորնթոսի սակաւագետական հանրապետութիւնը, Յունաստանի ութերորդ Ողիմպիատը, և Հրէաստանի մէջ Սոայի մարգարէանայը: Ուղանալու վրայ նստած պետերու հոկոզութեամբ՝ ամենահնազանդ գերիներու երամակաց ձեռամբ բուրգերուն շինութիւնը տեսայ: Բակարիացոց իշխանական մեծ հարստութիւնը և Հընդկահան երկիրը ի տես եկան: Զինաստան ներկայեց ինձ իր արհեստական հրաշալիքը, որ նախ քան արեւմտեան երկիրներու ճնուղը, գոյութիւն ունէին: Առիթը ունեցայ փնտռելու Պլատոնի յիշած Ատլանտիտը և տեսայ իրօք թէ, այս կորուսեալ երկրի մասին, Պայիի ունեցած գաղափարը բոլորովին անհիմն չէր: Քաղղիոյ մէջ (Gaulle) ընդարձակ անտառներ և ճախճախուտներ միայն կը տեսնուէին, Տրոյիտներն անգամ անյայտ եղած

էին, և այն տեղերու վայրենիները արդի Ովկիանիայի վայրենեաց կը նմանէին:

Ճշմարտայէս հնախոյզներու հետազոտած Քարի դարն էր:

Աւելի վերջը տեսայ թէ՛ մարդկանց թիւը հետըզհետէ կը նուազէր, կործես այլեւս երկրին տիրապետութիւնը կապիկներու մեծ ցեղի մը, քարանձաւներու արջերուն, ափսոսներու, բորենիներու, սնգեղջիւրներու երամակաց կը պատկանէր: Ժամանակ մը եկաւ որ անկարելի եղաւ, ո՛չ միայն մարդ մը տեսնել, այլ նոյն իսկ մարդկային ցեղի ձեռակերտի ամենաչնչին հետքն անգամ նշմարել:

Ամեն բան անհետացած էր: Երկրաշարժները, հրարուզիները, ջրհեղեղները կարծես օրացած էին երկրին մակերևոյթին և այս կործանմանց մէջ մարդուս ներկայութիւնը անկտրելի դարձուցած էին:

Խնդիր.— Ո՛վ Լուսն, ևս այ կարծեցի — և անհամբերութեամբ կ'սպասէի ոչն վայրկեանին թէ Դրախտի տեսութիւնը պիտի տեսնայիր և պիտի պատմէիր, որպէս զի արարչագործութեան մէջ զիտաւայինք թէ Երկրիս վրայ մարդկային ցեղը ի՞նչ կերպով առաջ եկած է, և կը զարմանամ թէ նոյն իսկ չես մտածած այս կարեւոր դիտողութեանս վրայ:

Լուսն.— Ինչ որ տեսայ, մի միայն զայն կը պատմեմ, իմ հետաքրքիր բարեկամս, և կը զգուշանամ աչքիս տեսածները փոխանակելու իմ երեւակայութեանս երազներով: Արդ, և ո՛չ իսկ մէկ հնչին նշոյլը տեսայ այդ Երեմին՝ որ այնքան բա-

նաստեղծօրէն նկարագրուած է նախնական կրօն-
ներու դրութեանց մէջ: Ասկէ զատ, շատ զարմա-
նալի և արտաքոյ կարգի բան մը պիտի ըլլար,
եթէ տեսած աշխարհիս և Երկրին մէջի նմանու-
թիւնը մինչև այդ աստիճանի հասնէր, մանաւանդ
թէ եթէ Դրախտի էութիւնը պէտք էր մարդկային
խանձարուրքին, չեմ կարծեր թէ նոյնքան ստի-
պողականութիւն ունենար անոր վերջաւորութեան
ժամանակ:

Խնդիր. — Ընդհակառակն, կարծեմ աւելի ար-
զարացի կ'ըլլար ենթադրել զանի, իրր վարձատ-
րութիւն, վերջաւորութեան ժամանակ, քան
սկզբնաւորութեանը, իրր նախարան ցաւազին
կենաց: Բայց քանի որ չես կրցած տեսնել զանի,
ա՛յ հարցմանս վրայ չեմ պնդեր:

Լուսն. — Այս եզական աշխարհի— որուն
պատմութիւնը ձերինին ներձակն է— մասին տեսու-
թիւններուս վերջաւորութեանը միջոցին, հրէշա-
նման մեծղի կենդանիներու, ընդարձակ ծովերու
եզիրաց վրայ, իրարու հետ պատերազմիլը տեսայ:
Հոն կային վիթխարի օձեր ահաւոր ճիրաններով
զինուած, օղին մէջ, իրենց մարմնէն երկայն թե-
ւերով, թռչող կոկորդիլոսներ, կով մը կլլկու-
չափ բերանով տձև ձուկեր, գիշակեր թռչուններ
որոնք քանդուած կղզիներու վրայ սոսկալի պա-
տերազմներ կը մղէին: Ամբողջական ցամաքային
մասերը՝ մեծղի տերեւներով զարդարուած ընդար-
ձակ անտառներով ծածկուած էին, փխուր և
թուխ գոյնով բոյսեր կը տեսնուէին, վասն զի
ըուսականութիւնը այլևս ո՛չ ծաղիկ և ո՛չ ալ

պտուղ ունէր: Լեռները, բոցերու հոսանքներ կը
ժայթքեցնէին, գետերը սահանահոս կը վազէին,
դաշտերու յատակը խորին ճեղքուածքներով կը
պատասուէր. որուն մէջ բլրակները, անտառները,
գետերը, ծառերը, կենդանիները կը խորասուզ-
ւէին: Բայց ընդ հուպ, նոյն իսկ դուետին մակե-
րեւոյթը նշմարել անկարելի եղաւ, ընդարձակա-
ծաւալ ծով մը պատած էր անոր երեսը, բուսա-
կանութիւնը և կենդանականութիւնը մերթ ընդ
մերթ տեղի տուած էին միօրինակ, պարզ, խորչո-
մած կանանչութեան մը: Այնուհետև մահամերձ
աշխարհ մըն էր: Ընդհատուած շիկագոյն աղօտ
լոյսին հետեւանքն ըլլալով, անոր յետին բարախ-
մանց ներկայ գտնուեցայ: Յետոյ կարծեցի թէ
ամբողջ մակերեւոյթին վրայ կ'անձրեւէր. վասնզի
Արեւը այլևս ամպերը և անձրեւաց սկօսները կը
լուսաւորէր: Արեւուն լուսաւորած կողմի հակա-
ռակ կիսագունար՝ յառաջագոյն տեսնուածէն
նուազ մթագոյն տեսնուեցաւ և փոթորկալից
մթութեան մէջէն աղօտ լոյս մը կը ցոլար. այդ
լուսաւորութիւնը հրթրելով սաստկացաւ և ամ-
բողջ դուետին մակերեւոյթին վրայ տարածուե-
ցաւ: Ընդարձակ ճեղքուածքները երկաթի նման
կարմրած էին, ինչպէս երկաթը հետզհետէ, բաց
կարմիր, յետոյ նարնջագոյն, յետոյ դեղնագոյն,
ձերմակ և վերջապէս սոստիկ բորբոքման կը
հասնի, այնպէս, այդ աշխարհն ալ հետզհետէ
նոյն ջերմութեան փուլերէն անցաւ: Իր զան-
գուածը ծաւալեցաւ, թաւալման արագութիւնը
նուազեցաւ. այդ խորհրդաւոր աշխարհը հալած

մտադի նման, չօգիներով պատտեայ, ահագին գունտի մը կերպարանն ստացաւ: Մշտալառ նեղքին վառարանին և տարերաց քիմիական տակնուկրտյութեանց ազդեցութեան տակ, իր բոքբոքած գունտը կապային գունտի մը վերածուեցաւ: Յորմէ հետէ անդադար ընդլայնելով իր զանգուածը, մինչև իր ինքնութիւնը կորսնցնելու աստիճան ծաւալեցաւ: Արեւը՝ որ նախապէս զանի կը լուսաւորէր, այլևս, լուսաւորութեան մասին, տարրերութիւն մը ցոյց չէր տար և ինքն ալ իր շրջանակը կը մեծցընէր, այնպէս որ ա՛լ, ինձ համար, յայտնի եղաւ թէ այդ կաղալին աշխարհը նոյն իսկ իր ինքնութիւնը պիտի կորսնցընէր թաղւելով Արեւուն մեծցի մթնոտորաին մէջ:

Աշխարհի մը վերջաւորութեան ներկայ ըլլալը ամենուն արուած բաղդաւորութիւն մը չէ. հազուագիւտ պատահար մ'է: Այսպէս, իմ անձկութեանս մէջ, արդեօք ունայնամտութեամբ չեմ կարող գոչել. «Ահա՛ ուրեմն աշխարհիս վերջը, ո՞վ Աստուած, եւ անա բնակեալ անհամար երկիրներուն վերապահեալ ճակատալիրը»:

— Ո՛չ: վերջը չէ՛, պատասխանեց հոգևոյս լսելի ձայն մը, այլ սկիզբն է:
— Ինչպէ՞ս... սկիզբն է... մտածեցի անմիջապէս:

— Նոյն իսկ երկրին սկիզբնաւորութիւնն է, պատասխանեց նոյն ձայնը: Դուն հեզգնեհ լուսոյ արագութենէն աւելի արագութեամբ երկրէն հեռացար, այդ պահառով ամբողջական պատմութիւնը իմ տեսութեանդ ներկայացաւ:

Այս հաստատակաւն բացատրութիւնը այնքան չղարմացուց զիս, որքան անդինակաւն նախորդ դրուագիս ղէպքերը, վասն զի, նախ ընտելացած ըլլալով լուսոյ ապշեցուցիչ օրինաց, յայնմհետէ պատրաստ էի այսպիսի նոր անակնկալներ ունենալու:

Բանի մը մանրամասնութիւններէն կասկած ունեցայ թէ, այդպէս կրնայ ըլլալ. պատմութեանս միութեան շարքը չխանգարելու համար քեզի չի խօսեցայ այս մասին. բայց, այսուամենայնիւ, անբաղդատելի կերպով աւելի զարտուղի բան մըն է, քան գէպքերու ընդհանուր շարակարգութիւնը:

Ենդիք, — Բայց, եթէ իրականապէս Երկիրն էր այդ տեսած աշխարհը, ինչպէս կըլլայ որ, աստղաբաշխական վերոյիշեալ զննութիւններդ, զորս կատարեցիր, Սեղան համաստեղութեան մէջ զայն գտնելու համար, ընդհակառակն քեզի ցոյց տուին որ այդ աշխարհը ո՛չ Երկիրն է և ո՛չ ալ Սեղան համաստեղութեան մէկ ուրիշ աստղը:

Լուսնէն. — Պատճառը սա է թէ, իմ միջոցին մէջ ճամբորդութեամբ տեղափոխութեանս պատճառաւ՝ նոյն իսկ համաստեղութիւնը փոփոխուած էր: Փոխանակ երրորդ կարգիայֆա, դամբա, զիպ և 4րդ կարգի վիպա, Տելլա և քեղա աստղերուն օրք, Երկրէն նայելով, այդ Սեղան համաստեղութիւնը կը ձեւացընեն, իմ դէպի միգամածը հեռանալս, անտեսանելի պողախկ կէտերու վերածած էր զանոնք: Անոր տեղը կը տեմուէին փայլուն աստղեր, որ ի հարկէ կառավար համաստեղութեան այֆա և վիպա և գուցէ եփսիլոն աստղերն էին և որ, երբ Երկրէն նայուին, արամազծորէն նախկիններուն ընդլմակաց կողմը կե-

րեւին. և երբ ևս զանոնք անցայ, կերեւի թէ անոնք եկան իմ և Սեղան համաստեղութեան միջև: Երկնային հեռանկարը փոխուած էր և յիրաւի գրեթէ անկարելի կը դառնար մեր Արեւին դիրքը որոշել:

Խնդիր. — Գափիլլայէն անդին հեռանկարային այս անձողոպրելի փոփոխութիւնը միաքս չէր եկած: Սյսպէս ուրեմն նոյն ինքն Երկիրն էր որ կը տեսնէիր և թէ անոր պատմութիւնը, իրականութեան ներհակ շարակարգութեամբ մը կը պարզուէր առաջքդ, այսպէս բոլոր հին տարիները նոր տարիներէն վերջը հասան քեզի:

Ի՞նչ նոր միջոցով, լոյսը կրցաւ գրեզ յառաջացընել ժամանակի այս հոսանքին մէջ:

Ո՛վ Լուսին, դուն ինձ ըսիր թէ՛ Երկրիս նրկատմամբ հետաքրքրական մանրամասնութիւններ դիտած էիր: Ճիշտ, ևս այ կը փափաքէի քանի՛ մը հարցումներ ընել այդ մանրամասնութեանց մասին: Ուրեմն հաճութեամբ պիտի ունկնդրեմ տարօրինակ պատմութեանցդ, որոնք պիտի լրացընեն այս վէպը, ապահով ըլլալով նախապէս թէ՛ իմ հետաքրքրութիւնս լիովին պիտի յագեցնես:

Բ.

Լուսին. — Առաջին պարագան Վաթեռոյի պատերազմին կը վերաբերի:

Խնդիր. — Ո՛չ ոք ինձմէ աւելի յաւ կը յիշէ այդ չարաչուք աղէտը. Մոն-Սէն-Փանի մօտ, ուսէս գնատակով մը վիրաւորուեցայ և Պլուխէրի սրիկաներէն մէկն ալ, սուրի հարուած մը տըւաւ ձեռքիս:

Լուսին. — Սրդ ուրեմն, ի՛մ ձերուկ ընկերս, նորէն ներկայ եղայ այդ պատերազմին, բայց և դաժէն բոլորովին տարբեր կերպով տեսայ զանի: Երեւակայէ՛ անգամ մը, երբ Պրիւքսէլի հարաւակաղմը, Վաթեռոյի դաշտը տեսայ, նախ և առաջ ահագին թիւով զիւակներ, մահուան շարագուշակ կուտակում մը նշմարեցի հողին վրայ տարածուած: Հեռուն մշուշի մէջ նաբղէոն կը տեսնուէր, ձիուն սանձէն բռնած, յետս յետս կը յառաջանար. նմանապէս հետեւորդ զօրականներն ալ յետս յետս կը քայլէին: Քանի մը թնդանթներ կրակուելու վրայ էին, վասն զի մերթ ընդ մերթ անոնց փայլատակման շողումը կը տեսնուէր: Երբ աչքերս բաւական վարժուեցան դաշտին տեսարանին, նախ տեսայ քանի մը մեռեալ զօրքեր որ արթնցան, յաւիտենական գիշերէն յարեան և մէկէն ի մէկ յոտս կանգնեցան: Հետզնաէ մեռած զօրքերը սկսան խուճի խուճի յարութիւն առնել, մեռած ձիերն ևս ողևորեցան, նոյնպէս հեծեալգօրաց

բազմութիւնը և հեծան իրենց երիվարաց վրայ Երբոր երկու երեք հազար հոգի ի կեանս վերադարձան, կը տեսնեմ որ անզգալապէս պատերազմի կը պատրաստուէին: Երկու բանակները ճակատ կազմեցին կատաղարար և յուսանատ պատերազմ մղելու համար:

Անգամ մը որ յարաջ սկսու, մեծած զօրքերը աւելի ևս արագապէս սկսան յարութիւն տանել: Փրանսացիք, Անգղիացիք, Բրուսիացիք, Ալմանք, Հաննովրցիք և Պէլճիքացիք, մոխրագոյն վերաբերունքով, կապոյտ համազգեստով, կարմիր, կանաչ, ճերմակ պատմուճաններով կը կանգնէին դաշտին վրայ և կը մտրտնչէին:

Մրանսական բանակին կեդրոնը կը տեսնեմ կայսրը, քառաձեւ գումարապէ մը շրջապատած էր զինքը. կայսերական թիկնապահները յարդութիւն տաին:

Յայնժամ երկու բանակաց սահագին գումարտակներ յառաջացան դահավիժելով իրարու վրայ, իրր մեծ հոսանքներ, աջէն ու ձախէն հեծելազօրաց վաշտեր իրարու դէմ կը յարձակէին, ճերմակ երիվարները իրենց օղածածան բաշերը կը տարածէին: Յիշեցի Ռաֆֆէի տարօրինակ եղական իւզաներկ պատկերը և Գերմանացի Սէտլից բանաստեղծին հետեւեալ այլարանական վերադառութիւնը:

Թմրուկն հնչէ անսովոր
Եւ որոտայ ուժգնօրէն
Դամբաններէն կը յառնին
Կորուսեալ ծեր զօրականք:

Եւ միւս եւս,

Զօրահանդէս է այն մեծ,
Զոր հանգուցեալըն կեսար,
Կատարէ, կէօ զիշերին
Դաշտերուն մէջ Երիսեան:

Յիրաւի Վաթէոյօն էր, բայց Անդրեանակն վաթսու մը, վասն զի պատերազմիկնզրը յարուցեալներ էին: Ասկէց զատ եղական կրկներեւոյթ մը կար, զարմանալին այն է թէ՛ բանակները իրարու դէմ յետս յետս կը քալէին. այսպիսի պատերազմ մը մտգական տեսարան մը կը կազմէր, և այնքան սաստիկ ազդեց ինձ, որ ալ գուշակեցի նոյն ինքն պատահարը, որ տարօրինակ կերպով փոխաձեւեալ էր ընդդիմակաց պոտակերին մէջ:

Ուրիշ զարմանալի և եղական դիտողութիւն մըն ալ. սրքան կը կուռէին այնքան պատերազմիկներուն թիւը կ'աւելնար, ամեն անգամ որ թնդանօթը շարքերէն խուճը մը կը պակսեցընէր, նոյն ժամայն քանի մը մեռեալներ յարութիւն կ'առնէին պակասները լրացընելու համար, այնպէս որ երբ թնդանօթով, գնտակով, տէգով և սուրով ամբողջ օրը զիրար ջարդեցին, երբ անագին ճակատամարտը լրացաւ և օրը տարածամեցաւ, ո՛չ մի մեռեալ մնաց և ո՛չ մի վիրաւոր. քիչ առաջ պարտուածները և խառնափնթոր համազգեստները՝ նորոգուած և լաւ վիճակի մէջ գանուեցան յանկարծ. զօրաց կարգերը և վաշտերը կատարելապէս կազմակերպեալ, ի շարս կարգաւորուած զրոնուեցան: Երկու բանակները հանդարտօրէն իրարմէ սկսան հեռանալ և կարծես՝ իր թէ այդ բորքքեալ խառնուրդը, ուրիշ նպատակի համար չէր,

բայց եթէ քանի մը ժամ առաջ, դաշտին վրայի երկու հազար մեռեալներուն յարութիւն տալու համար: Ինչ օրինակելի և նախանձելի պատերազմ:

Ճշմարտիւ, այս դէպքը զինուորականութեան ամենակազական զրուագներէն մին է: Այս դէպքին իրականութիւնը՝ բարոյականը կը գերազանցէ, երբ կը մտածէի թէ՛ այս պատերազմին արդիւնքը՝ ո՛չ թէ նարոյէոնը տապալելու ծառայեց, այլ ընդհակառակը՝ զանի գահ բարձրացընելու օժանդակ եղաւ, փոխանակ մարտը կորսնցընելու, կայսրը յաղթանակից, գերութենէ իշխանութեան հասաւ: Վաթնուոս Պրիւմերի 18ին վերածուեցաւ կարծես...

Խնդիր. — Ո՛վ Լուսին, լուսոյ այս նոր արգասիքը շատ կիսկատար բմբուկեցի, երախտապարտ պիտի ըլլամ քեզ, եթէ դուն գտած ես, խնդրեմ բացատրութիւնը տո՛ւր ինձ:

Լուսին. — Քիչ առաջ զանի գուշակելու վիճակի մէջ զբի գքեզ, ըսելով թէ՛ լուսոյ արագութենէն աւելի մեծ արագութեամբ կը հեռանայի Երկրէդ:

— Խնդիր. — Բայց, կ'աղաչեմ, ինչպէ՞ս, միջոցին մէջ յառաջխաղաց հեռացումդ՝ կարող եղաւ դէպքերը իրենց կատարման ներհակ կարգաւոյց տալ քեզ:

Լուսին. — Սկզբունքը շատ պարզ է: Ենթադրել թէ դուն Երկրէդ կը մեկնիս լուսոյ արագութեան ճիշտ հաւասար արագութեամբ մը, այն ժամանակ Երկրէն մեկնած վայրկեանիդ տեսարանը միշտ քու հետդ կ'ունենաս, քանի որ լոյսին արագութեան հաւասար կընթանաս, որ նոյն ինքն

այդ տեսարանը հետը կը տանի միջոցին մէջ, նոյնիսկ եթէ հազար, հարիւր հազար սարի ճամբորդես, այդ տեսարանը անբաժան քեզի պիտի հետեւի լուսանկարի մը պէս որ չհիննար, միջոցեւ տարիները, բուն իսկ տեսարանին էութիւնը կը հինցընեն և կը ծերացընեն:

Խնդիր. — Նախորդ վէպէդ այս բանը արդէն հասկըցայ և ըմբռնեցի:

Լուսին. — Լաւ ուրեմն: Ենթադրել հիմայ թէ Երկրէդ կը հեռանաս լուսոյ արագութենէն աւելի մեծ արագութեամբ մը. այն տեսն ի՞նչ կը պատահի, միջոցին մէջ քանի հեռանաս, պիտի գտնես քեզմէ առաջ մեկնած լուսոյ ճառագայթները, այսինքն այն լուսանկարները, որոնք հեռոհեռ մանրերկրորդ մանրերկրորդ յառաջացած և ասրածուածն միջոցին մէջ: Ուստի, օրինակի համար, եթէ 1867ին մեկնիս և լուսոյ հաւասար արագութեամբ ընթանաս՝ 1867 ին տեսարանը յաւիտեանապէս տեսնես: Իսկ եթէ աւելի արագ ընթանաս, նախորդ տարիներուն մէջ մեկնած ճառագայթներուն պիտի համնիս, որոնք այդ տարիներու դէպքերուն լուսանկարը կը տանին:

Այս բանիս իրականութիւնը աւելի լաւ բացատրելու համար, խնդրեմ ի նկատի ա՛ռ այլ և այլ ժամանակներու մէջ մեկնած բազում ճառագայթներ: Առաջինը՝ ենթադրենք որ 1867 Յունվար 1ին մեկնած է, մանրերկրորդի մէջ 300,000 քիլոմետր արագութեամբ. արդէն այս խօսած միջոցիս բաւական միջոց կտրեց և խոշոր հեռաւորութեան մը մէջ կը գտնուի, զոր ա զերով կ'արտայայտեմ:

Հոգեւորականության պատմության մասին

- Ռ. 1067
- Ը. 1167
- Ե. 1267
- Զ. 1367
- Ե. 1467
- Դ. 1567
- Գ. 1667
- Բ. 1767
- Ա. 1867



Նկատենք հիմայ Երկրէն՝ երկ-
րորդ ճառագայթ մը՝ հարիւր
տարի առաջ մեկնած, այսինքն
1767ի Յունուար 1ին, արդէն
այս ճառագայթը նախկինէն
հարիւր տարուան միջոց յառա-
ջացած է և շատ աւելի հեռուն
կը գտնուի զոր Բ գրով ցոյց
կուտամ: Երրորդ ճառագայթ
մը՝ որ 1667ի Յունուար 1ին մեկ-
նած ըլլայ, բնականապէս լու-
սոյ ճառագայթին հարիւր տար-
ւոյ մէջ կարած ճանապարհին
չափ աւելի հեռուն կը գտնուի
և այս երրորդը Դ. կանուանմ:
Վերջապէս, չորրորդ ճառագայթ
մը, միւս հինգերորդ մը, վեցեր-
րորդ մը, բոլորն ալ կարգաւ
1567, 1467, 1367ի տարիներու
Յունուար 1ին մեկնած, գտնոնք
ալ Դ, Ե, Զ, գիրերով կը նշանա-
կեմ, ասոնք ամենքն ալ միջոցին
մէջ կը մերժուին:

Ան՝ ուրեմն շատ մը երկրային լուսանկարներ
կարգով շարուած են մի և նոյն գծին վրայ մի-
ջոցին մէջ՝ ընդմիջեալ հեռաւորութեամբ: Այդ, հո-
գէն՝ որ լոյսէն աւելի արագ ընթանալու վրայ է,
մի ըստ միովէ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, կէտերը

անցնելով. այդ ժամանակներուն Երկրիդ դարաւոր
պատմութիւնը կը քանէ:

Խնդիր. — Տէր ուսուցիչ, այդ լուսանկար
պատկերները իրարմէ ո՞րքան հեռաւորութեան մէջ
կը գտնուին:

Լուսեմ. — Հաշիւը շատ հեշտ է, գտնոնք ի-
րարմէ գատու հեռաւորութիւնը՝ բնականապէս լու-
սոյ հարիւր տարուան մէջ կարածին հաւասար է:
Արդ, լոյսը՝ որ 75,000 մղոն (1 քիլոմետր մէկ մղոն)
արագութիւն ունի մէկ մանրերկրորդի մէջ, անմիջա-
պէս կը տեսնու որ մեկ վայրկեանի մէջ 4,500,000
մղոն կը կորէ, և 270,000,000 մղոն մեկ ժամ-
ւան մէջ. 6,652,800,000 մղոն ալ մեկ օրը, և
2,428,272,000,000 մեկ տարուան և նահանջ տարի-
ներու մէջ ալ 2,429,935,200,000 մղոն: Հետեւա-
բար մեկ դար տարեկանութեամբ մեկնող երկու կէ-
տերուն հեռաւորութիւնը 242 եռամիլիոն 923 երկ-
միլիոն ու կէս մղոն կըլլայ մերձաւորապէս:

Ան՝ ուրեմն, ինչպէս ըսինք, միջոցին մէջ,
աստիճանաբար փոխադարձ հեռաւորութեամբ շար-
ւած երկրային լուսանկարները: Հիմա ենթա-
դրենք, այս ամեն մէկ դարաւոր պատկերին մի-
ջանկեալ հեռաւորութեան մէջ, տարեկան մաս-
նակի նկարներ, բնականապէս լուսոյ տարեկան
ընթացքին համեմատութեամբ իրարմէ զատուած,
ինչպէս վերե յայտնեցի. յետոյ ամեն մէկ տարե-
կան նկարի միջանկեալ միջոցին մէջ ալ, օրական
նկարներ. յետոյ նաև ժամերու, վայրկեաններու
և մանրերկրորդներու պատկերները. ամենքն ալ յա-
ջորդաբար և կարգով շարուած լուսոյ արագու-
թեան համեմատական հեռաւորութեամբ: Այսպէ-

տով, լուսոյ մէկ ճառագայթին մէջ, կամ աւելի լաւ քրննման, չարք մը այլազան և յարակից պատկերներէ բաղկացած լուսոյ մէկ արձակման մէջ կ'ուսննանք Երկրին պատմութեան ծորանական արձանագրութիւնը:

Երբ Հոգին այս եթերային պատկերներու ճառագայթից մէջէն կը ճամբորդէ, լուսոյ արագութենէն աւելի արագ, հետզհետէ հին պատկերներուն կը հանդիպի. և երբ հասնի այն հեռաւորութեան, այսինքն 1767ին մեկնած տեսարանին, արդէն հարիւր տարուան երկրային պատմութիւնը տեսած կ'ըլլայ. և երբ 1667ինին հասնի, երկու դարունը տեսած կ'ըլլայ. և երբ 1567 տարուան լուսանկարին հասնի՝ երեք դար տեսած կ'ըլլայ և այսպէս հետզհետէ:

Պատմութեան սկիզբը ըսի քեզի թէ՛ այն ատեն զէպի Գափիլլայի ձախ կողմը գտնուած աստղային կոյտի մը կը դիմէի: Այդ աստղակոյտը (amas d'étoiles) անբաղդատելիօրէն աւելի մեծ հեռաւորութեան մը մէջ կը գտնուի քան այս աստղը. թէպէտև Երկրէդ քովէ քով կ'երևի, վասն զի երկու տեսողական ճառագայթները մօտ են իրարու. այս աւելերեւոյթ մօտաւորութիւնը հեռանկարի երեւոյթ մըն է: Այս տիեզերքին հաւանական հեռաւորութեան վրայ գաղափար մը տալու համար, կրնամ ըսել քեզի թէ այդ աստղակոյտը Ծիրկաթինէն նուազ ընդարձակ չէ, որով կրնանք հարցընել թէ՛ ինչ հեռաւորութեան մէջ պէտք է ենթադրել, որպէս զի մի միայն պզտիկ միգամածի մը պէս երևի: Իմ գիտուն բարե-

կամս Արախօ, ինչպէս գիտես, այդ շաշիւը ըրած էր, քանի որ ամեն տարի իր Դիտարանին դասախօսութեանց մէջ կը յիշէր և իր մահուանէն վերջնալ հրատարակուեցաւ: Երևակայելու է Ծիրկաթինը իր երկայնութեան 334 անդամը աւելի հեռուն փոխադրուած: Արդ, որովհետև լոյսը 15000 տարուան մէջ կրնայ կտրել Ծիրկաթինը մէկ ծայրէն միւսը, կը հետեւի թէ 334 անգամ 15,000, այսինքն 5 միլիան տարի պէտք է որ այդ աստղակոյտին լոյսը հասնի Երկիր:

Երկրէն ուղղակի յատաճանայով զէպի այդ հեռաւոր սահմանները, եթէ իմ հոգեկան տեսութիւնս աւելի զօրաւոր լլլար, պիտի կարենայի որոշել ո՛չ միայն տասը հազար, հարիւր հազարաւոր տարիներու յետամնաց պատմութիւնը, այլ հինգ միլիոն տարուանը:

Խնդիր.— Այսպէս, Հոգին՝ ի՞ր իսկ զօրութեամբը կրնայ կտրել անցիլ սնչափելի երկնից միջոցը:

Լուսեհն.— Ո՛չ, իրեն յստակ զօրութեամբը չէ, այլ բնութեան զօրութիւնները գործածելով: Զգողութիւնը այդ զօրութիւններէն մին է որ անբաղդատելիօրէն լոյսէն աւելի արագընթաց է և աստղագիտական տեսական սկզբունքները պէտք է զայն իրր միտամանակ փոխադրուող նկատել:

Կը յաւելում թէ՛ եթէ այդ զէպերը կրնայ ըմբռնել, քու գիտցած բնական տեսողութեան գնահատութեամբը չէ, այլ անհամեմատ աւելի նուրբ միջոցով մը, որ հոգեկան մտաւորական սահմանին կը վերարելի: Եթերական շարժումները, ինչպէս

գիտես, ինքնին լուսաւոր չեն: Աչքի մը պէտքը չկայ զանոնք իմանալու և ըմբռնելու համար, անոնց ազդեցութեանը տակ թրթռացող հոգին՝ շատ անգամ անհամեմատ կերպով նոյնքան լաւ կը հասկընայ, կ'ըմբռնէ՝ քան տեսագիտական պատրաստութեամբ գործիք մը: Ատիկա մտաւորական տեսագիտութիւնն է:

Այսպէս, օրինակի համար, ձգողութիւնը վայրկեանապէս կը կարէ կ'անցնի 148 միլիոն քիլոմէտրը, Երկրին և Արեւուն մէջի հեռաւորութիւնը. մինչդեռ լոյսը 493 (8 վայրկեան 13 մանրերկրորդ) կը դնէ նոյն հեռաւորութիւնը կարելու համար:

Խնդիր.— Որչափ ժամանակ տեւեց ճամբորդութիւնդ մինչև այդ հեռաւոր օրեղերքը:

Լուսնն.— Միթէ քեզի չտրվեցուցի՞ որ Երկրին շարժման քններէն առաջ եկածներէն դուրս ժամանակ ըստած բանը գոյութիւն չունի: Մէկ տարի կամ մէկ ժամը այս դիտողութեանցս համար, կատարելապէս միեւնոյն տեսողութիւնն է անասմանութեան հանդէպ:

Խնդիր.— Բնական դժուարութիւնները տարապայման երեւցան ինձ, անոր համար այդպէս մտածեցի և հարցուցի: Բայց ներէ՛ ինձի որ ուրիշ օտարաբնի հարցում մը ընեմ որ հիմա ծագեցաւ ժաքիս մէջ:

Լուսնն.— Քու դիտողութիւններդ լսելու համար է որ այս պատմութիւնը ըրի:

Խնդիր.— Ինքնիրենս մտածեցի թէ՛ արդեօք տեսողութեան այս յեղաշրջման պէս կարելի չէ՞

նաև յստգութեան մէջ՝ ալ նոյնը տեղի ունենալ, ինչպէս որ դէպքերը իրողութեան հակառակ կը տեսնուին: արդեօք բանախօսութիւն մը կրնա՞նք լսել իր վերջաւորութենէն սկսելով: Ի հարկէ սնորհի հարցում մըն է այս, գուցէ նոյն իսկ ծիծաղելի, բայց տարակերպութեան առջև ընկերակերու չէ:

Լուսնն.— Այս տարակերպութիւնն առ երեւոյթ է: Լսողութեան օրէնքները հիմնովին կը տարբերին լուսոյ օրէնքներէն: Չայնը մանրերկրորդի մէջ միայն 340 մեղր կ'ընթանայ և իր արդիւնքը ամենեւին աննշտութիւն չունի լուսոյ արդեանց հետ: Բայց ւակայն, յայտնի է որ, եթէ օդի մէջ՝ ձայնի արագութենէն բարձրագոյն արագութեամբ յառաջանանք, արատասանդի մը չրթունքներէն ելածը հակառակ կարգաշարութեամբ մը պիտի լսէինք: Օրինակի համար, երբ մէկը ոտանաւոր մը արատասանէ՝ ունկնդրողն ալ ձայնէն աւելի արագութեամբ սկսի հեռանալ ճիշտ վերջին վանկը հնչած ժամանակ, ի հարկէ հեղհեղէ ոտանաւորին բոլոր բառերը կը լսէ՝ բայց հակառակ կարգով:

Նոյն ինքն տեսական օրէնքին գալով, դարմանալի խորհրդածութիւն մը կը ներկայանայ, այն է թէ բնութիւնը կրնայ այնպէս մը ընել որ ձայնը մանրերկրորդի մէջ փոխանակ 340 մեղր ընթանալով՝ իր արագութիւնը, որ օդին լատութենէն և առաձգութենէն կախում ունի, տարբեր ըլլար, աւելի դանդաղ, շատ աւելի դանդաղ: Օրինակի համար, ինչո՞ւ մի միայն քանի մը սանդիւնդր ա-

բազուկներն չունենար: Սրդ, եթէ այդպէս ըլլար, նայէ՛ ինչ հետեւութիւն կ'ունենար. մարդիկ քաւած ժամանակին չէին կրնար խօսիլ իրարու հետ:

Երկու բարեկամներ իրարու հետ կը խօսակցին, եթէ իրենցմէ մին քայլ մը կամ երկուք յառաջանայ, կ'ենթադրեմ թէ մէկմեզր առաջ գացած ըլլայ, և որովհետեւ ձայնը քանի մը մանրերկրորդ պիտի զնէ այդ մէկմեզր միջոցը կըտրելու համար, կը հետեւի թէ, փոխանակ բարեկամին հնչած պարբերութեան շարունակութիւնը լսելու, քայլով նորէն նախապէս հնչուած պարբերութիւնները կը լսէ՝ բայց հակառակ կարգով:

Ինչ բանէ՛ տառջ կուգայ արդեօք որ սովորաբար ճամբու վրայ քայլուած ժամանակ աղէկ չխօսիր: Մարդկանց շատերը չեն կրնար գիրօր հասկընալ:

Այս խորհրդածութիւններս, բարեկամ, անցողաբար քու մտածութեանդ յանձնարարելու կըստիպեն ինչդիր մը՝ որ արժանի է ուշադրութեան և որով շատ գրադած չեն մինչեւ հիմայ, այն է մարդկային գործարանաւորութեան՝ երկրաւոր միջավայրին պատճառներով:

Մարդու տեսնելու, լսելու կերպը, իր զգացումը, իր ջղային դրութիւնը, իր հասակը, ծանրութիւնը, խտութիւնը, իր քայլուածքը, ի մի բառ, բոլոր իր պաշտօնները և գործիքները, ձեր մոլորակին վիճակէն կախում ունին և նոյն լակըստ այնմ կազմաւորուած են:

Ձեր և ո՛չ մի գործը բացարձակապէս ազատ և անկախ չէ. մարդս՝ թէպէտ անգիտակից կրկրին

բոլոր կազմական ուժերուն հլու հնազանդ արտադրանքն (résultante) է:

Յիրաւի, մարդուս հոգին, որ ուղեղին մէկ գոռ, ծողութիւնը չէ և ինքն իրմով կուրիւն մըն է, յարաբերական աղաստութիւն մը ունի, բայց այս ազատութիւնը ամբողջապէս կապուած է իր կարողութեան, իր զօրութեան և իր կորովին, ան որոշում կուտայ պատճառներու վճարին համաձայն: Այն անձը՝ որ ճշդիւ կարենայ գիտնալ, մարդուս ծննդեան միջոցին, հոգիին կարողութիւնները և պարագաները, որոնք պիտի չըջապատեն զանի անոր կենացը մէջ, պիտի կարող ըլլար մարդուն կեանքը նախապէս մանրամասնօրէն նկարագրել: Բայց մարդկային յորինուածութիւնը մոլորակին արտադրութիւնն է: Երբէք ասուածային քմահաճոյքով կամ հրաշքի արգասիքով և կամ ուղղակի ստեղծումով չէ՝ որ երկրային մարդուն յորինուածքը ձեւացած է, ինչպէս որ է արդ, իր ձեւին, իր հասակին, ծանրութեանը, իր զգայարանայ կաղմութեանը, վերջապէս այս ամենուն պատճառներն են՝ ձեր մոլորակին վիճակը, միջուկը, որ շնչաուութեան կը ծառայէ, ուտեստը՝ որով կը սնանիք, կեդրոնական ձգողութիւնը, երկրային նիւթոց խտութիւնը ևն. ևն.:

Մարդկային մարմինը, անդամազննարէն, տարբերութիւն մը չունի բարձրագոյն կաթնատուէ մը և եթէ տեսակներու ծագման երթանք՝ աստիճանաբար կերպարանափոխութիւն մը կը տեսնուի, որով անմերժելի վկայութեամբ, կը հաստատուի թէ ամբողջ երկրային կեանքը, սկսեալ կակղամութեան մինչեւ մարդս, մի և նոյն ճիւղագրական

ծառին աճուճն և զարգացումն է : Մարդկային մարմնոյն ձեւին ծագումը և սկզբնակէտը կենդանական ձեւն է , մարդս հնէարանական (paléontologique) պատեանէ ելած թիթեռնիկի նման էակ մըն է :

Այս իրողութենէն կը հետեւի թէ , միւս աշխարհաց վրայ , յօրինուածական կեանքը հոտոկղիւնէն կը տարբերի և թէ հոն եղած մարդկութիւնները , հոս տեղի պէս , մէն մի մոլորակի ուժերուն գործունէութեան արտադրոյթն ըլլալով՝ Երկրիդ մարդկութեան ձեւէն բացարձակապէս կը տարբերին : Օրինակի համար , այն աշխարհներուն վրայ , ուր ունի չկայ , մարտողական գործիներ և աղիքներ կը պակսին հոնտեղի մարդկութեան այն աշխարհները , որ ուժգնապէս ելեքարականացած են , առնոց էակները ելեքտակրան զգայարանքով մը օժտուած են : Ուրիշ աշխարհներու վրայ տեսողական զգայարանքը (աչքը) անդր-մանուշակագոյն ճառագայթից համար յօրինուած են և թէ ձեր աչաց հետ առնչութիւն չունին , և ինչ որ դուք կը տեսնէք , անոնք չեն տեսներ , և կր տեսնեն՝ ինչ որ դուք կարող չէք տեսնել : Եակաց անդամները իրենց գործունէութեանց համեմատ են :

Խնդիր . — Ուրեմն մենք արարչագործութեան էակաց բացարձակ տիպարը չե՞նք : Եւ թէ՛ նոյն ինքն արարչագործութիւնը ուժերու մշտնջենական գործունէութեան մէջ ըլլա՞յն է :

Լուսեմ . — Հոգին անգամ նոյն պարագային մէջ կը գտնուի : Որչափ պէսպիսութիւնք կան մարմնոյն մէջ՝ նոյնքան ալ հոգոց մէջ բազմակերպութիւնք կան : Որպէս զի հոգին գոյութիւն

ունենայ , իբր անկախ էակ ինքնաճանաչութիւն ունենալով , որպէս զի իր ինքնութեան յիշատակը պահէ և անմահութեան ատակ ըլլայ՝ պէտք է որ այս կեանքէն սկսեալ գիտնայ թէ , ինքը իրականապէս գոյութիւն ունի , ապա թէ՛ ո՛չ , մահուանէն առաջ և վերջը նոյնքան յառաջդիմած կըլլայ և անզգայ չունչի մը նման կոյր քառսի մէջ կիկնայ , ո՛չ աւելի ո՛չ պակաս , անգիտակից ուժերու կեդրոնը կը թաւալի : Շատ մարդիկ կը պարծենան իւրթապաշտութեամբ , (առանց սակայն գիտնալու թէ ի՛նչ կըսեն . մինչ նիւթին ի՛նչ ըլլալը չեն գիտեր) այնպիսիք և զի ու շատեր ևս ամեն ինչ չեն մտածեր անգամ թէ անմահ չեն . քանի որ իրենց գոյութեան գիտակցութիւնը չունին :

Հոգիները , որ հոգեկան կեանքով իրականապէս կ'ապրին , անոնք են միայն , որ ատակ են անմահութեան :

Խնդիր . — Արդեօք շատ կան այդպիսիք :

Լուսեմ . — Բարեկամս , ահաւասիկ արչալոյսը՝ որ դարձեալ կը հրաւիրէ զիս վերագառնալ միջոցին ծոցը , որ լի է Երկրիդ անձանօթ իրերով : Իրեմաւոր հոնք մըն է , ուր հոգիները իրենց անցեալ կենաց կորուսեալ մասերը կը գտնեն և բազում խորհրդոց զազանիքները , կործանած աշխարհաց աւերակները և ապագայ գունտիրու ալ ծագումը կը տեսնեն :

Աւերորդ է այլ ևս երկարել այս պատմութիւնս անպէտ մանրամասնութիւններով . իմ նպատակս էր քեզի ցոյց տալ որ երկրի մը և զրութեան մը կենաց տեսարանները , հակառակ ըն-


Թացքով տեսնելու համար, բաւական է Երկրէն՝ յուսոյ արագութենէն աւելի մեծ՝ արագութեամբ մը հեռանալ :

Հոգին՝ դէպի անհունութեան անհասանելի հորիզոնը սլացման ժամանակ, Երկրէն և միւս մոլորակներէն ցլացած յուսոյ ճառագայթները կը զրտնէ՝ որ հոն կը մնան հաղարաւոր տարիներէ ի վեր և դիտելով այդ հեռաւոր մոլորակները, կրնայ ապացուցիւ ըլլալ անոնց անցեալ պատմութեան դէպքերուն :

Այսպէս ուրեմն ժամանակի հոսանքէն մինչեւ աղբիւրը կը բարձրացուի :

Քեզի համար, այսպիսի կարողութիւն մը՝ նորագոյն յուսով մը, պէտք է լուսաւորէ յախտահարական վերնադասարանները :

Կը խոստանամ քիչ ատենէն ծանօթացրնել քեզի այս բո՛ն իս բնագանդական հետեւնքնելը՝ եթէ, ինչպէս կը յուսամ, այս անդենական իրողութեանց գիտական արժէքը կրցած ես լաւ մը ըմբռնել :



ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԴՐՈՒԱԳԻՆ

ԵՐՐՈՐԴ ԴՐՈՒԱԳ (*)

ՄԱՐԴ ԵՒ ՄԱՐԴՈՒԿ

Խնդիր. — Ո՛վ Լումէն, ուշի ուշով մտիկ ըջի քեզ, բայց կը խոտտովանիմ թէ առանց բոլորովին համոզուելու այն ամեն ըսածներուդ և պատմածներուդ կատարեալ իրականութեանը : Ճշմարտիւ շատ դժուար է հաւատալ թէ ամեն բան այդպէս ուղղակի կրնայ տեսնուիլ : Օրինակի համար, երբ Երկրիս երեսը ամպով ծածկուած է, անոր մակերևոյթին վրայի իրերը և դէպքերը թափանցելով չեն կրնար տեսնուիլ, ինչպէս նաեւ շէնքերու մէջ եղածները :

Լումեն. — Կը սխալիս, բարեկամս, եթերին ծածածմունքը՝ քու անանցանելի կարծած պատնէշները կը թափանցէ : Ամպերը՝ հիւլէններէ բաղկացած են, որոնց մէջէն յուսոյ ճառագայթը յաճախ կրնայ անցնիլ : ասիկց դատ, ամպերուն բացւած քններէն շեղակի յուսոյ ճառագայթը կանցնի և կը տեսնուի : Իրերը որոշել անկարելի ընելու պարագան՝ շատ հազուադէպ է, և յետոյ լոյսը՝ ինչ որ կերելի, այն չէ : եթերին թրթռային շարժումն

(*) Գրեալ 1867 :

է. զանի տեսնելու համար՝ ցանցենիի (rétine) կամ տեսողութեան ջղին միջոցէն զատ՝ ուրիշ միջոցաւ ալ կրնայ տեսնուիլ: Եթերին թրթռումը՝ ձեր զգայարաններէն տարբեր զգայարանաց ալ տեսնելի են:

Եթէ այս էր քու վերջին առարկութիւնդ, ճշմարիտ կ'ըսեմ, մեծ բան մը չէ և անյալթելի ըլլալէ շատ հեռի է:

Խնդիր. — Կը տեսնեմ թէ՛ զարմանալի, մասնաւոր և յատուկ ոճ մը ունիս զժուարութիւնները լուծելու. դուցէ հոգեկան էականերու առանձնաշընտարում մըն է այդ:

Յաջորդաբար տեսնեմ թէ՛ լուսոյ արագութիւնէն աւելի շուտով Գափիլայի վրայ տարբերացար. թէ՛ ուրիշ աշխարհի մը վրայ գոցիր առանց մարմնանալու. թէ՛ քու հոգիդ մարմնային պատեանէ ազատ կը մնայ, թէ՛ քու անդենսկան տեսողութիւնդ այնքան լուսաւոր է որ՝ Երկրիս վերայի անցուդարձը կը նշմարէ, թէ՛ միջոցին մէջ կրնաս, ըստ քմաց, յառաջանայ և կամ յետոյ յետքս գալ, թէ՛ վերջապէս նոյն իսկ ամպերը չեն արգիլեր քեզ՝ գունդիս երեսը նշմարելու: Պէտք է խոստովանիլ սակայն թէ՛ ասոնք ամենքն ալ ծանրը զժուարութեանց պարագաներ են:

Լուսեմ. — Կը դիտեմ թէ՛ զեռ որքան երկրային ես, հնօրեայ բարեկամս, հապա ինչ պիտի ըսես՝ եթէ հիմայ ապացուցանեմ քեզ թէ՛ այդ ամեն ըսածներդ բնաւ զժուարութիւններ չին և այդ ղէպերուն երեւոյթը՝ որ քու ըմբռնումիդ իրր արգելք կը ներկայանայ՝ մի միայն ձեր բնա-

ձին ազիտութեան արդիւնքն է: Ինչ պիտի ըսես նաև, եթէ քեզի ըսեմ թէ՛, ոչ ոք կայ աշխարհի մէջ պարզ գաղափար մը ունեցող, Երկրիդ վրայ անցած դարձածէն: և թէ ոչ ոք կը հասկընայ թէ ինչ է բնութիւնը:

Խնդիր. — Պիտի համարձակիմ ըսելու թէ՛ յանուն արդի գիտութեան անվիճելի ճշմարտութեանց, կ'ուզես ստիպել զիս ընամներուդ հաւատալու:

Լուսեմ. — Քաւիցի: Մտիկ ըրէ՛ ինձ բարեկամս, ժամանակակից գիտութեան հրաշարի գիւտերը պէտք են որ քու տեսութեանցդ շրջանակը ընդարձակեն: Ներկայիս դեռ նոր գտնուեցաւ սուերալուսումը (analyse spectrale), հեռաւոր աստղէ մը եկած լուսոյ մէկ խեղճուկ ճառագայթը՝ կանոնաւորապէս քննելով, այդ սմմերձեանի աստղին ինչ տարրերէ, — որոնք սմոր բոցերը կը սնուցանեն — բաղկացած ըլլալը կըստուգէք:

Ահա՛ քեզի, ս'վ իմ երիտասարդ հոգեւոր եղբայրս, գործ մը որ ինքնին շատ աւելի զարմանալի և գերբնական ղէպք մըն է, քան Աղեքսանդրներու, Կեսարներու, Նաբոլէոններու յաղթութիւնները, քան Պաղտմէոսի, Գոլոմպոսի և Կիլթէնպէրիի գիւտերը, քան Մովսէսի: Կոմէիւկիոսի և Յիսուսի գրոնաճները: Զինչ աւելի վհ. այդ հեռաւոր Շնիկը, Արքթիւրիւսը, Վեկան և Գափիլան և Քասթորը և Փոլիւսը, որոնք եռամիլիոն մղոններով հեռի են, անոնց կազմութեան նիւթերը կը լուծէք, իրր թէ՛ ձեռքերնուդ մէջ ըլլային և կարենայիք զանոնք ձեր բութիւնի (creu-

set) ենթարկել: Ինչպէս կը համարձակիք մեր-
 ժել՝ ձեզի անձանօթ եղած միջոցներով, հոգւոյն
 տեսութեան կարողութեամբը, հեռաւոր աշխար-
 հաց լուսաւորեալ տեսարաններն և անոնց ման-
 րամանութիւններն ըմբռնել ու տեսնելը: Եւ ի՞նչ
 հեռագիրը որ աննշմարելի ժամանակի մէջ, մը-
 տաժութիւնդ Ով կիսնոսի անդունդներէն անցնե-
 լով, Եւրոպայէն Ամերիկա կը փոխադրէ, և անա՞
 կրկու բանակցողք ցած ձայնով խօսակցութիւն կը
 կատարեն հազարաւոր մղոն հեռաւորութեան մէ-
 ջէն, և ղեռ ղուք չէք ուզեր հաւանիլ իմ պատ-
 մած իրողութեանցս, վասնզի կատարելապէս չէք
 հասկնար և ըմբռներ: Բայց արդեօք կը հասկը-
 նա՞ք թէ հեռագիրը ի՞նչպէս կը թուի և կը փո-
 խադրուի: Ո՛չ, այնպէս չէ՛: Ուրեմն մէկզի զրէք
 ձեր Երկբայութիւնը որ և ո՛չ իսկ ուսումնական
 արժէք ունի:

Խնդիր.— Ո՛վ իմ գիտուն ուսուցիչս, իմ դի-
 տողութիւններս ուրիշ նպատակաւ չէին, բայց ե-
 թէ հասկացողութիւնս աւելի լուսաւորելու համար:
 Յայանձններուդ իրականութիւն ըլլալը չեմ կրնար
 ժխտել, և մանաւանդ թէ՛ անոնց վրայ բանաւոր
 (rationnel) գաղափար մը կազմելու կ'աշխատիմ:

Լուսեհ.— Ապահով եղի՛ր, բարեկամս, թէ
 ո՛չ մի կերպով չեմ դժկամակիր քու ըմբռնումներուդ
 շրջանակն ընդարձակելու համար. հաճութեամբ,
 նոյն իսկ հիմա կրնամ անդրադարձընել քու տե-
 սութիւնդ՝ երկրային կարողութեանց անբաւական
 նութեան և դրական գիտութեանց ձակատագրա-
 կան ազգատութեան վրայ. յիշեցնելով քեզի թէ՛

ձեր զգացումները պարզապէս շարժումին մէկ մէկ
 եղանակներն են և ինչ որ հպարտանալով գիտու-
 քիւն կ'անուանէք, գործարանական սահմանափակ
 հասողութիւն մըն է: Լոյսը՝ որով ձեր աչքերը կը
 տեսնեն, ձայնը՝ որով ձեր ականջները կը լսեն՝
 զձեզ տպաւորող շարժումեքի եղանակներ են. բու-
 ռումները, ճաշակը, բղխումներն են որ ձեր տե-
 սողութեան ջիւղերուն և քիմքին կը դպին, որոնք
 իրենց կարգին, դարձեալ շարժման թրթուումներով,
 ձեր ուղեղին կը փոխանցեն զանոնք: Այդ շար-
 ժումներուն մի քանին միայն կրնաք գնահատել
 ձեր ունեցած զգայարանքներով, մասնաւորապէս
 աչքով և ականջով:

Միամտաբար բնութիւնը տեսնել և գիտնա՞լ
 կը կարճէք: Ո՛չ երբէք. ի գործունէութեան եզող
 շարժմանց ազդեցութեան մի քանին միայն կրնաք
 ընդունիլ ձեր երկրային հիւլէին վրայ. անա՞ այդ-
 չափ միայն: Ձեր ըմբռնած տպաւորութիւններէն
 դուրս, անթիւ անհամար ուրիշ տպաւորութիւն-
 ներ կան, զորս չէք կրնար ըմբռնել:

Խնդիր.— Ներէ՛ Տէ՛ր, բայց՝ բնութեան այս
 նոր կերպարանքը բաւական բացայայտ չ'երեւիր
 ինձ, լաւ հասկընալու համար. շնորհ կ'ընես...

Լուսեհ.— Յիրաւի այս կերպարանքը քեզի
 համար բոլորովին նոր է. բայց ուշադիր անդրա-
 դարձում մը պիտի ըմբռնել տայ քեզի: Ձայնը՝
 թրթուումներէ բաղկացեալ է և օդին մէջ կը ծա-
 ծանի և կուգայ քու ականջիդ թմբուկին թաղան-
 թին դպելու և ձայնի այլ և այլ աստիճանները կու-
 տայ: Եթէ թրթուումները շատ դանդաղ են (ման-

բերկրորդի մէջ 40էն պակաս), այն ատեն ձայնը շատ ցած է, ձեր ակունջը չյսեր այլեւս: Իսկ երբ թրթումունք շատ աւելի արագ են (36,000, մանրերկրորդի մէջ) այն ատեն ձայնը շատ սուր կ'ըլլայ և ակունջնիդ այլեւս չազդուիր: Սակայն՝ մարդկային յօրինուածին զգայութեան այս երկու վեր կամ վար սահմաններէն դուրս, ձայներ գոյութիւն ունին որ ուրիշ էակներէ լսելի են. ինչպէս օրինակի համար, միջաաններէն ոմանք:

Միեւնոյն պատճառաբանութիւնը լոյսին ալ կը պատշաճի: Լոյսին այլեւայլ կերպարանքը՝ նուրբ երանգը և առարկայից գոյները՝ հաւասարապէս թրթուումներու արդիւնք են որ ձեր տեսողութեան ջղին կը բազմին և լուսոյ ուժգնութեան սարբեր ազդեցութիւններ կուտան: Մարդս չտեսներ ամեն ինչ որ տեսանելի է. երբ թրթուումները շատ դանդաղ են (նուազ քան 458 եռամիլիոն մանրերկրորդի մէջ), լոյսը շատ տկար է, ձեր աչքը չկրնար տեսնել: Իսկ երբ թրթումունք շատ արագ ըլլան (727 եռամիլիոն մանրերկրորդի մէջ), նոյնպէս ձեր կազմաւորական կարողութենէն գերի վեր գտնուելով, ձեզի անտեսանելի կը մնայ: Վեր և կամ վար այս երկու սահմաններէն անդին շատ մը գոյներ գոյութիւն ունին որ ուրիշ էակներէ տեսանելի են: Ուրեմն, ձեր յօրինուածքի քնարին թելերը՝ զորս տեսողութեան և լսողութեան ջիղ կ'անուանէք, թրթուացընող ազդեցութենէն դուրս ուրիշ ազդեցութիւն չեն ճանչնար և չեն ալ կրնար ճանչնալ:

Անգամ մը մտածէ՛, ձեզի անտեսանելի եղող

իրաց ընդարձակութեանը վրայ: Երեւակայէ՛ անգամ մը բոլոր այն ալեծածան շարժումները՝ որ տիեզերաց մէջ գոյութիւն ունին այդ երկու 36,000 և 458,000,000,000,000 թիւերուն սահմաններէն դուրս: Այդ շարժմանց թրթումունք՝ ձեզի համար ոչ լսելի են և ոչ ալ տեսանելի և ճակատագրականօրէն անձանթ կը մնան ձեզի: Փորձէ՛ անգամ մը. եթէ կ'ուզես, այդ աստիճանաշարի: Ժամանակակից գիտութիւնը՝ քիչ մը սկսաւ թափանցել այդ անտեսանելի աշխարհին մէջ, և զիտես թէ՛ նոր ժամանակներս սկսան 458 եռամիլիոն թրթուումներէն նուազ թրթումունքը չափել (որոնք անտեսանելի ջերմական ճառագայթներ են) և նոյնպէս 727 եռամիլիոնէն վեր եղածներն ալ (որոնք բիւրակաւ անտեսանելի ճառագայթներ են): Բայց այս գիտական մէթոտները՝ ուղղակի տեսողութեան մակարդակը միայն կրցան բարձրացընել և ընդարձակել, առանց շատ աւելի շեղելու անկից: — Դուք անհունութեան մէջ մեկուսացեալ և կղզիացեալ էք:

Ասոնցմէ՛ զատ, բնութեան մէջ անհամար ուրիշ թրթուումներ կան՝ որ ձեր կազմակերպութեան հետ հարողակցութիւն չունին. և դուք ընդունակ չէք անոնց, ուստի յաւիտեանս անձանթ պիտի մնան ձեզ: Եթէ ձեր քնարին (յօրինուածին) վրայ ունենայիք ուրիշ լարեր, տասը, հարիւր, հազար... թիւով, բնութեան ներգաշնակութիւնը աւելի կատարեալ կ'արտայայտուէր, թրթուացընելով զանոնք, ըստ անոնց յատկացեալ պայմանաց, յայնժամ պիտի տեսնէիք շատ մը իրողութիւններ՝ ո-

րոնք ձեր շուրջը կը կատարուին, առանց իսկ անոնց գոյութիւնը գուշակելու, և փոխանակ երկու փրոզ խաղերու (տեսնել և լսել) կրնայիք ներդաշնակ միաբանութեան գաղափարը ունենալ: Բայց դուք այնքան ազքատ էք որ չէք կրնար երեւակայել, վասն զի հասարակաց ազքատութիւն մը ազքատութիւն չէ. և անկարող էք, այս վիճակնուդ մէջ, բարձրագոյն էակաց ոմանց հարըստութիւնը բազդատել Երկրիդ բնակչաց հետ:

Բայց ձեր ունեցած զգայարանքները կը բուենցոյց տալու ձեզի՝ ո՛չ միայն աւելի զօրաւոր, այլ նաև բոլորովին տարբեր ուրիշ զգայարանքներու գոյութեան կարելիութիւնը: Օրինակի համար, յիշուի ձեր շօշափելիքովը կրնաք ջերմութեան զգացումը ունենալ. բայց զիւրին է նաև երեւակայել յատուկ զգայարանքի մը գոյութիւնը, որ համապատասխան գայ, լուսոյ միջոցաւ, առարկայից արտաքին տեսքը ցոյց տուող զգայարանքին, որով մարդս կարող կ'ըլլայ ձեւերը, նիւթը, ներքին կազմուածքները, և առարկայից միւս հանգամանքները դատելու և քննելու, անոնցմէ բըղխած ջերմական ծածանմանց ձեռամբ:

Մի և նոյն բանավարութիւնը կարելի է պատշաճեցընել նաև ելեկտրականութեան: Դարձեալ նըմանապէս կրնանք երեւակայել այնպիսի զգայարանք մը, որ աչքի հետ նոյն առնչութիւնը ունենայ ինչ որ սուետրադիսակն ունի հեռադիսակիին հետ, որ առարկային քիմիական տարրերը ցոյց տայ:

Այսպէս, քիմիական տեսակէտով արդէն բա-

ւականաչափ խարիսխ մը ունիս հիմայ, Երկրային մարդկութեան յատուկ հասողութենէն տարբեր հասողութիւններ և զգայարանքներ երեւակայելու: Այդ զգայարանքները գոյութիւն ունին ուրիշ աչխարհներու մէջ. և բնութեան ուժերուն ազդեցութիւնը զգալու համար անթիւ և անհամար զգացողութեան և հասողութեան եղանակներ կան:

Խնդիր. — Ո՛վ ուսուցիչ, կը խօստովանիմ թէ եզական և նոր լոյս մը ծագեցաւ մտքիս մէջ և թէ քու ուսուցումդ իրական ճշմարտութեան մեկնութիւնն է: Արդէն այսպիսի բաներու կարելիութիւնը մակարերած էի, բայց չէի նախատեսած թէ՛ դեռ երկրային զգայութեանց մէջ պարփակուած եմ.

Իրու է թէ մեր չըջանակէն դուրս պէտք է գտնուի՛լ ամբողջութիւնը ընդգրկելով, ճշմարտապէս դասկու համար: Այսպէս սահմանափակ թիւով զգայարանքներ ունենալով՝ անոնց հասանելի զգացումները միայն կրնանք ճանաչել. մնացեալը բնականապէս անծանօթ կը մնայ մեզ. արդեօք մնացեալը մեր գիտցածէն շատ աւելի՞ է:

Լուսեմ. — Այդ «մնացեալը» անհամար և անսահման է և ինչ որ գիտէք, գրեթէ ոչինչ է: Ոչ միայն ձեր զգայարանքները չեն նշմարեր բնական շարժումները. ինչպէս արեգակնային և երկրային ելեքտրականութիւնը, որոնց արտահոսանքը մթնոլորտին մէջ զիրար խտտորնակի կը կարեն, նոյնպէս հանքաց, բուսոց և բոլոր էակաց մազնիսականութիւնը. դարձեալ բոլոր գործարանաւորութեանց իրարու ունեցած ձգողութիւնը, ինչպէս

որ այս ամենքը որ անտեսանելի են ձեզի, ևս առաւել բարոյական աշխարհաց շարժումները, այսինքն համակրութիւնը, հակակրութիւնը, նախազգացումը, հոգեկան ձգողութիւնը և ին. և ին.:

Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, ինչ որ զիտէք և ինչ որ ալ ձեր զգայարանաց միջոցաւ կրնաք զիտնալ, այդ ամենքն ալ ոչինչ են բաղդատմամբ անոր որ կայ և գոյութիւն ունի տիեզերաց մէջ: Այս ճշմարտութիւնը այնքան խոր է որ կրնայ ըլլալ որ Երկրիդ վրայ իսկ գտնուին, ձեզմէ հիմնապէս տարբեր, այնպիսի էակներ, որ ոչ աչք ունենան, ոչ ականջ և ձեր զգայութիւններէն և ո՛չ մին. և ուրիշ այնպիսի զգայարանքներ ունենան որով կարենան տեսնել ինչ որ դուք չէք տեսներ և մի և նոյն աշխարհին վրայ ապրելով հանդերձ, զիտնալով ձեր գիացածները, բնութեան վրայ, ձեր կազմած գաղափարէն բոլորովին տարբեր և օտար գաղափար մը ունենան:

Խնդիր. — Այս ըսածերդ, հիմայ ա՛լ բոլորովին խելքէս դուրս են:

Լուսնն. — Աւելին ևս կայ, ո՛վ իմ երկրային բարեկամս, ամենայն անկեղծութեամբ կը յաւելում թէ այն ամեն հասողութիւնները զոր կ'ստանաք և որով ձեր գիտութեան խարխուրը կը կազմէք, նոյն իսկ Իրականութեան հասողութիւնն անգամ չէ: Ո՛չ: Լոյս, գոյն, տեսք, երանգ, շաչիւն, ներդաշնութիւն, այլ և այլ ձայներ, բուրմունք, ճաշակ, առ երեւոյթ յատկութիւնք մարմնոց և ին, և ին, ուրիշ բան չեն, բայց եթէ ձեւեր և կերպարանքներ: Այդ կերպարանքները ձեր մտքին մէջ կը մերձուին

աչքի, ականջի, հոտոտելիաց և քիմքի միջոցաւ և կուտան ձեզի կերպարանները և ո՛չ թէ իրականութեան էութիւնը.....: Իրականութիւնը ձեր մտքն բացարձակապէս կը խուսափի եւ ճիշդերէր հասկնալու կասարելապէս անկարող եմ.....: Նոյն իսկ նիւթը՝ ինչ որ կը կարծէք ըլլալ այն չէ: Բացարձակ կերպով հաստատուն բան չկայ. ձեր անձին մարմինը, երկաթի մը կտորը և կրանիթ քարի կտորը՝ օդէն, զոր կը շնչէք, աւելի հաստատուն չէ: Այս ամենը հիւլէներէ կը բաղկանան որ նոյն իսկ իրարու չեն դպիր և միշտ յուխե՜նական շարժման մէջ են:

Երկիրը, երկնից մէկ հիւլէն, միջոցին մէջ օրական 643,000 մղոն արագութեամբ կը վազէ. համեմատաբար իրենց չափակցութեան, ձեր մարմնոյն հիւլէները, շատ աւելի արագ կը շարժին ու կը վազեն ձեր արեանը մէջ: Եթէ բաւական սուր նայուածքներ ունենայիք, այս քարը լաւ կարեանալ տեսնելու համար, չպիտի կրնայիք տեսնել դայն, որովհետեւ պիտի անդրաթափանցէին:

Քու ներագանկիդ (encephale) մէջ կեդրոնացած ներքին յուզումէն և ուղեղիդ բջիջներուն մէջ եղած ծորակային ճօճումներէն կը տեսնեմ թէ, ըրած յայսնութիւններէս այլ եւս բացարձակապէս բան մը չիս հասկընար:

Ա՛լ չեմ շարունակեր այս նիւթիս վրայ, միայն կը նախազօծեմ հոս, նպատակ ունենալով ցոյց տալ թէ որքան կը սխալիք երբ ձեր երկրային զգացումներէն ծնած դժուարութեանց կարեւորութիւն կընծայէք: Եւ դարձեալ յիշեցընելու թէ ո՛չ դու

և ո՛չ ոք յերկրի կարող է, նոյն իսկ մերձաւորագոյն կերպով գաղափար մը կազմել արեւելեացի վրայ:

Երկրային մարդը՝ մարդուկ մըն է միայն:

Ա՛հ, եթէ կարենայիք զիտնալ Հրատի կամ Ուրանոսի վրայ թրթռացող յօրինուածութիւնը եթէ ձեզի արուած ըլլար գնահատել Արուսեակին զգայութեանց իրականութիւնը. եթէ քանի մը դար ձամբորդելով ներելի ըլլար ձեզ, միմիայն մօտենալով, տեսնել աստղային դրութեանց մէջի կեանքը, գունաւոր Արեւներու մէջ եղած տեսողութեան զգացումը, և կրկնակ արեւներու խումբին մէջ, ձեզի անձանօթ ելեքարական տպաւորութիւնը, վերջապէս ի մի բան, եթէ անդենական բազդատութիւն մը նորագոյն գիտութեան տարրերը ներկայած ըլլար ձեզի, պիտի հասկընայիք թէ, ասորոյ էակներ կրնան տեսնել, լսել, զգալ, կամ աւելի լաւ ըսեմ, բնութիւնը ձանձնալ, առանց աչքի, առանց ականջի, առանց հոտոտելեաց. պիտի հասկընայիք կ'ըսեմ, թէ բնութեան մէջ անսահման թիւով զգացումներ կան. զգացումներ բացարձակապէս ձերիններէն տարբեր, և թէ արարչագործութեան մէջ անհաշուելի սքանչելիքներ գոյութիւն ունին՝ որ արդիապէս անկարելի է ձեզ նոյն իսկ երեւակայել:

Տիեզերաց այս ընդհանուր կայութեան մէջ, ո՛վ բարեկամս, այնպիսի համերաշխութիւն մը կրտեսնուի որ բնական աշխարհը ոգեկան աշխարհին հետ կը միացընէ. բարձրօրէն կըր-

նաս ըմբռնել թէ այս ներքին ոյժը, կոշտ նիւթէն փորձուած, բայց զոհողութեամբ մաքրուած հոգին կը բարձրացընէ և կը սանի ոգեկան լուսոյ պայծառափայլ սահմանաց մէջ, կրնաս դարձեալ հասկընալ թէ ի՛նչ մեծ և անհուն երջանկութիւն մը պատրաստուած է այն էակաց, որ Երկրին վրայ իսկ, կարող կըլլան յաջորդաբար ճողոպրել մարմնական կիրքերէն:

Խնդիր. — Վերադառնալով՝ լուսոյ միջոցին մէջ տեղափոխութեան ինդրոյն, արդեօք այդ լոյսը վերջը վերջը չը՞ կորսուիր: Արդեօք Երկրիս տեսքը յախտենականապէս տեսնելի կ'մնայ, և ընդհակառակն չը՞ նուազիր հեռաւորութեան քառակուսոյն համեմատութեամբ և վերջապէս չո՞հնչանար կէտի մը վրայ:

Լուսնէն. — Այդ «վերջը վերջը» բացատրութիւնդ անտեղի է, որովհետեւ միջոցին մէջ վերջ չկայ: Յիրաւի յոյսը կը նուազի և տեսարանները նուազ ազդու կ'ըլլան, բայց ամբողջովին չեն կորսուիր: Օրինակի համար, թուոյ մը յախտենապէս կէտին կէտ, կէտին կէտը առնելով, ո՛չ երբէք զօր կը հաւատարի: Այս ինչ հեռաւորութեան մէջ Երկրը տեսնելի չէ, բայց իր տեսքը գոյութիւն ունի նոյն իսկ եթէ չտեսնուի, և հոգեկան տեսողութիւններ կը նշմարեն զանի: Սակայն աստղի մը պատկերը, լուսոյ ճառագայթից թեւոց վրայ տարուելով, պարապութեան միջին անապատաց անքննելի խորութեանց մէջ կը մխրձուի: Միջոցին մէջ, առանց աստղի ահագին ընդարձակութեամբ մասեր կան՝ որ ժամանակը պարպած է.

ուսկից աշխարհները հեռացած են, հետզհետէ ձգուելով արտաքին մեծ կեդրոններէ :

Արդ, որովհետեւ աստղի մը պատկերը՝ անցնելով այն մութ անդունդին մէջէն, որ լուսանկարչին մթաւեցնակիւն մէջէն մարդուն կամ առարկայի մը պատկերը անցնելուն կը նմանի, անկարելի չէ թէ՛ այդ աստղին պատկերը՝ ընդարձակութեան մէջ անլոյս և մասնաւոր յատկութիւն ունեցող աստղի մը հանդիպի (աստղաբաշխական գիտութիւնը արդէն գտած է այդպիսի աստղերու գոյութիւնը, որոնց մակերեսովը գուցէ իօՏով բաղադրեալ է, եթէ ստուերայուծման հաւատք ընծայենք) զգայուն և կարող ըլլայ՝ ինքն իր վրայ նկարել տալ այդ հեռաւոր աստղին պատկերը : Այսպէսով ուրեմն երկրային դէպքերուն պատկերները կրնան նկարուիլ անլոյս աստղի մը վրայ . իսկ եթէ, ուրիշ բոլոր աստղերուն պէս, այդ աստղն ալ ինքն իր վրայ թաւայի, իր մակերեսովին ամեն մէկ մասերը հետզհետէ կը ներկայէ երկրային պատկերներուն և կերպով մը այդ շարունակական դէպքերուն լուսանկարները կ'առնէ : Ասկից զատ, եթէ պատկերները՝ փոխանակ շարունակ շրջանակ գծի վրայ նկարուելու, աստղին շարժման հետեւանքով, իր հասարակածին վերի կամ վարի կողմը, ոլորտապտոյտ պարուրած և (spirale) գծի վրայ նկարուին, այն ժամանակ առաջին թաւալումէն վերջը՝ երկրորդ թաւալման ժամանակ՝ նկարները առաջին նկարներուն հետ՝ վրայէ վրայ չգայով իրարու չեն խառնուիր, այլ կը շարունակուին նկարուել, հասարակածին վերի

կամ վարի մասին վրայ : Երեւակայութեամբ կրնանք ենթադրել թէ այդ աշխարհը, փոխանակ գնահանել ըլլալու գլանածել ըլլայ իբր անջնջելի սիւն մը երկնից մէջ, յորում ինքնիրեն կը գծագրուին երկրային պատմութեան դէպքերը . . . :

Ես ինքս դեռ չտեսայ անոր իրականութիւնը Երկնից մէջ . քիչ ժամանակ է որ Երկիրը թողուցած եմ և հաղիւ թէ կը մերձենամ երկնային հրաշալեաց նմոյշները նշմարել : Բայց մտերս պիտի հետազօտեմ թէ, այդ բանը իրօք գոյութիւն ունի՞ անհուն և անհատուած աստղային տեղագործութեան հաստատութեան մէջ :

Խնդիր .— Ո՛վ ուսուցիչ, եթէ Երկրէն մեկնող ճառագայթ մը երբէք ջնջելի չէ, ուրեմն մեր գործերը յաւիտենապէս գոյութիւն կ'ունենան :

Լուսն .— Դու ասացեր, գործուած իրողութիւն մը չկրնար այլեւս կորսուիլ . և ո՛չ մի գործութիւն չկրնար զանի այլեւս բնաջինջ ընել : Անպատ դաշտի մը վրայ ոճիր մը կը գործուի . ոճրագործը կը հեռանայ անկից և անձանօթ կը մնայ, կարծելով թէ գործած ոճիրը մշտնջենապէս անցած գացած է : Ձեռքերը լուարով, զղջալով կը կարծէ թէ, իր գործը ջնջեալ է : Բայց իրականապէս բնաջինջ եղած բան չկայ : Այդ գործը կատարուած ժամանակը, լոյսը զանի խից և տարաւ Երկնից մէջ կայծակի արագութեամբ . լուսոյ ճառագայթին հետ միաւորեալ է նա յաւիտենապէս, անհունութեան մէջ յաւիտենա պիտի փոխանցուի . . . :

Ահա երբ բարի գործ մը կատարուի, բարե-

բարը զայն գաղտնի կը պահէ, բայց լոյսը զայն ըմբռնեց. փոխանակ մոռցուելու, յաւիտեանս պիտի մնայ :

Նարոյէտն իր փառասիրութեանը համար, կամովին պատճառ եղաւ, միջին հաշուով 30 տարեկան հինգ միլիոն մարդկանց կորստեան՝ որոնք, հաւանականութեան հաշուով և բոս կենաց օրինաց, դեռ 37 տարի եւս պիտի ապրէին :

Արդ ուրեմն, 185 միլիոն տարիներ են որ նա կործանեց : Անոր պատիժը և քաւութիւնը, 1815ին Յունիս 18ին վաթէնդիոյի դաշտէն մեկնող լուսոյ ճառագայթներուն հետ նոյն արագութեամբ տարուիլը պիտի ըլլայ. որպէս զի միշտ իր աչքին առջև մշտատե ունենայ այդ վճռական վայրկեանը, ուր իր ունայնութեան աշտարակին չարաչար կործանումը տեսաւ և անդադար այդ յուսահատութեան ցաւը քաշելու համար պիտի մնայ 185 միլիոն կործանում տարիներու չափ նոյն լուսոյ ճառագայթից մէջ, վրան զի այդ տարիներուն պատասխանատուութիւնն ունի :

Այդպէս գործելով, փոխանակ իր պարտականութիւնը արժանապէս կատարելու, իր հոգեկան յառաջդիմութիւնը այդքան ժամանակ յետաձգեց :

Եթէ ներքի ըլլար ձեզ տեսնել, թէ ինչե՛ր կը պատահին բարոյական աշխարհին մէջ, ինչպէս կը տեսնէք բնական կարգաց մէջ անցածները, պիտի կարենայիք տեսնել ուրիշ տեսակ թրթռումներ և փոխանցումներ, որոնք իրողութիւնները, նոյն իսկ գաղտնի մտածութիւնները, հոգեկան աշխարհին թաքստոցին մէջ կը տպաւորեն :

Խնդիր. — Ո՛վ Լուսէն, քու յայնութիւններդ կը սարսափեցընեն զիս : Այսպէս ուրեմն, մեր յաւիտեանական ճակատագիրը սերտիւ կապուած է նոյն իսկ արեգեղաց կողմակերպութեան հետ : Երբեմն մտածած եմ թէ լուսոյ ձեռամբ, աշխարհներու հետ ս ե է յարաբերութեան մը մանալ կարելի չէ՞ արդեօք : Ծատ մը բնագէտներ ենթադրած են թէ գուցէ օր մը կարելի պիտի ըլլայ, Երկրի և լուսնոյ մէջ յարաբերութիւն հաստատել, նոյն իսկ մոլորակաց հետ լուսաւոր նշաններու ձեռամբ : Բայց, եթէ կարելի ըլլար Երկրէս դէպ ի ստոզ մը նշաններ ընել, որուն լոյսը, օրինակի համար, հարիւր տարի դնէր մեզի հասնելու համար, Երկրիս նշանները հոն պիտի հասնին նոյն ժամանակին մէջ և նոյնքան ալ անոր պատասխանին համար : Որով, երկու դար պէտք կ'ըլլայ հարցման և պատասխանին մէջի տնտղութեան : Երկրային գիտողը շատոնց մեռած կ'ըլլայ մինչև որ ճատագայթը հասնի աստղին, աստղին ղիտողն ալ նոյն բաղդը պիտի ունենայ անշուշտ, երբ պատասխանը հասնի հոն . . . :

Լուսեմ. — Եւ ահա արդարեւ, կենդանեաց և մեռելոց մէջ բանակցութիւն մը գոյացած կ'ըլլայ :

Խնդիր. — Կը ներես ինձ, Տէ՛ր, վերջին հարցում մը ընել, գուցէ քիչ մը յանդուգն հարցում . . . բայց վերջինը, վասն զի կը տեսնեմ թէ Արուսեակը կը նուազի և կը զգամ թէ ձայնդ պիտի դադրի լսելի ըլլալէ :

Եթէ իրք և գործողութիւնք կերպով մը տեսնելի են եթերին սահմանաց մէջ, արդ ուրեմն

մեռնելէն վերջը կրնանք տեսնել ոչ միայն մեր սեփական գործերը՝ այլ ուրիշներունն ալ. բնականապէս մեզի հետ վերաբերութիւն ունեցողներունը:

Օրինակի համար, զոյգ մը միշտ միացած հոգիներ պիտի կամենան վերստին տեսնել, հազարաւոր տարիներ, իրենց Երկրիս վրայ միատեղ անցուցած քաղցր ժամերը: Լուսոյ արագութեամբ պիտի յառաջանան միջոցին մէջ և միշտ նոյն երջանիկ ժամերը աչքի առաջ ունենալու համար: Ուրիշ բացատրութեամբ մը, այր մը հետաքրքրութեամբ պիտի հետեւի իր կողակցին կենացը դէպքերուն, և եթէ անակնկալ և մասնաւոր պարագայ մը ներկայանայ՝ պիտի կարենայ ուզածին պէս զիւրազգած մանրամասնութիւնները հետազօտել... նոյն իսկ, եթէ իր անմարմնացած կողակիցը մերձակայ սահմանաց մէջ է, պիտի կարենայ կանչել զանի, միասին դիտելու իր անցեալ դէպքերը, ո՛չ մի վկայութիւն այլեւս անընդունելի կը մնայ այդքան բացայայտ ներկայութեան... Գուցէ հոգիները այդպիսի անձնական անտարաններ ալ կ'ունենան:

Լուսնէն.— Ո՛վ իմ երկրային բարեկամս, երկնից մէջ շատ քիչ կարեւորութիւն կուտան նիւթական յիշատակներու, և կը զարմանամ թէ, դուն դեռ այդ տեղուանքն ես:

Այս երկու խօսակցութեանցս ամբողջութեան նկարագիրը պէտք է ուշադրութիւնդ գրաւէ, որ է՝ ընդհիւ լուսոյ օրինաց՝ երբ դեպիւրս արդէն անցած եւ նւաղած են, իրապէս դարձեալ կարող ենք տեսնել զանոնք:

Խնդիր.— Հաւատա՛ ինձ, ո՛վ ուսուցիչ, թէ այդ ճշմարտութիւնն այլեւս մտքիս մէջէն չպիտի անյայտանայ, և միշտ այդ կէտն է որ զիս աւելի կ'սքանչացնէ: Խնդրեմ, ներողամիտ եղի՛ր առջի ընդգիծութեանս համար: Ճշմարիտ ըսելով, քու առաջին խօսակցութենէդ սկսեալ, ինչ որ իմ երեւակայութիւնս դերագանցեց, այն մտածութիւնն է՝ որ Հոգւոյ մը ճամբորդութեան տեւողութիւնը ո՛չ միայն ոչինչ կրնայ ըլլալ, այլ բացասական և նոյն իսկ յեճամնաց:

«Յեճամնաց, ժամանակ», այս երկու բառերուն միասին գտնուին եզականապէս զարմանք կը պատճառէ ինձ: Աստղէ մը կը մեկնիս այսօր և երեկուան օրը կը հասնիս հոն... Ի՞նչ կ'ըսեմ... 72 տարի առաջ կը հասնիս... հարի՛ւր տարի առաջ, որքան աւելի հեռուն երթաս, այնքան աւելի կ'անուխ կը հասնիս: Ճշմարիտ, քերականութիւնը նորէն վերակազմելու պէտք կայ:

Լուսնէն.— Այդ բանը աներկրայապէս անվիճելի է: Երկրաւորապէս խօսելով՝ սխալ չեն այդ բացազանչութիւններդ, քանի որ, այս աշխարհին համար ուր կը գտնուինք, Երկիրդ 1793 տարւոյն մէջ է եւրն, եւրն: Սկիայն, նոյն իսկ ձեր դնտիկին վրայ ալ, այդպէս առերեւոյթ տարակերպութիւններ ունիք որ մերձաւորապէս գաղափար մը կուտայ անոր. օրինակի համար երբ Բարիզէն, ճիշդ կէսօրին, հեռագիր մը ղրկես՝ կէս օրին 20 վայրկեան մնացած Պրէստ կը հասնի:

Բայց այս մասնակի գործադրութիւնները կամ հետաքրքրաշարժ տեսքերը, պէտք է կարեւորու-

Թիւն գտնան քու մտքիդ մէջ, տառնք ըրած յայն-
նուրեանցս ձեւերը և պատկերներն և բնազանցա-
կան զգալի մեկնութիւններն են:

Գիտցիր որ ժամանակը բացարձակ իրականու-
թիւն մը չէ, այլ միայն արեգակնային դրութեան
մէջ Երկրիդ շարժմունքներուն պատճառած ան-
ցաւոր չափ մը: Ո՛չ կեղծ, այլ իրական կերպով
կատարուած մարդկային կենաց այս պատկերը,
ինչպէս որ է առանց քօղարկութեան, ոչ մարմնոյ՝
այլ հօգւոյ աչօք դիտելով, երբ անբացատրելի
մնացած խորհրդաւոր գաղտնիք մը, ընադիտապէս
բացատրէ «մասնաւորաց դաստիարակութիւն» և մեր
մահէն վերջ, մեր դատողութեամբ, յայնժամ աստ-
ւածաբանական սահմանին մէջ կը մտնէ:

Ընդհանուր առմամբ, աշխարհի մը ներկան,
վայրկենական այժմէութիւն մը չէ, որու գոյանալն
ու կորնչելը մէկ ըլլայ. չէ՛ նաև մի միայն տեսք մը
առանց էութեան, դուռ մը ուսկից անցեալը յա-
րատել ապագային մէջ՝ գահավիժի, և կամ միջո-
ցին մէջ յատակագիծ մը: Այլ ընդհակառակն,
էական իրականութիւն մը, որ լուսոյ արագու-
թեամբ Երկրէն հեռանալով և մխրձուելով յաւի-
տենապէս անհունութեան մէջ, այնպէս յաւիտեան
ներկայ կը մնայ:

Այս լայնախոր խնդրոյն բնազանցական իրա-
կանութիւնն այնպէս է որ կրնանք ըմբռնել
հիմա, աշխարհին յարակալութիւնը, անոր ամ-
բողջ տեսողութեան ժամանակ: Պատահած զէպ-
քերը կատարուած տեղւոյն համար կը կորնչին,
բայց միջոցին մէջ ներկայ են: Մէն մի աշխարհի

մէջ կատարուած զէպքերուն ցոլումը՝ կ'անդրա-
բաղտնայ ի ծոց Անհուն եակին, որուն ամենու-
րեքութիւնը՝ ամէն բան յաւիտեան ներկայու-
թեան մէջ կը պահէ:

Աշխարհիս երեսը սկիզբէն ի վեր պատահած
զէպքերը միջոցին մէջ տեսանելի են, այնքան հե-
ռաւորութեանց մէջէն, որքան այդ զէպքերը ա-
ւելի հնագոյն ժամանակի մէջ պատահած են: Ամ-
բողջ դուռտին պատմութիւնը և մէն մի բնակչի
կեանքը կարելի է, մէկ հայեացքով, միանդամայն
տեսնել: Այսպէսով, տեսողագիտութեամբ կը դիտ-
նանք թէ Անսկիզբն Հոգին, ներկայ ըլլալով ամե-
նուրեք, բոլոր անցեալը նոյն ժամայն կը տեսնէ:

Ինչ որ ճշմարիտ է Երկրին համար, ճշմարիտ
է նաև միջոցին բոլոր աշխարհներուն համար:
Այսպէս ուրեմն, համօրէն տիեզերաց ամբողջ պատ-
մութիւնը միանգամայն և նոյն ժամայն կրնայ
ներկայ ըլլալ Սրբաբնին տիեզերական ամենուրե-
քութեանը մէջ:

Կը յաւելում թէ, Աստուած ո՛չ միայն այս
ուղղակի տեսողութեամբ գիտէ բոլոր անցեալը,
այլ ամեն բանի ներկայութեան գիտութեամբը:
Եթէ բնազէտ մը, ինչպէս Գիւլիէ (Cuvier), ան-
հետացած կենդանեաց մէջ, ոսկորին միջոցաւ,
կրցաւ այդ կենդանւոյն ամբողջ կերպարանքը
վերակազմելով նկարագրել, բնութեան ճեղիմակը
կը ճանչնայ անցեալ Երկիրը, ներկայ Երկրին մի-
ջոցաւ, նոյնպէս մոլորակային դրութիւնը և անց-
եալին արեւը, և ջերմութեան, կազմակերպու-
թեան և բազաղրութեանց պայմանները, որոնցմէ
ձեւացած են արդի էութիւնները:

Միւս կողմանէ, ապագան ալ կրնայ կատարելապէս ներկայ ըլլալ Աստուծոյ, անոր արդի ծիրէն, ինչպէս անցեալը անոր արտադրութենէն: Ամեն դէպք, անցեալին և ապագային հետ ունեւորեալ կերպով կապուած է: Ապագան ի հարկէ ստիպեալ, ներկայէն յառաջ կուգայ. արամաբանական հետեւութիւնն է անոր. և կայ այնքան ճշմարտութեամբ, ինչպէս անցեալը նոյն ինքն կայ և արձանագրուած անոր համար որ ունի կարեւոր նշանակութիւն:

Բայց ես կը կրկնեմ. այս պատմութեան կարեւոր կէտն է.—

Գիտնալ և հաստ ըլլալ թէ, աշխարհաց և էակաց անցեալ կեանքը միշտ սեսանելի է միջոցին անհուն ընդարձակ սահմանաց մէջ, հետզհետէ թափանցող լուսոյ ճառագայթից շնորհիւ:



ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ԳՐՈՒԱԳԻՆ

ՉՈՐՈՐԴ ԳՐՈՒԱԳ(*)

ՆԱԽԸՆԹԱՅԻ ԿԵՆՈՆ

— Խնդիր. — Մեր վերջին խորհրդաւոր խօսակցութենէն ի վեր, ո՛վ Լուսնն, երկու տարի անցաւ: Անուխնձան միջոցի բնակչացոյ համար անըզգալի՝ բայց մեզ երկրայիններուս շատ զգալի այդ ժամանակամիջոցին մէջ, քո ներշնչած բարձր խնդիրներուն վրայ շատ անգամ մտածած եմ և նոր հորիզոններ բացուած են հոգւոյս անսովորական առջեւը: Ի հարկէ, Երկրէդ մեկնելէ ի վեր՝ քու գիտալութիւններդ և ուսումնասիրութիւններդ, հետազոտութեանդ ասպարէզը առաւել ևս ընդարձակած ես: Ի հարկէ անհամար սքանչելիքներունիս ներկայացնելու հիմա՝ իմ աւելի լաւ պատրաստուած իմացականութեանս Օ՛հ... Եթէ արժանի եմ և եթէ կարող եմ բմբսնել զանոնք, խնդրեմ, պատմ՛ ինձ, ո՛վ Լուսնն, երկնային բարձրագոյն սահմաններուն մէջ ըրած ճամբորդութիւններդ և մեզ համար անմասն յայտնութիւններդ և առջեւդ պարզուած վեհութիւնները, և այն սկզբնական պատճառները, սրտնք ցոյց առլնքեզի՛ մարդկանց և էակաց կեանքին խորհրդաւոր ճակատագրին ինդիրները:

Լուսնն. — Միշտ ես հիմա, քու հոգիդ պատրաստեցի, ո՛վ իմ սիրելի հնօրեայ բարեկամս, ըն-

(*) Գրեալ 1869ին

դունելու օտարոտի ապաւորութիւններ՝ զորս ո՛չ մի երկրային անսարան չէր կրնար քեզ տալ. բայց այսու ամենայնիւ, պէտք է հիմա, հոգիդ քուրովին ազատ կացուցանես երկրային նախապաշարուններէ։ Ինչ որ հիմա պիտի ուսուցանեմ, պիտի զարմացընէ զքեզ. մտիկ ըրէ՛ նախ ազէկ ուշադրութեամբ և ընդունէ՛ իրր հաստատեալ ճշմարտութիւն և ո՛չ թէ իրր պարզ վէպ մը։ Այս առաջին պայմանն է որ կը պահանջեմ քու եռանդուն ուսումնասիրութենէն։

Երբ լաւ մը հասկընաս՝ (և պիտի հասկընաս եթէ մաթեմատիքական և ազատ հոգեով ունկընդրես) պիտի ըմբռնես թէ՛ այն ամեն իրողութիւնները, որ անդենական կեանքը կը կազմեն, ո՛չ թէ միայն կարելի են ըլլալ, այլ իրականութիւններ են և աւելի սերտիւ ներդաշնակ են երկշային իմացական յատկութեանց։

Խնդիր. — Ապահով եղի՛ր, ո՛վ Լուսին, որ ամեն կիրքերէ զերծ հոգեով և եռանդով, պատարաստ եմ լսելու արաւայայտութիւններդ զորս ո՛չ մի մարդկային ունկն դեռ լսած չէ։

Լուսին. — Այն դէպքերը, որոնք այս դրուագիս նիւթը պիտի կազմեն, իրենց ստարկայ չունին միայն Երկիրը և մերձակայ աստղերը, այլ կը սարածուին աստղաբաշխական անսահման դաշտին վրայ և անոր սքանչելիքները կը ծանօթացընեն։ Անոնց բացատրութիւնը պիտի պարզուի, ինչպէս պարզուեցան նախկինները, լոյսին ուսումնասիրութեամբ, որ՝ իրր մոզական կամուրջ ձգուած է մէկ աստղէ միւսը։ Երկրէդ մինչեւ Արեւ

և Երկրէդ դէպի աստղը։ Լոյսը, որ տիեզերական շարժում մընէ և սրով լի է միջոցը, կանգուն կը պահէ աստղերը իրենց չըջագծին վրայ, և բնութեան յախանակոն կեանքը կը կազմէ։ Ուրեմն, անմիջապէս ի միտ ա՛ւ և միշտ աչքիդ առջեւ ունեցիր միջոցին մէջ լուսոյ յաջորդական փոխադրութիւնը։

Խնդիր. — Գիտեմ թէ այդ գործող ազդակը, լոյսը՝ սրով անարկաները անսանկի են մեր տչաց, յանկարծական մէկ կէտէն միւսը չը տեղափոխուի, այլ յաջորդաբար և հետզհետէ։ Գիտեմ թէ մանրերկրորդի մը մէջ 75000 մղոն կը վազէ և 4 միլիոն 500 հազար մղոն մէկ վայրկեանի մէջ։ Գիտեմ նաեւ թէ՛ Արեւուն և մեր միջեւ 37 միլիոն մղոն միջոցը՝ 8 վայրկեան և 13 մանրերկրորդի մէջ կը կարէ. արդի աստղագիտութիւնը զմեզ ընտելացուցած է աս բաներուն։

Լուսին. — Եւ արդեօք անոր պիտածան շարժումն ալ ճշմարտապէս ըմբռնած ես։

Խնդիր. — Կարծեմք Չայնին շարժմանը կը նըմանցընեմ, թէպէտեւ լոյսը անբաղդատելիօրէն աւելի արագ կը շարժի։ Ծածանումէ ծածանում ձայնը օդին մէջ կը սարածուի։ Երբ եկեղեցոյ զանգակը կը զարնէ՝ անոր հնչիւնը իրեն մերձակայ եղողէն անմիջապէս լսելի է, բայց մէկ մանրերկրորդ վերջը՝ լսելի կ'ըլլայ 340 մէղր հեռուն եղողին և վերջապէս 3 մանրերկրորդ վերջն ալ՝ մէկ քիլոմէտր հեռաւորութեան մէջ լսելի կ'ըլլայ։ Այսպէս ձայնը լսելի կ'ըլլայ, մէկ գիւղէն միւսը, հեռուցհետէ մինչեւ ո՛ւր որ կրնայ երթալ։ Նոյնպէս

ալ լոյսը. միջոցին մէկ սահմանէն միւսը հետզհետէ կը տեղափոխուի և այսպէս առանց գիշանելու. միջոցին մէջ կը հեռանայ:

Եթէ կարենայինք, օրինակի համար, Երկրէս տեսնել լուսնի վրայ պատահած դէպք մը, եթէ ունենայինք լաւ գործիք մը, որ կարենայինք տեսնել հոն, պողոյ մը ծառէն իյնալը, պատահած պահուն նոյն ժամայն չի պիտի տեսնէինք, այլ մէկ չորրորդ մանրերկրորդ վերջը, լասն զի լոյսը ասկից մեղի զայլու համար այդքան ժամանակ կը դնէ:

Եթէ նոյնպէս, անկից տասն անգամ հեռու աշխարհի մը վրայ ուղեկէնք դէպք մը տեսնել, ոչ թէ իրականութիւնը կատարուած ժամանակ պիտի տեսնէինք, այլ 13 մանրերկրորդ վերջը: Եթէ այդ աշխարհքը 100 անգամ հեռու է, 130 մանրերկրորդ վերջը պիտի տեսնուի, և թէ 1000 անգամ հեռու է, 21 վայրկեան և 40 մանրերկրորդ վերջը. և այսպէս հեռզհեռէ ըստ հեռաւորութեան:

Լուսն. Ծիշչ է, ալեկ հասկըցած ես. և գիտես որ այս պատճառու է որ Գափիլլայէն մեկնած լուսոյ ճառագայթ մը 73 տարի կը դնէ մինչև Երկիրը գալու: Ուրեմն՝ եթէ 72 տարի առաջ հոնկից մեկնող լոյսը այսօր միայն կը տեսնես, փոխադարձաբար Գափիլլան ալ, 72 տարի առաջ Երկրէդ մեկնած լոյսը, այսօր միայն կը տեսնէ:

Նրկիրը, արեւէն առած լոյսը կը ցոլացնէ և հեռուէն փայլուն կերևի. ինչպէս կը տեսնէք Արուսեակը և Լուսընթազը, որոնք արեւէն լուսաւորուող մոլորակներ են: Երկրին լուսաւորելալ

պատակերը. լուսանկարը՝ միջոցին մէջ կը ճամբորդէ մանրերկրորդի մէջ 75000 մղոն արագութեամբ և Գափիլլայի հեռաւորութեան 72 տարուան մէջ կը հասնի մշտապես վազքով: Այս բաները կրկնելով կը յիշեցնեմ քեզի, որպէս զի ալեկ մը մըտքիդ մէջ զհասկելով, կարող բլլաս առանց դժուարութեան հասկընալ, մեր վերջին տեսութենէն ի վեր իմ անդենական կենացս մէջ պատահած դէպքերը:

Ենցիր. — Այս տեսողիտական սկզբունքները բացայայտ կերպով հաստատուած են մաքիս մէջ: Քու մանուանդ երկրորդ օրը, երբ 1864 Հոկտեմբերին, ինչպէս ինձ յայտնեցիր, արագապէս փոխադրուեցար Գափիլլայի վրայ և զարմացման մէջ մնացիր, երբ տեսար հոն, այդ աշխարհի փլիխոփայ աստղաբաշխները, որոնք 1793ի Ֆրանսայի խոսովութեան յանդուգն մէկ արարքը կը դիտէին:

Նոյնքան ալ զարմացման ենթարկուեցար երբ տեսար ինքզինքդ՝ ի տղայ հասակի, որ Բարիզի փողոցներուն մէջ կը վազվզէր: Գափիլլայէն՝ հետարճեալ նուազ հեռաւորութեանց մէջ, երկրիս մօտենալով այնպիսի սահմաններու մէջ գտնուեցար: Երբ ազատութեանց ժամանակի երկրային լուսանրկարներովը, քու տասը տարեկան հասակդ կը տեսնէիր, ոչ թէ յիշողութեամբ այլ իրականապէս: Քու նախկին պատմութիւններէդ, ա՛նա այս զէպքն է որ աւելի դժուարութիւն պատճառեց ինձ հասկընալու և ճշդիւ ըմբռնելու:

Լուսն. — Ինչ որ հիմայ պիտի հասկըցնեմ, ա՛լ աւելի զարմանալի է: Բայց պէտք է նախկինը

աղէկ մը ընդունիլ որպէս զի պատմելիքս աւելի ազդուապէս հասկցուի:

Քափիլլայէն դէպի Երկիր մեկնելովս՝ երկրային կենցաղին 72 տարիները տեսայ, ամբողջ կեանքս ուղղակի կերպով ինչ որ աեղի: Ընեցած էր. վասն զի դէպի Երկիր մտանալովս՝ երկրային տեսարանայ հետ առաջ կերթայի. ձեր մոյրակին տեսանելի պատմութիւնը ընդարձակութեան մէջ պատկերացած կը պահուի, քրոնց մէջ նաեւ Բարեղինները և խմիներս ալ կը գտնուին: Յետագընացութեամբ 72 տարուան մէջ կարած ճամբաս մէկ օրուան մէջ ընթանալով հասայ իմ թաղմանս հանդէսին:

Խնդիր. — Այնպէս որ՝ Քափիլլայէն վերադառնալով դէպի Երկիր, ճամբուն վրայ՝ տարուէ տարի աստիճանաբար շարուած լուսանկարներուն կը հանդիպէիր: Երկրէն ամենէն հեռուն եղողը՝ ամենէն հին լուսանկարը, այն որ Քափիլլայի մօտ էր՝ 1793ինը ցոյց կուտար. երկրորդը՝ տարի մը վերջ մեկնողը, որ դեռ Քափիլլայի հոտած չէր, 1794ինը կը ներկայէր, ասաներրորդը՝ 1803ինը, և 36րդը՝ որ է կէս ճամբունը, 1843ի նկարը, և վերջապէս 74րդ՝ 1864ինը:

Լուսնն. — Շատ լաւ: Սկզբուն չհասկցուած և խորհրդաւոր երեւցած իրողութեան ասիէ աւելի ճիշդ կերպով ըմբռնում կարելի չէ: Հիմայ ուրեմն կրնամ պատմել քեզ, թէ ի՞նչ պատահեցաւ Քափիլլայի վրայ իմ երկրային կենցաղս տեսնելէս վերջը:

Ա.

Լուսնն. — Գեա քիչ ժամանակ առաջ (բայց չեմ կրնար բացատրել այդ ժամանակը Երկրին թաւալման հաշուով) մինչդեռ մեղամաղձոտ մէկ գիւղացիկարի առաջ և պայծառ գիշերամուտքի մը ժամանակ, աստեղադարդ Երկրինը նայելով կը հիանայի և երկնից մէջ ձեր երկնային Արեւաստղը և անոր քովի կապուտագոյն պզտիկ մօլորակը, որ ձեր Երկիրն էր, կը նշխարէի, մինչդեռ կը գիտէի իմ մանկութեանս մէկ տեսարանը՝ ուր կը տեսնուէր մայրս պարտէզի մը մէջ նստած, զիրկը մէկ քանի ամսեայ փոքրիկ մանուկ մը (իմ եղբայրս), քոյն ալ փոքրիկ երկու տարեկան աղջկի մը (քոյրս) և սյրիչ փոքր 4 տարեկան աղջկի մը (ես ինքս), միջդեռ ինքզինքս այդ տարիքին մէջ կը տեսնէի, ուր մարդ դեռ իր իմացական գոյութեան զիտակցութիւնը չունի, թէպէտ ամբողջ կենացը ծիրը իր ճակտին վրայ կը կրէ. մինչդեռ կը մտածէի այդ եղական իրականութեան վրայ՝ որ ինձ ցոյց կուտար կենացս շիրմին վրայ գտնուիս, բարձրագոյն կարողութենէ մը մղուած, ուշադրութիւնս յանկարծ ձեր Երկրէն խտտորիլը զգացի և տեսութիւնս ուղղուեցաւ երկնից մէկ ուրիշ կէտին վրայ՝ որ նոյն ժամուն իսկ, Երկրին և իմ կենացս ասպարէզին հետ ծածուկ կապակցութիւն մը ունենալը թուեցաւ ինձ: Այլ հետ չիրացայ զատել տեսութիւնս երկնից այդ նոր կէտին վրայէն, ուր չեմ գիտեր ի՞նչ մագնիսական զօրութիւն մը կը կապուէր զիս: Շատ անգամ

փորձեցի հեռացնել աչքերս աակից և վերադարձնել յՆրկիր, զոր միշտ կը սիրեմ. բաց յամառութեամբ միշտ այդ անձանօթ աստղը կը վերադառնային անոնք:

Այն աստղը զոր բնազգմամբ կը փնտռէի բան մը գտնելու անոր վրայ, Կոյս համաստեղութեան մաս կը կազմէ, աստեղակոյտ մը, որուն ձեւը՝ Գալիլէայէն տեսնուած ժամանակ, կը փոխուի: Այդ աստղը կրկին-աստղ մըն է, այսինքն երկու Արեւներու ընկերակցութիւն մը, մին արծաթագոյն իսկ միւսը սակեղոյն գեղին, որ իրարու շուրջ կը թափին 175 աստղանոց մէջ: Այդ աստղը՝ Նրկրէզ պարզ աչքով կը տեսնուի և (կամ մտ) զրով կը յիշուի Կոյս համաստեղութեան մէջ: Այս մէն մի արեւու շուրջը մոլորակներու գրութիւն մը կը բաղկանայ Ուշագրութիւնս յառեցաւ սակեղոծ արեւուն մոլորակաց միոյն վրայ:

Այս մոլորակին վրայ Նրկրիզ պէս բոյսեր և կենդանիներ կան, որոնց ձեւերը բաւական կը նմանին ձերիններուն, թէպէտև յօրինուածքը ասորեր հիման վրայ կայացած է: Չերինին նմանող կենդանակազմութիւն մը կայ, ձուկեր՝ ծովերու մէջ և չորքրտանիներ օդին մէջ, ուր մարդիկ ալ կրնան թռչիլ, բայց առանց թևի, միմոլորտին թանձր խտութեան պատճառաւ:

Այս մոլորակին մարդիկը՝ գրեթէ Նրկրիզ մարդոց ձեւը ունին. թէպէտև գտնելիքին մազէ զուրկ՝ ճաղատ են, իրենց ձեռքերուն վրայ փոխանակ հինգ մատ ունենալու, հակընդդէմ երեք հատ մատ, փոխանակ գարշապարի, թեւերնուն և

ասքերուն ճայրի մասերը քառաչուի պէս կակուղ են. այսու ամենայնիւ՝ երկու աչք, մէկ քիթ և մէկ բերան ունին, որով իրենց ղէմքը քիչ շատ երկրացուց կը նմանի: Գլխուն երկու կողմը ափաջներ չունին՝ այլ մէկ հատ կոնաձեւ՝ ցցուած գանկին վրայ, պզտիկ գլխարկի մը նման: Ընկերակցութեամբ կ'ապրին և երբէք մերկ չեն պատար: Կը տեսնես որ ընդհանուր կերպով արտաքուստ քիչ տարբերութիւն ունին երկրացիներէն:

Խնդիր. — Ուրեմն, ըսել է թէ աշխարհներու վրայ մենէ արիշ, բոլորովին տարբեր էակներ կան, որոնք անմահութեամբ հանդերձ, արժանի են մեզի՝ հետ բազղադուելու:

Լուսնն. — Գունտերուն վրայ գտնուած կենսունակ էակաց ձեւերը, ընդհանրապէս ձեռի համար աներեւակայելի գտնադանութիւններ ունին: Այդ ձեւերն արգիւնք են, մեք մի գունիսի յստակ արեւայ եւ գանճի կառաւարդ ումերուն, նիթ, խտութիւն, ձգողութիւն, ջերմութիւն, լոյս, և լիքարականութիւն, միմոլորտ ևւին, ևւին. այս ամենքն ալ հիմնովին կը տարբերին մէկ զուեռէ միւսը: Նոյն իսկ միեւնոյն գրութեան մէջ, այդ ձեւերը կը տարբերին. Այսպէս՝ երեւակի, Փայլածուի մարդիկը, Նրկրիզ մարդկանց հետ ամենեւեւին նմանութիւն չունին. և թէ մէկը տեսնէ զանոնք առաջին անգամ՝ ո՛չ զլուսն, ո՛չ անգամ և ո՛չ ալ զգայարանք կը նշմարէ անոնց վրայ:

Կոյս համաստեղութիւնը, որուն վրայ յամառօրէն իմ տեսութիւնս յառած էր, այդ գրութեան մոլորակաց բնակիչները ընդհակառակն, Նրկրին

գունախի բնակչաց ձեւին կը մօտենան, նոյնպէս մերկ են իրենց իմացական և բարոյական վիճակովը, միայն քիչ մը աւելի ստորին են ձեռնէ, երկրորդին մարդկութեան վիճակին ամբողջութիւնը աւանդով, անմիջապէս նախորդ աստիճանին վրայ կը դանտուն:

Խնդիր. Երկրային մարդկութիւնը՝ իրեն ի մացական և բարոյական վիճակին մէջ համազգի (homogéne) չէ, այլ զանազանեալ կը տեսնուի: Մեծ ասորերութիւն ունի Եւրասացին՝ Հասկա շխտանի ցեղերուն և Ուկրիանոսի կղզեաց վայրենիներէն: Երկրիս երեսի ո՞ր ժողովուրդն է որ իբր փայար առած ևս իմացականութեան տեսակէտով:

Լուսն. — Արարական ցեղը: Այն ցեղը կարող է Քէրէբներ, Նեփաւաններ, Գալիլէաններ և Ալքիմիդէաններ, ա՛՛ Արամայերներ հասցընելու. միւս կողմանէ ալ իր արմատը նախնական վաշկատուն այրաբնակ ցեղերու կը յանդի: Բայց հարկ չկայ փայար ժողովուրդ մը փնտռելու. աւելի նախընտրելի է ժամանակակից քաղաքակրթութեան ամբողջութիւնը ի նկատի առնել: Թէպէտև կարծած նուր չափ տարբերութիւն չկայ սեւամորթի մը և Ասիոյ ցեղին իմացողութեանը մէջ, Ինչ որ ալ ըլլայ, եթէ անհրաժեշտ է բազդատութիւն մը դնել, կրնամ ըսել թէ, Կոյսի մոլորակին բնակիչները, Սքանախնաւեան ժողովրդոց իմացականութեան աստիճանին մէջ են:

Երկրից և այն աշխարհին մէջի տմենէն մեծ և հիմնական ասորերութիւնը սա է թէ՛ հոս սեռ

չկայ, ոչ բուսոց մէջ և ո՛չ ալ կենդանեաց և ո՛չ ալ մարդկութեան մէջ: Էական սերունդը (générations) ինքնարեբար կը կատարուի. մոլորակին արգաստեր կղզւոյ մը մէջ, բնախօսական որոշ պայմանաց ազդեցութեամբ. և մարդիկ մօր մը արգանդին մէջ չեն ձեւանար, ինչպէս Երկրից վրայ: Աւելորդ կ'ըլլայ հիմա ձեզի բացատրել թէ, ձեր Երկրային զաւափարովը մի միայն կը դատէք և կը տեսնէք, մինչդեռ այդ մոլորակին իրերը քաղաքակապէս՝ տարբեր են: Այս յօրինուածութեան հետեւնքն այն է թէ՛ ոչ մի կերպով ամուսնութիւն չկայ այդ աշխարհին վրայ. և մարդկութեան բարեկամութեանց մէջ մարմնական ձգտումներ խառնուած չեն, ինչպէս Երկրից մէջ միշտ կը յայտնուի, նոյն իսկ, երկու տարբեր սեռէ անձանց բարեկամական մաքուր յարաբերութեանց մէջ ևս կը պատահի: Կը յիշես անշուշտ, որ նախակենդանական շրջանի Երկրից արարածները ամենքն ալ խուլ և համր էին և առանց սեռի: Կենդանեաց և բուսոց մէջ սեռի գոյացումը բնութեան պատմագրութեան մէջ, համեմատաբար, շատ աւելի ուշ ծագում առած է:

Ինչպէս որ ըսի, զէպի այդ հեռաւոր մոլորակը ձգուելով, հոգւոյս տեսութիւնը անոր մակերևոյթին զննութեամբը զբաղեցաւ, առանց ճնշող պատճառը զիտնուելու, աչքերս յառեցան մասնաւորապէս ձերմակ քաղաքի մը վրայ, որ հեռուէն ձիւնապատ զանդուածի մը կը նմանէր. բայց շատ հաւանական է թէ՛ ձիւն չ'ըր, վասն զի անհաւանական է թէ՛ այդ գունախին վրայի ջուրը

Երկրի Զուրին միեւնոյն քիմիական և ֆիզիքա-
կան վիճակին մէջ գտնուի: Այդ քաղաքին եղե-
րաց վրայ՝ դեղին ծառերով մերձակայ անասոր-
տանոց պողոտայ մը կար, որուն վրայ երեք հոգի
նշմարեցի որ կամայ կամայ դէպի այն անասոր-
կը յառաջանային:

Այս խոււրը երկու բարեկամներէ կը բաղկա-
նար, որոնք իրարու հետ մտերմարար կը խօսակ-
ցէին և մէկ ուրիշ էակէ մը՝ կարծիր զգեստով, որ
կանակը բռն մը ունէր, գուցէ իրեն ծառան կամ
գերին և կամ ընտանի կենդա ի մըն էր:

Մինչդեռ հետաքրքրութեամբ այդ երկու ան-
ձինքը կը զրտէի, աջակողմն գտնուող զլուխը վեր-
վերցուց դէպի Երկինք՝ որպէս թէ օդապարկի-
մը մէջէն զինքը կանչող մը բլլար, և յատկապէս
Գաբիլլայի վրայ յառեց իր աչքերը, ի հորիէ չէր
կրնար տեսնել, վասն զի իրեն համար ցորեկ էր:
Ո՛վ իմ նորեկայ բարեկամս, չեմ կրնար բացատրել
քեզ այն սպաւորութիւնը, որ ինձ՝ օդուց այդ
տեսարանը...: Ես ինքս դեռ չեմ կրնար հաւա-
տայ աչքիս, քանի կը մտածեմ...:

Այդ կոյսի մոլորակին էակը, որ առանց գի-
տակցութեան ինձ կը նայէր... համարձակիմ ը-
սելու առանց նախարանի... բարէ՛ Ես էի...:

Խնդիր. — Ինչպէս... դո՛ւն էիր:

Լուսնն. — Այո՛, ես ինքս, անձամբ: Յան-
կարծակի ճանչցայ ինքզինքս և չես կրնար հաւա-
տայ և երեւակայել իսկ թէ, ս'ր աստիճան զար-
մացման մէջ մնացած էի:

Խնդիր. — Ի հարկէ կը հաւատամ, ա՛յ այնքան

որ, այլ ևս այս պատմածներէդ բա՛ն մը չեմ հաս-
կընար:

Լուսնն. — Նոր կացութիւն մըն է այս, ս'ր կա-
րօս է բացատրութեան:

Ճշմարտիւ ես ինքս էի, և անմիջապէս՝ ոչ մի-
այն երբեմնի դէմքս և ձեւս ճանչցայ, այլ նաև
քովէս քալող անձը, իմ մտերիմ բարեկամս և այդ
աշխարհին մէջ՝ ուսման ընկերս եղող Բաթլէնը:

Աչքովս մինչև սոկեզօծ անասոր մեզի հետե-
ւեցայ և մտայ այդ նարնջագոյն տերեւներով և
սաթաղոյն ստերով զարդարուած ծառերուն սս-
կեզմութեամբ հովանաւորուած ձորերուն մէջը:

Բարակ աւազին վրայ պղպշտոյզ աղբիւրի
մը եզերքը նստանք: Կը յիշեմ այն քաղցր ժամե-
րը, որ միտսին անցուցինք: Այդ հեռուօր երկրին
մէջ բոլորած գեղեցիկ տարիներս, մեր եզրայրա-
կան մտերմութիւնները, անասուն գեղեցկագոյն
տեսարանայ, այն խաղաղ դաշտայ, այդ շողիւ-
բուղի բլրկայ և փոքրիկ լճերուն վրայ մեր ու-
նեցած համանման սպաւորութիւնները յիշեցի:
Մեր իրձերը կը բարձրանային դէպի սուրբ բնու-
թիւնը, և անոր գործոցը մէջ զԱստուած կը բա-
րնբանէինք: Ի՛նչ մեծ երջանկութեամբ վերասին
տեսայ իմ՝ նախորդ կենցաղիս մէկ մասը և երկ-
րային կենցաղովս ընդհատուած կենացս սոկեզը-
թայն վերակազմեցի...:

Ճշմարտիւ, իմ սիրելի՛ Խնդիրս, ճիշդ ես եմ
որ երբեմն կոյս համաստեղութեան մէջ սպրած էի:
Քրականապէս ես ինքզինքս կը տեսնէի և կրնայի

(արունակել ուղղակի տեսնել՝ այդ հեռաւոր կենցաղիս ամենէն լաւ պարագաները: Բայց և այնպէս եթէ կասկած մըն ալ ունեցայ ինքնութեանս վերայ՝ այն ալ փարատեցաւ նոյն իսկ դիտողութեանս ժամանակ, վասնզի մինչդեռ ինքզինքս կը դիտէի, տեսայ այդ կենցաղին մէջ ունեցած Պերթօրեղբայրս, ոչ անտառնէն ելլելով և կաւ կարկաչող աղբիւրին քով և մեր խօսակցութեան մասնակցեցաւ:

Խնդիր. — Տէ՛ր ուսուցիչ, վերջապէս չեմ կրնար հասկընալ, թէ ի՞նչպէս, և ի՞նչ միջոցաւ կրնայիր իրականապէս տեսնել զքեզ այդ Կոյսի մուրակին վայ: Ամանուրեքութեան արատուր յատկութիւնն ունէ՞ր արդեօք: Ֆրանսուա ա՛՛ Սասիզի՞ կամ Աբոլլօնիոսի պէս կրնայ՞ր երկու տեղ միանգամայն գտնուիլ:

Լուսն. — Ո՛չ երբէք: Կոյսի (կամմա) արեւուն համակարգեալ գիծերը քննելով, և Գափիլլային տեսնուած տեղադրութիւնը գիտնալով կըրցայ հաստատել թէ՛ այդ արեւուն լոյսը 172 տարիէն առաջ չէր կրնար Գափիլլայի և անոր մէջի անջրպետը կտրել անցնիլ:

Արդ ուրեմն, 172 տարի առաջ այդ աշխարհէն մեկնած լուսոյ ճառագայթն էր որ ներկայիս կընդունէի. և որովհետեւ այնպէս հանդիպած էր՝ որ այն ժամանակ, վերոյիշեալ մուրակին վրայ կապրէի և թէ արդէն քսաներորդ տարիքիս մէջ կը կը գտնուէի:

Քննելով տարիները և մուրակաց տարեկան շրջանները ինկատ առնելով՝ դատայ յիշաւի թէ՛

այդ Կոյսի աշխարհին վրայ 45,904ին ծնած էի (որ կը համապատասխանէ Քս.ի 1677ին) և արկածով մը մեռած էի 45,913ին (1767ին): Այդ մուրակին ամեն մէկ տարին՝ ձեր տասը տարիին կը համապատասխանէ: Այդ միջոցին՝ որ ինքզինքս կը տեսնէի, նրկրացիօրէն խօսելով, քսան տարեկան էի: Հոն 15 տարիի չափ կ'ապրին, որ իբր կենաց վերջին սահման կը սեպուի և որ կը հաւասարի երկրային 450 տարիներուն:

Քանի որ լուսոյ ճառագայթը կամ աւելի ճիշդ խօսելով այդ աշխարհին տեսքը և լուսանկարը՝ այդ աստղը Գափիլլայէն զատող ա՛նագին միջոցը, երկրային 172 տարուան մէջ կը կտրէ հեռաւորար, Կոյս համաստեղութենէն 172 տարի առաջ մեկնած պատկերը. հիմայ միայն կ'ընդունէի: Եւ թէպէտեւ այդ ժամանակէն ի վեր շատ մը ղէպքեր անցած ըլլան, թէև ևս մեռած և անկից ի վեր ժամանակ ունկցած էի նորէն ծնանկու և 72 տարի ապրելու երկրից վրայ, այսուամենայնիւ, լոյսը այդ բոլոր ժամանակուան մէջ, Գափիլլայի և Կոյսի անջրպետը հազիւ կտրելով, այդ կորուսեալ ղէպքերուն թարմ ապաւորութիւնը կը բերէր ինձ:

Խնդիր. — Լուսոյ գնացքին տեղադրութիւնն ապացուցուած ըլլալով, այլ ևս անոր վրայ ինդիր չունիմ: Այսու հանդերձ կը խոստովանիմ թէ՛ երեւակայութիւնը ասկէ աւելի եզական բան մը չէր կրնար ստեղծել:

Լուսն. — Ամենևին երեւակայութիւն չկայ, բարեկամս, այլ մշանջնական և սրբազան իրականութիւն մըն է որ փնդերական տեղադարձ

ձուլթեան պատկառելի ծրագրին մէջ է: Մէն մի աստղի ուղղակի կամ ցլացող լոյսը, մէն մի արեւու և մոլորակի տեսքը, այլազան ոճով, միջոցին մէջ կը տարածուի, ծանօթ արագութեամբ և լուսոյ այդ ճառագայթը ինք իր մէջ կը պարփակէ այն՝ ինչ որ տեսանելի է:

Ինչպէս որ՝ ոչինչ կը կորնչի, մէն մի աշխարհի պատմութիւնը՝ անկէ անդադար ցլացող լուսոյ մէջ ամփոփուած է, մշանջենապէս անսահման միջոցին մէջ հեռանալէ կը յաստջանայ առանց կրէք անհետանալու:

Երկրային աչքերը հան չեն կրնար կարգալ, բայց երկրային աչքէն դատ բարձր աչքեր կան: Այս պատմութեանս մէջ եթէ շեւնիլ և լոյս բաւերը կը գործածեմ, մի միայն հասկըցնելու համար է: Բայց ինչպէս նախորդ դրուպիս մէջ դիտել տուած եմ, բացարձակապէս խօսելով լոյս չկայ՝ այլ երբեի քրքումներ կան, տեսողութիւն չկայ՝ այլ մտի հասողութիւն, քմբոնում կայ: Բայց **և այնպէս, նոյն խոյ, Երկրի վրայ երբ աստղի մը բնութեան կազմը կը քննէք, ըլլայ հեռադիտակով, ըլլայ աւելի լաւ սպեկտրոսկոպ (spectroscope), ինչպէս գիտես, անոր արդի բնութիւնը չէ որ կը տեսնէք, այլ անոր անդեալը, դուցէ տասը հազար տարի առաջ անկից մեկնած լուսոյ ճառագայթն է որ հիմայ կը փոխադրէ ձեզի...**

Դարձեալ անդիտակ չես որ աստեղաբաշիք, երբ աստղի մը, որ ձեր գլխուն վերե կը փայլի, արդի ունեցած վիճակը և բնական և հաշուական տարբերը կ'ուզէք վնտուել, դուցէ աշխարհիս ստեղծումէն ի վեր անհետացած է ան:

Ենդիք, — Այդ լաւ գիտենք: Արդ ուրեմն այսպէս քու վերջընթեր կենցաղը 172 տարի վե՛րջը աչքիդ առջեւ պարզուեցաւ:

Լուսնն. — Աւելի լաւ կ'ըլլայ որ ըսես. — այդ կենցաղիս մէկ մասը: Բայց կրնայի յայտնապէս ամբողջութիւնը տեսնել՝ եթէ հեռագնաէ մօտենայի այդ մոլորակին, ինչպէս ըրի երկրային կենցաղիս համար,

Ենդիք. — Ուրեմն, այնպէս որ՝ այդ լոյսին մէջ վերջին երկու մարմնացումներդ միասին տեսար:

Լուսնն. — Ճշմարտապէս. և ինչ որ աւելին է, տեսայ, և դեռ կը տեսնեմ միանգամայն երկուքը միասին, կերպով մը մին միւսին քով:

Ենդիք, — Միեւնոյն ժամանակի՞ն մէջ կը տեսնես:

Լուսնն, — Խնդիրը շատ պարզ է և դիւրահասկընայի:

Երկրիդ լոյսը 72 տարի կը դնէ մինչեւ Գալիլէոս գտնու համար: Իսկ Կոյսի մոլորակինը՝ որ մէկ ու կէս անգամ աւելի հեռու է Գալիլէոսէն, 172 տարուց պէտք ունի Գալիլէոս հասնելու համար: Ինչպէս որ 72 տարի առաջ Երկրիդ վրայ կ'այրէի և անկից 100 տարի առաջ ալ միւս մոլորակին վրայ, այս երկու ժամանակներուն դէպքերը միասին կը հասնին ինձ Գալիլէոսի վրայ: Արդ ուրեմն, պարզ հայեացքով մը, այդ երկու աշխարհները իմ աչքիս առջեւ կը ներկայանան, որոնց վրայ միասին կը կատարուին իմ վերջին

երկու կենցաղներուս զէպքերը, այնպէս մը որ, իբր թէ ես հոս չըլլայի զանոնք տեսնելու և առանց կարողանալու բան մը փոխելու ըրածներէս, զորս ես ինքս կը կատարէի միոյն կամ միւսին մէջ, քանի որ այդ զէպքերը, թէպէտեւ արդի վիճակիս համար ներկայ են, բայց իրականապէս անցեալ են:

Խնդիր .— Տարօրինակ և շատ զարմանալի է այդ...: Ճշմարիտ, շատ տարօրինակ:

Լուսնն .— Ինչ որ աւելի աչքառու է, այս անակնկալ երկու տարբեր աշխարհաց մէջի կենցաղներուս զիտողութեանը մէջ, որ ինձ համար ներկայիս՝ միասին կը պարզուի, և ինչ որ աւելի եզականօրէն կը գրաւէ ուշադրութիւնս, սա է թէ, այդ երկու կենցաղները տարրօրէն իրարու կը նըմանէին: Կը տեսնեմ թէ՛ գրեթէ միեւնոյն ճաշակը ունէի, թէ՛ միոյն և թէ՛ միւսին մէջ, միեւնոյն կիրքերը և միեւնոյն ցանկութիւնները և միեւնոյն մոլորումները: Ո՛չ ոճրագործ և ո՛չ ալ սուրբ էի՝ թէ՛ միոյն թէ՛ միւսին մէջ: Անկից զտտ (անօրինակ զուգադիպութիւն) առաջնոյն մէջ այնպիսի գիւղանկարներ տեսայ՝ որոնք երկրիդ վրայ տեսածներուս նման էին:

Ասով միայն կրնամ մեկնել երկրիդ վրայ ունեցած, այն ճաշակ՝ զոր ունէի հիւսիսային բանաստեղծութեան, Օսիանի վէպերուն, Իսլանդայի գգլխիչ գիւղանկարաց, լեբանց, և հիւսիսայեաններուն համար. Սկովտիայի, Սքանախաւեանց, Շըւէտի և Նորվեգիոյ և Սպիցպէրկի միայնութեանց, որոնք զիս կը հիացնէին: Հինաւուրց, կիսակործան

աշտարակներուն, բերդերուն, ապառաժներուն և վայրի կիրճերուն, մթազին սօսեաց անտառներուն, ուր հիւսիսային քամին կը մուշէ, այս ամենքը գաղանի առնչութիւն մը ունենալ կերեւին իմ յատուկ մտածութեանցս հետ: Երբ Իսլանտան տեսայ, այնպէս թուեցաւ ինձ թէ՛ ես արդէն տեսած էի զանի: Եւ երբ առաջին վերելքս, կատարեցի Ռիճիի և Ֆէնիսդերարհորնի վրայ և արեւու սքանչելի ծագման տեսարանին ներկայ եղայ Ալպեանց վրայ՝ ինձ այնպէս եկաւ թէ՛ երբեմն տեսած էի այդ, Պրօխէնի տեսարանը նորատեսիլ չերեցաւ ինձ: Այս ամէնուն պատճառը, այն է թէ՛ նախապէս Կոյսի մոլորակին վրայ ապրած ժամանակս վարժուած էի նմանօրինակ տեսարաններու: Միեւնոյն կեանքը, միեւնոյն գործողութիւնները, յարեւնման պարագաներ, միեւնոյն պայմաններ, վերջապէս միօրինակութիւն, դարձեալ միշտ միեւնոյն: Վասնզի, ինչ որ երկրիդ վրայ տեսայ, գործեցի և մտածեցի՝ արդէն տեսած, գործած և մըտածած էի հարիւր տարի առաջ այդ նախկին աշխարհին մէջ:

Այս բանիս էութեան միշտ աներկբայ էի: Բայց այսուամենայնիւ երկրային կենցաղիս ամբողջութիւնը շատ աւելի բարձր էր նախկին կենցաղէս:

Մէն մի աղու իր ծննդեամբ հետը բերած անվիճելի տարբեր յատկութիւնները, ճիրքերը, մասնաւոր տրամադրութեանները, բնածին անմահութիւնները ուրիշ կերպով չեն կրնար մեկնուիլ փիլիսոփայական և ո՛չ ալ յաւիտենական արդարու-

Թեան առջև, բայց եթէ ընդունիլ որ, ազատ հոգիներուն, նախապէս կատարած աշխատութիւններուն հետեւանքն են առոնք: Բայց իմ երկրային կեանքս թէպէտև նախկինէն բարձր էր, մասնաւորապէս միջոցի աշխարհաց դրութեանց վրայ ունեցած աւելի ճիշտ և խորին ծանօթութեանց նկատմամբ, այսու ամենայնիւ ֆիզիքական և բարոյական յատկութիւններս, զորս ունէի նախկին կենցաղիս մէջ, Երկրիդ վրայ անոնց պահասելը կը նշմարեմ: Փոխարինաբար Երկրիդ վրայ ունեցայ այնպիսի ձիւրքեր զորս նախկինին մէջ չեմ ունեցած: Այսպէս, օրինակի համար, ֆիզիքական յատկութիւններէս մին, որ Երկրիդ վրայ չունէի, կը յիշատակեմ մասնաւորապէս թռչելը: Կոյսի մտլորակին վրայ որքան կը քայլէի, այնքան յաճախ կը թռչէի առանց օդաչու գործիքի և առանց թեւի, պարզապէս ձեռքերովս և ոտքերովս, իբր թէ ջուրի մէջ լողայի, տեսնելով այդ տեղափոխութեանս եղանակը զոր մոլորակին վրայ կը կատարէի, դիտեցի թէ՛ ո՛չ թեւ, ո՛չ օդապարիկ և և ո՛չ ալ մղիչ պտուտակ (hélice) ունիմ (ունէի ըսել կ'ուզեմ). տեսայ որ յանկարծ ուժգին թափով մը կը բարձրանամ յօդս և կը լողամ առանց յոգնութեան: Անգամ մը, սեպածև ժայռոտ լեռնէ մը հետիոտն իջած ժամանակս, միջոցին մէջ դէպի յառաջ նետուեցայ և միայն իմ կամքովս իջայ հանդարտօրէն և չեղակի մինչև գետինը ոտքի վրայ կանգնեցայ: Ուրիշ անգամ մըն ալ դարձեալ դանդաղօրէն թռայ, աղաւնիի նման որ օդին մէջ չըջան և դարձուածք մը ընելով իր բոյնը կը մըտ-

նայ: Այո՛, այդպէս որոշակի կը տեսնեմ այդ աշխարհին մէջ կատարածներս:

Արդ, մի անգամ չէ, հարիւր անգամ, գուցէ հազար անգամ եղած է, Երկրային կեանքիս մէջ, որ երազի ժամանակ, ճիշդ այդ կերպով, հանդարտօրէն, բնական կերպով և առանց գործիքի, միջոցին մէջ տարուած եմ:

Ինչպէս կ'ըլլայ ուրեմն որ, երազի մէջ, այսպիսի անկարելիութիւններ կը պատահին, այս բանիս արտադրիչ պարագայ մը չըլլալով, քանի որ այսպիսի իրականութիւն մըն ալ չկայ երկրագունտին վրայ:

Ահա՛ այդ բնածին արամադրութեանս հպատակելով է որ շատ անգամներ օդապարիկ գունտին կառչելով մթնոլորտին մէջ նետուեցայ, բայց տպաւորութիւնը նոյնը չէ, այս պարագային մէջ թռչելը չես զգար և կարծես թէ անշարժ կեցած ես: Այսպէսով հիմա երազներուս մեկնութիւնը կը գտնեմ. այն է թէ, երկրային զգայարանացս ի քուն եղած ժամանակ, հօգիս նախնական կեանքիս յուշքերը կ'ունենար:

Խնդիր. — Նոյնպէս ես ալ, շատ անգամ, երազիս մէջ, զգացի և տեսայ որ ճիշդ այդպէս կը թռչիմ, պարզապէս կամքիս թելադրութեամբը, առանց թեւի և առանց գործիքի: Արդե՞ք ես ալ Կոյսի այդ մոլորակին վրայ ապրած եմ:

Լուսին. — Չեմ դիտեր: Եթէ վերանցական (transcendente) տեսողութիւն մը կամ գործիքներ, և սրտես աչքեր ունենայիր, կրնայիր ձեր գունտէն իսկ տեսնել այդ մոլորակը, քննել անոր

մակերեւոյթը և եթէ հիմա հոս համնող լուսոյ ճառագայթին հոնկէց մեկնամ ժամանակ, հոն տալրած ըլլայիր պատահմամբ, գուցէ կարենայիր տեսնել ինքզինքդ: Բայց դուք շատ տկար աչքեր ունիք այդպիսի քննութիւն մը փորձելու համար: Սակայն անհրաժեշտ է որ ճիշդ այդ մոլորակին վրայ բնակած ըլլաս այդ յատկութիւնը ունենալու համար. անհամար թիւով գունտեր կան, ուր թուշեր սովորական վիճակ մըն է և ուր բոլոր մարդկային ցեղը, այդ ձիրքով օժտուած է: Իրականագէտ քիչ աշխարհներ կան, ուր էակները ձեզի նման գեանաքարչ ըլլան:

Խնդիր.— Այդ վերոյիշեալ տեսիլքէդ կը հետեւի թէ, մարմնացեալ կեանքդ առաջինը չէ, և թէ Երկրիս վրայ կենցաղավարելէդ առաջ ուրիշ աշխարհներու վրայ ալ ապրած ետ, ուրեմն կը հաւատաս թէ, Հոգին բազում կենցաղներ ունեցած է:

Լուսն.— Կը մտնաս արդեօք մարմնազերծ (désincarné) հոգւոյ մը հետ տեսակցիլդ: Պէտք է բացայայտուիմ. աչքիս առջև ունիմ երկրային կեանքս և անոր նախընթաց Կոյսի մոլորակին վրայի կենցաղս: Կը յիշեմ նաև ուրիշ շատ մը կենցաղներ ունեցած ըլլալս:

Խնդիր.— Համոզում գոյացընելու համար, անա՛ ճիշդ այդ բանը կը պակտի ինծի գիտնալ, քանզի ամենեւին բան մը չեմ յիշեր երկրային կեանքիս նախորդին նկատմամբ:

Լուսն.— Որովհետև դեռ մարմնացած կ'ապրիս. սպասէ՛ ազատութեանդ, յիշելու համար քու

հոգեկան կեանքդ: Հոգին իր լիակատար յիշողութեան և իր ինքնագիտակցութեան բացարձակ տէրը կ'ըլլայ միայն ա՛յն ատեն, երբ կը գտնուի իր բուն (normal) կենացը մէջ, այսինքն իր մարմնացումներուն միջանկեալ ժամանակաց մէջ: Այն ժամանակ, ոչ միայն երկրային կեանքը կը տեսնէ, այլ նախկին ուրիշ բոլոր կենցաղները:

Ինչպէ՞ս կ'ուզես որ, Հոգին երկրային մարմնոյ կոշտ կապերուն մէջ կաշկանդուած և փաթթուած և հոն կառչած մնալով, վազանցուկ աշխատութեան մը համար, կարենայ իր հոգեկան կեանքը յիշել. այդ յիշատակը ո՞րքան վնասակար կ'ըլլար իրեն, ի՞նչպիսի արգելքներ չէր յարուցաներ անոր գործոց ազատութեան առջև՝ եթէ իր սկիզբն ու վախճանը աչքին առջև ունենար: Ի՞նչ արժանիք կ'ունենար այլեւս՝ եթէ գիտնար իր ճակատագիրը: Երկրիդ վրայ մարմնացող հոգիները՝ դեռ յառաջգիժութեան այդ բարձր աստիճանին հասած չեն՝ որ կարենան օգտուիլ իրենց նախկին կենցաղաց գիտակցութենէն: Հոգեկան տպաւորութեանց տեսողութիւնը՝ այս անցողական աշխարհին վրայ չը յայանտիր:

Թրթուրը հաւկթին մէջ եղած ժամանակ իր տարրական գոյութիւնը չյիշեր, ի քուն եղող հարսնեակը (fréquills) չյիշեր իր աշխատութիւնները. երբ դեռ կը սողաք ծառոց ճիւղերուն վրայ: Թիթեանիկը՝ որ ծաղկէ ծաղիկ կը թռչտի, պէտք չզգար յիշելու իր կեանքին այն միջոցը, ուր իր թմբած հարսնեակը ոտտէ մը կախուած կը մնար, և զ՛չ ալ իր վերջալոյսը՝ ուր իր շողեքը ճիւղէ ճիւղ

կը տարուերէր, ո՛չ ալ գիշերը՝ ուր խողակին մէջ
թաղուած կը մնար ան :

Բայց սակայն, այս բտել շէ թէ՛ այդ հունտը,
որդը, թրթուրը և թիթեռնեկը միևնոյն արարածը
եղած չըլլայ :

Նոյնիսկ երկրաւոր կենաց մէջ՝ յիշողութիան
բացակայութեան դիտելի օրինակներ շատ կան,
ինչպէս բնական կամ գրողուած քնաչափիկ վիճակի
և քանի մը ուրիշ հոգեկան պարագաներու մէջ,
զորս գիտութիւնը ներկայիս ուսումնասիրելու վը-
րայ է : Զարմանալու տեղի չկայ՝ որ կենցաղի մը
ընթացքին ժամանակ, նախորդէն յիշողութիւն մը
չունենաք : Միջոցի կեանքը և մոլորակային կեան-
քը՝ իրարմէ բոլորովին տարբեր երկու ազատ վի-
ճակներ են :

Խնդիր. — Բայց սակայն, Տէ՛ր ուսուցիչ, եթէ
այս կեանքէն առաջ ապրած էինք՝ անոր մէկ հետ-
քը պէտք էր մնար : Ապա թէ ո՛չ, այդ կեանքը
չեղածի պէս կ'ըլլայ :

Լուսնն. — Ո՛հ... առ ոչինչ կը համարե՞ս ծը-
նընդեամբ աշխարհ բերուած բնածին յատկութիւն-
ներն ու ձիրքերը : Իմացական և հոգեկան ժառան-
գականութիւն չկայ :

Միևնոյն ծնողաց զուակներ, երկու եղբայր-
ներ միևնոյն խնամքը յարենման կրթութիւնն ու
դաստիարակութիւնը ընդունելով, միևնոյն տեղը
բնակելով՝ անս այդ երկուքը հաւաստի են : Ո՛չ
երբէք. հոգիներու հաւասարութիւնը գոյութիւն
չունի : Մին՝ բերած է խաղաղասէր յատկութիւն-
ներ, և ընդարձակ իմացականութիւն մը, բարի,

գիտուն և իմաստուն, գուցէ իսկ երեւելի իմաս-
տասէր մը կըլլայ : Իսկ միւսը կունենայ տիրապե-
տութեան : հպարտութեան գուցէ գազանական բը-
նազդումներ : Ասոր կենցաղը հետզհետէ զարգա-
նալով՝ անտարակոյս զանի կ'առաջնորդէ բանա-
կաց ճակատը և կուտայ անոր այն Փառքը՝ (նը-
ւազ փափագելի, բայց սակայն դեռ ընդունուած
է աշխարհիս վրայ) որ պաշտօնական մարդասպան
ոճրագործաց յատուկ է :

Մարդկանց մէջի այդ աննմանութիւնները՝ ըլ-
լայ տկար, ըլլայ սաստկապէս չեշտուած, կախուժ
չունին ո՛չ ընտանիքէն, ո՛չ ցեղէն, ո՛չ դաստիարա-
կութենէն, ո՛չ ալ մարմնական կազմուածքէն :

Արդ, երբ կամենաս՝ կրնաս հանդարտօրէն մը-
տածել և յայնժամ պիտի համոզուիս կատարելապէս
թէ՛ ատոնք անբացատրելի են և թէ՛ այդ բանին
ուրիշ բանաւոր մեկնութիւն չես կրնար գտնել՝
բայց եթէ հոգիներու նախկին վիճակին մէջ ըն-
ձեռած յատկութեանց գոյութիւնը ընդունելով :

Խնդիր. — Փիլիսոփայից և աստուածաբան վար-
դապետաց շատերը, միթէ մեզի չե՞ն սովրեցուցած
թէ հոգին մարմնոյն հետ միասին կը ստեղծուի :

Լուսնն. — Ո՛հ... խնդրեմ, ըսէ՛ ինձ, ո՞ր
որոշ միջոցին տեղի կունենայ այդ բաժնի, ծնըն-
դեան ժամանակ :

Բայց օրէնքներն ու անդամազննական բնախօ-
սութիւնը գիտեն թէ՛ արգանդէն ազատումէն առաջ
ալ կ'ապրի ան. ո՛չ ապաքէն ութամսեայ սաղմ մը
ոչնչացնելը՝ արդէն իսկ մարդասպանութիւն է : Ու-

բեմն ո՞ր միջոցին կ'ենթադրես՝ որ հոգին սաղմին լոյծ ուղեղին մէջ կը ներկայանայ :

Խնդիր. — Հիները կ'ըսէին թէ՛ մարդ էակին հոգեկան ճշմարիտ կենդանացումը՝ յղութեան վեցերորդ ամսուան մէջ տեղի կունենայ : Բայց ներկայիս, յղութեան վայրկեանին կ'ենթադրուի այն :

Լուսնն. — Ո՛վ դառն հեգնարանութիւն. կուգէիք որ Արարչին զիտաւորութեանց գործադրութիւնը ենթակայ ըլլայ և հնազանդի անձնական հաճոյից և երկու տարփաւորաց սրտերո՞ւն : Կը համարձակի՞ս ընդունելու՝ թէ քու անմահ էութիւնդ երկու մարմի հպումէն ստեղծուած ըլլայ : Կը հաւատաս՞ թէ Բարձրագոյն Իմացականութիւնը, որ բոլոր աշխարհները կը վարէ, բաղդին քմահաճոյիցը, զազանի առփանաց, կիրքերու և երբեմն նոյն իսկ ոճիրներու արամադրութեանը տակ ըլլայ :

Կը կարծես՞ թէ հոգիներու թիւը կախում ունենայ ծագիկներու թիւէն, որոնց վրայ սակիթեան բեղմնաւորիչ քաղցր փոշին նստած է :

Սյգպիսի ենթադրութիւն մը, այգպիսի վարդապետութիւն մը՝ միթէ աստուածային իշխանութեան և նոյն իսկ մեր հոգւոյն մեծութեանը դէմ դաւադրական ոտնձգութիւն մը չէ՞ :

Եւ վերջապէս, առիկայ մեր իմացական յատկութեանց կատարեալ նիւթականացումը չըլլար միթէ :

Խնդիր. — Բայց սակայն . . .

Լուսնն. — Այո՛, այդ սյգպէս կ'երեւի, վասն զի ձեր մոլորակին վրայ ո՛չ մի հոգի կրնայ մարմնանալ, բայց եթէ մարդկային սաղմի մը մէջ : Ա.

նիկա երկրաւոր կեանքին օրէնքն է : Բայց պէտք է քողքին մէջէն տեսնել :

Հոգին արդիւնք մը չէ, մարմինը անոր ձորձն է լոկ :

Խնդիր. — Կ'ընդունիմ՝ թէ յիբաւի շատ զարմանալի բան մը եղած պիտի ըլլար, եթէ այգպիսի կարեւոր դէպք մը, անմահ հոգւոյն ստեղծուելը, մարմնական պատճառաց ենթակայ և դիպուածական աւելի կամ նուազ օրինաւոր միաւորութեանց արդիւնքը ըլլար : Կ'ընդունիմ դարձեալ թէ՛ ծըննդեան ժամանակ միասին յաշխարհ բերուած տարբեր տարբեր ընդունակութիւնները՝ յորինւածքի պատճառներով չեն կրնար մեկնուիլ : Բայց կը մտածեմ թէ՛ ի՞նչ բանի կրնան ծառայել բազում կենցաղավարութիւններ, քանի որ՝ ուրիշ կեանք մը սկսած ժամանակինս, նախկինին յիշողութիւնը չունինք : Դարձեալ կը մտածեմ թէ՛ արդեօք ճշմարտիւ փափագելի՞ է մեղի համար, անհասնում ճամբորդութեանց շարքի մը հեռանկարը ունենալ առջեւինս, յաւիտենական ուղեւորութիւն մը յաշխարհէ յաշխարհ, վասն զի վերջապէս՝ պէտք է որ վերջ մը ունենայ այս ամենքը. այդքան դժբեր ճամբորդելէն վերջը՝ հանգստանալ պէտք է, այն առին միթէ աւելի լաւ չէ՞ր ըլլար՝ որ մէկ կենցաղէն անմիջապէս վերջը հանգստանանք :

Լուսնն. — Ո՛վ մարդիկ, ո՛չ միջոցը, ո՛չ ալ ժամանակը կ'ըմբռնէք. չէ՞ք գիտեր թէ աստեղաց շարժումներէն առաջ եկածէն զատ՝ ժամանակ ըսւածը գոյութիւն չունի և թէ յաւիտենականութիւնը չափակցելի չէ. չէ՞ք գիտեր թէ՛ ընդհանուր աւ-

տեղային անհունութեան մէջ՝ միշտ սին բան մըն է և անչափելի։ Աման բանի անդիտակից էք։ Օրէնք, պատճառք, ամենքը կը խուսափին ձեզմէ։ շարժուն հիւլէի մը վրայ հիւլէ մըն էք դուք, ո՛չ մի ճիշտ գաղափար և հասողութիւն ունիք տեղերքի վրայ։ այսպիսի տգիտութեան և այդպիսի խաւարի մը մէջ բլլալով՝ կողքէք ամէն բան դատել, ամեն բան պարփակել, ըմբռնել ամեն բան։ Աւելի զիւրին կըլլայ Ուկիթանոսը ընկողի փոճուկի մը մէջ լեցընել՝ քան թէ ձեր երկրային ուղեղին միջոցաւ ճակատագրի օրէնքը հասկըցնել։ Հետեւութիւն հանելու ձեզի շնորհուած յատկութենէն արդեօք չէ՞ք կրնար օրինաւորապէս օգտուիլ և ձեր բանաւոր դիտողութեանց ուղղակի արդեանց վրայ կանգ առնել։ Բանաւոր դիտողութիւնները ձեզ կ'ապացուցանեն թէ աշխարհ եկած ժամանակնիս իրարու հաւասար չենք, թէ՛ անցեալը ապագային նման է, թէ՛ մեր յառաջիկայ յաւիտենականութիւնը մեր ետեւն ալ կայ։ թէ՛ բնութեան մէջ ո՛չ մի բան կը ստեղծուի և ո՛չ մի բան կ'անհետանայ։ թէ՛ բնութիւնը յամագոյից վրայ կը տարածուի, թէ՛ Աստուած, հոգի, օրէնք, թիւ, բնութենէն դուրս բաներ չեն։ թէ՛ նիւթ, ծանրութիւն, շարժում, բարոյական ճշմարտութիւն, արգարութիւն, իմաստութիւն, առաքինութիւն՝ աշխարհի բնթացքին մէջ, նոյնքան գոյութիւն ունին, որքան բնագիտական իրականութեանց մէջ։ Դարձեալ կապոցուցանէ ձեզ թէ՛ արգարութիւնը կը հրամայէ որ բաղդերու արգարացի բաշխում մ'ըլլայ։ թէ՛ մեր ամբողջ

ճակատագիրը երկրաւոր մոլորակին վրայ չէ որ կը լրանայ։ Թէ՛ նախնեաց կարծածին պէս՝ հրեղէն երկինքը գոյութիւն չունի և երկիրս երկնից պարզ աստեղերէն մին է։ Թէ՛ ուրիշ բնակեալ մոլորակներ, մերինին հետ, կը սաւառնին միջոցին մէջ, բանալով անվերջանալի դաշտ մը հոգևոց թռիչքին առջև։ և թէ՛ վերջապէս, նիւթական ստեղծագործութեան մէջ, տիեզերքի անհունութիւնը՝ հոգեկան ստեղծագործութեան մէջ մեր իմացական յաւիտենականութեան կը համապատասխանէ։

Այսքան հաւաստեաց ընծայած հետեւութիւնները միթէ բաւական չեն հինաւուրց նախապաշարու մեներէն քու միտքդ ազատելու, և անոր անկաշկանդ դատողութեան ենթարկել։ հեռանկար մը որ մեր հոգւոյն խորին եւ swrsam բայձանաց արժանի բլլայ։

Այս ընդհանուր ուրուագիծը՝ կրնայի աւելի ծաղկեցընելով ընդարձակել, օրինակներով և աւելի ազդու մանրամասնութեամբ, բայց բաւական կը սեպեմ, յիշեցընելով միայն թէ՛ բնութեան մէջ՝ ձեր զիտցած զօրութիւններէն տարբեր, ուրիշ բազմաթիւ ուժեր կան որոնց էութիւնը՝ ինչպէս նաև գործելիակերպը, կատարելապէս կը տարբերին ելեքտրականութեան, ձգողութեան և լուսոյ են, ևն, ևն, ազդեցութենէն։ Արդ, ի մէջ այլոց, բնական անձանօթ ուժերէն յիշեմ մասնաւորապէս մին, որուն ապագայ ուսումնասիրութիւնը՝ եզական գեւտեր պիտի յառաջ բերէ, կենաց և հոգւոյ խնդիրները լուսարանելու համար. այն է հոգեկան

գօրուքիւնը : Այդ անտեսանելի ծորանային զօրութիւնը՝ անզիտակցաբար այդպիսի խորհրդաւոր կապ մը կստեղծէ կենդանի էակաց միջև, նոյն իսկ յանգէտս անոնց, և որ շատ առիթներու մէջ արդէն անոր գոյութիւնը յայտնի եղած է : Ահա երկու էակներ որ զիրար կը սիրեն, անկարելի կըլլայ անոնց զատ զատ ապրիլը՝ եթէ դէպքերու բերմամբ, իրարմէ զատուին, այդ երկու սիրականները կը շուարին և իրենց հոգիները շարունակ իրենց մարմիններէն կը մեկնին՝ միջոցին մէջէն իրարու միանալու համար : Միոյն մտածութիւնները՝ միւսին համահման են և միասին կ'ապրին՝ թէպէտև զատուած են : Եթէ դժբաղատութիւն մը պատահի միոյն՝ միւսը անոր ազդեցութիւնը կզգայ : Մինչև անգամ մահեր պատահած են այսպիսի անջատմամբ :

Անմերժելի վկայութիւններով՝ քանի՞ քանի անգամներ այսպիսի դէպքեր չեն հաստատուած, օրինակի համար անձի մը իր մտերիմին, կնոջ մը իր ամուսնոյն յանկարծակի երեւումները, և մօր մը իր սրբւոյն և փոխադարձաբար երեւմամբ և երեւցող անձին մահուանը վայրկեանին՝ ահագին հեռաւորութիւնէն, միւսին հասնելը՝ միթէ քանիցս տեսնուած չէ :

Ամենախիստ քննադատութիւնը այսօրուան օրս չկրնար ուրանալ այս վաւերական ստուգութիւնները : Երկու երկուորեակներ իրարմէ տասը մղոն հեռաւորութեան մէջ՝ տարբեր տարբեր պայմաններու մէջ ապրելով, մի և նոյն հիւանդութեան կ'ենթարկուին, կամ երբ մին չափազանց յոգնի՝ միւսը նոյն ազդեցութեան տակ կիյնայ

թէպէտև ատոր առիթ տուած չըլլայ. և այսպէս շատեր : Այս բազմաթիւ դէպքերը կ'ապացուցանեն թէ համակրական կապ մը կայ հոգիներուն մէջ, նոյն իսկ նիւթերուն մէջ. և ասոնք զմեզ անգամ մը ևս կ'ափայկեն ընդունելու թէ՛ բնութեան մէջ եղած ուժերուն ամբողջական ծանօթութենէն կատարելապէս զուրկ ենք :

Ո՛վ իմ բարեկամս, եթէ այս տեսութիւնները քեզի կը յայտնեմ, մասնաւորապէս ցոյց տալու համար է թէ կրնաս՝ մեռնելէդ առաջ իսկ, ճշմարտութեան վերահասու ըլլալ և թէ՛ երկրային կեանքը լուսաւորութենէն այնքան զուրկ չէ որ՝ խորհրդածութեամբ չկարենայ հասկընալ բարոյական աշխարհի ծրագրին զլիւսաւոր կէտերը : Աւելին ևս, այս բոլոր ճշմարտութիւնները՝ իմ պատմուածքներուս հետեւութիւնը պէտք էին ըլլալ, երբ քեզի հասկըցընեմ թէ՛ շնորհիւ լուսոյ զանգալութեան, ո՛չ միայն իմ վերջընթեր կենցաղս ուղղակի տեսայ, այլ նաև նախավերջընթեր մուրակային կեանքս, և թէ՛ մինչև Երկրիդ վրայ գալով քեզի հետ ծանօթանալս՝ տասնէ աւելի կենցաղներ ունեցած եմ :



Բ.

Խնդիր. — Ուսումնասիրութիւններս և խորհրդածութիւններս, ո՞վ Լուսինն, հոգւոյ բազմակենցաղութեան ճշմարտութեանը հաւատալու վիճակին հասուցած են զիս: Բայց սակայն կը զիտեմ թէ՛ այս վարդապետութիւնը, աստղերու աշխարհաց մէջ բնակչութեան գտնուելուն վարդապետութեան չափ յայտնի, տրամաբանական, բարոյական նոյն իսկ բնական՝ այնքան բացօթյա և բազմաթիւ ապացոյցներ ունենալէ զուրկ է. կը խոստովանիմ թէ՛ մինչև այսօր, մտքիս մէջ միշտ տարակուսելի մնացած էր: Յիրաւի արդի տեսազիտութիւնը և վերանցական հաշուադիտութիւնը՝ որ կերպով մը գրեթէ շօշափելի ըրած են միւս աշխարհները, ցոյց տալով անոնց տարիները, եղանակները, օրերը և ամսոնց մակերևոյթին վրայի կենդանի բնութեան փոփոխումները, այս ամենքը արդի աստղաբաշխութեան օժանդակիցին հաստատելու և անխախտ խաբիսիսի մը վրայ հիմնելու միւս աշխարհաց մէջ մարդկութեան գոյութեան վարդապետութիւնը: Բայց և այնպէս, մի և նոյն քանը չէ վերստին ծննդեան վարդապետութեան համար, թէպէտև միտքս կը հակի ճշմարտ երկնից մէջ հոգւոյ պանդխտութեանը, վասնզի այդ կերպով միտնս կրնանք մեկնել յաւիտեանական կենաց տեղութիւնը. բայց սակայն հոգւոյս ձգտումը աւելի զգալի և աւելի հաստատուած վիճակի մը ենթարկելու համար, ինձ պակաս մը լոյսը կուզեմ ունենալ:

Լուսին. — Ահա՛ ճիշտ այդ լուսոյ խնդիրն է որ՝ մեր այս օրուան խօսակցութեան նիւթը պիտի կազմէ և որմէ պիտի ծագի քեզի պէտք եղած լուսաբանութիւնը: Յիրաւի կը խօստովանիմ թէ ես քեզմէ աւելի առաւելութիւն մը ունիմ քանի որ ակամասեա եմ. պարզապէս թարգման կը կանգնիմ ներկայիս իմ հոգեկան կեանքս կազմող զէպքերուն: Բայց որովհետև քու խմցականութիւնդ կարող է այդ բաներուն կարեկիտութիւնը և իմ պատմածներուս ուսումնական ճշմարտութիւնները զգալ, ուրեմն քու հոգիդ կրնայ այլևս անոնցմով լուսաւորուիլ և ընդարձակել իր գիտակցութիւնը:

Խնդիր. — Մասնաւորապէս այդ պատճառաւ է որ միշտ քեզ ունկնդրելու պատպակէն կ'այրիմ:

Լուսին. — Ինչպէս որ արդէն հասկըցար, լոյսը՝ մարմնազերծ հոգւոյն իր մոլորակային կեանքերուն ուղղակի տեսութիւնը ցոյց կուտայ:

Երկրիդ վրայի գոյութեանս զէպքերը տեսնելէս վերջը՝ Կոյս համաստեղութեան Կամմա մուշրակին վրայի կենցաղս ալ տեսայ վերստին: Առաջինին համար լոյսը 72 տարուան մէջ բերաւ զէպքերուն լուսանկարները. իսկ երկրորդինները 472 տարի ետքը: Գափիլլայէն այսօր կը տեսնեմ 72 տարի առաջուան Երկիրը և նոյնպէս ինչ որ էի 472 տարի առաջ Կոյսի մոլորակին վրայ: Ահա՛ ուրեմն երկու անցեալ յաջորդական կեանքեր որք միանգամայն ներկայ են ինձ, շնորհիւ լուսոյ օրինաց:

Մերձաւորապէս հինգ հարիւր տարի առաջ աշխարհի մը վրայ կ'ապրէի, որուն աստղաբաշխական զիբքը, երկրէդ նայելով, ճիշդ Անտրոմէա համաստեղութեան ձախակողմեան Սալնք ըսուած աստղն է: Ապահովապէս այդ աշխարհին բնակիչներուն մտքէն իսկ չանցնիր՝ թէ միջոցին մէկ պզտիկ մոլորակի մը բնակիչները, երկինքի աստղերը դասաւորելով և երեակայեալ անկանոն ձևերու մէջ պարփակելով՝ մարդու, կենդանւոյ և ուրիշ առարկայից ինքնագիւտ ձևերով, բոլոր աստղերը կարգաբանած ըլլան, անոնց մէկ մէկ անուն տալու համար: Մոլորակային մարդիկ շատ պիտի զարմանան եթէ զիսնան թէ՛ երկնային այս ինչ աստղը, կարիճի սիրտ (բայց ի՞նչ սիրտ), շան գլուխ մեծ արջու ազի, եզան աչք, վիշապի վիզ, ռեգեդջուրի նակաս անունները տուած են:

Անձանօթ չէ քեզի թէ՛ երկնից երեսի համաստեղութիւնները և անոնց զիբքերը, իրական և բացարձակ չեն, այլ Երկրին միջոցին մէջ ունեցած զրից մէկ հետեւանքը և պարզապէս հետանկաւրի խնդիր է:

Մէկը երբ՝ բարձր լեռնէ մը, շուրջի համապատկերը գծէ և բոլոր զիբքի բլուրներուն դադաթները, ձորերը, զիւղերը, լճերը մակարդակի մը վրայ ձեւացընէ, այդ համապատկերը միմիայն կեցած զիբքին համար կը ծառայէ: Եթէ զիսողը՝ քսան քիլօմեդր աւելի հեռուն տեղափոխուի, թէպէտև միևնոյն գաղաթները, զիւղերը և լիճերը կերելին իրեն, բայց անոնց՝ իրարու բազդաամամբ, ունեցած զիբքերը բոլորովին տարբեր

և փոխուած կ'ըլլան, հեռանկարը փոխուած է այլևս:

Այպեան և Օ'պէրլանտ լեռներուն հեռանկարին Բիլատէն զիտելով՝ ամենեւին չնմանիր էնթերաքէնի վրայէն և Պաւլօթէն տեսնուածին, թէպէտև միևնոյն լեռները, միևնոյն լիճերը կը տեսնուին: Ճիշտ միևնոյն է նաև աստղերուն համար: Գրեթէ մի և նոյն աստղերն են որ՝ թէ՛ Երկրէն և թէ՛ Անտրոմէաի Տէլթայէն կ'երեւին. սակայն անկից՝ ոչ մի համաստեղութիւն կրնայ ձանչցուիլ, ամբողջ հեռանկարները փոխուած են: Առաջին կարգի աստղերը՝ երկրորդ և երրորդ կարգի կ'երեւին. ոմանք աւելի մօտէն դիտուելով՝ աւելի փայլուն կը տեսնուին: Գլխաւորապէս աստղերուն իրարու փոխադարձ զիբքերը Երկրից և այդ աստղին իրարմէ հեռաւորութեանը պատճառաւ ամբողջովին տարբեր են:

Խնդիր. — Ուրեմն, համաստեղութիւնները՝ որ ի վաղուց անախ, երկնից երեսը իրր գամուած կը համարուէին, պարզապէս հեռանկարային երեւոյթներ են: Դիտողին զիբքը փոխուելով, հեռանկարային պատկերն ալ կը փոխուի և երկնից տեսարանը մի և նոյնը չմնար: Բայց այն ժամանակ մենք ալ պէտք էր ունենայինք այդ հեռանկարային փոփոխութիւնը, քանի որ՝ երկիրս ալ, իւրաքանչիւր վեց ամիս, մեծապէս իր զիբքը կը փոխէ և 74 միլիոն մղոնի տարբերութիւն մը կուսնանայ ամեն վեց ամիսէն առաջ ունեցած զիբքէն:

Լուսնն. — Այս զիսողութիւններդ ապացոյց են թէ՛ միջոցին մէջ որ և է կողմ տեղափոխուելով, համաստեղութեանց ձևերուն փոփոխումը

կատարելապէս հասկըցած ես: Յիրաւի այդպէս պիտի պատահէր՝ եթէ երկրին շրջադիւրը այնքան ընդարձակ ըլլար, որ իր երկու հակընդդէմ կէտերուն հեռաւորութիւնը կարող ըլլար երկնային գեղանկարը փոփոխել:

Խնդիր. — Բայց, եթե մանասունը չորս միլիոն մը զո՞ն է այս... քիչ բան չէ՞:

Լուսնն. — Երկնային հեռաւորութեանց կարգին մէջ ոչինչ է այդ. և աստղային երկնից հեռաւորակարը չփոխուիր, ինչպէս Բանթէօնի գմբեթին վրայ՝ մէկ կամ երկու քայլ յառաջ կամ ետեւ կենալով, Բարիզի շէնքերուն դրից տեսարանը չփոխուիր գիտողին համար:

Խնդիր. — Միջին դարու քարտէսներէն ումանք Չոզիակոսը՝ հրեղէն երկնից իբր շրջանակ կը նըկատեն և համաստեղութիւններէն մէկ քանին, ինչպէս Անարոմէտը, Քնարը, Կասիոպէն, Արծիւը սերովբէից կարգը կը դասեն: Ուրեմն ասիկա պարզ քմահաճոյական բաժանում մըն է, եթէ համաստեղութիւնները գոյութիւն չունին:

Լուսնն. — Ի հարկէ: Անտեղի է այլևս նկատի առնել աստուածաբաններուն ցոյց տուած երկինքը: Երկու ճշմարտութիւններ չեն կրնար իրարու հակառակ ըլլալ. անհրաժեշտ է որ հոգեկան երկիրը նիւթական երկնից հետ համաձայնի. ասո՛, այդ է այս պատմաճնեքու մասնաւոր նպատակը:

Անարոմէտի աշխարհին վրայ, զորմէ խօսեցայ, յիրաւի այդ համաստեղութեանց նշոյլն իսկ չկայ: Այդ աստղերը՝ որ երկրէն դիտելով, համախմբուած կերեւին, և Սէփէի ու Կասիոպէի դուստրը

(Անարոմէտը) կը ներկայեն երկնից գմբեթին վըրայ, միջոցին այլևայլ ուղղութեանց և այլևայլ հեռաւորութեանց մէջ տարածուած են: Երկնային դիցարանութեան և ո՛չ իսկ հետքը կը տեսնուի հան:

Խնդիր. — Արդ ուրեմն բանաստեղծութիւնը այլևս կը կասի... Ի հարկէ քաղցր հաճոյք մը զգացած պիտի ըլլայի, եթէ գիտնայի թէ՛ ամբողջական կեանք մը՝ ունեցած եմ ի զոզն Անարոմէտի: Ասիկա նմանութիւն մըն է: Ահա կայ դիցարանութեան ամբողջական բուրում մը և կենսականութեան զգայութիւն մը: Արդարեւ կը փափագէի հոն փոխադրուիլ առանց հրեշէն վախնալու և առանց անձկութիւն մը կրելու երիտասարդ Պերսէոսէն և անոր ընկերացող Մէտուսաի գլխէն և համբաւաւոր Պէդասէն: Բայց հիմա այլևս ոչ մերկալանջ դիցուհի կայ և ոչ ալ ոսկեհասկը բռնող կոյս մը և ո՛չ ևս Եօթնեղբարց հետամուտ Հայկը: Արողիտէն կորաւ երկնից երեսէն և ձերունին Սատուրնոս իր մանգաղը գիշերային մթութեան մէջ թողուց: Գիտութիւնը գանտնք ամէնքը անյայտացուց: Կը ցաւիմ այս տեսակ յառաջդիմութեան վրայ:

Լուսնն. — Արդեօք պատրանքը կը գերադասե՞ս իրականութենէն: Իե՞ս չե՞ս գիտեր թէ ճշմարտութիւնը անբազղատելիօրէն աւելի զեզեցիկ նոյն իսկ աւելի մեծ, աւելի հրաշալի և սքանչելի է քան ամենազարդարուն մոլորանքը: Բնութեան շարժմանց, երկնային փառահեղ մեծութեան և գիտական ամենապարզ զննութեանց հետ. բաղդա-

տելի ի՞նչ կայ անցեալ և ներկայ գիցարանութեան մէջ .

Հոգւոյն վրայ աւելի խորապէս ազդող ի՞նչ կայ քան այն իրողութիւնը թէ անհունութեան տարածութիւնը լի է աշխարհներով և աստղային դրութիւններով : Ո՞ր ասացուածքը աւելի պերճախօս է՝ քան աստեղադարդ երկնից գիշերային լուսութիւնը : Ի՞նչ պատկերացում կրնայ հիացման յորանները փոխադրել միաքը՝ քան լուսոյ միջաստեղեայ ճամբորդութիւնը՝ որ մէն մի աշխարհի կենաց դէպքերուն պատկերները կը մշանջնանաւորէ տիեզերաց մէջ : Թօթափէ՛ ուրեմն, ս՛վ բարեկամս, այդ հինաւուրց և մզլտած մոլորութիւններդ և ճշմարտիւ արժանի ցոյց տուր ինքզինքդ զետուութեանց մեծ վայելչութեանց :

Միտ դի՛ր ինչ որ հիմա պիտի ըսեմ :

Անարմէտի Տելլաէն դէպի Գաիլիլա եկող լուսոյ ճառագայթից ընթացքի տեսողութեանը պատճառաւ՝ այս ասորի, 1869ին միայն կրցայ տեսնել իմ նախավերջընթեր, այսինքն 550 ասորի առաջուան վարած կենցաղս : Այդ աշխարհը եղական է մեզ համար : Հոն մի միայն կենդանական պետութիւնը կ'իշխէ . բուսականութիւնը գոյութիւն չունի հոն : Բայց այս կենդանական պետութիւնը ձերինէն բոլորովին ասրբեր է, թէպէտեւ անոնց բարձրագոյն և իմացական տեսակները երկրայիններուն պէս հինգ զգայարանք ունին : Յարաշարժութեան աշխարհ մըն է ուր քուն չկայ :

Վարդագոյն ամբողջական ուկիլանոս մը զանի պարփակած է երկրային ջուրէն նուազ և օդէն

աւելի խիտ հեղուկով մը . ջուրին և օդին միջանկեալ վիճակով նիւթ մըն է այդ : Մի՛ ջանար մըտքիդ մէջ զանի ներկայել, չես կրնար երեւակայել, վասն զի ձեր երկրային տարրաբանութիւնը ատոր նման նիւթ մը հներկայեր ձեզի : Ամանի մը մէջ պահուած անաեսանելի անխային կազը, որ ջուրի պէս ուրիշ ամանի մը մէջ կը վազցնես, կրնայ քեզի նմանութեան դաղափար մը սալ : Այս վեճակը այդ աշխարհին վրայ, ջերմութեան և էլեքտրականութեան, որոշ քանակութեամբ մը, մշտապէս գոյութիւնէն առաջ եկած է : Անձանօթ չէ քեզի թէ՛ Երկրիդ վրայ, բոլոր էութեանց մտադաց, բուսոց և կենդանեաց կազմակերպութեանը մէջ, երեք վիճակ կայ . հաստատուն, հեղուկ, և կազային . և թէ՛ այս երեք վիճակաց միակ պատճառը՝ Արեւուն ջերմութիւնն է : Երկրին ներքին տաքութիւնը այլեւս աննշմարելի ազդեցութիւն մը ունի մակերեսային վրայ : Արեգակնային նուազ ջերմութիւն մը՝ կազերը հեղուկի և հեղուկներն ալ հաստատուն վիճակի պիտի վերածէր : Իսկ աւելի ջերմութիւնն ալ՝ հաստատուն մարմինները հեղուկի և հեղուկներն ալ շոգիի պիտի վերածէր : Ուստի բուսական է երեւակայել աւելի կամ նուազ քանակութեամբ ջերմութիւն մը՝ հեղուկ օդ մը՝ (հեղուկ օդ կը հասկնաս) և կամ կազային մարմաբիտն մը ձեւացնելու համար : Եթէ օր մը, որ և է պատճառաւ, Երկրը իր շրջագծին շօշափոյնն ուղպատճառաւ, Երկիրը իր շրջագծին շօշափոյնն ուղչելու ըլլայ, բոլոր ջուրերը կարծրացած, սառած և կազերն ալ իրենց կարգին, հեղուկի վերածուած

և ապա կարծրացած... պիտի տեսնէիր: Բայց, ո՛չ, այդ երկրին վրայ մնալով չէ՛ որ պիտի տեսնէիր այդ բաները, այլ միայն միջոցին խորէն ներկայ կըլլայիր այդ հեռաքրքրաշարժ տեսարանին, եթէ երբէք երկրին խելքին փչէր ու իր շօշափողին ուղղութեան հետեւէր: Դիտելի է որ՝ եթէ այդ սառեցնող ծայրայեղ ցրտութիւնը յանկարծակի տեղի ունենայ, բոլոր էակները անմիջ ապէս կեցած տեղերնին սառած կը մնան և Երկիրը իր հետը կը տանի բոլոր մարդկութեան ցեղերու և կենդանեաց եզական համայնապատկերը՝ թանձրացեալ և յաւիտենական անշարժութեան մասնուած այն դրօշմէ մէջ, յորում կը գտնուէին աղէտին պատահած պահուն:

Աշխարհներ կան որոնք այդ վիճակին ենթարկըւած են. արտակեցրոն մոլորակներ են անոնք, որոնց բնակիչները՝ մոլորակին իրեն արեւէն արագապէս հեռանալուն պատճառաւ, անդգալարար կենաց ընթացքէն կը կասին և հազարաւոր արձաններու նման կը մնան հոն. ոմանք ընկողմանած և ոմանք տարածուած, այն պատճառաւ որ՝ ջերմութեան այդ խորունկ փոփոխութիւնը մէկ քանի օրուան մէջ կը կատարուի: Միլիոնաւոր կը համրուին այդպիսիներն որոնք՝ խառն ի խուռն, մեռած, կամ աւելի ճիշտն ըսելով, կատարեալ թմրութեան քնոյ ենթարկուած կը մնան: Յրտուութիւնը զանոնք կը պահպանէ, երեք չորս հազար տարիներ վերջը, երբ մոլորակը՝ խոր, մթին և սառուցեալ հեռակետէն կը վերադառնայ իր վայուռն մերձակէտին՝ դէպի Արեւը, կազդուրիչ ջեր-

մութիւնը՝ իր բարերար ճառագայթներովը գգուելով անոր մակերեւոյթը, արագապէս կ'աճեցնէ զանոնք, և երբ տաքութիւնը՝ այդ էակայ յարմարագոյն բնական աստիճանին կը հասնի, յորութիւն կուտայ անոնց այն տարիքին և այն վիճակին մէջ՝ յորում կը գտնուէին ի քուն թմրութեան ննջած ժամանակնին, և կը վերակսին իրենց գործառնութիւնները, կըր նախորդ օրուան շարունակութիւնը (չառ հին նախորդ մը), առանց ո՛չ մէկ կերպով զիանալու թէ՛ զարերով ի քուն եղած են (առանց երազելու): Կան որ նոյն իսկ գուցէ սկըսած թղթախաղնին կը շարունակեն ի կամ սկըսեալ խօսակցութեան մը պարբերութիւնը կը լրացնեն, որուն առաջին մասը չորս հազար տարի առաջ արտասանած էին: Այս ամենքը շատ պարզ են: Տեսանք նախապէս թէ՛ ժամանակ ըստածը գոյութիւն չունի իրօք:

Այս ամենքը մեծ չափով և ընդարձակն է՝ ինչ որ Երկիրը վրայ, փոքր չափով, մանրաճճներուն համար կը պատահի, որոնք՝ բազում տարիներ վերջը, անձրևին աղդեցութեամբը, վերասին կը ծընանին:

Բայց մենք վերադառնանք մեր Անարոմէս մոլորակին: Վարդագոյն կէս-հեղանիւթ ովկիանոս մթնոլորտը՝ որ զանի ամբողջապէս կը պարփակէ, առանց կղզիներ ունենալու, անոր շնչաւոր էակաց բնակավայրն է: Այդ շարժուն տարրին մէջ՝ զոր ո՛չ ոք կրնայ բմբոսնել, առանց երբէք կենալու, միշտ և անդողար կը լողան, իրենց ծննդենէն մինչև իրենց մահը, վայրկեան միակ հանգիստ չեն առ-

ներ. այս մշտապես գործունէութիւնը նոյն իսկ իրենց գոյութեան պայմանն է :

Շնչատուփեան համար, այսինքն պէտք եղած հեղուկը իրեն մարմնոյն մէջ թափանցել տալու համար, պարտաւոր են անդադար խաղցնել իրենց հպելիքը և իրենց թուքերը (այս բառը կը գործածեմ հասկցնելու համար) միշտ բաց պահել : Այս մարդկութեան ցեղին արտաքին կերպարանքը՝ փոքրը ինչ հնոց համբարունելուն, յուշկապարկաց կը նմանի, բայց աւելի նուազ վայելուէ, աւելի երկակեցեցալ փոկին կը մօտենայ անոնց երկեցթը : Տե՛ս թէ ի՛նչ է այս յօրինուածութեան և երկրային մարդկութեան մէջի էական տարբերութիւնը, երկրին վրայ ընչառութիւնը անգիտակցաբար եւ անըզգալապէս կը կատարուի, և սուանց աշխատութեան մեզի պէտք եղած թթուածին կազը կ'ընդունինք, սուանց նեղութիւն մը զգալու մեր երակային արիւնը կը փոխուի շնչերակային արեան, թթուածին կազին ներարկուծովը : Մինչդեռ միւս աշխարհին մէջ, ընդհակառակն, այդ սնունդը աշխատութեամբ եւ անդադար ջանքով միայն կրնայ ստացուիլ :

Խնդիր. — Ուրեմն այդ աշխարհը՝ մերինէն աւելի ստորին աշխարհ մըն է յառաջդիմութիւնն աստիճանի տեսակէտով :

Լուսնն. — Անտարակոյս, քանի որ Երկիր դաշէս առաջ հոն ապրած եմ : Բայց որովհետեւ քունի մէջ եղած ժամանակ ալ կրնանք շնչատուփեան կատարել, մի՛ կարծեր ուրեմն թէ Երկիրը ալ բարձրագոյն բան մը եղած ըլլայ :

Անտարակոյս առաւելութիւն մըն է մեզի համար ինքնաշարժ օդահան գործիքով մը օժտուած ըլլալ՝ որ ամեն մանրերկրորդի մէջ կը բացուի և կը գոցուի, մեր յօրինուածին պէտք եղած օդը մատակարարելու համար և որ միշտ զիչեր ու ցորեկ ինքնաբերաբար կը գործէ ամեն անգամ որ մարդս մէկ կուլ օդի պէտք ունենայ : Բայց մարդս միայն օդով չսպրիք. երկրային յօրինուածին համար դեռ ուրիշ նիւթերու յաւելուածի մը պէտք ունի և այս յաւելուածը ինքն իրեն չդար :

Ի՛նչ կը հետեւի տակից. նայէ՛ անգամ մը չորս կողմը. տե՛ս թէ ի՛նչ խեղճ և թախծալից տեսարան է. ի՛նչ տասիճան տառապանաց և անասնական աշխատութեան աշխարհ մըն է. տե՛ս այդ մարդկային բազմութիւնը գետին խոնարհած, մեծ աշխատութեամբ դայն կը քերէ հաց խնդրելով անակից : Փոխանակ բնութեան վրայ հիացմամբ վերսնայու, տե՛ս այդ ամբօխը գլխիկոր դէպի նիւթը վայրահակ, տե՛ս այդ ամբողջ ուժերը, տե՛ս արկարութեանց ու հիւանդութեանց ենթակայ դատողաց երամակը : Բոլոր այս կենաց պայքարը ի վնաս այլոց կը կատարուի, քիչ մը ոսկի հուաքելու համար. մարդով մարդկանց շահագործումն է այդ : Մարդոց դատակարգեր, ազնուապէտութիւնք, գողութիւնք, աւերմունք, փառասիրութիւն, զանք և պատերազմունք, ի մի բան, անձնական շահ. միշտ ինքնասէր, յաճախ զազիր և զօշաքաղ, վերջապէս հոգւոյ վրայ կոշտ նիւթին ունեցած տիրակալութիւնն է այդ. անա՛ այս է երկրին սովորական և մշտապես պատկերը : Կացութիւն մը,

որ ձեր մարմինը կառավարող օրինաց կը հնազանդի, և որ ապրելու համար կըստիպէ զձեզ սպանանել. նախընտրել կուտայ ձեզի նիւթական ընչից ստացումը, որ դերեզմանէն անդին չըստացւիր, իմացական անեղծ և անապական դանձից ըստացման, զոր հոգին կը պահէ ինքն իր մէջ:

Խնդիր.— Ո՛վ ուսուցիչ, այնպէս մը կը խօսիս որ՝ իբր թէ առանց ուտելու կարելի ըլլար ապրել:

Լուսկեց.— Ո՛հ, միջոցին բոլոր աշխարհաց վերայի էակները կը կարծես թէ այդ ծիծաղելի գործողութեան դատապարտուած են: Մեծ բարերարը զուրթիւն մըն է որ մեծաւ մասամբ՝ աշխարհաց վրայ, հոգիները այդ անձոռնի դրութեան ենթարկըւած չեն:

Նախ և առաջ այնքան դժուարին չէ աննդարար միջնորդութի մը գոյութեան հաւատալ:

Մարդկանց և կենդանեաց կեանքի յանձանձումը՝ երկու պայման ունի. մին ճնշառութիւնը և միւսը սննդառութիւնը. առաջինը՝ միջնորդութի մէջ գոյութիւն ունի, իսկ երկրորդը կերակրոց մէջ: Մնունդէն առաջ կուզայ արիւնը, արիւնէն կը գոյանայ յօրինուածքը, մկուռնքը, ոսկերտաիքը, կըռճիկները, միսը, ուղեղը, ջիղերը, ի մի բան, մարմնոյն գործարանսուտի յօրինուածքը: Թ՛իմուածին կաղն ալ՝ որ կը շնչենք, ինքն ալ առանձին սնունդարոր նիւթ մը կինայ համարուիլ, քանի որ ըստամոքսին ընդունած աննդարար նիւթոց հետ բաղադրուելով կը մասնակցի արեւագործութեան և յօրինուածոց կազմութեան:

Այդ ամբողջական աննդականութիւնը ունեցող միջնորդութի մը գոյութիւնը երեւակայելու համար բաւական է զխտել թէ՛ կատարեալ աննդական նիւթ մը, ալպիմիւնէ, շաքարէ, ճարպէ և աղէ բաղկացած ըլլայ: Երեւակայէ՛ ուրեմն միջնորդութիւն հեղուկ մը, որ փոխանակ մի միայն ազօրէ և բըբլածինէ բաղադրեալ ըլլալու, կաղային վիճակի վերածուած, այլևայլ հիւթերէ ձեւացած ըլլայ: Այդ հիւթերը ձեր կերած հաստատուն մարմնոց մէջ կը գտնուին և մարտողութեան գործողութեամբ է որ կը զտուին և կը ներմուծուին յօրինուածութեան մէջ: Օրինակի համար, երբ պատառ մը հաց կ'ուտես, ստամոքսիդ մէջ կը ներմուծես փեկուղ և նշաստայ, որոնք ջուրի մէջ անլուծելի են, և արեան մէջ չեն գտնուիր: Ծօղիքը և փայծաղի խիւսը՝ նշաստակը լուծելի շաքարի կը վերածեն:

Մաղձը, փայծաղի խիւսը և աղիքային խիւսերը, շաքարը ճարպի կը վերածեն, և այսպիսով աննդականութեան նիւթերը՝ զտուելով կը ներմուծուին ձեր մարմնոյն մէջ:

Գուցէ կը զարմանաս թէ ինչպէս հինգ տարի է որ երկնային աշխարհին մէջ կը բնակիմ, դեռ կը յիշեմ այս նիւթական բացատրութիւնները և կուզամ այդ կերպով խօսիլ քեզի հետ: Երկրէդ հետս տարած յիշատակները անյայտացած չեն և որովհետեւ ներկայիս գործարանական բնախօսութեան վրայ կը խօսինք, ամօթ չեմ համարեր ամեն ինչ իր անուամբը յորջորջել:

Արդ ուրեմն, եթէ փոխանակ հաստատուն մարմնոց և հեղուկներու մէջ խառնուած և պարու-

նակուած ըլլալու, այդ անն դարար նիւթերը՝ կազային վիճակի մէջ, մթնոլորտին կազմութեանը մէջ կը գտնուէին. այսպիսով աննդարար մթնոլորտ մը եղած կ'ըլլար որ զմեզ ալ ազատած կ'ըլլար մարտողութեան ծաղրելի և կոշտ գործողութեանէն:

Ինչ որ մտ ըզը, իր սեղմեալ շրջանակին մէջ, կրնայ դիտողութիւններ ընել, և կարող կ'ըլլայ երեւակայել՝ բնութիւնը կրցած է արդէն իրականացնել զանոնք տիեզերական ստեղծագործութեան անհամար կէտերուն վրայ:

Կը հաւաստեմ քեզ, այսուհանդերձ, թէ՛ երբ մէկը այլևս վարժուած չէ այդ նիւթական գործողութեան, այսինքն մարտողութեան խողովակին մէջ անունդ ներարկել, այդ գործողութեան կոշտութեանը վրայ զարմանա՛նար կը մնայ:

Անա այդ խորհրդածութիւնը կ'ընէի դեռ քանի մը օր առաջ, երբ տեսողութիւնս թափառեցաւ ձեր մոլորակին մեծափարթամ մէկ տեսարանին վրայ: Աչքիս զարկաւ Կ. Պոլսոյ առաջը, Վոսփօրի կաղուտագոյն ջրոց վրայ, զանդազարար սահող նաւակի մը մէջ ընկողմանած, մանկամարդ աղջկան մը քաղցր և հրեշտակային գեղեցկութիւնը:

Փայլուն՝ ասեղնագործեալ ծիրանագոյն թաւիչէ բարձեր՝ այդ երիտասարդ Ձերքէզուհոյն բազմոցը կը կազմէին, Կրոնց ոսկեզօծ ծանրադին ծոպերը մինչև ջրոց երեսը կը տատանէին: Իմ մացը, ծնկագուճ փոքրիկ խափշիկ մը կը նուագէր: Անոր մարմինը այնքան կուսական և այնքան շնորհալի, անոր արմկաց յենու մը այնքան վայելուչ, աչքերը այնքան վճիտ և այնքան պարզ-

մըտութիւն կը ներշնչէին և այդ մտածող ճակատը այնքան խաղաղ կերեւէր երկնքի լուսոյ մէջ՝ որ միջոց մը յետս հայեցիկ սքանչացումէ մը յափըշտակուած, կը հիանայի կենդանի բնութեան այդ գլուխ-գործոցին վրայ:

Արդ ուրեմն, մինչդեռ այդ նորածագ երիտասարդութեան ամբծութիւնը, այդ նորափթիթ քաղցրաբոյր ծաղկին անուշութիւնը՝ որ կեանքի առաջին ճառագայթին աղղեցութեամբ կը բողբոջի, կերպով մը վազանցուկ ու թովիչ յափշտակութեան մէջ թողած էր դիս, նաւակը մօտեցաւ քարափի մը, մանկամարդ աղջիկը գերիի մը թիւի յենած՝ եկաւ բազմեցաւ սօճայի մը վրայ՝ որ բազմախորտիկ համադամներով լի սեղանի մը կից զրուած էր, ուր սրդէն ուրիշ բազմականք հաւաքուած էին:

Մկսաւ ուտել, այս՛, կետաւ գուցէ մէկ ժամու չափ... հաղիւ թէ երկրային յիշողութեանցս վերահասու կ'ըլլայի:

Ինչ այգանելի տեսարան. այդպիսի էակ մը որ անունդ կը ներմուծէ իր բերանը և երբեմն ալ, չգիտեմ ինչ տեսակ հեղուկ մը կը վազցնէ այդ հիանալի մարմնոյն մէջ:

Ինչ ուսմկութիւն: Յետոյ՝ ո՛ր և է կենդանոյ մը կտորը որ իր մարդրտաշար ատամունքը կը համարձակին ծամել, ապա ուրիշ անասնոյ մը մասը կուլ տալու համար այդ կուսական շրթունքները կը բացուին: Ինչ այլանդակ կանոն կենցաղի. ցխեւրու մէջ սպրող և խողխողուած կենդանեաց և գազանաց խառնուածք մը... ո՛հ, ինչ պժգալի տեսարան... գարշա՛նք:

Այդ օտարոտի և հակընդդէմ տեսարանէն հե-
ռացընելով՝ աչքերս դարձուցի դէպի Երևակ մու-
րակը, որուն մարդկութիւնը այդպիսի պէտքերու
դատապարտուած չէ:

Իմ նախալերջընթիւ կենցաղիս կայանը եղող
Անտրոմէտի աշխարհին մէջ շատ աւելի տածանելի
աշխատութեամբ մը կը ստանան իրենց սնունդը՝
քան Երկրիդ վրայ: Օդ չունին որ կիսով չափ զիրենք
անուցանէ, ինչպէս դուք. պէտք է որ աշխատու-
թեամբ վաստկին զայն՝ ինչ որ թթուածին կրնանք
անուանել. առանց դադարի՝ պարտաւորեալ են
իրենց թոքերը միշտ բանեցընել օդ պատրաստելու
համար, առանց ննջելու և առանց երբէք կարե-
նալ կուշտ կերպով ստանալու զայն, որովհետեւ՝
չարաչար աշխատութեամբ հանդերձ, խիստ քիչ
քանակութեամբ կրնան միանգամայն կլլել: Այս
կերպով կ'անցընեն իրենց կեանքը և աշխատութեան
տակ կ'ընկճուին ու կը մեռնին:

Խնդիր.— Ուրեմն աւելի լաւ էր որ չծնանէին
անոնք: Բայց արդեօք միեւնոյն խորհրդածութիւնս
Երկրիս համար ալ չկրնա՞ր պատշաճիլ: Ի՞նչ բանի
կը ծառայէ ծնանիլ և 60 կամ 100 տարիներ օրա-
կան միեւնոյն շրջանին մէջ դառնալ ու դառնալ,
քնանալ, ուտել, գործել, խօսիլ, վազել, թափափիլ,
զրգոռ ուիլ, խոկալ են, են, և այս ամենքը ի՞նչ
բանի կը ծառայէ: Արդեօք նոյնքան յառաջացած
չկ'նք ըլլար՝ ծնողեան հետեւեալ օրը մեռնելով, կամ
թէ՛ աւելի լաւ չէ՞ր ըլլար՝ եթէ երբէք չծնանէինք:

Այսպիսով դարձեալ բնութիւնը՝ բնութիւն
ըլլալէ չէր դադրեր և մեզի ալ անդգալի կ'ըլլար:

Արդեօք չկ'նք կրնար նաև յաւելուլ թէ՛ նոյն
ինքն բնութիւնը ի՞նչ բանի կը ծառայէ. և տի-
եղերքի գոյութիւնը ի՞նչ բանի համար է...:

Լուսեմ.— Ահա՛ հոն է մեծ գաղտնիք: Պէտք է
որ ամեն ճակատագրական ծրագիր իրագործուի:

Այդ Անտրոմէտի աշխարհը շատ ստորին և
նուաստ երկիր մըն է: Անոր մարդկութեան
խմացական տկարութեան վրայ գաղափար մը տա-
լու համար, առենք երկու գլխաւոր խնդիրներ
որոնք ընդհանրապէս բոլոր աշխարհաց ժողովուրդ-
ներուն արժէքին չափը և աստիճան կը ներկայեն.
Կրօնքը և քաղաքականութիւնը:

Արդ, կրօնքի մասին, փոխանակ բնութեան
մէջ զԱստուած փնտռելու և իրենց դատողութիւնը
գիտութեան վրայ հիմնելու և ճշմարտութեան
ցանկալու, փոխանակ իրենց աչքերն և մտքերը՝
տեսողութեան և ըմբռնումի ծառայեցընելու, վեր-
ջապէս փոխանակ իրենց փիլիսոփայութեան հիմուն-
քը, կարելի եղածին չափ, աշխարհը վարող կար-
գաց և կանոնաց ճանաչողութեան վրայ հաստա-
տելու, կամովին կուրացեալ, այլ և այլ ազանդնե-
րու բաժնուած են. և այսպէսով՝ առանց արա-
մախոհելու, փառաւորել կը նկատեն իրենց կար-
ծեցեալ Աստուածը. յաւակնելով նաև թէ՛ միջոցին
մէջ, միմիայն իրենց մուրակը գոյութիւն ունի,
քանի մը բառեր արտասանելով ցեղ ցեղի դէմ
թշնամական լուտանքներ կ'արձակեն. և աւս՛ղ...
սուրբեր կ'օրհնեն, խարոյկներ կը վառեն, ջարդեր
և պատերազմներ կ'արածեն և այդպէսով զԱստ-

ւած պաշտել կը կարծեն: Իրենց վարդապետութեանց մէջ այնպիսի սկզբունքներ ունին՝ որ խելքի մտքի գէժ չարաչար և ծայրայեղ թշնամանք են: Ահա ասոնք են որ իրենց հաւատոյ հանգանակը կը կազմեն:

Գալով քաղաքականութեան մասին մի և նոյն կացութիւնը ունի: Ամէնէն իմաստունները և ամենէն անբասիրները չեն կրնար իրարու հետ համաձայնիլ, որով հանրապետութիւնը կառավարական անիրազարծելի ձեւ մըն է: Որքան անոնց հին պատմութիւնը հեազօտենք, պիտիտեսնենք թէ՛ վատութեան և անտարբերութեան մասնուած ժողովուրդները իրենք իրենց կառավարուելէն աւելի կը նախընտրեն՝ ինքզինքնին թագաւոր հռչակող անձանց ձեռամբ առաջնորդուիլ:

Այդ պէտք՝ անոնց բնչից երեք քառօրը կը յափշտակէ, անոնց սննդեան գեղեցկագոյն մասը կ'առնէ և կը պահէ իրեն և իրեններուն համար (այսինքն ինչ որ լուազոյն է այդ երկրին մէջ): Այդ էակները կ'աշխարհագրէ և կը թուարկէ և երբեմն երբեմն հաւաքելով զանոնք՝ զիրար գանակոծելու կը զրկէ մերձակայ ժողովրդեան մը վրայ, որ իր կարգին, համանման ուրիշ թագաւորի մը լուծին սակ կը գտնուի: Զուկի տարմերու կոյտի մը նման կընթանան գէպի պատեւրագմի դաշար՝ զոր պատւոյ դատ կ'անուանեն, և հոն վայրի գազաններու նման զիրար կը ջարդեն, առանց գիտնալու թէ՛ ինչո՞ւ համար. և առանց զիրար հասկընալու, նկատելով որ մի և նոյն լեզուն ալ չեն խօսիր: Ապա, բազդին առանձնա-

չնորհեալներէն ոմանք, այդ աղէտէն ազատւած կը վերադառնան: Կը կարեծս թէ այդ անձինք թագաւորին գէժ սրտի ատելութեամբ մը կը վերադառնան . . . — Ո՛չ երբէք: Բանակին մնացորդները՝ ցեղին մեծապանծ առաջնորդաց հետ հայրենիք դարձին, գոհարանական աղօթիւք կ'ազակն զԱստուած՝ որ երկայն օրեր չնորհէ և անոր օրհնութիւնը կը հայցեն այն անձին համար որ քաղաւոր կը կոչուի:

Խնդիր.— Այս անգեկութիւններէն կը հետեւի թէ Անարոմէաի Տելքա մոլորակին բնակիչները թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ իմացականութեամբ մեզմէ շատ ստորին են, վասն զի Երկրիս վրայ այդպիսի ընթացքէ մը շատ հետի ենք. . . ի մի բան, ուրեմն այդ գունդին վրայ մի միայն մէկ տեսակ կենդանութիւն կայ որ միշտ շարժման մէջ է, առանց դադարի, առանց քնոյ, հաննապաղ անողօք յողնութեամբ երբրուն վիճակի դատապարտուած: Այդպիսի աշխարհ մը շատ այլանդակ և անհեթեթ կը թուի ինձ:

Լուսնն.— Հասպա ի՞նչ պիտի ըսես այն աշխարհին համար՝ ուր 15 դար առաջ բնակած եմ. աշխարհ մը նոյնպէս մի միայն մէկ ցեղէ բնակուած բայց ո՛չ շարժուն, ընդհակառակն հաստատ, գունտին կառչած ցեղ մը, ինչպէս է ձեր բուսական ցեղը:

Խնդիր.— Ի՞նչ . . . կենդանիք և մարդիկ արմատով հաստատուած:



Գ.

Լուսեմ.— Անտրոմէտ համաստեղութեան աշխարհին վրայ ունեցած կենցաղիս նախորդող կեանքս՝ Երկրիդ մօտ եղող Արուսեակ մոլորակին վրայ տեղի ունեցած է, ուր՝ կը յիշեմ թէ, կին մըն էի: Չկրցայ՝ լուսոյ օրինաց համաձայն ուղղակի տեսնել զայն, վասն զի լոյսը՝ Արուսեակէն և Երկրէդ Գափիլլա դալու համար միևնոյն ժամանակը կը դնէ, և հետեւաբար զէպի Արուսեակ զխած ժամանակս, ներկայիս անոր 72 տարի առջի վիճակը կը տեսնուի և ոչ թէ՛ 900 տարի առաջուանը, այսինքն իմ հոն բնակած ժամանակիս զէպքերը:

Երկրային կեանքէս առաջ չորրորդական կեանքս՝ տեղի ունեցած է Կարապ համաստեղութեան մանեկածեւ ահագին մէկ մոլորակին վրայ, որ Ծիր Կաթինի սահմանաց մէջ կը գտնուի: Արդ, այդ աշխարհը մի՛ միայն բուսական էակներէ բռնակեալ է:

Խնդիր.— Այսինքն կարծեմ ըսել կ'ուզես թէ՛ զեռ մի միայն բուսականութիւն կայ հոն, և թէ՛ կենդանիք և իմացական և բանական արարածներ զեռ երեւան եկած չեն, այնպէս չէ՞:

Լուսեմ.— Ո՛չ, այնպէս չէ՛: Յիրաւի մի միայն բոյսեր կան հոն, բայց այդ ընդարձակ բուսական աշխարհին մէջլինները ձեր Երկրին բոյսե-

րէն աւելի զարգացած բոյսեր են, որոնք՝ քեզի, ինծի պէս կ'ապրին, կ'զգան, կը մտածեն, կը խորհին և կը խօսին:

Խնդիր.— Բայց . . . այդ անկարելի է . . . Ո՛հ, ներէ՛, արտակարգ և անըմբռնելի, ըսել կուզեմ:

Լուսեմ.— Այդ տեսակ իմացականութիւնը, այնքան ճշմարտապէս գոյութիւն ունի որ՝ նոյն ինքս. ես ալ անոր մօտը կը կազմէի, ասանրհինգ դար առաջ իմացական ծառ մը եղած էի:

Խնդիր.— Բայց դարձեալ . . . ծառ մը ի՞նչ պէս կրնայ մտածել, առանց ուղեղի և առանց լեզուի:

Լուսեմ.— Խնդրեմ, ըսէ ինծի թէ զուր ի՞նչ մասնաւոր միջոցաւ կը մտածես և շարժման ի՞նչ փոխաձեւութեամբ քու հոգևոյդ լոկն ըմբռնումները խօսակցութեամբ կ'արտայայտես:

Խնդիր.— . . . Կը մտածեմ. ո՛վ ուսուցիչ, բայց այս բանիս հիմնական բացատրութիւնը չեմ կարող գտնել, թէպէտեւ շատ սովորական բան մը ըլլայ այդ:

Լուսեմ.— Ուրեմն իրաւունք չունիս քեզի անծանօթ բան մը անկարելի հռչակել. երբ չես գիտեր նոյնիսկ քու սեպհական էութեանդ օրէնքը: Եւ որովհետեւ ուղեղը իմացականութեան արտայայտութեան համար՝ Երկրիդ վրայ, իբր բնախօսական գործիք մը դրուած է, կը կարծե՞ս ուրեմն թէ՛ միջոցին միւս աշխարհաց վրայի էակներն ալ նմանօրինակ ուղեղներ և ողնաշարի ծուծ մը ունին: Ատիկա ախմար մոլորութիւն մըն է:

Յառաջադիմական օրէնքը՝ մէն մի աշխարհի կենսական գրութիւնը կը վարէ: Երբ գունտ մը՝ բարոյական աշխարհի մասնակցութեան յարմարագոյն ստիճանի բարձրացման կը հասնի, այն ժա, մանակ միայն Հոգիին՝ աւելի կամ նուազ դարդացած, հոն ի յայտ կուգայ: Մի կարծեր որ՝ Անըսկիզբն և Ամենակալ Հայրը՝ ամեն մէկ գունտին վրայ, ուղղակի, մէկ ձեռքէ, յատուկ մարդկային ցեղ մը ստեղծած է:

Ո՛չ: Կենդանական առաջին աստիճանը մարդկային կերպարանաւորութիւնը կըստանայ՝ իրացինքնաբեր ուժովը և բնական օրինաց բերմամբը, և զպնի կ'ազնուացնէ ա՛յն ժամանակ, երբ յառաջդիմութիւնը բազդատարար աւելի բարձրութեան մը հասուցած է զանի:

Գիտնս արդեօք թէ՛ ի՛նչ բանի համար, իրան մը և ստամբս մը, երկու սրունք և երկու թեւեր ունիս, և գլուխ մը՝ երկու տեսական և լըսողական զգայարանքներով զարդարուած: Վասն զի՝ նախ քան զմարդ, Երկրիդ վրայ երեւան եկած չորքոտանիք և սանաւոր կենդանիք այդպէս շինուած էին:

Կապիկները, շուները, առիւծները, արջերը, ձիերը, եղջերը, վագրերը, կատուները ևն. ևն. և ասոնցմէ առաջ կարծրաքիթ ոնգեղջիւրը, քարայրներու բորենին, մեծակոտոշ եղնիկը, նախափիղը, պարկերէն, ևն. ևն. և ասոնցմէ առաջ՝ լողազազանք և ձկնամողէսը, կարծրատաճիկները, թեւամատաները ևն. ևն. որոնցմէ ալ առաջ ձուկերը, ողորկապատեաները, կակղամորթները

ևն. ևն. ասոնք ամենքը երկրիդ վրայի՝ զործօն ուժերուն արտայայտութիւններն են, որ գունտին և մթնոլորտի վիճակէն, զործարանական քիմիականութենէն, ջերմութեան քանակութենէն և երկրային ձգողութենէն կախում ունին:

Երկրային սոնաւոր կենդանականութիւնը հետեւած է, սկզբանէ անտի, այս ընթացքին, հետըզհետէ մերկանալով նիւթին կոշտութենէն և զիմած է յաջորդաբար դէպի կատարելագործում կենդանական օրայարին:

Մարդը՝ ձիէն աւելի գեղեցիկ է. ձին աւելի կատարեալ և գեղցիկ է քան զարջը. և առ աւելի սիրուն է քան կրիան:

Յար և նման օրէնք մը կ'իշխէ բուսականութեան վրայ: Թանձր և կոշտ, անտերև և անծաղիկ բոյսերը սկսած են նախապէս երեւան գալ, յետոյ զարեբու ընթացքով այդ ձեւերը սկսած են աւելի վայելչանալ և մաքրուիլ. անոնց վրայ սկսած են տերեւներ բուսնիլ անտառաց մէջ լո՛ւի ստուեր մը տարածելով: Ծաղիկներն իրենց կարգին երեւցան և զարդարեցին երկրային պարտէզը՝ ծաւալելով քաղցր բուբում մը՝ մինչև այն ժամանակ անձամ մնացող մթնոլորտին մէջ:

Դէպի կատարելութիւն զիմող այս կրկնակցեղերուն հետքերը՝ այսօր իսկ Նրկրին երբորդական, երկրորդական և նախնական խաւերուն մէջ կը զանուին և կը ներկայանան երկրաբաններու զիտող աչքին: Եղած է ժամանակ մը Երկրիս վրայ, ուր չօգիապատ մթնոլորտին մէջ, միայն մի քանի կըղզիներ հազիւ թէ տաք ջուրին մէջ կը տեսնուէին,

հոն անգործարանաւոր ցեղէն, ջուրին երեսը ծածանող մի միայն երկայն երկայն մանրաքիլեր կը նշմարուէին: Առաջին բոյսերն են ջրիմուռն և ծովասկղը. ժայռերուն վրայ այնպիսի էակներ կը ձեւանային որոնց անուն մը դնել դժուարին է. ասգին անդին սուցկի, և բուսի ծառեր կը բուսնէին, ուրիշ տեղ մը ծովամայրեր իրենց թանձրամած գունտովը կը լողային: Ասոնք արդեօք բոյսն էին, եթէ ո՛չ կենդանիներ, զանազանելը դժուարին էր: Գիտութիւնը դեռ չէ կրցած որոշել, կենդանաբոյս կը կոչուին ասոնք:

Բայց կեանքը՝ այս ձեւերուն կառչած չմնաց: Ահա՛, ասոնցմէ ո՛չ նուազ նախնական և պարզ էակներ երեւան գալով յատուկ ցեղի մը սկզբնաւորութիւն կազմեցին. օղակաւորներ, որդեր, խոզովկաձեւ ձուկեր, առանց աչքի, առանց ականջի և անարիւն, անջիղ, անգիտակից աճող էակներ, երեւան ելան, որոնք սակայն վայրաշարժութեան յատկութիւնը ունէին:

Յետոյ տեսողութեան և վայրաշարժութեան տարրական զգայարանք և գործիք, և աւելի ազատ կեանքի սաղմային միջոցներ ունեցող էակներ յաջորդաբար երեւան եկան:

Ի՞նչ պիտի ըլլար, եթէ նախնական էակները, իրենց ժայռերուն վրայ անշարժ մնային, եթէ, երկրային այդ նախնական տարրերը կառչած մնային իրենց յօրինուածութեան վիճակին մէջ, եթէ շարժողութեան յատկութիւնը, պատճառով մը ըսկըզբնաւորութիւն առած չըլլար, հետեւանքը սա պիտի ըլլար որ, երկրային կեանքի զրութիւնը,

փոխանակ երկու տեսակով երեւան գալու, այսինքն բուսական և կենդանական ցեղերով յայանուելու, մի միայն առաջինով, այսինքն, բուսականութեամբ պիտի շատանար: Որով, փոխանակ երկու տեսակի, մի միայն մէկ տեսակ արարած պիտի գտնուէր Երկրին վրայ: Այն ասան ստեղծագործ յառաջդիմութիւնը, այդ ցեղին մէջ գործելով, չպիտի բուսականանար միայն պահպառուկը ձեւացնելով, որ արդէն կատարեալ մկանանց զրութիւն մը ունի, չպիտի գոհանար ծաղիկներ երեւան բերելով, որք իրենց գործարանաւորութեամբը մեզի շատ մօտ են, այլ պիտի շարունակէր իր գործունէութեան բարձրացումը, գործելով նաեւ բուսական ցեղին մէջ, ինչպէս որ գործած է կենդանական տեսակին մէջ: Արդէն բոյսեր կան որ կ'ազդուին և կը գործեն, բոյսեր պիտի ձեւանային որոնք պիտի զգային և խնայական ըլլային: Երկիրը մարդկութենէ զրկուած չպիտի ըլլար, միայն թէ, մարդկային ցեղը փոխանակ շարժուն ըլլալու, ինչպէս որ է, իր ոտիցը վրայ հաստատ. Երկրին կառչած պիտի ըլլար: Ահա այդ է Ծիր Կաթինի ծոցը գտնուող այն մանեկաձեւ աշխարհին վիճակը, ուր ապրած եմ տանրհինգ դար առաջ:

Խնդիր. — Ծշմարտիւ, մարդաբոյսերու աշխարհը շատ կը զարմացնէ զիս քան նախկինը: Այսուամենայնիւ շատ դժուարին է ինձ երեւակայել այդ տարօրինակ կեանքը և անոնց բարբերը:

Լուսեմ. — Յիրաւի, անոնց կենաց պարագան ձերինէն շատ տարբեր է. անոնք քաղաքներ չեն շիներ, չեն ձամբորդեր և որ և է կառավարական

կազմակերպութիւն չունին. երկրային պատահաւր եղող պատերազմը ծանօթ չէ սնունց. ձեր նրկարագիրը եղող՝ այդ ազգային անձնասիրութիւնը չունին: Խոհեմ և համբերատար են և մշատեւ նկարագրով մը օժտուած. ոչ շարժականութիւնը և ոչ ալ երկրաւոր մարդկանց դիւրօրհեկութիւնն ունին: Հոն երկայնակեաց են, հինգ դար կ'ապրին ու հանդարտ. քաղցր, միօրինակ կեանքով առանց խռովութեան: Բայց մի կարծիք թէ՛ այդ մարդաբոյսերը՝ մի միայն ածողական կեանք մը ունին, ընդհակառակն, անհատական և բացարձակ գոյութիւն մը ունին: Ծննդեան և կամ հարստութեան դասակարգութեամբ բաժնուած չեն, ինչպէս է Երկրիդ վրայ և ինչ որ զառանցում մըն է, այլ ընտանեկան բաժանում մը ունին, որուն բնական արժէքը՝ ըստ անակին կը տարբերի: Պատմութիւն չունին, այլ ժառանգական յօջորդական աւանդութիւնները իրենց անդիր պատմութիւնը կը կազմեն, նկատելով որ ո՛չ գաղթականութիւն և ո՛չ ալ յաղթանակներ ունին: Ամեն ոք իր ցեղին պատմութիւնը գիտէ: Ինչպէս Երկրիդ վրայ՝ այնպէս ալ հոն երկու սեռ կայ և ամուսնութիւնը միայն երկու ձեւով կը կատարուի՝ բայց աւելի պարզ, աւելի մաքուր և անշահասէր կերպով և միշտ սիրայիւր, և շատ անգամ համարին մերձաւորում չէ որ կը կատարուի. հոյն իսկ հեռաւորութեանց մէջէն բեղմնաւորում տեղի կուտենայ:

Խնդիր.— Բայց վերջապէս, ինչպէ՞ս կրնան իրենց գաղափարները իրարու հաղորդել՝ եթէ

ճշմարտիւ մտածելու կարողութիւն ունին: Դարձեալ, ինչպէ՞ս կրցար ճանչնալ ինքզինքդ այդ եզակի աշխարհի վրայ:

Լուսկն.— Կրկնակ հարցմանդ կը պատասխանեմ: Կարող համաստեղութեան այդ մանեկաձեւ աստղին կը նայէի և իմ տեսողութիւնս յամառարար կառչած մնացած էր անոր վրայ, կը վարձանայի տեսնելով որ հոն մի միայն բուսականութիւն մը կար և մասնաւորապէս ուշադրութիւնս գրաւած էին դաշտերու վրայ անոնց եզակի համախմբումները. հոս երկու առ երկու, անդին՝ եւրեք առ երեք, այլուր՝ տասն առ տասը, աւելի անդին հեռուն, աւելի թիւով համախմբուած, Կարծես թէ ոմանք աղբիւրի մը գլուխը նստած, ոմանք ալ ընկողմանած, շրջապատեալ փոքրիկ նորարոյրոջ ձիւղերով: Կուզէի երկրային բոյսերու տեսակներէն նշմարել, ինչպէս եղեւնիներ, կայծիներ, ուռնիներ, կաղամախներ, բայց չկրցայ բուսականութեան այդ տեսակները գտնել հոն: Աչքս յառած էր թթենիի նման կարմիր ծաղկով զարդարուած բայց տերեւազուրկ և անպտուղ ծառի մը վրայ, երբ յանկարծ այդ անազին թղզնին՝ թեւի մը պէս, իր մէկ մեծ ոտար երկնցուց դէպի գլուխը և գեղեցիկ ծաղիկներէն մին փրցուց և խոնարհեցնելով իր գլուխը, ներկայեց զայն, քիչ մը հեռուն եղող ուրիշ բարձրահասակ, կայտառ և վայելուչ թղզնիի մը, որ կապուտագոյն գեղեցիկ ծաղիկներ ունէր: Արդարեւ այս վերջինը, կարծես յատուկ հաճոյքով ընդունեց այդ կարմիր ծաղիկը, վասնզի իբր սրտազին ձեռք մը ճիւղ մը երկարեց

դէպի իր դրացին և այս վիճակին մէջ մնացին բաւական ժամանակ :

Գիտես թէ երբեմն փոքրիկ շարժուածք մը բաւական է մարդուս , անձ մը ճանչնալու համար : Ահա այդպէս եղաւ ինձ ալ , այս պատկերացման առջեւ :

Ծիր կաթինի այս թղենւոյն շարժուածքը՝ մըտքիս մէջ , անհամար յիշատակներ արթնցուց : Այդ Մարդ-բոյսը դարձեալ ես ինքն էի ասանընդհանր դար առաջ : Ճանչցայ հոն իմ որդիքս , մանուշակագոյն ծաղիկներով թղենիներ , որոնք զիս կը շրջապատէին . վասն զի կը յիշեմ թէ , սերունդ եղող ծաղկանց գոյնը՝ հօրը և մօրը գոյներուն խառնուրդին արդիւնքն է :

Այս մարդարոյսերը՝ կը տեսնեն , կը լսեն և կը խօսին , առանց աչքի , առանց ականջի և առանց խոչափոյզի :

Սրդէն Երկրիդ վրայ , բոյսեր ունիք որ շատ լաւ կը զանազանեն՝ ոչ միայն գիշերն ու ցերեկը , այլ նոյն իսկ օրուան ժամերը , արեւուն հորիզոնէն բարձրանալը , ամպամած կամ պարզ երկինքը , աւելին եւս , բոյսեր ունիք որ այլազան ազմուկներէ կ'ազդուին նուրբ զգացողութեամբ մը . վերջապէս , բոյսեր ունիք որոնք կատարելապէս զլրար կը հասկնան և նոյն իսկ սուրհանդակ թիթեռնիկներու հետ կը բանակցին : Ահա՛ , այս երկրուսւոր նախագիծերը , այդ աշխարհին մէջ , զորմէ կը խօսիմ , կատարելապէս քաղաքակրթեալ և զարգացեալ վիճակի մէջ են . և այդ էակները , նոյնքան կատարեալ են իրենց տեսակին մէջ , որքան

դուք , Երկրիդ վրայ : Յիրաւի , անոնց իմացականութիւնը նուազ յառաջացած է քան երկրային իմացականութեան միջին վիճակը , բայց իրենց շափովը , իրենց յարարութեանց մէջ , միշտ այնպիսի քաղցրութեան մը և փափկանկատում մը կը դնեն , որ շատ անգամ Երկրիդ բնակիչներուն օրինակ կրնայ հանդիսանալ :

Խնդիր .— Տէր ուսուցիչ , ինչպէս . . . միթէ կարելի է տեսնել առանց աչքի և լսել առանց ականջի :

Լուսեմ . — Չարմանքդ պիտի դադրի . իմ հնօրեայ բարեկամս , եթէ խելամուտ ըլլաս թէ , լոյսը և ձայնը երկու կերպ շարժումներ են :

Այդ երկու շարժումները , մին կամ միւսը ըզգալու և զնահատելու , և ատոնց հետ յարարութեան մտնելու համար , գործիք մը պէտք է ունենայ . (և այդ իսկ բաւական է) գոնէ ջիղ մը : Աչքը և ականջը , այդ բանին յատկացեալ գործիքներ են և ձեր երկրային բնութեանը յատուկ են : Ուրիշ բնութեան մը կազմակերպութեան մէջ՝ տեսողութեան և լսողութեան ջիղերը բոլորովին տարբեր գործարան մը կը կազմեն : Թէպէտեւ բնութեան մէջ , միայն երկու տեսակ , այսինքն լուսնդեմ և հնչական , շատ ժողովներ չկան , և կրնամ ըսել թէ՛ այդ երկու յորջորջանքը ձեր զգացման կերպէն առաջ կուգայ և ո՛չ թէ բուն էութենէն : Բնութեան մէջ ո՛չ թէ մէկ , այլ տասը , քսան , հարիւր , հազար տեսակ տարբեր տարբեր շարժումներ կան : Երկրիդ վրայ դուք կազմաւորուած էք գլխաւորապէս այդ երկու շարժումները զգալու հա-

մար, որ գրեթէ ձեր կենաց միակ յարարերութիւնն ենքը կը կազմեն:

Ուրիշ աշխարհաց վրայ, բնութիւնը զգալու և զնահատելու համար տարբեր զգայարանքներ կան, տարբեր ձևերու տակ: Զգայարանքներ, որոնցմէ ոմանք ձեր աչքին և ականջներուն տեղը կը բռնեն, և մնացածները, այնպիսի հասկացողութեան կը ծառայեն, որոնք երկրային կազմակերպութեան հաստատութեանը բոլորովին օտար են:

Խնդիր. — Քիչ առաջ՝ երբ կարապի աշխարհին Մարդ-բոյսին վրայ կը խօսէիր, միտքս եկաւ որ հարցնեմ ձեզի, թէ արդեօք երկրային բոյսերը հոգի ունին:

Լուսնեմ. — Անշուշտ, երկրային բոյսերը՝ կենդանեաց և մարդոց նման, հոգիով մը օժտուած են: Առանց զօրութեանական հոգւոյ, կազմաւորում մը գոյութիւն չկրնար ունենալ: Հոգին է որ առաջ կը բերէ բոյսի մը ձևակերպութիւնը: Ինչո՞ւ և համար է որ բնին երբ խողկազին մը և ուրիշ հուշած մը միեւնոյն հոգին մէջ, միեւնոյն դիրքով, համանման պայմաններու տակ, քովէ քով տնկուին, մին կողմի մը կ'արտադրէ իսկ միւսը դեղձենի մը: Վասն զի խողկազինին մէջի կազմական ոյժը իրեն յատուկ բոյսը կը ձևացնէ և միւս հունտին մէջի ուրիշ կազմական ոյժ մը՝ արիշ հոգի մը, զանազան տարբեր տարբեր իրեն կը քաշէ, իրեն յատուկ մարմինը կազմելու համար, ինչպէս մարդկային հոգին ալ իր յատուկ մարմինը կը կազմէ, երկրային բնութեան ի սպաս դրած միջոցները գործածելով: Միայն թէ՛ բուսեղէն հոգին ինքնաձայնութիւն չունի:

Բոյսերու. կենդանեաց և մարդկանց հոգիները՝ արդէն բաւականապէս այնպիսի ինքնութեան և հեղինակութեան աստիճանի մը հասած էակներ են, որոնք կարող են ընկճելու, տիրելու և կա-

ռավարելու, իրենց առաջնորդութեան տակ, համաաւարած բնութեան մէջ զանուող բոլոր անգիտակից ուժերը:

Օրինակի համար, առնենք մարդուն մենատարրը, որ գերազանց է աղի, ամխածինի, թըթւածինի մենատարրերէն, զանոնք առ ինքն ձգելով կը ծծէ, կը խառնէ և կը միացնէ իր ձեռագործին:

Երկրիս վրայ, մարդկային հոգին՝ առանց անդրադաննալու, իր մարմնոյն մէջ կը կառավարէ շատ մը արբական հոգիներու ամբողջական աշխարհ մը, որոնք իր մարմնոյն մասունքը կը կազմեն:

Նիւթը հաստատուն և տարածուած գոյացութիւն մը չէ՝ այլ ուժերու կեդրոնացում մըն է:

Գոյացութիւն մը ինքնին կարեւորութիւն չունի: Մէկ հիւլէ միւսին առջև, հիւլէներուն մեծութեան համեմատ, ահագին պարսպութիւն, անչըրպէս մը կայ: Մարդկային հոգին՝ ի գլուխ կանգնած, կը կառավարէ կեդրոնացած ստորագաս ուժերը, սրոնք իր մարմինը կը կազմեն:

Խնդիր. — Ո՞վ մեծդ ուսուցիչ, կը խոստովանիմ թէ չեմ կրնար լաւ ըմբռնել այս սկզբունքը:

Լուսնեմ. — Հիմա օրինակ մը տամ որ կարող պիտի ըլլայ ատոր էութեան հաւաստիքը տալու:


Խնդիր. — Էութեան հաւաստիքը . . . Շէն-րազատ իշխանուհւոյն վերածնունդն ևս, որ կը հեմայես զիս Հաղաբուսեկ գիբերնեու վեպերով:

ՎԵՐՋ ՉՈՐՐՈՐԴ ԴՐՈՒԱԳԻՆ



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՐՈՒԱԳ (*)

Հանճարը յանդուզն է, բնութիւնը՝ յանդգնագոյն



Լուսինն . — Լաւ կը ճանչնաս շաղշոյունն Հայկ համաստեղութիւնը, որ գշխոյի մը պէս կը տիրապեակէ ձեր ձմեռնային գիշերներուն, և հետաքրքրաշարժ Թեքա կրկնակ աստղը որ կը գտնուի անոր գօտիէն կախուած թուրին ասկը, և կը փայլի հոչակաւոր միգամածին վառարանին մէջ :

Հայկայ այս Թեքա դրութիւնը՝ երկնային դոհարներուն այնքան այլազան տուփին մէջ գըւնըւած ազամանդներուն ամենէն եզականներէն մին է :

Քառանկիւնածու գիրքով շարուած չորս գըլխաւոր արեւներէ կը բաղկանայ : Այս արեւներէն երկուքը՝ որոնք քառանկիւնածուին կերպով մը խարխալը կը կազմեն, մին՝ մէկ, իսկ միւսը երկու ուրիշ արեւներու ընկերացած են . արդ ուրեմն, ասիկա եօթն արեւներու դրութիւն մըն է, որոնց իւրաքանչիւրին շուրջը կը բոլորին բնակեալ մոլորակներ :

Երկրորդական արեւներէն միոյն մէկ մոլորակին վրայ կը գտնուէի այն ասեռն : Այս արեւը՝ վերոյիշեալ գլխաւոր չորս արեւներուն մէկուն շուրջը կը դառնայ :

(*) Գրեալ 1869 :

Այս վերջինն ալ, իր կարգին, միւս գլխաւոր արեւներուն հետ միասին, կը դառնայ, քառանկիւնածուին կեդրոնը գտնուող, ուրիշ աներեւոյթ կէտի մը վրայ : Այս շարժումներուն վրայ չեմ ծանրանար, վասն զի երկնային մեքենականութիւնը քեզի բացատրած է գտնոնք արդէն :

Արդ, գտնուած մոլորակիս վրայ՝ եօթը արեւներէ միանգամայն կը լուսաւորուէի և կը տաքնայի, նախ՝ երեւոյթով մեծազոյն և աւելի բորբեալ արեւը աւելի կը լուսաւորէր քան միւս վիցը, վասն զի մօտաւորագոյնն էր ինձ, երկրորդ մը՝ շատ աւելի մեծ և նոյնքան փայլուն, երրորդ մը՝ միջակ մեծութեամբ և վերջապէս երկու պզտիկ երկուորեակ արեւներ էին որոնք կը լուսաւորէին այդ մոլորակը : Այս այլ և այլ արեւներն երբէք միանգամայն չէին երեւնար հորիզոնին վրայ, ցերեկուան և գիշերուան արեւներ կային. ըսել է թէ այդ մոլորակին վրայ ճշդիւ գիշեր չկար :

Խնդիր . — Բարէ . . . ուրեմն երկնից մէջ այդպիսի կրկնակ և բազմապատիկ արեւներ կան :

Լուսինն . — Խիստ շատ : Այս դրութիւնը, որմէ կը խօսիմ, Երկրիդ աստղաբաշխներուն ծանօթ է . իրենց աստեղական ցուցակաց մէջ, ասոնց նըմաններ, հաղարներով կրկնակ, բազմապատիկ և գունաւոր աստեղական դրութիւններ կը հաշուեն : Դուն ինքդ իսկ կրնաս զիտել և քննել հեռադիտակով :

Արդ, Հայկայ այս մոլորակին վրայի էակները՝

ո՛չ բուսային և ո՛չ ալ կենդանական են . անկարելի է զանննք երկրային ոչ մի դասաւորութեան մէջ կարգել , և ոչ ալ երկու մեծ պետութեանց , այսինքն Բուսականութեան և Մետաղայ մէջ դասել : Իրօք չեմ գիտեր թէ ի՛նչ բանի հետ պիտի բաղդատեմ , անոնց կերպարանքին վրայ գաղափար մը տալու համար :

Բուսարանական պարտէզներու մէջ տեսած ես հսկայածե կեռոնք :

Խնդիր .— Մասնաւորապէս կը ճանչնամ այդ բոյսը : Անոր անունը՝ տաճարներու մէջ վառուած եռածիւղ և կամ բաղմածիւղ մոմերուն նմանութենէն առնուած է :

Լուսէն .— Ճիշդ : Ուրեմն , Հայկայ Թեքային մարդկանց ձեւը՝ քիչ շատ այդ նմանութիւնը ունի , միայն թէ՛ շատ դանդաղութեամբ կը շարժին և ոտքի վրայ կը կենան տեսակ մը ծծումով , բոյսերու ոմանց տեսակ մը սրուակին նմանութեամբ :

Ասոնց ցողունին գեաին դպած մասը՝ ծովու աստղի նման պզտիկ թեթեւ ցցուածքներ ունի , որոնք կը հաստատուին հողին վրայ ծծումով պարապութիւն մը գոյացնելով : Այս էակները շատ անգամ խմրովին կը փոխադրուին եղանակին համեմատ , այլևայլ լայնութեան աստիճանաց վրայ :

Բայց ահա ասոնց կաղմակերպութեան ամենէն հետաքրքրաշարժ կէտը , որ կը հաստատէ այն սկզբունքը՝ ի մասին մարդկային մարմնոյն մէջը հաւաքուած սարսական հոգիներու գոյութեան զորմէ խօսեցայ քիչ առաջ :

Օր մը այդ աշխարհն այցելեցի և Հայիեան

գեղանկարի մը մէջ գտնուեցայ : Հոն էակ մը կար տասը մէդր բարձրութեամբ , տունկի նման , անտերեւ և անծաղիկ , իսկապէս գլանածե ցողունէ մը ձեւացած , որուն գագաթը բա՛ղմաթիւ ջահի նման թեւեր ունէր : Յօղունին՝ ինչպէս թեւերուն տրամագիծը , մէկերրորդ մէդրի հաստութիւն ունէր : Յօղունին վերնագագաթը՝ ինչպէս նաեւ թեւերուն ծայրերը , արծաթափայլ ծոպերով թագանման յարդարուած էին :

Յանկարծ տեսայ որ այդ էակը թեւերը շարժեց և ճօճեց . ու ահա՛ , նուազեցաւ և անհետացա՛ւ . . . :

Յիրաւի , այդ աշխարհին մէջ , շատ անգամ քաջաւորջ անձնաւորութիւններ , բառին բուն նշանակութեամբ , ամբողջովին կը կործանին . զանի կազմող մասնիկները՝ ամենքն ալ դեախին կիշնան . անհատը անձնապէս գոյութիւն ունենալէ կը դադրի , մասնիկները կը զատուին և կը ցրուին :

Խնդիր .— Այդպէս ուրեմն կ'անջատուին , կը քայքայուին և դպրոցականներու նման փախո՛ւստ կուտան :

Լուսէն .— Գրեթէ ճիշդ այդպէս : Կը յիշեմ թէ , մարմնոյ այդ քայքայումը՝ կեանքի մէջ շատ անգամ տեղի կ'ունենայ : Երբեմն սրտնեղութեան , երբեմն խոնջէնքի , երբեմն ալ գործարանական մասնիկներուն անհամաձայնութեան հետեւանք է սո՛ւ Անհատը ամբողջովին կայ , ինչպէս զու ներկայիս . յետոյ յանկարծակի յետին մասնիկներու կը վերածուի : Ուղեղին մասնիկը՝ որ անհատին իսկութիւնն էր կազմէ , իր միւս ընկերներուն անկումին հետեւանքով , ինքն ալ կիջնէ մարմնոյն անդամոց վրայէն , միայնակ և անկախ , կը հասնի մինչեւ գեախնը :

Խնդիր .— Այս կերպ աներեւութացում մը՝ երբեմն Երկիս վրայ, շատ հաճելի պիտի ըլլար տագնապալից կացութենէ մը ձողոպրելու համար. օրինակի համար, Մօլիէրական անյարմար ամուսնասկան տեսարանի մը, կամ թէ Ռապլէի անախորժ քառորդ ժամունց պէս, և կամ կառավանատին վերայէն խուսափելու նման պարագաներու մէջ, Բաւական է որ մարդս՝ զինքը կազմող մասնիկները չբռնէ և չը պահէ . . . այն ժամանակ «ինք քառորդ» կրնայ ըսել:

Լուսկն .— Գործը կատակարանութեան մի՛ տանիր, և ես կը հաստատեմ թէ՛ այդ իրականութիւնը անժխտելի է: Ինչպէս Հայկայ մօլորակին վերայ, նոյնպէս նաեւ կարելի էր Երկրիդ վրայ գոյութիւն ունենար, եթէ արապետութեան սկզբբունքը ձեր մէջը սաստկապէս չիշխէր, սակայն, դարձեալ կ'ըսեմ, այդ բանը տարրականապէս գոյութիւն ունի: Ձեր մարմինը կենսակիր մասնիկներէ կը բաղկանայ: Ինչպէս ըսաւ յարգելի բնախօսներէն մին, ձեր ողնաշարի ծուծը՝ անկախ և միանգամայն ղեկավարեալ սեղգազիժ կեղրոններու շարք մըն է: Ձեր արիւնը, ձեր միտը և ձեր սեղանները կազմող իսկական մասնիկները մի և նոյն պարագային մէջն են. մէկ մէկ առանձնաշնորհեալ զաւառներ են, բայց բարձրագոյն իշխանութեան մը հնազանդող: Այս բարձրագոյն իշխանութեան գործելը՝ մարդկային կեանքին պայմանն է, պայման մը՝ որ աւելի տարամերժ է ստորնագոյն կենդանեաց մէջ: Օրինակի համար երկրմայրի (սօլուճան) մը՝ մէն մի օդակին մէջ կատարեալ որդ

մը կայ, այնպէս որ մէկ երկրմայր մը համանման էակներու շարք մը կը ներկայացնէ: Ծշմարտապէս կենսական համագործակցութիւն մը կատարող ընկերակցութիւն մըն է: Եթէ զանի օդակ օդակ կարտես՝ որդը այնքան անկախ անհատներ կը կազմէ: Երկրակին մէջ զլուսը ամենակարեւորն է, քան միւս մասերը, և բոյսերու պէս կարողութիւն ունի բուսցնելու իրմէ անջատեալ մարմինը: Տըզրուկը նմանապէս, իրարու կ'պած անհատներէ ձեւացած է. կարէ՛ զանի հինգ հինգ օդակ, այնքան ազրուկ կ'ունենաս: Ինչպէս որ ծառի մը ճիւղը կը բուսնի, այնպէս ալ խեղդեալին միտը, և մողեսին պոչը կը վերակազմուի:

Էապէս բոլոր ողնաշարաւոր կենդանիները (օրինակի համար մարդս) իրենց ծառանման դիրքին մէջ (ողնաշարի ծուծին և անոր վերի ծայրին՝ ուղեղին մէջ տարածուած) իրարու կից ջլպլին կեդրոններու հատուածներ են, որոնց ամեն մէկուն տարրական հոգի մը շնորհուած է:

Երկրիս վրայ գործող իշխանութեան օրէնքը՝ կենդանական շարքին մէջ, հզօրագոյն ազդեցութիւն մը հաստատած է: Դուք բազում էակներու համախմբում մըն էք. ձեր անձնական Հօգուոյն կազմակերպիչ ձգողութիւնը և իբր կեղրոն ձեր էակին, սաղմային վիճակէն սկսեալ, ձեր մարմինը ձեւացուցած և ժողոված է անոր շուրջը. մանրաշխարհային ամբողջական աշխարհ մը՝ որոնք դեռ իրենց անձնականութեան ձանաչումը չունին:

Խնդիր .— Հայկայ մօլորակին վրայ ուրեմն, բնութիւնը բացարձակ հանրապետութեան վիճակի մէջ է:

Լուսին. — Հանրապետութիւն մը, որուն Օրէնքը կ'իշխէ,

Խնդիր. — Բայց, երբ էակ մը այսպէս կը քայլ-քայլուի, ինչպէ՞ս կրնայ վերստին կոտորելապէս վերակազմուիլ:

Լուսին. — Կամքովը, և շատ անգամ առանց փոքր ինչ ճիգ մը ընելու, և ներքին զաղտնի փափագով մը: Մարմնեղէն մասնիկները՝ թէպէտեւ անջատուած են ուղեղին մասնիկներէն, այսուամենայնիւ միշտ սերտիւ կապուած են անոնց, ի դէպ մահու կը հաւաքուին և ամեն մէկն իր տեղը կը բռնէ: Կառավարող մասնիկը հեռուէն իրեն կը ձգէ միւսները, ինչպէս մագնիսը՝ երկաթի խարտուքը:

Խնդիր. — Սիրով կը փափագէի տեսնել այդ լիլիփուտական բանակին՝ ի մի ձայն սուլիչի՝ դէպի իր կեզրոնը սեղմուիլը և այդ պզտիկ զինուորներուն հաւաքումը՝ որոնք թեթեւաշարժութեամբ իրարու վրայ մագլցելով, ակնթարթի մը մէջ, կը վերակազմեն նկարագրած մոմամարդը: Ճշմարտիւ մարդս անհրաժեշտ Երկրէս հեռանալու է որպէս զի այսպիսի նորութիւններ կարենայ տեսնել:

Լուսին. — Դարձեալ կը տեսնեմ որ, տիեզերական բնութիւնը՝ քու աչքիդ տեսած մասնիկին վրայէն կը դատես, և քու դիտողութեանցդ շրջանակին մէջ եղածը միայն հասկնալու կարողութիւնն ունիս: Բայց դարձեալ կը կրկնեմ, Երկրիդ սիեզերքի սիպարը չի:

Հայկ համաստեղութեան այս Թեքա աշխարհը թաւալող իր 7 Արեւներովը քեզի նկարագրած կազմակերպութեանս համանման դրութեամբ օժտուած

բնակչութիւն մը ունի: Հոն ապրած եմ 2400 տարի առաջ և ինքզինքս կը տեսնեմ հոն հիմայ, վասն զի լուսոյ ճառագայթը այդ կէտէն մինչեւ Գափիլլա հասնելու համար, այդքան ժամանակի պէտք ունի: Հոն ճանչցած եմ այն Հոգին՝ որ ներկայ դարուս մէջ, Երկրիդ վրայ մարմնացաւ և շատ մը ուսումնասիրութիւններ հրատարակեց, Ալան Բարսէֆ ծածկանունին տակ: Մեր երկրային կենակցութեան ժամանակ, չէինք յիշեր թէ նախապէս իրարու ծանօթ էինք, բայց սակայն, երբեմն մոտաձութեանց մերձեցումով, իրարու ձրգուելինս կը զգայինք: Հիմա որ ինքն ալ ինծի պէս, հոգեկան աշխարհը վերադարձած է, կը յիշէ Հայկայ եզական հանրապետութիւնը և կրնայ զանի տեսնել:

Այո՛, արդարեւ շատ եզական բայց սակայն իրական: Ձեր խղճալի մոլորակին վրայ, ամենեւին զաղափար չունիք, աներեւակայելի պէսպիսութեանց վրայ, որոնք կը զատեն զձեզ միւս աշխարհներէն որքան իրենց երկրորանութեամբը, նոյնքան իրենց կազմական բնախօսութեամբ: Այս խօսակցութիւնները կրնան ծառայել, քու ծանօթութիւններդ լուսարանելու՝ ընդհանուր էութեանց վրայ և շատ կարեւոր են տիեզերաց վիճակը լաւ ըմբռնելու բամար:

Այս խօսակցութիւններս նախ այն գլխական մասնաւոր ծառայութիւնն ունին որ՝ անգամ մըն ալ կը սովորեցնեն թէ տիեզերական պատմութեան փոխանցումին միակ ատակ միջոցը լոյսն է: Մենք հոս տեսողական այն զօրաւոր կարողութիւնը կը

վայելենք, որով կարող ենք հեռուոր աշխարհաց մակերեսը դիտել և որոշել: Մեր «Հոգեպատեանին» աչքը՝ մարմնոյ աչքին նմանը չէ: Երկրային աչքին մէջ ճառագայթները կը շեղին, այնպէս որ, պզտիկ առարկայ մը երբ աչքին մօտը գտնուի, երկու ճառագայթից բացուածքը կը լեցնէ, մինչդեռ աւելի հեռուն, աւելի մեծ առարկայ մը պէտք է, հեռաւորութեան համեմատ, նոյն ճառագայթից աւելի մեծ բացուածքը լեցնելու համար: Ընդհակառակը մեր աչքին մէջ՝ տեսողական ճառագայթները՝ զուգահեռաբար կը թափանցեն, այնպէս որ ամեն առարկայ, իրական համեմատութեան և բուն մեծութեանը մէջ կը տեսնենք, առանց, հեռաւորութեան մէջ, անոնց երեւցած մեծութեան վերայ ազդելու: Կան մեծ առարկաներ, զորս ամբողջովին չէք տեսներ, այլ միայն մասնակի, մեզի յատուկ ցանցենիին համեմատութեամբ և այդ մասերը հաւասարապէս լուսաւորեալ կերեւին մեզի ամեն հեռաւորութեան մէջ, (երբ մթնոլորտ չկայ՝ այդ հեռաւորութիւնը քողարկելու) և երկնային մարմնոյ մը վրայ գտնուած ծառ մը, ըլլա՛յ ան այնքան հեռու՝ ինչպէս Հայկայ Թէքէն մինչեւ Պափիլլա, միշտ կատարելապէս տեսանելի է մեզ:

Երկրորդ՝ լուսոյ յաջորդական փոխանցման օրինօք, բոլոր բնութեան զէպքերը և պատահարները, բոլոր աշխարհաց և գունտերու պատմութիւնը՝ նկարի մը պէս, տիեզերաց մէջ տարածուած են ճշմարիտ և փառահեղ կերպիւ:

Ինչպէս որ այս խօսակցութիւններս ցոյց տւելին, երկնային բազմաթիւ այլազան աշխարհներ

ճամբորդեցի: Ներկայիս ստեղծագործութիւնը ուսումնասիրելու վրայ եմ, առանց տեղ մը կանգ առնելու: Գայիք տարուան շրջանին մէջ կը յուսամ վերամրմանալ Շնիկ աստեղ դրութեան մէջ: Հոն մարդկութիւնը աւելի գեղեցիկ է քան Երկրից վրայինը: Հոն ծնանիլը՝ երկրաւորէն նուազ ծիծաղելի և աւելինուազ անասնական դրութեամբ մը կը կատարուի: Այդ աշխարհին նշանաւոր յատկութիւնը սա է թէ՛ մարդիկ կ'իմանան, կը զգան իրենց մարմնոյն մէջ կատարուած Ֆիլիքսիան և քիմիական գործողութիւնները. կազմակերպութեան մէն մի գործարանէն, կերպով մը, մէկ մէկ ջիղ կ'երկարի զէպի ուղեղը, ուր կը փոխադրեն այլևայլ զգայութիւնները, այնպէս որ՝ Հոգին կատարելապէս կը ծանօթանայ իր մարմնոյն և իշխանաբար կը կառավարէ զայն:

Աշխարհաց մէջ այլազանութիւնը անսահման է: Այսեպարանքի դրութեան մէկ մոլորակին վրայ, որ այս մասին շատ հետաքրքրաշարժ է, բոլոր բոյսերը ամիսնդի նման նիւթէ մը բաղկացած են. վասն զի բնակայծաբ և մանեղին այդ մոլորակին յօրինուածութեան մէջ տիրող տարրն է: Կենդանիները անով կը սնանին: Գրեթէ հոնտեղի բոլոր բնակչութիւնը անկիզբի է:

Ատկից ո՛չ շատ հեռուն, ուրիշ աշխարհ մը կը թաւալի՝ ուր խաւարը գրեթէ անծանօթ է, թէպէտեւ Հայկայ դրութեան պէս, ո՛չ գիշերային արեւ, ո՛չ ալ արբանեակ ունի: Լեռներու ժայռերուն տարրադիտական կազմութիւնը՝ փոսփորուաներու և Պարիթի ծծմբուաներու բազաղրու-

Թեան կը մերձենայ, որոնք ցերեկուան մէջ, արեւէն ընդունած լոյսը կ'ամբարեն և գիշերը քաղցրը ու հանդարտիկ փայլ մը կը ցոլացնեն գիշերային խաղաղ գեղանկարը լուսաւորելով: Դարձեալ հետաքրքրաշարժ ծառեր կան հոն, որոնց ծաղիկները գիշերը փոսուռայի նման կը փայլին. Այդ ծառերը շագանակէն ինչերու կը նմանին, և անոնց ձիւնափայլ ծաղիկները լուսատու են:

Փոսփորը այդ եղական աշխարհին մէջ, մեծ գեր կը խաղայ, իր մթնոլորտը շարունակ ելեքտրականացած է. կենդանիները, ինչպէս բոյսերը, լուսաւոր են. անոր մարդկութիւնն ալ միւսնոյն վիճակն ունի: Զերմութեանը շատ բարձր է, բրնակիչները մեծ պէտք մը չունին զգեստաւորուելու: Արդ երբեմն մասնաւոր կիրքերը մարմնոյն մէկ մասին լուսաւորութեամբ կ'արտայայտուին, և այս աւելի ընդլայնումն է ձեր դաշտերուն վերայ եղածին, որ ամառնային քաղցր գիշերուան ժամանակ փոսուռան լուծեամբ կը ջեռնու սիրոյ բոցերով:

Հիւսիսային գաւառաց փոսուռային, — որ Ֆրանսայի մէջ կը գտնուի — արուն թեւաւոր է, և անլոյս. իսկ ընդհակառակն էզը՝ լուսարձակ, բայց թեւազուրկ է: Իտալիոյ մէջ գտնուածները՝ երկու սեռն ալ թէ՛ թեւաւոր և թէ՛ լուսատու ըլլալու յատկութիւնը ունին: Մարդկութիւնը՝ զորմէ խօսեցայ քիչ առաջ, այս յետին տիպարին բոլոր յատկութիւնն ունի:

Երկնային բնակչութեանց մէջ՝ կան երբեմն այնպիսի կեանքի ձեւեր, որոնք նոյնութիւն մը

ցոյց կուտան երկրային կեանքի ձեւերուն:

Այսպէս, ինչպէս որ Երկրիդ վրայ, մըջիւնները որոնք իրենց եղական օդային հարսանեաց օրը, բոլոր արունները բնաջինջ կընեն և անոնց կեանքին վերջ կուտան. ինչպէս մեղուներու աշխարհին մէջ արտադրիչները անխնայաբար կը ջարդուին, ինչպէս նաեւ սարդերուն մէջ՝ արունները, եթէ փախուստ չկարենան տալ, գէշագէշ կ'ուտուին իրենց ընկերներէն. վերջապէս՝ ինչպէս որ շատ մը ձձիներ՝ երբէք իրենց որդեմնութիւնը չեն տեսներ և իրենց հաւկիթները այնպիսի տեղեր կ'ափնեն, ուր նորածինները կարենան իրենց նախնական սնունդը գտնել, նոյնպէս ալ աշխարհներ կան ուր ծերութիւնը անծանօթ է: Բոցավառ սէրերը՝ օրական ցնորային հեշտութենէ մը տարուած, և վաղորդայնի անստուգութիւնն արհամարհող բոլոր էակները կը լափեն ու կը մրկեն:

Ներգործող սեռը երբէք հարսանեաց վաղորդայնը չտեսներ. կրաւորականը, ձուածինը՝ տեսակին մշտնջենաւորումը ապահովելէն վերջ յետին քունը կը մտնէ:

Այսպիսի գունատի՝ ուր մարդիկ չեն ծերանար, գուցէ ամենէն առանձնաշնորհեալ երկիրներն են:

Աշխարհներ կան՝ ուր կենսական շարժումները ինչպէս են շնչառութիւնը, մարսողութիւնը, զործարանական շրջանները, օրը և գիշերը, եղանակները և տարիները, յետին աստիճան դանդաղ են. թէպէտեւ մարդկանց ջղային դրութիւնը շատ դարգացած և մտայնութիւնը յետին աստիճան բարգաւաճած ըլլայ: Հոն կեանքը անվերջանալի կ'ե-

րեւի, ծերութեամբ մեռնողները՝ հազար ասորին անցած կը մեռնին: Բայց ասոնք այնքան հազաւագիւտ են որ՝ ոմանք միայն այդ մարդկութեան պատմութեանը մէջ, անոր յիշատակը կրցած են պահել:

Այդ ժողովուրդներուն մէջ պատերազմը հընարուած չէ, վասն զի մէկ ցեղ մը սիայն կայ, և մէկ լեզու: Այն գործարանաւորութեանց բնական յօրինուածութիւնն ալ նշանաւոր է. հոն հիւանդութիւնները գրեթէ անծանօթ են, և բժիշկ չկայ: Ասկից կը հետեւի թէ՛ այս ուղեգային մեծ գործունէութեան համար, կեանքը, անվերջ հեռանդկար մը և ծանր բեռ մը կը թուի իրենց, այնպէս որ՝ ամեն մարդ իր կեանքին վերջ կուտայ անձնասպանութեամբ: Այս սովորութիւնը ի հին ժամանակաց մուտ գտած է հոն, և հազուադիւրս ծեւրունիները, որ վանազան պատճառաւ անձնասպան եղած չեն, բացառիկ և այլանդակ էակներ կը համարուին: Անձնասպանութիւնը ընդհանուր օրէնք է հոն:

Բայց սիրելի՛ բարեկամս, անկարելի է ինձ բացատրել տիեզերաց բոլոր շահեկան հրաշալիքները: Բաւական սեպէ՛ քօզին այսքան վերացումը, որ քեզի պիտի ներէ ծանօթացնել սիեզերաց սահաշուելի պէսպիսութիւնները, որոնք միջոցին մէջ տարածուած զրութեանց վրայի կենսակիր արտադրութեանց մէջ կը գտնուին:

Հոգիովդ ուղեկից ըլլալով այս անդրաստեղեան ճամբորդութեան՝ քանի մը ժամ հեռացար Երկրէդ:

Երբեմն այսպէս երկնային ուղիներու վրայ անանձնանալը լաւ է: Հոգին ա՛լ աւելի լաւ կըսթափի և կրնայ աւելի խորապէս թափանցել տիեզերական իրականութեան մէջ: Վերջապէս, կրցար հասկնալ թէ՛ երկրային մարդկութիւնը՝ թէ՛ բարոյապէս, թէ՛ ֆիզիքապէս, Երկրին զօրութեանազան ուժերուն արժազանցըն է: Մարդկային ուժը, հասակը, ծանրութիւնը՝ այդ ուժերէն կախում ունին: Կազմական գործողութիւնները մոլորակին վիճակէն առաջ եկած են: Եթէ ձեր կենաց ընթացքը՝ աշխատութեան և հանգստի, գործունէութեան և քնոյ ժամերու բաժնուած է, այդ ալ Երկրին թաւորման և՛ գիշերին պատճառաւ է: Լուսաւոր գունատերուն կամ շատ մը Արեւներէ յունաւորուած աշխարհներու վրայ՝ չեն քնանար: Եթէ ուտել խումել կայ՝ ան ալ մթնոլորտին տնկատար վիճակէն առաջ կուգայ:

Չուտող էակներուն մարմինը՝ ձերինին պէս յօրինուած չէ, քանի որ ո՛չ ստամոքսի և ո՛չ ալ որովայնի պէտք ունին:

Երկրային աչքը՝ տիեզերքը մասնաւոր կերպով մը ցոյց կուտայ ձեզի: Երեւակային աչքը՝ տարբեր կերպով կը տեսնայ. զգայարանքներ կան որ ձեր տեսածներէն տարբեր բաներ կը տեսնեն և բնութեան մէջ ձեր տեսածը չեն տեսներ: Ամեն աշխարհ իսկապէս այլազան էակներէ բնակեալ էր, որ երբեմն ո՛չ բուսական և ո՛չ ալ կենդանական են: Կարելի եղածին չափ՝ ամեն ձեռով, ամեն մեծօւ թեամբ և ծանրութեամբ և ամեն գոյնով և ամեն զգացողութեամբ և ամեն նկարագրի տէր

մարդիկ կան : Տիեզերքը՝ անհունութիւն մըն է : Մեր երկրային գոյութիւնը՝ անհունին մէկ փուլն է . անսպառ պէսպիսութիւնը՝ յաւիտենական Տիւրոջ հրաշալի դաշար կը դարդարէ :

Գիտութեան դերը՝ երկրային զգայարանաց կարողութեան ըմբռնածը միայն ուսումնասիրել է : Փիլիսոփայութեան դերն ալ՝ սեղմ ծանօթութիւնները համադրել , սահմանել և մտածութեան սահմանին մէջ զանոնք ընդլայնել է :

Երկրացի սիրելի բարեկամս , ա՛լ հիմայ գիտես թէ՛ ի՛նչ է Երկիրը տիեզերաց մէջ . զիտես նաև թէ՛ տարրականապէս ի՛նչ է Երկինքը . դարձեալ զիտես թէ՛ ի՛նչ է կեանքը . . . և ի՛նչ է մահը . . . :

Ան՝ փոքրիկ մը եւս , և կը ծագի արշալոյսը՝ որ Հոգիները կը փախցնէ , և մեր խօսակցութեան ալ վերջ պիտի տայ , ինչպէս որ Արուսեակի ցոյքը , ի տես Արեգական կը նուագի :

Բայց կը փափագիմ նախապէս յայտնած տեսութեանցս վրայ աւելցնել շատ յանկուցիչ տեսութիւն մըն ալ որ նախկիններէն կը բղխի : Սա է թէ՛ եթէ Երկրէդ մեկնիս կայծակի մը ճայթած պահուն և ճամբորդես մէկ ժամ և կամ աւելի , լոյսին արագութեամբը , պիտի տեսնես այդ ճայթող կայծակը որքան երկար ժամանակ որ դիտես : Այս իրողութիւնը նախապէս ըսուած սկզբունքներով հաստատուած է : Բայց եթէ փոխանակ ճիշդ լուսոյ արագութեամբ հեռանալու , փոքր ինչ նուազ վազքով ընթանաս , տես թէ՛ ի՛նչ պիտի ներկայանայ քու տեսողութեանդ : Հիմայ ենթադրէ թէ ,

Երկրէդ մեկնելով . այդ ճամբորդութիւնդ միայն մեկ վայրկեան տեսէ , եւթադրէ՛ դարձեալ թէ՛ կայծակին ճայթման տեսողութիւնը ըլլայ մեկ հազարերորդ մանրեկերորդ , որով այդ ճայթման պահը 60,000 անգամ պիտի տեսնես այդ մէկ վայրկեանիդ մէջ :

Առաջին ենթադրութեանս մէջ՝ ճամբորդութիւնը լուսոյ արագութեան հաւասար էր , լոյսը , 60,000 ասաներորդ մանրեկերորդ դրած էր , Երկրէն՝ միջոցին մէջ քու գտնուած տեղդ հասնելու համար , և քու ճամբորդութիւնդ և անորը միևնոյն ժամանակ գոյութիւն ունէին :

Սրբ , եթէ փոխանակ ճիշդ լուսոյ պէս թռչելու , աւելի նուազ թռիչք առած ըլլաս , օրինակի համար մէկ հազարերորդ մանրեկերորդ աւելի դրած ըլլաս , այն ժամանակ փոխանակ շարունակ ճայթման պահուն ունեցած կայծակի միեւնոյն շարժումը տեսնելու , յաջորդաբար պիտի տեսնես անոր ճայթման ; մէկ հազարերորդ մանրեկերորդի միջոցին ունեցած այլ և այլ փուլերը : Ուրեմն , ամբողջ մէկ վայրկեանի մէջ , ժամանակ պիտի ունենաս տեսնելու նախորդ սկզբնաւորութիւնը , ընդլայնումը և վերլուծելու անոր այլ և այլ փուլերը մինչեւ վերջը : Վերահասու եղի՛ր անգամ մը թէ՛ ի՛նչ օտարոտի գիւտեր պիտի կարենաս ընել այդ 60,000 անգամ ընդլայնուած ժամանակի մէջ : Անոր բոցերուն մէջ ի՛նչ սոսկալի ճակատամարտ մը դիտած պիտի ըլլաս . ի՛նչ համատեսարան մը , ի՛նչ աղիտաբեր կիզում մը մասնիկներու , մահկանացուներու անկատար աչաց վաղանցուկ գաղտնաշխարհ մը :

Եթէ կարող ըլլայիր, մտքովդ դատել և համ-
րել մարդուս մարմինը կազմող հիւլէները, այդ
մարմինը աչքիդ առջեւէն բոլորովին անյայտ կըլ-
լար, վասնզի միլիառ ու միլիառ մասնիկներ շարժ-
ման մէջ են հոն. վերլուծող աչքի մը համար՝ ձը-
գողական սեփերով ոգեւորուած, կատարեալ մի-
զամած մը կը ներկայանայ :

Միթէ Սվէտէնպօրկ(*) չէ՞ր երեւակայած թէ՞
տիեզերքը, իր ամբողջութիւնը, մեծահասակ ա-
հագին մարդու մը ձեւին կը նմանի: Բայց սակայն
արդէն ամէն բան իրարու կը նմանի: Ինչ որ ա-
պահովապէս գիտենք, սա է թէ՞ իրերը իրենց ե-
րեւցածին պէս չեն. ո՛չ միջոցին մէջ և ո՛չ ալ
ժամանակին: — Բայց մենք վերադառնանք դան-
դաղած փայլակին:

Երբ լուսոյ արագութեամբ ճամբորդես միշտ
և շարունակաբար՝ ճամբայ ելած ժամանակինիդ
պատկերը կը տեսնես. եթէ նոյն իսկ նոյն արա-
գութեամբ՝ տարի մը տարուած ըլլաս, ամբողջ տա-
րի մը նոյն դիրքը աչքիդ առջեւ կ'ըլլայ: Բայց
եթէ աւելի լաւ տեսնելու համար այդ դէպքերը,
որոնք կարճատեւ են, օրինակի համար, լերան մը
փլուզումը, ձիւնակոյտի մը անկումը, երկրաշարժ
մը, այնպէս մը կը մեկնիս, որ կարենաս սկզբնա-
ւորութիւնը տեսնել, և գնացքդ՝ լուսոյ արագու-
թեանէն փոքր ինչ դանդաղեցնելով, ո՛չ թէ շարու-
նակ անոր սկզբնաւորութիւնը կը տեսնես, այլ ա-
նոր յետագայ պահը, յետոյ երրորդ պահը, և այս-
պէս հետզհետէ, այնպէս որ՝ մէկ ժամուան մէջ,
դէպքին մինչեւ վերջին փուլը տեսած կ'ըլլաս.

(*) Շուէսցի լուսակօմ մը (1688-1772)

մինչդեռ դէպքը թէպէտեւ քանի մը մանրերկրորդ
տեւած ըլլայ, այն ատեն կը տեսնես ժայռերուն
օղին մէջ կախուելը, այսպէսով դէպքին գործեա-
կերպը, և անոր դանդաղած մանրամասնութիւն-
ները:

Կը տեսնեմ որ մտքիդ մէջ այս գործողութիւ-
նը, մանրադիտակի մը գործողութեան հետ կը
բաղդատես, որ ժամանակը կը մեծցնէ և կ'ընդ-
լայնէ: Ճիշդ այդպէս է: Մենք ալ՝ ժամանակը
այդպէս մեծցած կը տեսնենք: Բայց այդ գործո-
ղութեան համար մանրադիտակ յորջորջումը յար-
մար չէ, աւելի լաւ է ժամանակ-հեռադիտակ
կոչել:

Այս միջոցով, իշխանութեան մը տեւողու-
թիւնն ալ կրնայ նրկարիլ ըստ կամաց: Օրինակի
համար Նաբօլէոն Բ. որ միտայն երեք ժամ իշխա-
նութիւն ունեցաւ, կրնանք զինքը յաջորդաբար
տասներինգ տարի թագաւորած տեսնել. ցրտելով
180 վայրկեանները՝ (3 ժամը՝ 180 վայրկեան,) 180
ամիսներու վրայ, լոյսի արագութենէն նուազ գը-
նացքով ընթանալով, այնպէս որ՝ Երեսիոթա-
նական ժողովէն Նաբօլէոն Բ. ի հռչակումի վայր-
կեանէն սկսեալ, մինչեւ տասներինգ տարուան մէջ
միայն հասնինք անոր շինծու թագաւորութեան
վերջին վայրկեանին, ամեն մէկ վայրկեանը մէկ
ամսոյ տեւողութեան և մանրերկրորդները տասն և
երկու ժամուան մէջ տեսնելով:

Այս խօսակցութեան հետեւութիւնը, սիրելի՛
բարեկամս, խնդրոյն սկզբունքին վրայ կը կայա-

նայ: Ուղեցի քեզի սորվեցնել թէ, միջոցին մէջ, լուսոյ յաջորդաբար փոխանցման բնանան օրեկեր, յաւիտեական կենաց պայմանին հիմնական սարքն է: Այս օրինօք՝ ամեն դէպք և պատահարք, անկորնչելի են և անցեալը միշտ ներկայ է: Երկրին 6000 տարի առաջուան պատկերը արդիապէս ներկայ է միջոցին մէջ, այն կէտին վրայ, ուր 6060 տարուան մէջ, լուսոյ ճառագայթը կը հասնի: Այն աշխարհները որոնք այդ հեռաւորութեան մէջ կը գտնուին, այն ժամանակներուն Երկիրը կը տեսնեն: Մենք ուղղակի, մեր սեփական կեանքը և մեր այլ և այլ նախնական կենցաղները կը տեսնենք, այս բանիս համար բուական է որ՝ այդ մեր նախապէս բնական աշխարհէն յարմար հեռաւորութեան մը մէջ գտնուինք: Աստղեր կան, զորս կը տեսնէք Երկրէդ՝ որոնք արդէն իսկ չկան, վասնզի իրենց լուսաւոր ճառագայթին վերջին ցոլումէն յետոյ, մարած են և սակայն այժմ միայն կը հասնին ձեզի: Ինչպէս որ հեռաւոր մարդու մը ձայնը կը լսես, երբ լսած ժամանակդ՝ այդ մարդը արդէն իսկ, վերջին բառին արտասանելէն յետոյ անմիջապէս մեռած ըլլայ:

Երջանիկ եմ, որ ներուեցաւ ինձ այս ամենքը քեզի պատմելու և գոյութեանց պէսպիսութիւնը նկարագրելու, և Երկիրդ անձամբ, ապրող կակաց ձեւերուն կարելիութեանը վրայ հառելու: Այս մասին Ուրանիի(*) յայտնութիւնները շատ աւելի

(*) Հեղինակը ակնարկութիւն կ'ընէ մեծ հեռագիտակիւն օր Ուրանի անունը ունի. սակայն այս անուանակ հրատարակութիւն մըն ալ ունի, ուր տեղեկաց տեղեկութիւն կը պատմէ:

մեծ և խորին են քան ուրիշ նմաններունը: Տիեզերաց մեջ Երկիրը հիւլի մըն է:

Հոս կանգ կառնեմ լուսոյ օրինաց այսքան բազմաթիւ և այլազան պատշաճեցումը քեզի անձանօթ էր: Երկրիդ վրայ, Պղատոնի իրաւամբ յորջորջած այդ մթագին այրիդ մէջ, տիեզերաց ընդարձակութեան տիրապետող հսկայական ուժերուն անգիտակ կ'ապրիք: Օր մը պիտի գայ ուր գիտութիւնը՝ լուսոյ մէջ պիտի գտնէ ամեն շարժման նախատարրն և իրաց ներքին բուն պատճառը: Արդէն քանի մը տարի է որ, սուերապակեային վերլուծումը ձեզ ծանօթացուց Արեւուն և կամ աստղի մը, կլուսոյ մէկ ճառագայթին վերլուծումովը, անոնց մէջ գտնուած նիւթերուն տեսակը. արդէն իսկ միլիոնաւոր, եռամիլիոնաւոր մղոն հեռաւորութեան մէջ եղող երկնային մարմնոյ մը, որուն լոյսը ձեզի կուգայ, կազմուածքին նիւթերը կարող էք որոշել: Լուսոյ ուսումնասիրութիւնը, զձեզ կը պատրաստէ փորձառական գիտութեան և տիեզերական փրիլիփայութեան պատշաճեցուցման մէջ, հրաշալի և մեծ արդիւնքներ ձեռք բերելու:

Բայց երկրային միջնորդաին բեկեկումը՝ զէնիթէն վեր բարձրացուց հեռաւոր արեւուն լոյսը:

Լուսոյ թրթուումը կ'արգելէ զիս աւելի երկար ժամանակ քեզի հետ խօսելու. . . մնաս բարեա՛ւ յարգելի՛ բարեկամ, մնաս բարեա՛ւ, կամ աւելի լաւ ցանտութիւն:

Մեծագոյն դէպքեր պիտի կատարուին ձեր

չուրջը : Գուցէ փոթորիկէն(*) վերջը՝ ի նշան ներկայութեանս, վերջին անգամ մըն ալ գամ, ցոյց տալու համար թէ՛ զքեզ չեմ մոռցած :

Յետոյ, երբ այս ստորին մուտրակին վրայ ապրելէ գաղբիս, այն ատեն պիտի գամ քեզ ընդառաջ և միասին պիտի կազմենք իրական ճամբորդութիւն մը՝ անհունութեան անձառելի պայծառութեան մէջ : Քու երեւակայութեանդ ամենէն յանդուգն խոկումներուդ մէջ անգամ, չես կրնար նոյնիսկ մտաւորապէս գաղափար մը կազմել, այդ ապշեցուցիչ, շահեկան և աներեւակայելի սքանչելիքներուն վրայ, որոնք քեզի կըսպասեն :

ՎԵՐՋ ՀԻՆԳԵՐՈՐԻ ԴՐՈՒԱԳԻՆ



(*) Ծ. Թ. Նախագագուժով մը, հեղինակը կ'ակնարկէ 1870ի Ֆրանգո-Ֆրսսական պատերազմին :


ԴՐՈՒԱԳՆԵՐ ԱՆՇՈՒՆԷՆ



ԳԻՍԱԿՈՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ՅԱՌԱՋԱԲՈՂՆ ՆԵՂԻՆԱԿԻՆ



Հետեւեալ պատմութիւնը երեւակայութեան ընդարձակ դաշտէն յանկարծ բուսած և լս'կ քմածին վիպասանութիւն մը չէ, այլ ընդհակառակն, դրական ուսումնանորութեան վրայ հիմնուած և գիտական գեանի վրայ ծնած է պարզապէս :

Այն գիտաւոր աստղը, զոր հիմայ ի բեմ պիտի հանենք, և որ մեզի պիտի մատակարարէ մեր պատմութեան հարկաւոր տարերքը, առասպել մը չէ. ան կայ և էութիւն մըն է զոր միլիոնաւոր անձինք դիտեցին և որուն փայլիլը տեսն իրենց գլխուն վերեւը, ինչպէս որ ընթերցողները հաստատապէս պիտի համոզուին այս պատմութեանս վերջաւորութեանը հետ :


Անոր նախնական երեւմանց թուականները երեւակայական և ըստ քմաց նշանակուած չեն պատմութեանս մէջ, այլ հաշուուած և ճշդուած աստղաբաշխական տարրերով, որոնք արժանացան ողջախոհ անձերու վստահութեան. այդ տարրերը ծանօթ են բոլոր աստղաբաշխներուն և եթէ փոքր սխալմունք ևս կան՝ անոնք ալ ապահովապէս հազիւ մէկ առ հարիւր համեմատութեամբ են :

Նոյնպէս մեր յանդուգն ուղիւորին այցելած վայրերուն վիճակը՝ առանց բանաւորութեան յիշուած չէ, այլ ընդհակառակն, ուղղակի դիտողութեանց և անոնց հետեւանաց արդիւնքն է:

Բոյոր նկարագրուած երբեւեոյթներէն և ոչ մին — նոյն իսկ ամենաչնչին պարագաները — թեթեւամտութեան հնարք և շինծու յերկրանք չեն. եղած փոխադարձ խօսակցութիւնք՝ խառնիխուռն բառերու կուտակումներ չեն, այլ միմիայն ճշմարտութեան հաւատարիմ արտայայտութիւնք են:

Ահա՛ ասոնք են հաստատուն թելերը մեր սուտայնին զորս ուղեցինք հիւսել ի գիտաւորութիւն մեր ընթերցողներուն:

ԳԱՄԻՆ ԳԼԱՄՄԱՐԻՈՆ



ԳԻՍԱԽՈՐ ԱՍՏՂԻ ՄԸ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՊՍՏՍՈՒԹԻՒՆԸ (*)

Ա.

Գիսաւորը առաջին անգամ կը նշարէ Երկրին գոյուրիւնը

Քրիստոսէ վեցհարիւր տասնըմէկ հազար հարիւր ութսունը ինը (611·189) տարի առաջ մեծ գիսաւոր աստղ մը զոր Երեւակ մուրակին բնակիչները 140·000 տարիէ ի վեր կը գիտէին և կ'ուսումնասիրէին. իր ընթացից մէջ առաջին անգամ ըլլալով, Արեւուն մօտերը, Երեւակէն 800 անգամ պզտիկ, մուրակատիպ ամենափոքրիկ գունաւ մը նշմարեց և տեսաւ որ այդ խեղճուկ գնտիկը, թանձր շոգիով մը շրջապատուած, երկրաբանական և օդաբանական ամենասոսկալի տակնուլրայութեանց ենթարկուած և մարդկային ցեղին բնակութեանը անբաւական վիճակի մէջ, ինքն իր վրայ անճարակօրէն կը թաւալէր:

Այդ մեծ գիսաւոր աստղին գէսը ժամանակ մը 80,000,000 մղոն (մէկ մղոնը 4 քիլօմէդր) երկայնութենէ նուազ չէր, չթանձրացած միջուկը 10 հազար մղոն շրջապատ ունէր և զինքը պարփա-

(*) Գրեալ 1869

կող ճառագայթարձակ հերածեւ միջալայրին ծաւալն ալ՝ 90.000 մզոն հաստութիւն օւնէր: Իսկ հիմայ արդի ունեցած չափերը նախկիններու կէս համեմատութեամբը մնացած են միայն:

Այս փառահեղ գիտաւորը, որ մինչեւ այն ժամանակ մի միայն և յառկապէս Լուսնի մաս, Երեւակ, Ուրանոս և Նեպտոն են, են, մոյրակայ տեսութեանը վարժուած և անոնցմով զբաղած և երկնից միւս ազնուական դասակարգի մարմնոց հետ շփման մէջ կը գտնուէր, այս անգամ սա մեծ նախնեղձուկ գունտին տեսութենէն կարծես անախորժ և անհաճոյ վերաբերմամբ մը զարմացման ենթարկուեցաւ:

Ան բնութեան անհուն կարողութեանը խելամուտ ըլլալով հանդերձ, դարձեալ չէր կրնար ըմբռնել թէ՛ այսքան լիւրիւտական աստղեր կըրնան գոյութիւն ունենալ, ուստի կրկին և կրկին ակնասլիշ դիտեց և նորէն չուզեց հաստատ իր աչաց տեսութեանը, մինչեւ որ համոզուեցաւ թէ իր տեսածը պարզ աչքի պատրանք և կրկնակերպութ մը չէր, զիջաւ յայնժամ ընդունելու թէ՛ տեսածը իսկական, ճշմարիտ և կատարեալ իրականութիւն մըն էր. բայց այսպիսի խեղճուկ վիճակի մէջ եղած էակի մը գոյութեանը հետ բազդատմամբ, իր մեծութեան վրայ հպարտացած փառահեղ գէտովը զարդարուած, արհամարհանօք զլուսը դարձուց և անցաւ այդ ողորմելի գունտին քովէն և, ամբարտաւանութեամբ մը ցցունաւոր բաշը բարձրացուց և յետո շրջելով՝ վերադարձաւ դէպի միջոցի անապատը, հպարտութեամբ շարունակելու իր սքան-

չելի թռիչքը երկնից անսահմանելի անհունութեան մէջ:

Աւա՛ղ . . . ահա ա՛յսպէս կանցնին շատ անգամ մեծամեծք՝ պղտիկներուն, և զօրաւորք՝ արկարաց քովէն, արհամարհանքով մը չեն ուզեր զնահատել խոնարհներու արժէքը, անմտաբար ստնակոխ ընելով Արգարութիւնը, իրր թէ այն արարածները՝ որոնք թերութիւն մը ունին, միեւնոյն քնութեան և միեւնոյն տիեզերական ընտանեաց զաւակները չըլլային:

Բայց սակայն ճշմարտութիւնը խօսելու համար, իրականապէս մեր բնական աշխարհն ալ շատ փոքրիկ գունտ մըն է. պէտք չէ պատրանք ունենանք անոր կարեւորութեանը վրայ: Մեր երկրասիրական զգացումը ս՛րքան ալ բնական ըլլայ, որ կը մեծցնէ անոր արժէքը մեր աչաց, բայց միջոցին մէջ թաւալող ուղեւորը՝ որ առաջին անգամ կը տեսնէ զայն, չը կրնար երեւակայել թէ, ի՞նչպէս կ'ըլլայ որ այնքան մեծ կարեւորութիւն կուտանք մենք անոր:

Այս գիտաւորը՝ որ մեր արեգակնային զրութեան ամենէն զեղեցիկ գիտաւորներէն մին է, եթէ ոչ ամենափառաւորը, երբէք Արեւուն մեղմէ ունեցած հեռաւորութենէն, որ 36,00,0000 մզոն է, աւելի չը մերձենար անոր: — Միջոցին մէջ անոր շրջադիժը երկայն թերաս մըն է. երբ իր ընթացքին մէջ կը հասնի մեր բնական երկրին միջավայրին՝ կիսաշրջանակ մը ձեւացնելով, արագութեամբ և աճապարանօք ետ կը դառնայ, ընթանալով վայրկեանը մէկ միլիոն մզոն արագու-

թեամբ և բոլոր միւս աշխարհաց շրջագիծերը կըտրելով կը հասնի մոլորակային թագաւորութեան վերին սահմանները, հոն՝ իրր թէ կարօտցած ըլլար ճառագայթարձակ լուսաճաճանչ արեւուն, քանի՛ կը հեռանայ անկից, կը մեղմացնէ իր թռիչքը. վերջապէս տիեզերաց ընդարձակութեան մէջ արեւէն 15,387,800,000 մղոն հեռանալով՝ իր հեռակէտին կը հասնի և այդ խաւար միջոցին մէջ իր ընթացքը կը դանդաղի այն աստիճան, որ իր արագութիւնը՝ մանրերկրորդի մէջ, միմիայն հազիւ քանի մը մէղրի կը վերածուի:

Այն ատեն իր շրջագիծը վերստին կը ծռէ և կը վերադառնայ դէպի լուսարուզիս Արեւը՝ որ այդ հեռաւորութեան մէջ պարզ, ամենափոքրիկ աստղի մը պէս կ'երևի իրեն: Մտկայն այդ ահաւոր հեռաւորութենէն, Արեւը զանի ասիւնքն կը կոչէ և ան ալ հնազանդելով անոր ձայնին, կը վերադառնայ անոր և բեւեռային բարձրութիւնէն (եղկնակամարին բեւեռէն) կը խոյանայ դէպի ծիր խաւարման մակարդակին վրայ, միշտ զգուշաբար իուստփելով իր ընթացքին մէջ Լուսնիմազի և Յրեւակի շրջագիծերու ցանցէն: Այն ատեն իր արագութիւնը հեռզհեռէ կ'աւելնայ, կ'աճի կարի յոյժ և ան՝ իրր սիրատոչոր ուն, կը դահավիժի դէպի մոլորակային ձգողութեան վառարանն եզոզ Արեւը:

Տասնըհինգ դար ճամբորդութենէ վերջ կուգայ կը հասնի իր փառաւոր մեծակէտին: Իր հըրբարորբք շոգիացեալ գէսը՝ որ Արեւէն հեռացման ժամանակ տակաւ առ տակաւ նուազելով մինչեւ

ամբողջովին անհետացած էր, այլեւս կը սկսի վերստին ծլիլ և հեռզհեռէ մեծնալ քանի՛ կը մերձենայ գունտերու կեդրոն Արեւուն: Իր զանգըլւածը կամաց կամաց կը ստանայ իր հասիկին մեծութիւնը և կը զարդարուի ճառագայթարձակ գէմքը, շողքորթ պալատականաց նման՝ որոնք հանդիսական օրերուն. թագաւորին ներկայութեան արժանանալու համար, պաճուճեալ կը զգեստաւորուին:

Ահա՛ յայնժամ գիտաւորը կը մտնայ լուսոյ թագաւորին ստացուածքի սահմանին մէջ, և հիացած աչաց առջեւ, կը տարածէ վեհափառօրէն, իր գեղեցկութեան և զարդարանքին փառաւորութիւնը:

Քրիստոսէ վեց հարիւր ութը հազար հարիւր քսանը չորս (608,124) տարի առաջ՝ այդ հրարորբք գիտաւորը վերադարձաւ իր ճամբորդութենէն և երբ մեր երկրին բնակութեան միջավայրէն կ'անցնէր, դարձեալ հետաքրքրուեցաւ այդ կանաչագոյն պղտիկ գունտին և չը կրցաւ վրիպեցնել զանի իր դիտողութենէն:

Շատ անգամ մեծ մարդիկ սիրով կը վերաբերուին պղտիկ աղայոց նկատմամբ, և թէ՛ փրցուն գործերու հետամուտ ըլլալու կը զիջանին. այնպէս ալ, մեր գիտաւորը, հաճեցաւ ուրեմն դիտել և գիտնալ թէ՛ մինչեւ ո՞ր աստիճան կենդանութեան կրցած էր բարձրանալ այդ խեղճուկ գնտիկը:

Գիտաւորին այս անգամուան վերադարձին, այնպէս պատահեցաւ որ տարւոյ մը չափ և խիստ

յարմար գիրքով մը երկրիս տեսողութեանը մէջ մնայ: Բայց որովհետեւ շրջագծին վրայ ընթացից իր ուղղութիւնը փոխանակ բոլոր մոլորակաց և արբանեկաց օւղղութեանը նման, արեւմուտեան արեւելք ըլլալու, ընդհակառակն արեւելիկն արեւմուտք յետախաղաց ուղղութիւն մը բռնէր, և այս ձախող պատահման հանդէպ, ինչպէս ամէն դժուարութեան մէջ, ստիպեալ աւելցուց իր զննութեան և հետազօտութեան ջանքերը. և տաներկու ամիսներ, որ երկրիս տեսողութեանը մէջ մընայ, գիշեր և ցերեկ ամենեւին պարապ ժամանակ չկորսնցուց: — Նախ, ինչպէս որ կը կասկածէր, գիտեց թէ այս նորընծիւղ աշխարհին մէջ այն ժամանակ իմացականութեամբ օժտուած էակներ չէին բնակիր. գիտեց նաեւ որ՝ նա ինքն իր վրայ կամկար կը թաւայէր, գիշեր և ցերեկի դարձուղարձը անոր վրայ ամենեւին ազդեցողութիւն չունէր, վասն զի անի իր ծոցէն շատ աւելի տաքութիւն կ'արտադրէր քան ինչ որ Արեւէն կըստանար:

Մշուշները, շոգիները և մութները սրոնք զինքը կը շրջապատէին, արդէն բաւական էին Արեւիկն ճառագայթներն արգիլելու: Գիտաւորը քանի՛ երկրիս գունտին կը մերձենար, այլ եւս կը ջանար ազէկ մը որոշել անոր մակերեւոյթին բնոյթը:

Դեռ այդքան աղքատաշախարհ մը տեսած չունէր, և համողելով վերջապէս, թէ մոլորակ մը այսքան խեղճուկ կրնայ եղած ըլլալ, սպասեց որ անոր մթնոլորտին վրայ ճեղքուածք մը պատահի, ուսկից արեգական ճառագայթները ներս թափան-

ցելով, յարմար կերպով լուսաւորեն երկրին տեսարանը: Ատիկա պատահեցաւ արեւադարձի մը ժամանակ, բայց արդեօք ձմեռնային, թէ ամառնային արեւադարձն էր . . . այս մասին պատմութիւնը լուս կը մնայ. մանաւանդ թէ՛ այդ հեռուոր ժամանակաց մէջ երկրիս դեռ եղանակաց բաժանում չունէր, իր բնածին ջերմութեանը պատճառաւ, ամառ ձմեռ միեւնոյն աստիճանի տաքութեան մէջ կը գտնուէր:

Բայց վերջապէս մեր մեծ գիտաւորը, յաջողեցաւ բացորոշ կերպով նշմարել երկրագունտիս մակերեւոյթը և ահա՛ յանկարծ բացագանչեց . . . «բարէ՛ «ժժմուկներու աւխարհ . . .» և յիշաւէջէր սխալած:

Ճիշդ այդ ժամանակները, երկրիս երկրորդական դարազլիտն մէջ քրիստիք խաւերը ձեւանալու վրայ էին, և կատարեալ փոքրածմային շրջանին մէջ էր:

Այս վիճակէն բանի մը միլիոն տարիներ առաջ, նախապէս հալած վիժակի մէջ եղող, երկրիս վրայ խտացմամբ ջուրերու անկումը տեղի ունեցած էր. կազերու, շոգիներու, հալած հրաբորբոք նիւթերու բաղադրութեամբ, բոցավառ մատղաշ գունտին մակերեւոյթը կը տարուբերուէր:

Մէկ ծայրէն միւսը պղուտոնական քառոր կը տիրէր, լուծելով, և վերստին բաղադրելով շարժուն նորածին աշխարհին հիմունքը, նոր յեղցեղում մը նախկինի յաջորդելով:

Այս վիթխարի գործարանին մէջ՝ բնութիւնը բնալուծական մեծ ձեւանարկներ կը կատարէր, ուս-

կից յառաջ եկած են բոցաշունչ հրաբուխներ և լաւաներու յորդումներ, եռացող ջրերու աղբիւրներ, շոգիի ցայտուքներ, և աւելի վերջը՝ հալած գունտին երեսը բարակ կեղեւ մը ձեւացաւ, ինչպէս պաղկու վրայ եղող հալած կապարին երեսը կը գոյանայ: Վերջապէս այս ուժգին շարժումները վերջ գտնելով, քիչ մը հանդարտութիւնը տիրեց:

Այս նախնակին տարերուն մէջ, բուսական և կենդանական ո՛ր և է տրարած երեւան եկած չէր: Ապա բնութիւնը, իր մէջ ամփոփուած, փոխանցութեան դարուն մէջ մտած էր, դանդաղ և փառապանծ շրջան մը՝ որուն ոչ ոք կարող է երեւակայել, ո՛չ ժամանակը, և ո՛չ ալ տեսողութիւնը,

Ահա՛ այն ատեն կատարուած են արարածոց ծնչութեան սեղընական խորհուրդները:

Երկրագունտիս դեռ չը կարծրացած երեսին կատանաց և անդադար յուզմանց միջոցին, համատարած ջրոց մէջ, առաջին բոյսերը ջրիմուռն և ծովասեզն և առաջին կենդանիք որպէս են կենդանաբոյսք և բազմոտեաները սկսած են երեւան գալ: — Ասկից վերջը նախնական ճահիճները ըսկըսան ծածկուել տեսակ մը բարակ մամուռով, որով բուսականութիւնը իր թագաւորութեան պայծառ նաւակատիքը կը կատարէր:

Նորածին երկրին առաջին տէրը, բուսականութիւնը, իր բոլոր հարստութիւնը հետզհետէ կը տարածէր, և ուրիշ ոչ մի ժամանակ տեսնուած չէ այդպիսի յորդութիւն բուսոյ տեսակներուն և տա-

րածութեան վրայ այդքան ընդհանուր տիրապետութիւն մը: Անձաղիկ և անպտուղ ամենապարզ տունկեր, որոնք ամենահաստ և տիտանական բարձրութեամբ իրենց սքանչելի ճառագայթումը կը տարածէին բոլոր խութերու և թերակղզիներու վրայ, զորս համատարած ջրերը երկրագունտին վրայ բաց թողուցած էին, իրր թէ կանաչագորգով ստիաներ ըլլային միապաղաղ տարածեալ ծովումը մէջ: Ծառացեալ հսկայական պտէրներ, կալամեղներ, կնփախպներ, խեցակերպ բոյսեր գաղսասեռ բոյսեր կը մաքառէին իրարու ձեռքէ խլել կղզիներու տիրապետութիւնը:

Այդ ժամանակէն, արդի ամխանքներու գոյութիւնը որոնք այս օր կը տաքցնեն մեզ, այն ահաղին լայնածաւալ խաւերը, որոնք ի լոյս կընծայեն վաղնջական դարերու մէջ թողուցած աւերակները:

Այդ ժամանակներէն յետոյ, երկրիս երկունքը շարունակուած և հազիւ կրնանք ըսել թէ՛ անոր ծննդարերութիւնը վերջ գտնելու վրայ էր:

Սակայն մեր գիտաւոր աստղը երկրիս մօտենալով, ժժմուկներէ զատ բան մը տեսած չէր. ամեն բարեացակամութեամբ հանդերձ, անկարելի էր ուրիշ բան մը նշմարել: Ծովը երկրիս ամբողջ մակերեւոյթը բռնած էր, ինչպէս մինչեւ հիմա ալ երեք չորրորդին կը տիրէ, ցամաք չկար: Բայց միայն կղզիներ և ճահիճներ կը տեսնուէին:

Այդ ժամանակին արարածոց մեծ իշխանը տեսակ մը սոսկավիթխար ծովային խղնջայլ (սայ-

լանկէօզ) մըն էր, կակղամորթ գլխոսեայ մը, ո՛չ այնչափ աղմկոտ և շատ անմեղաս կենդանի մը. այս անմեղ անասունը, որ չէր կրնար երեւակայել թէ օր մը զինքը Ամոնի Արամագղայ անուամբ պիտի յորջորջէին, Պոսիպոնի իշխանութեանը վրայ կը թագաւորէր:

Պղուտոնի եռաժանի մականը աշխարհիս ըստ-
ւերապատկերն է, ըսաւ Լըմիէր(*):

Ո՛չ մի անգլիացի այնքան իբաւամբ պահանջ-
կոտ չկրնար ըլլալ այդ մականը ունենալու, որքան
այդ վերոյիշեալ անասունները: Մեր արդի խեցե-
մորթներուն պէս՝ այդ կենդանիները, ջրին երեսը
մեծ, միջակ և պղտիկ ամեն մեծութեամբ, ամ-
բողջական տորմղիկներ կազմած՝ կը նաւարկէին ի
խնդիր ծովային որսերու: Երբեմն սիգաճևմ, եր-
բեմն արագընթաց կը վազվզէին ընդհատելով և խո-
տորնակի կտրելով իրարու ընթացքը, իբր թէ ու-
ղէին նաւարշաւի հանդիսական խաղեր կատարել:

Բայց այս ամենը զիտողն ո՞վ էր... եթէ ոչ
մի միայն մեր գիտաւոր աստղը. վասն զի այն ժա-
մանակները ուրիշ հանդիսատես մը չկար, որ կա-
րենար այդ հնամայ տեսարանը վայելել . . .
անապատայի՛ն միայնութի՛ւն . . . բացարձակ լռու-
թի՛ւն էր:

Միայն հեռուն կը լսուէր, ջուրերուն վրայ
Էրկնից տակ

Թիավարաց շշուկը, հարկանելով համաչափ
Ալիքները ներդաշնակ:

(*) Լըմիէր գաղղ. բաճառեղծ մքն է 1771-1793

Այս թիավարողները Ամոնիդներն էին որոնք
ազատօրէն ճամբորդելով ծովերու և ովկիանոսնե-
րու վրայ ման կուգային:

Ինչպէս վերը յիշեցինք, մեր գիտաւորը անա-
կընկալի մը առաջ գտնուած էր, տեսնելով ժրժ-
մուկներ ծովուն մէջ, ժժմուկներ ցամաքի վրայ,
ժժմուկներ ամենուրեք, այնպէս որ երկրիս ստեղ-
ծագործութեան վերջնական վիճակին համար, ա-
մեն պատահականութեան հանդէպ, կասկածանքով
կը հիւժուէր. «Մեծ, մթին և դաղանի խորհուրդ
մըն է, կ'ըսէր ինքնիրեն, որ աշխարհ մը շինուած
ըլլայ մի միայն այսպիսի արարածոց բնակութեանը
նպատակաւ». և կը հետազօտէր թէ՞ ինչ քանա-
կութեամբ ուշիմութիւն կրնար պարունակել այս
արարածոց դանկը, զոր չունէին. ինչ էր անոնց
դատողութեան աստիճանը. ինչ էր վերջապէս ա-
նոնց իմացական կարողութիւնը:

Թէպէտ երկրիս փոքրութիւնը և աննշան դիր-
քը իր աշաց առջեւ ունէր, այսուամենայնիւ մեր
ուղեւորը չէր կրնար զիջանիլ հաւատալու թէ այս
փոքրիկ ախեղերքը մասնաւորապէս ստեղծուած ըլ-
լայ կակղամորթներու բնակութեան համար:

Անոնց ամեն տեսակները ուշի ուշով քննու-
թեան ենթարկեց, սլականջներու ընկերականու-
թիւնը և կրիաներու ճարպիչութեան աստիճանը,
որոնք առաջին անգամ ըլլալով երեւան եկած էին:
Անգուլի կակղամորթները, որովայնոսները, քեւո-
սեաները, գլխոսեաները, նոյնպէս նանկոսեաները,
որոնք ո՛չ գլուխ, ո՛չ ոտք և ո՛չ ալ թիւ ունին՝
այս ամենուն մէջէն չկրցաւ գտնել մէկը՝ որ իմա-

ցականութեան սրբազան յատկութեան տէր ըլլար :

Մեր գիտաւորը, տաղտկացած այս ամուլ հե-
տադատութենէն, վերստին ետ դարձաւ և ապագայ
թափառական Հրէային նման, մտածելով կ'ընթա-
նար, և ընթանալով կը մտածէր, երբ յանկարծ,
կոկորդային ահռելի ձայնի մը արձագանդը զզըր-
դեցուց մթնոլորտը . . . «ա՛, ա՛ա՛, գոչեց ինք-
նիրեն. ա՛ա հաւանականարար արարածոց իշխանը .
փա՛ռք երկնից, որ զիս չը թողուց հեռանալ սա-
կից՝ առանց զանի տեսնելու.» և զլուխը դարձուց
և յիրաւի ան էր . . . :

Անձուռնի հրէ՛չ մը . . . մթագոյն, վիթխա-
րի, կոպճապատ, կոկորդիլոսի ահագին բերան մը
ձիագետիի վզի վրայ յարմարած, առջևի ոտքերը
հաստ և կարծ, իսկ ետեւինները՝ ուղտի ոտքերու
նման բարձր, կոպտօրէն քարչ կուգար ձահիճի մը
եզերըր :

«Ո՛հ . . . ի՛նչ ազեղ է, շարունակեց գիտաւո-
րը, բայց գեղեցկութիւն ըսուածը ճաշակի խնդիր
է. յարարերական գնահատում մըն է . . . բացար-
ձակ բան մը չէ : Ուրեմն, կրկնեց, սա՛ պիտի ըլ-
լայ երկրին իշխանը (կուրաց պետութեան մէջ
միականին թագաւոր կ'ըլլայ կ'ըսեն) և ամմոնի-
ներն ալ ծովու իշխանութիւններն են հտեւաբար :
Կ'երեւի թէ այս հրէչը, ընդհանրապէս ցամաքի վը-
րայ կ'ապրի. բարեձեւութեամբ փայլելու յաւակ-
նութիւնը չունի : Շատ պարզ է, համեստ, բայց
շատ ազեղ, մէկ բառով՝ կատարելապէս յարմար է
ան իր բնակած երկրին բնութեանը . ի՛նչ որ ալ ըլ-
լայ, չէի կրնար ենթադրել թէ այդպիսի անձուռնի

ամբարձ մը գոյութիւն կրնար ունենալ :

«Բայց սակայն վերջապէս այս լարիւրինթա-
ծինը միակ կենդանին է, որ կրնայ իշխանութեան
մականը բռնել. ուրեմն ա՛ն է թագաւորը . . . և
ահա վեհափառներու առաջինը : Ուժը միշտ գե-
րագաս է իրուանց» ըսելով շարունակեց իր մե-
նախօսութիւնը տարվինական օրինաց բնական ըն-
տրողութեան խնդրին բանավէճովը . ուսկից կը հե-
տեւի թէ՛ լաւագոյն իբաւումէր հօրաղոյնին և :

Այս երկրաքարչ հրէչին տեսութենէն ազդը-
ւած կերպով մը սովորական կենաց շրջանէն դուրս
նետուած, ուղեւոր գիտաւորը շարունակեց երա-
զելով իր վերադարձի ձանապարհը և յառաջացաւ
մոլորակային դրութեան վերին սահմանները . ա-
ռանց զգալու իր գնացքին արագութիւնը և իր
շաւղին վրայ գտնուած այլ և այլ գունտերու հան-
դիպումը . բայց վերջապէս սթափեցաւ և ինքզին-
քին եկաւ երբ մօտեցաւ Նրեւակ մոլորակին :

Գարերու աշխատութեամբ վաստկուած քա-
ղաքակրթութիւն մը կը տիրէր այդ փայլուն աշ-
խարհին մէջ : Արգասաւորութեան և խաղաղու-
թեան բնակավայրն էր անի : Գիտաւորը քանի՛ մօ-
տեցաւ սնոր, ա՛յնքան աւելի եւս կենաց փոփո-
խումը զգալի կը տեսնէր անոր ծոցին միջ : Շատ
ժամանակէ ի վեր է որ՝ այդ մոլորակը քառօսի խա-
ւերէն դուրս ելած էր և յամբարար յառաջացած
դէպի իրագործելի կատարելութիւն :

Երջանիկ մահկանացուներ, որոնք արժանի ե-
ղած են բնութեան ոգին լաւ հասկնալու և թա-
փանցելու անոր վեհ գաղանիքներուն, ուսուցած

են մեզ թէ, մոլորակային աշխարհները արեւէն իրենց ունեցած հեռաւորութեանց համեմատութեամբ հին և տարիքոտ են. ամենէն հեռաւորները առաւել ծերերն ու պատկառելի և ամենէն աւելի, կենաց շրջանին մէջ փորձառու և յառաջացեալներնն են:

Ուստի, Նեպտոն մոլորակը որ արեւէն մէկ միլիառ հարիւր միլիոն (1, 100, 000, 000) մղոն հեռաւորութիւն ունի, արեգակնային միգամածին առաջին ծնունդն է քանի մը միլիառ տարի առաջ:

Ուրանոս մոլորակը, հասարակաց կեդրնէն, արեւէն՝ քանի մը հարիւրեակ միլիոն տարի առաջ զատուած է, և անկից 700, 000, 000 մղոն հեռու է:

Երեւակը՝ որ 350, 000, 000 մղոն անջրպետով մը կը բաժնուի արեւէն՝ իր պատկառելի գլխուն վրայ հարիւր միլիոն դարերու բեռ մը կը կրէ: Լուսնբազ հսկայ մոլորակը՝ 90, 000, 000 մղոն հեռու արեւէն, 70 միլիոն դար տարիք ունի: Հրասը մէկ միլիառ տարիէ ի վեր ծնած է և արեւէն 56 միլիոն մղոն հեռու է: Երկիրս՝ 37 միլիոն մղոնով հեռու Արեւու բոցակէզ ծոցէն 100 միլիոն տարիէ ի վեր անջատուած է: Կարելի է 50 միլիոն տարի կայ որ Արուսեակը արեւէն զատուած և 26 միլիոն մղոն հեռու է անկից և սնոր բոլորաիքը կը պարաբի:

Փայլածու միայն 10 միլիոն տարի կայ որ ծնած է արեւէն և 14 միլիոն մղոն հեռաւորութեան մէջ կը գտնուի: Իսկ Լուսինը՝ մեր երկրէն ծնունդ ունի:

Մեր այցելու վարսամը այս ամենուն ծննդեան ներկայ գտնուած ըլլալով՝ առաւել քան զոք, աւելի լաւ զիտէր անոնց պատմութիւնը: Բայց ինչպէս ուսեալ մարդիկ միշտ միջոցը կը գտնեն իրենց գիտութեան պաշարը առաւել ևս անհնարու, ըստ այնմ ան ալ իր կեանքը ուսումնասիրութեամբ մը կ'անցունէր:

Ուրեմն Երեւակը, որուն դրութեանը հետզհետէ մեր գիտաւորը կը մօտենար, կատարեալ բարգաւաճման մէջ էր. փայլուն և արդիւնաւոր աշխատութեամբ անոր գանձերը կը բարդուէին հոն, անոր ներքնածովերը՝ ճածկուած էին բազմաթիւ արագընթաց նաւերով, նաւահանգիստները՝ յորդած էին բոլոր ազգաց հարստութեամբ: Գետերը լեցուն էին այլ և այլ փոքրիկ նաւերով, գաշտերը ստայնանկուած էին ուղիներով, որոնց վրայ բազմաթիւ հոյակապ կառքեր կ'երթեւեկէին: Միացեալ տորմդիկներ մաքուր օդին մէջ կը թռչաէին և օդային օրօրաններ աշտարակաց ծայրերէն կը վերանային բարձրաբերձ լեռանց գագաթը համեմու համար:

Մոլորակին մատուորականութիւնը ճշմարտապէս ընկճած էր նիւթը և անոր մարդկութիւնը կատալապէս կ'իշխէր՝ անդնդոց խորերէն մինչև օդոց բարձրութեան մէջ: Հոն կեանքը անասանելի ստայնի մը պէս այդ մոլորակին ամենահեռաւոր մասերը ի մի սիրտ կը միացնէր:

Երբ այս գունաին բեռուի կողմէն նայուի, ահագին մանկակներու դրութիւն մը կը տեսնուի. որ զենքը կը շրջապատէ զարհուրելի հեռաւորու-

Թեան մը մէջ . օգային նաւակներ մինչեւ այս մանեակները կը բարձրանան : Ասոնք՝ երեւակեան կեդրոնական գունտին բոլորաբը , անդր-երեւակեան ուրիշ կրկնակ աշխարհ մը կը կազմեն , կեդրոնէն 8 , 000 մլոն հեռաւորութեամբ և 24 . 000 մլոն լայնութիւն ունին , և մթնոլորտով մը հաղորդակցութեան մէջ կը գտնուին կեդրոնական գունտին հետ : Այս մանեկածե երկրորդ աշխարհէն դուրս՝ կան ութը հատ եւս ուրիշ նարնջադոյն և կանաչադոյն գնտիկներ , որոնք կը չրջագային ամբողջին բոլորաբը :

Երեւակեան մարդկութեան սղին՝ այս պղտիկ տիեզերքը , իր ախրապետութեան տակ առած էր կատարելապէս և իր իշխանութիւնը կը ճառագայթէր կեդրոնական գունտին շուրջը դասուող միւս շորս կողմի աշխարհներուն վրայ :


Ինչպէս փրիկեան հարուստ բուսականութեանը իշխող կէտի մը վրայ , արմաւենիի մը շուքին տակ քուն մը քաշելու համար պառկող մը , թըմարած տեղէն յանկարծակի ընդոտս կ'արթննայ և մթին անրջոց մէջէն կելլէ՝ դաշտային շքեղութիւնը վայելելու , այնպէս ալ մեր գիտաւորը՝ որ անկերպարան երկրէս հեռանալն ի վեր երազներու և անրջոց մէջ կը տարութեւնէր , սքանչելի Երեւակ մոլորակին քով համեղուն , արթնցաւ և սթափեցաւ . դանդաղեցուց իր ընթացքը և յարատեւ ուշադրութեամբ մը աւելի քան երբէք , դիտողութեան ենթարկեց այդ հրաշալի գունտը . (այս դանդաղութեան պատճառած յապաղումը Երեւակի աստղաբաշխները Երեւակեան խանգարում կ'անւանեն) :

Երբ այս ընդարձակ դրութեան միջավայրը բուրեց , ինքզինքը ճշմարիտ և կատարեալ մղձաւանջէ մը աղատած գտաւ :

Յիրաւի ինչ է երկիրս . . . ինչ կարեւորութիւն կրնայ ունենալ այդ հիանալի մոլորակին քով :

Աշխարհս խեղճուկ պղտիկ գնտակիկ մը , որուն վրայ կեանքը հաղիւ թէ ծագում առած էր , անխտատմանելի չնչին ձեւերու տակ . քառասկան զանգուած մը , յորում տարրերը խառնակ վիճակի մէջ կը գտնուէին . վերջապէս ոչինչ մը , այնպէս , որ երբ գիտաւորը գլուխը դարձուց այդ հեռաւորութեան մէջէն , մի միայն արեւուն սկաւառակին վրայ հաղիւ փոքրիկ բիծի մը պէս նշմարեց զանի :

Այս վիճակը միայն բաւական եղաւ գիտաւորին յիշատակացը մէջ մտացոլութեան մատնելու մեր աշխարհը և յիրաւի ներելի կրնայ համարուիլ իրեն՝ այդպիսի ստորին ստեղծուածի մը նկատմամբ . ունեցած անտարբերութիւնը :



Բ.

Գիսաւորը աննպաս բաղդասուրիւն մը կ'ընէ
մեր եւ ուրիշ աւխարհաց միջեւ:

Գիսաւորին մեր երկրին հանդէպ ունեցած ան-
տարբերութիւնը այնքան երկար ժամանակ տեւեց
որ, քսան երեք(*) անգամ իր մերձակէտին վրայ
եկաւ առանց անգամ մը ուշադրութիւն դարձնելու
երկրային այս սղտիկ գունտիս: Մասնաւոր եւ իր
կամքէն դուրս պատճառ մը գիտք այս մտապու-
թեանէն եւ անզգայութեանէն հանեց այս անգամ:

Յրբ քսանը չորսրդ անգամն ըլլալով այս կող-
մէն կ'անցնէր(534, 564 տարի Բ. առաջ), միջոց մը
երկրագունտիս շատ մօտը գանուեցաւ, վասն զի
այդ շրջանին՝ գիսաւորին եւ մեր երկրին շրջագծե-
րը գիրար կտրեցին, այնպէս որ երկիրս հինգ օր
եւ հինգ գիշեր անոր շողիացեալ բաշին մէջ մնաց,
որուն՝ գլխէն մինչեւ տատանող քղանցքին ծայրը,
եղած երկայնութիւնը 70 միլիոն մղոն էր:

Այս ահագին դ-սին ձեւը՝ որ շողիացեալ զան-
գըւած մըն է եւ որուն ծայրը միայն քանի մը հա-
րիւր հազար մղոն հաստ է, բոլոր գիսաւորաց բա-
շին յատուկ սովորական ձեւն ունի: Յրբևին, ըստ
գիսաւորի, աւելի կամ նուազ լայնացեալ կ'ըլլայ,

(*) Ծան. քարգ. Քսան երեք անգամուան շըր-
ջանը 70,495 սարիներ կը ներկայացնեն:

մինչեւ իսկ հովաճարի ձեւ կ'առնէ: Այս գէսը ա-
րեւուն կեդրոնախոյս զօրութենէն առաջ կուգայ.
վերջին աստիճան անօտրացած մթնոլորտ մըն է,
գիսաւորին ցնդելու վրայ եղող մասնիկներէն կազ-
մուած՝ որոնք խտացած կ'ըլլան գիսաւորին՝ կեդ-
րոն-հնոցէն (արեւէն) հեռու եղած ժամանակ: Արդ,
արեւուն ջերմութիւնը զանոնք դարձեալ կը ցըն-
դեցնէ եւ այս ցնդեալ մասնիկները ընդարձակ մի-
ջոցին մէջ կը տարածուին ամենաթեթեւ վիճակի
մը ենթարկուած, հետզհետէ կը հեռանան գիսա-
ւորին կեդրոնէն, որ այլ եւս տկար ձգողութեամբ
մը կ'ազդէ անոնց վրայ: Ի՞նչ որ ալ ըլլայ, այդ
ցնդեալ մթնոլորտին ընդարձակութիւնը, շատ ծան-
րութիւն մը չունի, այնքան նօսք է որ՝ Բարիզի
Նօթը-Տամի մեծութեամբ զանգուած մը մէկ ան-
գամ շնչառութեան համար հազիւ կը բաւէ:

Ըսինք թէ, երկիրս հինգ օր շարունակ այդ
շողիացեալ գէսին մէջ մնաց: Գուցէ շատեր պիտի
զարմանան թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ երկիրս դեռ
կենդանի մնացած է այդպիսի հանդիպումէ մը վերջ-
եւ դեռ եւս աւելի պիտի զարմանան, երբ ըսնք
թէ՝ երկիրս այդ բաշին մէջ ընկղմուած, այն ժա-
մանակուան բնակիչներուն ո՛չ ուշադրութիւնը զը-
բաւեց եւ ո՛չ ալ զգալի եղաւ անոնց:

Արդեօք ի՞նչ կերպով մեկնելու է գիսաւորաց
իրարու բաղխման հետեւանքի խնդիրը: Քննենք
ուրեմն թէ այս մասին աստղաբաշխները ի՞նչ կար-
ծիք կը յայտնեն:

Աստղաբաշխից կաճառին երեւելիներէն մին,
Պարլաս, կը կարծէր թէ՝ գիսաւորները շատ աւելի

ծանր են և հաւատ չէր ընծայեր քիչ վերը ըսուած-
ներուն ճշմարտութեանը, և կ'ըսէր.

«Մովերը, թողլով իրենց նախկին զիրքերը,
դէպի նոր հասարակած մը գահավիժելով, մարդ-
կանց և կենդանեաց մեծագոյն մասին, այդ ընդ-
հանուր ջրհեղեղին մէջ, խեղդուելուն և կամ եր-
կրիս՝ դէմ բռնուած այդ բուն բաղխամբ, ամե-
նայն ինչ կործանելուն, ամբողջովին ցեղեր ան-
հետանալուն, մարդկային ճարտարութեան մեծամեծ
չինուածոց տապալելուն նման սոսկալի աղէտներ
են որ՝ գիսաւորի մը բաղխումն առաջ կուգան»:

Իսկ ուրիշ երկրորդ անձնաւորութիւն մը,
կրէկօրի, կը կրկնէր.

«Եթէ գիսաւորի մը պոչը մեր մթնոլորտին
հանդիպի և կամ երկնից մէջ տարածուած այդ գէ-
տին նիւթէն մէկ մաս մը ինքնուրոյն ծանրու-
թեամբ մեր վրայ իյնայ, անոր արաարուրումը
մեծամեծ և շատ զգալի փոփոխութիւններու տե-
ղի կուտայ թէ՛ կենդանեաց և թէ՛ բուսականու-
թեան վրայ, վասն զի շատ հաւանական է որ այդ
հեռաւոր և օտար միջոցէն եկած և մեծ ջերմու-
թենէ մը զրգուկալ շոգիները շատ ազդեալներ ըլլան,
երկրիս վրայ գտնուած ամեն բանի և ամենամեծ
թշուառութեանց պատճառ ըլլան»:

Դարձուկ երրորդ մը Մօբերթիւս, զիտել
կուտար թէ. «Ի հարկ է մեծամեծ փոփոխումնք
յառաջ կուգան իրենց (երկու գունահերուն) մեր-
ձեցման մէջ. ըլլա՛յ թէ, այս փոփոխութիւնք տե-
ղի ունենան իբարու վրայ ունեցած ձգողութեան
զօրութենէն, կամ ըլլա՛յ իրենց մէջտեղ սեղմուած.

հեղուկներու ազդեցութենէն: Այս փոփոխութեանց
նուազագոյնը՝ երկրիս առանցքին և բեւեռներուն
տեղափոխութիւնը կ'ըլլայ: Գիսաւորներուն գէ-
տերը ի հարկ է նրբացեալ գոլորշիներու հոսանքներ
են, որ արեւուն ջերմութիւնը կը շոգիացնէ գի-
սաւորաց ծոցէն: Գիսաւոր մը իր բաշովը կրնայ
անցնիլ մեղի այնքան մօտէն, որ երկրիս թաղուի
այդ հետը քարչած հոսանքին և կամ համաբնու-
թիւն ունեցող մթնոլորտին մէջ: Ատանք արեւէն
այն աստիճան տաքցած կ'ըլլան որ 50 հազար տա-
րի չը բաւեր պաղեցնելու: Ի՞նչ կ'ըլլայ այդպիսի
ջերմութեան մը ազդեցութիւնը երկրիս վրայ. զա-
նի մոխիր կը դարձնէ և կամ կը բիւրեղացնէ. գէ-
տը՝ միայն բորբոքեալ հոսանք մը ըլլալով, կ'ողո-
ղէ, բոլոր բնակիչները կ'ոչնչացնէ, ինչպէս որ եր-
կրագործ մը, եռացած ջուր լեցնելով՝ միջիւններու
երամակաց բոյն մը բնաջինջ կ'ընէ»:

(Հոս Մ. ար Մօբերթիւս կատարեալ վիպա-
կան աշխարհը կը մտնէ, բայց մեր գիսաւորին
երկրիս հետ հանդիպումը բարեբաղդաբար նուազ
սոսկում պատճառեց, քան ինչ որ կը պատմէր ան:
Մեր բարեկամ հերարձակ աստղը՝ շատ տղնիւ զրտ-
նըւեցաւ իր հիւրերը չը թուաւորելով:)

Անգլիացի Վիսթօն՝ առաջինը եղաւ որ, կա-
նոնաւորապէս գիսաւորներուն երեւումը չարա-
գուշակ նկատեց և 1680ին անսնուած գիսաւորը,
իբր պատճառ ջրհեղեղի նախագուշակ հռչակեց, և
ըսաւ թէ՛ որ մը արեւէն վերադարձին հետը բե-
րելով բորբոքեալ և մահածին շոգիներ, երկրիս
բնակչաց մեծամեծ թշուառութիւններ պիտի պատ-

ձառէ, այն թշուառութիւնները, որոնք աշխարհի վերջին համար նախագուշակուած են, և վերջապէս այն արեգերական կրակը, որ պիտի լափէ մեր վատարազը մոլորակը:

Բայց միւս կողմանէ Նեփոն մեզի հաւաստիներ տուած է թէ՛ առանց գլխի գիտաւոր մը, որուն երկայնութիւնը հոսկից մինչեւ Երեւակ մութրակն իսկ ըլլայ, ա՛յնքան նուրբ է որ 25 հազարորդամեզը խորանարդի մէջ կրնայ պարփակուիլ ամբողջովին, եթէ մեր շնչած օդին թանձրութեան աստիճանին խտացած ըլլայ:

Վերջին քննութիւնք՝ ի մասին գիտաւորաց զանգուածին, ամենայն երկիւղէ կ'ազատեն զմեզ. եթէ ամենէն զօրաւոր գիտաւորն իսկ խոյանայ մեր գունաին վրայ, ճանճի մը վայրաշարժին դէմ յարձակման չափ ազդեցութիւն չունենար և անոր կազերը ամենեւին ներգործութիւն մը չեն ըներ մեր մոլորակին վրայ: (*)

Գալով անդրժրհեղեղան վիճակի սէջ գոնուած մեր երկրագունային, իր այն ժամանակուան բնակիչները զարհուրելու պատճառ մը չունէին վերոյիշեալ մըջոց պէս՝ ասք ջուրով խաշուելու ըսպառնալիքէն. վասն զի այդ արարածները արդէն

(*) Մ. Թ. Ինչպէս որ պատահեցաւ անցեալ տարի (1911). մենք այդ երեւցած գիտաւորին գեսին մէջէն անցանք, բայց ամենեւին բան մը չզգացինք: Թեպէտէ շատ մը նախագուշակութիւններ եղան լըրագրաց մեջ եւ այնքան մտահանգութիւն պատճառեցին շատերուն: Տգիտութեան արդիւնք:

կը լողային, կը խորասուզուէին, կը մպէին և վերջապէս ասք ջրոց մէջ կ'ապրէին. մանրադիտակային մանրաճճիներ, ձուկեր և երկակենցաղներէն անոնք որ գիտաւորին անցքը բնու չըզգացին:

Մտնուանդ ա՛լ աւելին կայ, (անա ճիշդ պըզտիկ դէպք մը, որ մեր երեւելի ուղեւորը իր դարաւոր անզգայութենէն զարթեցուց) այս անգամ, մեր երկրին՝ անոր գլխուն մօտէն անցքը, երկրիս նկատմամբ, օգտակար ազդեցութիւն մը գործեց իր վրայ. գիտաւորը հաճեցաւ ի նկատի առնել զանի որ իր բաշին մէջէն կ'անցնէր:

Երկիրս, կարծես ճանձրացած իր երկարամեայ միայնութենէն, գիտաւորին անցքին կըսպասէր նորօրինակ տեսարան մը ներկայելու անոր: Թերակըզլի մը ծայրը, մինչեւ ամպերը սեպացեալ երկու ժայռերու վրայ, մէյ մէկ այլանդակ և տարօրինակ արարածներ կեցած, իրարու երես կը նայէին. ոչխարի մեծութեամբ երկու չղջիկներ, քելամասեհաներ, երկու կենդանի սփինքաներ՝ որոնց ծալապատիկ թեւերը՝ տերեւները կախ ծառերու կը նմանէին: Մեր գիտաւորը ազդուելով այս տեսարանէն՝ ժողկեց ինքզինք և յիշեց թէ 73,560 (*) տարի տառջ առիթ ունեցած էր տեսնելու այս փոքրիկ գունար և անոր զարմանալի և եղական բնակչութիւնը:

Եւ յայնժամ սկսաւ լըջօրէն քննել մեր երկիրը: Առաջին ակնարկով տեսաւ որ մակերեւոյթին

(*) Ման. Թարգ. Այսինքն առաջին վերագարձին՝ 608,124 Ն.Ք.

աշխարհադրական ձեւակերպութիւնը զգալի և անհաւատալի փոփոխութիւն մը կրած էր: Պղտիկ ցամաքներ տիեզերական Ուլկիանոսը այլ և այլ մասերու բաժնած էին, աւելի յորդ բուսականութիւն մը և բաւական կարեւոր կենդանականութիւն մը, երկրիս թագաւորութիւնը կը վայելէին: Յետոյ, դիտելով այս կենդանականութեան տիպար դէմքերը, բաւական դարմացման ենթարկուեցաւ. ժամանակաւ իր վերջին անցքին, ժժմուկներէ զատ քան մը տեսած չէր. հիմա ալ կոկորդիլոսներն էին մէջտեղ . . . կոկորդիլոսներ ամեն մեծութեամբ, ամեն գոյնէ և ամեն տեսակէ, հաստատուն ցամաքի վրայ, ծովուն մէջ, նոյնիսկ օդին մէջ. վերջապէս, ամենուրեք կոկորդիլոսներ, խլէզներ մողէզազգի սողուններ, թէ՛ թեւաւոր և թէ՛ լուղակաւոր, վերջապէս մեծ բնակչութիւն մը կոկորդիլոսներու: Թափանցեց իր տեսութիւնը հըրլանդաններու ձեւացուցած ծոցերուն խորերը, ամբողջ հսկայ մողէզակերպ սողուններու բանակը՝ մանրագին հետադօտութեան ենթարկեց. անսաւ ձկախլէզներու և ամեն տեսակէ սալիակաւսամներու տողանցքը. ասոնցմէ ոմանք մինչև երեսուն ոտնաչափ երկայնութիւն ունէին: Այս ծովային բնակիչներու երամակները՝ ծովուն մէջ, մեր հիմակուան պալէնա ձկանց պէս կը լողային. ոմանք իրենց գլխուն վրայ մէկ ոտնաչափ լայնութեամբ աչքեր ունէին, որ ըստ քմաց, իբր մանրագիտակ և մրանդամայն իբր հեռադիտակ կը ծառայէին:

Շատերը երկկարգեան 30 հատ ժանիքներով զինուած, մէկ մեղր բացուող ծնօտ ունէին. իրենց

կռնակի ողնաշար սկիորը՝ հարիւր օղակէ բազկացած, ամեն ձկուն և նենգաւոր շարժմանց զուրութիւն կընծայէր:

Տեսակ մը կոկորդիլոսներ՝ նախկիններուն մեծութեամբ ըլլալով հանդերձ, չափազանց երկայն օձանման վիզով և իրանին ձեւը չորքոտանիի նրման և կողերը քամէլէօնի և պալէնայի պէս ալ լուղակ թեւեր ունէին, ասոնցմէ ամբողջական երամակներ ծովը կը խորատուզուէին: Ծիրանաւոր և սուր ատամներով ա հռի թանձրակողներն, անսաւամողէզներու. խլէզներու, սալիագանկներու և կորոսնեայներու համախմբումները կը տեսնուէին: Ահագին հսկայ շղկանման բեւախոսնեաներ, որոնց բերանը վաթսուն սոսկալի ատամներով զինուալ օդին մէջ կը բարձրանային. ծառէ ծառ և ժայռէ ժայռ ոստումներ կատարելով:

Նոյնքան դարմանալի էին բարձրորիւրձ բոյսերը իրենց ուժին և կորովին տեսակներովը, անպըտուղ խոշոր ծաւեր. բարձր եղէզներ, հսկայական եզեւակերպ նոժիներ, են. են:

Աւելի ասուր քան զուարճալի՝ երկրիս այս համայնապատկերը մեր գիտաւորին ոչաց առջեւ, 360 տնգամ թաւայեցաւ և ան ալ 360 տնգամ ամբողջ մակերեւոյթը կը դիտէր՝ երբ անակնկալ անեղագոյ ճարճատման արձագանգ մը լսուեցաւ:

Յանկարծ ծովուն յատակէն երկրիս կեղեւը ձեղքուեցաւ, մինչդեռ մոլեզին բոցեր երկրիս երկունքի մէջ եղող արգանդէն դէպի վեր կը խոյանային ծովուն ջուերը, զարնուրելի շառագամբ, գահալիժեղին բացուած անդնդոց մէջ:

Հրէշատիպ կենդանիներ, ունաճայն աղաղակով քշուելով ահաւոր սահանաց ընթացքէն, բացուած անդնդոց մէջ կը խորասուզուէին, թեւաւոր սողուններ օդին մէջ կը փախչաւին արագաբար, չարագուշակ ճիչեր արձակելով: Ծովեզերքները կ'ամայանային իրենց բնակիչներէն. մէկ յեռնէն միւսը ելեքորական որոտողոչ կայծակներ մթնոլորտը կը պատռուէին: Ընդհուպ անձանօթ որոտման մը խուլ թնդիւնը խառնուեցաւ մրրկին ճարճատման և ահա ամբողջ երկրիս մակերեւոյթը պատառ պատառ եղաւ միևնոյն տակնուվրայութեանց հետեւանօք:

Աւա՛ղ... գիտաւորը տեսնելով այս ամենը, երկրիս հանդէպ ունեցած նախկին գործածանաց մէջ կը մնար . . . և դեռ լրջօրէն չէր ընդգրկելր զանի:

Այս ունակութիւնը զոր հազարաւոր զարեւրու մէջ ընձեռած էր, շարունակ տեսնելով քաղաքակրթութեամբ օժտեալ այնպիսի աշխարհներ, ինչպէս Նեւտոնը և Ուրանոսը, ինչպէս Երեւակը՝ յառաջդիմութեան գազաթնակէտը հասած, զարձեալ ուրիշներ՝ մեծ կենսականութեան ուղին մըտած, ինչպէս է Լուսնթազը. վերջապէս ուրիշներ՝ մարդկութեան գարունին հասած, ինչպէս Հրատը, ահա այնպիսի տեսարանաց վարժութիւնը՝ աննըպատառ դրից մէջ դրաւ զինքը, երկրիս պատուաբեր վիճակ մը կարենալ ունենալուն նկատմամբ, այնպէս որ կրկին անգամ իր նախկին անտարբերութեան մէջ ինկաւ: Մինչ այսպէս կը խոկար մեր գիտաւորը, երկրաբանական յեղափոխութիւնը կը շարունակէր իր կատաղութիւնը:

Ժիրասիք խաւերը երկրիս իմունքը կը ցընցէին և ամբողջ երկիրս՝ ցնորքէ բռնուածի նման, կը դողդղար. ծովերը, բորբոքեալ խորխորատաց և երկրիս կքեալ մասանց մէջ կը գահալիծէին. ցամաքին վրայ յանկարծ բացուած անձանօթ աղբիւրներու ժայթքումներ յառաջ կուզային: Հայած մետադի երեսը ձեւացած պղպջակներու պէս՝ դաշտերու մակերեւոյթը կ'ուռնար, ուսկից յառաջ եկան լեռները: Ուրիշ տեղեր՝ լեռներն ու բլրակները կը խորտակուէին դաշտեր ձեւացնելով, հոն ուր նախապէս հազար ու մէկ ելուէջներով զարգարուած էր:

Երկրէս շատ հեռանալէն և զանի աչքէ կորսնցնելէն առաջ, մեր հերարձակ աստղը, զոր երկրիս տակնուվրայութեանց սկզբնաւորութիւնը՝ պահ մը կասեցուցած էր, տեսաւ որ այդ վիճակը կը շարունակուէր կատաղաբար և վերակազմութեան գործողութիւն մը սկսած էր երկրագունտիս համարը:

Ուզեւոր գիտաւորը, որ արեւէն բաժնուելու միջոցին ժամը 70 հազար մղոն կամ օրական մէկ ու կէս միլիոն մղոն արագութեամբ կը սուրար և քանի՛ արեւէն կը հեռանար, նուազեցնելու իր վաղքը, երկրիս միջավայրը թողէն երեք ամիս վերջը՝ միջոցին մէջ, հասաւ այնպիսի կէտի մը, ուր բոլորովին տարբեր տեսարան մը ներկայացաւ իր աչքին:

Այն ժամանակ Հրատ և Լուսնթագ մոլորակաց մէջտեղ կային խել մը մոլորակներ, որոնք արեւուն հասարակածէն պրծած մանեակէ մը սերած

էին, Լուսնթագի և Հրատի ծննդեանց միջանկեալ ժամանակամիջոցի մը մէջ: Այդ այլասեր մանեակը, փոխանակ, ինչպէս ուրիշները, մի միայն մէկ առանձին գունա մը ձեւացնելու, շատ մը ուրիշ իրեն պէս այլասեր կազմով զիրարեկ գնտիկներ ձեւացունցած էր: Այս գնտիկները կը զլորէին աբեւուն շուրջը. միւս մոլորակներուն պէս, ունենալով իրենց սեփնական տարին, եղանակներն և օրական թաւալումը:

Արդ, մեր գիտաւորը, զբաղած միշտ երկրիս խնովեալ վիճակովը, փիլիսոփայաբար խորհրդածելով տիեզերաց ապագայ բաղդին վրայ. կը մերձենար այդ գունաերուն մեծագոյնին, որ 16,000 մղոն արագութեամբ, ուղղակի իր վրայ կուգար. այնպէս որ իրենց շրջագիծները զիրար պիտի կրաբէին ճիշդ «այնպիսի՝ կէտի մը վրայ, ուր անխուսափելի ընդհարում մը տեղի պիտի ունենար: Բայց այդ մեծ գունաը, ընդհարումէն քիչ ժամանակ առաջ, յանկարծ սուտի մը պէս պայթեցաւ. շոգի-գիւններ ցնդեցան անկից և եկան միացան մեր ճամբորդ աստղին գէտին շոգիներուն և տեսնուեցաւ այն ատեն որ՝ տասնեակ թուով մասնիկներ շարունակեցին իրենց շրջանը միջոցին մէջ: Այս եղածը այդ գունաին վերջաւորութիւնն էր. բայց շատ կանխահաս վերջ մը, որ վաղուց կեդրոնացած ներքին յեղափոխութեան հետեւանքն էր: Այս գէպը տեղի ունեցաւ արեւէն 110,280,000 մղոն հեռաւորութեան մէջ: Գուցէ ասոնցմէ ծնունդ առած են հեռադիտակային աստեղատիպ գունտերը՝ ինչպէս են Պելլոն, Կալաքա, Թերփսիխոս և Լեթո

օրոնց արեւէն ունեցած հեռաւորութիւնները չորսին համար ալ միւսնոյնն են, Երկրիս արեւէն ունեցած հեռաւորութեան 2,78 անգամը: Կ'երեւի թէ այս պղտիկ աստղերը, ամեն տարի միւսնոյն կէտին վրայ կը վերադառնան, դիտելու համար իրենց ազետից վայրը, որ զիրենք իրարմէ անջատեց:

Գամասկոսի ճամբուն վրայի Առաքելոյն պէս, (Պողոս առաքեալ) գիտաւորին հոգին ի գուժ շարժեցաւ, և այդ թուականէն ի վեր բարի տրամադրութեամբ օժտուեցաւ երկրիս հանդէպ, և միշտ վառ պահեց սրտին մէջ: Կարելի է որ առանց այս պատահարին գուցէ դեռ շատ ժամանակ իր անտարրերութեանը մէջ աստանէր. բայց, ինչպէս շատ անգամ տեսնուած է, աննշան պատճառ մը բաւական է ամենայնառ ընտելութիւն մը անմիջապէս փոփոխութեան ենթարկելու, ինչպէս երբևէ մեծամեծներ բարեփրական զգացումով մը կը վերաբերուին հանդէպ ամենափոքրիկներու, գիտաւորն ալ խանդաղատական զգացումով մը համակուեցաւ և միջոց մը երկրիս կենացը նկատմամբ մտատանջութեան մէջ մնաց:

«Ենդճ երկիր, կ'ըսէր, եթէ այս սոսկալի խըռովութիւնները, որ քիչ մը առաջ ծագում առած էին, ազիտարեր ըլլան անոր և ծնանդէն առաջ զանի մահայնն, ինչ պիտի ըլլայ խիղճին վիճակը այդ խտոնակութեանց մէջ յորում քիչ մը առաջ կը տասլորէր: Այնքան կորովի պիտի կարենայ ըլլալ սոկալու և զիմադրելու և յաղթելով ասրելու. եթէ ո՛չ, միայն վայրենի և անգուժ

էակներու ասպնջականութեան վայր մը տանձան-
հայ է մնալու»

Այդ օրէն գիտաւորը . աւելի ուշադիր եղաւ և
ի գուժ շարժեցաւ երկրագունտիս վրայ, այնքան
աւելի՛ որքան աւելի խոնարհ և դուզնաքեայ էր :
Յաճախ կը մտածէր այդ համեստ արարածին վը-
րայ, շատ անգամ անձկութեամբ մեծամեծ դուն-
տերուն քովէն կ'անցնէր առանց անոնց վրայ ակ-
նարկ մը նետելու : Անտարակոյս մեր գիտաւորը,
նոյն իսկ իր ճամբորդութիւնը շատ երկար կը
գտնէր . երեք հազար վարսուն երեք ու կէս տա-
րիներ զրկուիլ երկրիս տեսութենէն և առ առա-
ւելն տասնը ուրբ ամիսներ միայն գտնի վայելելը
համեմատութենէ գուրս կը նկատէր . վերջապէս մեր
պզտիկ երկիրը իր մտքին մէջ տեղ գտաւ և հեազ-
հեաէ հոգատար գտնուեցաւ անոր հանդէպ :

Անհամբերութեամբ կը սպասէր ամառնային
(իբն) եղանակին վերադաձին : Գիտաւորներուն
ամառնային արևադարձը՝ իրենց հեռակեանն անց-
նելով երկրիս մօտենալաւ սկսած ժամանակն է :
Անկէց վերջը երբ գիտաւորը կսկսի զգալ արևուն
տաքութեան սաստկանալը . գարունին (իբն) վեր-
ջաւորութեան հասած ըլլալը կըմբռնէ . արդէն այն
ժամանակ միայն՝ երկիրս հազիւ հազ տեսանելի
կ'ըլլայ իբն , արևուն սկաւառակին վրայ, պըզ-
տիկ բիծի մը պէս, և կամ կիսալուսինն ձեւով և
կամ մահկաձեւ լուսատու աստղին ո՞վ կամ ձախ
կողմը :

Երջանիկ կղզայ զինքը իր արագութեան ա-
ւելնալը տեսնելով՝ իր նպատակին մօտալուտ ըլ-

լալուն համար : Վերջապէս կը համի աճապարա-
նօք երկրագունտիս մօտ, զոր հեազհեաէ առաւել
էս կը սիրէ . և արդէն իսկ առաջին օրէն կսկսի իր
փոքրիկ աշխարհին վերադննութիւնը .

Արդ, մեր հերարձակ ճանապարհորդը նա-
խապէս ներկայ եղաւ երկրորդական դարուն մէջ
կենդանական ցեղերու զարթումին, սկսեալ Լիա-
սի և ծուաբարի դարերէն մինչեւ կաւնային խա-
ւերուն ձեւացման ննթաշրջանը : Ամեն երեք հա-
զարական տարիներու շրջանին, թէ՛ կենդանական
և թէ՛ բուսական դանդաղ յառաջդիմութեան հե-
տեւեցաւ :

Ամեն բանի կազմութեան և ձեւացման ժա-
մանակ, շատ մը խոտվութեանց անբաժան ըլլա-
լուն համոզուած և վարժուած ըլլալով, ներկայ
գտնուեցաւ երկրիս մակերեւոյթին այլ և այլ մա-
տանց յեղափոխութեանց, վերի վայր չըմամբ այ-
լափոխութեանց և անոր ներքին յուզմանց՝ որոնք
յստաջ բերին կրակի հոսանքներ ժայթքեցնող հը-
րարխային լայն խառնարաններ, և կեղեւին բար-
ձրացմամբ լեռնաշղթաներու կազմութիւնը՝ որոնք
սպազային երկրիս մակերեւոյթին աշխարհագրա-
կան ելուէջները կը պատրաստէին : Ա՛յ սկսաւ նը-
ւաղ վախնայ այս մեծամեծ շարժումներէն և մը-
տածեց թէ՛ անհրաժեշտ անձանօթ օրէնք մը կայ,
որ այս ամենքը կը կառոււարէ . և համոզուեցաւ
թէ՛ այլ ևս պէտք էր հետաքրքիր ըլլալ յօգուտ
այս աղէտեալ աշխարհիս : Ասոր համար ամեն տա-
րի (մեր տարիներէն 3000 անգամ երկայն) որո-
բանին մէջ եղող այս մանուկ երկրին յառաջդի-

մութեան ընթացքին կէտ առ կէտ կը հետուէր:

Բայց ճշմարտութիւնը կը ստիպէ զմեզ ըսելու թէ՛ իր հոգածութիւնը դարձեալ քիչ մը եկար պիտի մնար: Իր այս սկարութեան պատճառը սկզբունքի մը վրայ հիմնուած է որուն վրայ կ'արժէ խորհրդածել. այն է թէ՛ մեծամեծներու հետ յաճախ եւ սերտ ընթանութիւնը խոնարհներու հանդէպ ընկերսիրութեան զպացումը կրնայ սկաւազընել:

Մեր գիտաւորն ալ՝ որ իր կենաց ամենէն լաւ ժամանակը, կամ աւելի ճիշդը ըսելով, իր կենաց մեծագոյն մասը՝ արեգակնային դրութեան շղեր-ւական աւագանւոյն հետ շփման մէջ բռնուած ըլլալով՝ անոնց հպարտ բնութիւնէն փոքր ինչ ժառանգած էր, որով իր հոգածութիւնը առանց այլեւս աւելցնելու, միեւնոյն աստիճանին մէջ կոյտուն պոհեց զրեթէ 40 հազար տարիներ: Վերջերս, կարծես, քիչ մը ձանձրացած, ինքնաբերաբար ի հարկէ, համբերութեամբ կը սպասէր իր զարնան վերադարձին: Ա՛լ սկսած էր վարժուիլ երկրագուն-տիս տեսարաններուն, երբ անոր կը մտանար, կը դիտէր և ինչպէս որնախապէս, դարձեալ շահեկան բազմատութեան կէտ մը չէր գտներ մեր երկրին և միւս մեծամեծ աշխարհներուն միջեւ:

Քսան հազար տարի եւս՝ մտածութեան այս վիճակին մէջ մնաց և կը վախցուէր թէ վերջապէս բարձրագոյն գունտերը յազթանակէին իշխելու մեր գիտաւորին մտածմանցը վրայ իրենց գերագահութեան բերմամբը:

Բայց սակայն երկիրս՝ աւելի երիտասարդ ըլլալով, միւսներէն աւելի արագութեամբ կը յա-

ռաջդիմէր: Երրորդական դարուց մէջ փոփոխու-թիւնները աւելի զիւրութեամբ տեղի կուեննային որով մեր գիտաղարչ աստղն ալ վերսկսաւ աւելի հետաքրքիր և լուրջ ուշադրութեան ենթարկել, ինչ որ ժամանակ մը միայն մեծամեծ աշխարհաց-յատկացուցած էր:



Գ.

ԱՐՇԱԼՈՅՍ

Արարչագործութեան մէջ, ս'ըքան փոքր, և ս'ըքան համեստ գիրք մը բռնած ըլլար մեր երկի-րը, դարձեալ արժանի էր մեծանուն ուղեւորին գնահատմանը:

Արարածի մը արժէքը, ս'չ իր հասակին և ս'չ ալ ծանրութեանը վրայ կը կայանայ. վասն զի ա-նիկա ծնունդ է անհասանելի զօրութեան մը, որ իր ճակատին վրայ Արարչին անջնջելի դրոշմը կը կը-րէ: Բնութեան մէջ ամենափոքրիկ աւարկայ մը նոյնքան հրազդան է որքան ամենամեծը: Ահա՛, ճիշդ այս պարագան է որ՝ անհուն զօրութեան անբաժան նկարագիրը կը կազմէ, որ արեւուն լոյսին պէս լիովին կը ցոլանայ որքան մէկ կաթիլ ջրոց՝ նոյնքան ևս Ովկիանոսին մէջ:

Մեր ուշիմ աշխարհաշրջիկը, արդէն իր զըն-

նութեանցը մէջ զիտեց այս պարագան և ըստ այնմ իր մենաւոր խօսումներուն մէջ, երկրիս ծննդեան կարգին համեմատ, անոր արժանաւոր աստիճան մը յառկացուց միւս արարածոց շարքին մէջ . . . , անոր ազնուակամութեան վկայագրին ճակատը՝ տէրունական կնիքով մը դրոշմուած գտաւ:

Արդէն երկիրս՝ ինքնիրեն տակաւ առ տակաւ իր մեծութեան հաւաստիքը ցոյց կուտար. անզգալաբար նախկին տիղմին մէջէն սկսած էր զուրս ելլել, գեղեցկութեան հասնելու համար, իր տղեղութիւնները հեռագնատէ կը թօթափէր, բարեձեւութիւնը կը ծնէր իր մակերեսովին վրայ: Ատենօք բոյսերն ու կենդանիները բիրտ և ցուրտ կոշտութեամբ, հրապոյր մը չէին ընծայեր. ծառերը անժպիտ, առանց ծաղկի և անպտուղ, կենդանիները զրկուած էին մուշտակէ, գեղմէ, փետրէ և ամեն տեսակ զարդարանքէ: Արդ, այն միջոցին, ուր հասաւ երկիրս, արդէն բոյսերուն վրայ կը տեսնուէին ծաղիկներ և պտուղներ: Կենդանեաց վրայ ալ կը տեսնուէր պծնազարդ զգեստաւորում մը: Բրօքիասէներու ցեղին մէջ պանզղիաները ըսքանչելի պողազարդ ստանք կ'արձակէին. Միսօգեաները արդէն ախախաները հասուցած էին, փլուկաները որոնք մինչև այսօր իսկ Աւստրալիոյ մէջ կը տարածուէին: Յարասիներ, ընկուզենիներ, լատտենիներ կը բարձրանային արմաւենիներու, սոճիներու և նոճիներու հետ քով քովի, առանց անջատ ըլլալու ըստ կլիմայից, ինչպէս են հիմայներկայիս մէջ: Ճահիճներու մէջ դարձեալ կը տեսնուէին ձիազիններ, ձրի շագանակ և հսկայական ծա-

ղիկներ կը բացուէին, ինչպէս գեղեցիկն նուենուֆարօր կը տարածուէր ջուրերու հանդարտիկ մակերեսովին վրայ:

Որո՞ք աչքերը հրապուրելու համար էին երկրին այս արշալոյսին ժամանակ պարզած գեղեցկութիւնները. որո՞ւ սկանչներուն հաճելի ըլլալու համար էր ծովերու մառնջը կամ անբեւեւերու շշուշը. որո՞ւ համար անտառներու խաղաղաւէտ մենարանները, և անոնց ազօտ լոյսին տակ փայլող վէտ վէտ մարգերու ծովին հեռանկարները: Որո՞ւ ճակատին կը ցոլար գիշերային լուսութեան մէջ, աստեղազարդ երկինքը, արծաթափայլ լուսինին հանդարտիկ լուսութեանը հետ միացած. որո՞ւ համար էին այն հնօրեայ մեծապայծասութիւնները. որո՞ւ համար էր երկնից այս ճառագայթումը, դաշտերու կանաչազարդ տեսարանը, այդ անուշահոտ բուրմունք քաղցրասիւք հոգմոց և այդ բնական մատաղամկոց զոզոջուն տերեւոց սօստսիւնը. վերջապէս որո՞ւ համար էին երկրագունտիս և ծովուն հիանալիօրէն զգլխիչ տեսարանները:

Որո՞ւ համար էր օրուան արեւը և գիշերային աստղերը, այդ կապուտակ երկինքը, այդ երանգ երանգ սովեփայլ ամպերը, այդ ոսկեճաճանչ վերջալոյսին ճառագայթումը, այդ փառահեղ ծիածանի և մէտէօրայից երեւումները . . . որո՞ւ համար այս տնազին բնութեան հսկայ աշխատանքը. ո՞չ մէկ իմացականութիւն զեռ զարթում չէր առած երկրիս վրայ:

Այսօրուան այն երկիրները, ուր քաղաքակրթութիւնը կը ճառագայթէ, ուր կը գանձուի նաև

մեր փայլուն մայրաքաղաքը (Բարիզ), այն ժամանակ դեռ ովկրանոսին ջուրերը կը տիրէին անոնց վրայ. այդ տեղերը, ուր Գաղղիա մը պիտի ձեւանար, այսօրուան կերպարանքն ունենալու նշոյնն սնգամ ցոյց չէին տար և միայն լճերու և թերակըզղիններու հաւաքածոյ մըն էր:

Ծովը, Բարիզի գիրքէն դէպի հարաւ կիջնէր մինչև Պուրժ, վալանսիեցէն մինչև Աեց-Լեօ. միայն ջրին եզերքէն կաւճային անկանոն խաւերուն երկայնքը կարելի էր ուղղուիլ: Լանկրի բարձրաբերձ ժայռերը, ուր կեսար՝ խարոյկներ պիտի վառէր, որմէ Մոնթենեի-լը-Ռուա իր անունը յափըշտակեց. նաև այն քարանձառները, ուր Սափինոս հռոմէական արձիւին բարկութենէն խուստփելու համար ապաստանեցաւ այդ պատկառելի ժայռերը ըսենք, նախաջրհեղեղեան լայնածաւալ ծովերուն վրայ կ'իշխէին: Նոսիկին Օվերնեը՝ ինչպէս ձախակողմը՝ գտնուած Պրքրաներ գաւառները և աջին վրայ Այպեան լեռները, վաղուց բարձրացած էին նախնական դարուց ժամանակէն ի վեր: Բայց Լիօն, Թուր, Բարիզ, Տէօնքէրք դեռ ջուրերուն աակ կը հեծէին: Միայն երրորդական դարուն մէջ էր որ այդ երկիրները երեւան եկան. եթէ ոչ տեւական մնալու, զոնէ խիստ երկար ժամանակաց համար:

Մեր արդի ժամանակաց մէջ գտնուող կենդանեաց նախահայրերը կը դասաւորուէին իրենց հեարզհեաէ երեւան գալուն կարգովը: Զրային կենդանիներէն վերջը երկակենցաղները երեւցան, երկակենցաղներէն ալ վերջ, հաստատուն ցամաքէ վրայ ապրելիք կենդանիները ծնան:

Այնքան ճշմարիտ է թէ, ստեղծագործութեան մէջ ամենեւին պատահաբար եղած բան մը չկայ. ցեղերու յաջորդաբար երեւումը՝ յաւիտենական օրինաց իշխանութեամբը կանոնաւորուած է: Առաջին շորքոտանիք թանձրամոյթներ էին ինչպէս Հնակեցեղանիներ, Զինգալուրկ կենդանիներ, բուրսամներ որոնք իրենց կազմութեամբ Ռնդեղջիւրի, ձիու և թափիրի միջանկեալ կենդանիներ էին, ասոնց առաջինը ձիու չափ մեծ. թափիրի գլուխ և մտտ պատիճով, մարած պղտիկ աչքեր և հաստ սրունքներ ունէր: Երկրորդը՝ ընդհակառակն, երկայն սրունքներ և մէկ մէդր երկայն ազի մը, զոր զեկի տեղ կը գործածէր լիճերը կամ գետերը անցած պահուն: Երրորդը արագընթաց, երկչոտ և շնորհալի քարայծեամ մըն էր:

Կար նաև Ասամնակասաւը որ, տեսակին համեմատ, սկսեալ ճագարի մեծութենէն մինչև ունգեղջիւրի մեծութեամբ կը գտնուէր. դարձեալ, կար խոզագետնն որ գետերու մէջ կը բնակէր: Ծովերու մէջ գազանասողունը դեռ երբեմն՝ մէկ մէդր երկայն ծնօտը կը կրճտացընէր ջրոց երեսը. վերջապէս աւելի հանդարտիկ կեսագգիները և դրփիկները ծովերու թագաւորներն էին:

Բաղդատելով երկրին այն շրջանի վիճակին հետ, աշխարհիս բնակչութիւնը դեռ կը պահէր իր օտարոտի դրոշմը, որ զարմացուց դմիզ նախկին զարուց մէջ:

Երբ մեր գիտաւորը վերջին դարու արշալոյսին, այսինքն նորածագումի շրջանին, հասաւ եր-

կրիս մօտ, կրցաւ տեսնել կեանքին ըրած կտտարեալ յառաջդիմութիւնը: Այդ տեսարանաց մէջ ճակատագրական օրէնքը բացայայտ կ'երևէր:

Նա կրցաւ կռահել թէ, անձանօթ կամք մը կը նախագահէր այս պղտիկ երկրին ձեւացման վերայ և աշխարհիս մականը ստանալու արժանի արարածի մը բնակարանը կը պատրաստուէր:

Մաքրագործեալ մթնոլորտին մէջէն արևը իր արգասաբեր ճառագայթները լիառատ կը հեղուրհանդարտիկ և միապաղաղ ջրերուն վրայ, երկինքը կը ցոլար, հազար ու մէկ բոյսեր օդին մէջ կը ծածանէին իրենց կանաչագեղ ստաբեր և առաջին ծաղիկները ջրերուն մակերեսը կ'անդրագարծէին իրենց գոյները. դաշտերու մէջ, ոչխարաց կրամակներ կը կայտուէին ու կը խայտային, օդային զուարթագին բնակիչները՝ մթնոլորտին դէպի վերին սահմանները կը բարձրանային:

Կեանքը կը փայլէր արշալոյսին վրայ, երկրիս եզանակաց միջոցները կ'որոշուէին կանոնաւորապէս: Այլևս մեր գիտաւորը համոզուեցաւ թէ, երկրիս վերջնական դրութիւնը բարձրագոյն աշխարհաց դրութեանը կը մերձենար:

Բոլոր գիտաւորներուն պէս, ծայրագոյն տաքէ դէպի սաստիկ ցուրտ անցնելու, նախ իր կիզիչ ամբան՝ արեւուն մօտենալով և յետոյ անկէ անհունապէս հեռանալով, երկրէս հազարապատիկ խիստ ու սաստիկ ձմեռներու մէջ մանելու վարժըւած ըլլալով, իր բնածին բարեսրտութեամբ ինքզին երջանիկ կը սեպէր, տեսնելով թէ՛ կա՛ն աշ-

խարհներ ալ, որոնք բարերազգաբար զերծ են այս անպատեհութիւններէն: (*)

Երկիրս ալ, մոլորակաց նման, այդ բարերազգ պայմանաց մէջ կը գտնուէր, որով անոր ապագայ պատուի դիրքը սկսաւ ճշդուել ի շարս աշխահաց: Թեպէտ զանդա՛ր բայց զգալի յառաջդիմութիւնը՝ մեր ուղեւոր աստղին սննախընթաց և իրակոն մեծ հաճոյք մը պատճառեց:

Գիտաւորը իր մէկ ուրիշ ճամբորդութեանը մէջ զլիսաւոր մոլորակաց յատուկ կարգադրութեամբ մը, արեւուն ետևի կողմէն անցած ժամանակ, ա՛յնքան մօտեցաւ անոր որ, երբէք այդքան մօտեցած չէր և առաջին անգամ ըլլալով արեւուն

(*) Թեեւ գիտաւորը կը զարմանար երկրիս այս միօրինակ ջերմութեան վրայ: Գիտաւորներէն ոմանք ա՛յնքան երկար բերս ունին որ՝ իրենց հեռակէսին վրայ, մեզ համար աներեւակայելի, ամենասաստիկ ցրտութեան մը կ'ենթարկուին, մինչդեռ իրենց մերձակէսին վրայ, արեւուն ա՛յնքան մօտէն անցնելով, արտակարգ ջերմութեան մը կ'ենթարկուին, որուն վրայ գաղափար մ'անգամ չենք կրնար կազմել: Նեւսոն կը հաշուէր թէ՛ 1680ի գիտաւորը, Արեւուն ա՛յնքան մօտէն անցաւ որ, մեր ամառնային ջերմութեան հասնը ուրք անգամ աւելի սափութիւն ստացաւ. եւ ջերմութեան ասիւնանը՝ հրաշքի երկարի մը ջերմութեան 2000 անգամ աւելի եղած էր: Նեւսոն կը յաւելուէր թէ՛ գիտաւորաց նակասագիրն է արեւուն մեզ իյնալ, անեղ պահելու համար անոր կիզումը:

և երկրիս մէջտեղ անսաւ երկու ուրիշ մոլորակներ Արուսեակը և Փայլածուն: Կարեւորութիւն չը տալով և չուզելով իր ուշադրութիւնը անոնց նըւերել և ժալովածառ ըլլալ, անոնց նախնական զարգացման և փոխանցմանցը ներկայ ըլլալու հաճոյքը մերժեց և ուզեց զանոնք մոռացութեան մասնել, իբր թէ քատսի մէջ ըլլային և մտադրեց յառել իր ուշադրութիւնը միմիայն մեր երկրին վրայ:

Ուրիշ անգամ մըն ալ Հրատին քովէն անցած ժամանակ, երկրիս շատ նման սակզմագործութիւն մը գտաւ այդ գունաին վրայ, որ զրօսաչըրջիկին համար միեւնոյն հետաքրքրութիւնը կը շարժէր: Ինչպէս Արուսեակին և Փայլածունին ըրաւ, նոյնպէս թողուց Հրատն ալ թող իր շրջագիծին վրայ և ինքը մի միայն զբաղեցաւ երկրիս հետ ամբողջ իր ապագայ ընթացից դարերուն մէջ: Այս պարզ դիտողութիւններէն կերեւի թէ այլևս

« Գերեզմանի Նամականի » ին հեղինակը, ակնորկութիւն կ'ընէ այն եղկելի վերջաւորութեան, երբ կը գրէր սա եզականութիւնը. — « Լուսնբագին աւելի մեծ գիսաւոր մը, իր ընթացքին մեջ, ուրիշ վեց քափառիկ գիսաւորներ ընկլուզելով իրեն մեջ, անոնց հետ ընդհարումէն իր սովորական ընթացքը խանգարած եւ շեղած եր իր քերտական շաւղէն, այնպէս որ, այս եղկելիին (գիսաւորը) գահավիժեցաւ Արեւուն ծախիչ կեդրոնին մեջ... Կենքադուռի քէ խեղն գիսաւորը այսպէս ողջ ողջ կիզման պահուն, զարհուրելի ճիշեք կ'արձակէ: »

հաստատանպէս մեզ նկատմամբ ունեցած նախկին անտարբերութենէն ետ կեցած էր և յայնմհատէ վերջին աստիճան ուշադիր եղաւ երկրագնախի վըրայի անց ու դարձին:

Ուրիմն, առաջին երեւումէն սկսելով, հարիւրերորդ վերադարձին, այսինքն 304,689 տարի Ք.է առաջ, մեր գիտաւորը ներկայ կը գտնուէր երկրաբանական մեծ դարուն սկզբնաւորութեանը, որուն յաջորդեց մեր այսօրուան ներկայ դարը: Յիսուն հազար տարի ետքը նորածագման դարը վերջացած գտաւ: Երկու հազար դար Ք.է առաջ, հասաւ միջնածագման դարուն կիսուն:

Արչալո՛յս . . . կենաց առաւօտ, լուսապայծառ ծագո՛ւմ: — Յետոյ ի հարկէ, էակաց ձեւերը պիտի փոխուէին, աւելի ազնիւ և աւելի փափուկ, աւելի գեղեցիկ և աւելի կատարեալ վայելչութիւն մը պիտի զգենուէին: Բայց այդ միջոցին, տիեզերական գարնանային հոյքը ամեն կողմ կը բարձրանար արմատէն մինչև բարձրարևո՞ գագաթները:

Յետոյ, ա՛լ զարգացումը անդադար պիտի չարունակէր իր գործը. յայնժամ բոլոր զօրութիւնները իրենց կատարեալ անկախութեամբ պիտի պարզէին յուսարեք տեսարան մը, որ ոչ մի դար, ապագային մէջ պիտի կարենար ընծայել իրեն:

Երկնից հսկայ ժամատախտակին վրա դարերը մանրերկրորդի մը չափ չեն, մեր երկ)

(*) Ծ. Թ. Օր քսուածը Ս. Գրոց մեջ յիշուածին պէս... եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն օր մի:

ըսուածը՝ աստղարաշխական տեսակէտով, պէտք է հազարաւոր տարիներու միջոց մը ըմբռնել, ուրեմն ալ պէտք չէ դարմանալ, թէ այդպիսի օրուան ի՞նչ արշալոյսը, նոյն հաշւով երկար դարերու շարք մը ունենայ:

Արդի մեր վաղանցիկ կենաց ժամանակի հաշիւները, սրմնցմով մեր դէպքերուն փոփոխմունքը կը չափենք, բնութեան կենաց շափերուն հէտ բազմատմամբ, ամենայնպէս ոչնչութիւններ են. մէկ դարը և ոչ իսկ նշմարելի կ'ըլլայ մշտագարուն բնութեան ճակատին վրայ, տասը դարեր, հարիւր դարեր, կնճիւ մ'իսկ չեն ձեւացներ անոր դիմագրծին վրայ:

Հազարներով դարաւոր գունտի մը առաջին օրերը հաշուելու համար, մեր գիտաւորը շատ աւելի նպաստաւոր վիճակի մէջ էր քան դմեզ և ընդհանրապէս այսպէս է նաև բոլոր գիտաւորաց համար: Իր մէկ տարին՝ մեր երեք հազար տարին աւելի կը հաշուէ:

Ան՝ առ նուազն գոնէ այդ ժամանակամիջոցը ունէր, ամեն մի անգամ երկրիս կողմերը այցելութեանը մէջ, որով բնականապէս, ժամանակագրական պատկառելի և գերազանցապէս ընդունակ աստիճանաչափ մը ունէր ի ձեռին՝ երկրիս փոփոխմանց դէպքերը դատելու և դասաւորելու:

Մեր աչաց համար շատ մեծ, իսկ խիստ փոքր՝ արարչագործութեան անսահման տեսողութեան համար, այս երկայն ժամանակամիջոցը ունենալով հանդերձ, այնքան դանդաղ էին երկրիս փոփոխմունքը, որ շատ անգամ, գիտաւորը չէր կրնար եր-

կրիս տեսարանացը մէջ ամենափոքրիկ տարբերութիւն մը նշմարել, երկու յաջորդական վերադարձիցը մէջ: Շատ անգամ միևնոյն տեսարանը և միևնոյն գեղանկարը, նոյն բոյսերը և միևնոյն կենդանեաց ցեղերը կը ներկայանային իր աչացը, իբր թէ երեք հազար տարի առաջի միշտ կենդանի և միևնոյն հասակին մէջ մնացած ըլլային:

Եթէ իր այս երկարատև տարւոյն միջոցին մէջ, երկրիս երեսին վրայ տարբերութիւն մը յառաջ չէր եկած, ապա որչա՞փ առաւել տարբերութիւն չը պիտի նշմարէր եթէ մեր գիտաւորին տարին աւելի կարճ ըլլար, այն տանն ս'ըքան ալ ուժգնութեամբ ի գործ դնէր իր զիտողութիւնը, չէր կրնար ճիշդ գաղափար մը կողմնը արարչագործութեան դարձուղարձ ընթացքին:

Գիտաւորաց յատուկ այս մասնաւոր առաւելութիւնէն զտա, ուրիշ ոչ նուազ լաւ յատկութիւն մը կ'ու ունէր, այն է՝ մեր երկրին և միւս աշխարհաց մէջ և մշտապես բազմատուրթիւն մը ընկուլ կարողութիւնը:

Ինչպէս նախապէս տեսանք, մոլորակաց տարիքը իրենց Արեւէն ունեցած հեռաւորութիւնէն կախում ունի: Մեր զրութեան ամենէն ծեր մարտիկը Նեպտունն է, իսկ երկաստորագոյնը Փայլածուն: Բայց երբ գիտաւորը առաջին անգամ մեր զրութեան մէջ մտաւ, արդէն ամենէն աւելի տարէց մոլորակները բնակչութիւն ունէին, այնպէս որ չէր կրցած ներկայ ըլլալ անանց և ոչ մէկին կենաց ծագումին: Նեպտուն, որ ամենէն հեռաւոր և ծայրագոյն մոլորակ աստղն է, իր միջօթէն ան-

ցուցած էր արդէն . այդ հեռաւոր միջավայրին մէջ բլիբր անմիջապէս սառած և ամուլթեան դատապարտուած կ'ըլլար . բայց բնութեան գործող զօրութեանց պէսպիսութեան շնորհիւ (աշխարհները ծնած են իրենց սահմանեալ դրից ներդաշնակ եղանակաւ) , Նեպտուն իրեն յատուկ կենաց պայմանովը կ'ապրէր այդ երկնային անապատին մէջ , երկրային մէկ ու կէս դարէն աւելի տարեշրջան մը ունենալով :

Նուազ տարէց Ուրանոսը , իր միջօրէին մէջն էր . հոն կեանքը ուրիշ կերպարան , տարբեր ձեւ և այլ տեսարան մը կը ներկայէր , կեանք մը , որ ամենեւին բազդատութիւն չկրնար ունենալ նախորդին հետ :

Մարդկային երեւակայութիւնը , ամենամեծ արկածախնդիր յանգեցնութեամբ հանդերձ չկրնար վերահասու ըլլալ և ամուլ կը մնայ և կատարեալապէս անկարող է աշխարհիս կեանքէն տարբեր կացութիւն մը ըմբռնել . անկարող է մանաւանդ իրեն անձանօթ ձեւեր նկարել իր մտայը մէջ : Ուրանոսային աշխարհին բոլորաբը կը գլորին , յետախաղաց ընթացքով չորս հաս լուսիններ , որոնք իրենց ավրոջը նման , նախկին երիտասարդական զէպքերը շատոնց ի վեր ժամանակագրական անցեալին մէջ կը դասէին :

Ուրանոսական տարին երկրային (84) ութսունը չորս տարիներուն կը համապատասխանէ :

Սրդէն տեսանք Երեւակը , որ իր պայծառութեանը մէջ , զէպի կատարելութենէ կատարելութիւն կը բարձրանար . անխոհմութիւն կ'ըլլայ ը-

սել թէ , Երեւակին բնակչութիւնը կը քալէր կատարելութեան զէպի գագաթնակէտը , ուր արդէն Ուրանոս հասած էր . վասն զի աշխարհի մը կատարելութիւնը , ուրիշի մը համար կատարելութիւն չէ , և երբէք կարելի չէ անոնց պատմութեան շարքը դասաւորել և թուարկել միեւնոյն ստորիճանական կարգադրութեամբ : Ամեն աշխարհ ուրոյն , մասնաւոր և յատուկ ճակատագրական կենաց պայմաններն ունի , և կատարելութեան հասնելու իրեն յատուկ միջոցներով կ'ընթանայ : Երեւակցիները երեսուն անգամ աւելի երկայն տարի մը ունին և ութը արբանեակներով ութը տեսակ լուսնական ամիսներ կը հայթայթեն :

Լուսնի մագը լայն ժամանակ իր կենաց բոցանը չու ռժեհով . կատարեալ երիտասարդութեան հասակին մէջն էր : Ի հարկէ՝ աշխարհիս այս միոց Նս մէջ ունեցած զէպքերը , շատոնց ի վեր ունեցած և անցուցած էր անի . այլևս իր կենսական ուժերը մեծ դանդաղութեամբ կը բախէին :

Անոր տարին մերինէն տասներկու անգամ աւելի երկայն ըլլալով , իր նախկին մշտնջենական գարունը կը պահէր , մինչդեռ մեր երկրին եղանակները , հողիւ հսգ զգալի ըլլալ սկսած էին : Չորս արագբնի մաց լուսիններ կը դառնան անոր շուրջը , օժտեալ իրեն պէս , յորդութեամբ կենաց , ի նորանշան պայմաններով :

Մեր գլխաւորը , զերկիրս առաջին անգամ տեսնելէն առաջ , այս ամենքը տեսած և զիտած էր , և գուցէ անտարակոյս , այս էր մեր գունդին հան-

դէպ ունեցած արհամարհոս անտարբերութիւնն պատճառը:

Լուսնթագի գունտին քով, մեր երկրին տէրառու փոքրութիւնը՝ իր ամենամեծ ուշադրութիւնը գրաւած և այդ ու մեր երկրին վարկը կտրած էր իր մտածութեանցը մէջ: Երկիրս պարզ լուսինի մը ազդեցութիւնը ունեցած էր իր վրայ, անոր համար չէր ուզած խոտորիլ իր անտարբերութեանէն: Յիրաւի Լուսնթագի և երկրիս մեծութեանց տարբերութիւնը շատ պերճախօս է: Այդ հսկայական գունտին արամագիծը տասնըմէկ անգամ աւելի մեծ է քան երկրիս արամագիծը, որով անոր մակերևույթը քսանը վեց անգամ աւելի տարածեալ է իսկ իր զանգուածը հազար չորս հարիւր անգամ մեծդի է քան մեր գնտին զանգուածը:

Հրատ մոլորակը այն ժամանակները գրեթէ գունտիս ներկայ վիճակին համապատասխան վիճակի մը մէջ կը գտնուէր, թէպէտեւ երկրագոյնն էր բայց շուտ չէր մեծցած և իր աճումը նախնական դրիցը մէջ կանգ առած էր: Մեր հերարձակ աստղը, բարոյական անգործութեան դօրութեամբ երկրիս յառած մնաց, և դժուար էր այլևս անջատուիլ անկից և հետևելի ուրիշի մը, որ այնքան մեծ հետաքրքրութիւն մը չէր շարժեր. վերջապէս երկիրս անոր մտածութեանցը խոնարհ աւարկան մնաց:

Լուսինը այն ժամանակ բնակեալ էր փոքր ժողովուրդէ մը, որ Լուսնաբնակ կը կոչուէր: Այս աշխարհը ճշմարտիւ այնքան մանրիկ գնտիկ մըն էր, որ յիրաւի մեր նշանաւոր ճամբորդին ուշադրութիւնը գրաւելու արժանի չէր:

Մեր գիտաւորը թէպէտեւ երկրիս հանդէպ ազնիւ արամագրութիւններով օժտուած էր, սակայն պատահական դէպք մը՝ որ արարածոց կենացը մէջ յաճախ կը պատահի, քիչ մնաց որ վերջ պիտի տար մեր ուղեւորին յարստեւ և շինիչ զննութեանցը: Միջոցի տարածութեան մէջ այնպիսի սովորութիւններ կան, որ մեր կենաց սովորութեանց կը համապատասխանեն: Պիտի ճառեմ պահ մը այն խնդրոյն վրայ որ շատ կարեւորութիւն ունի, այսինքն մեր գիտաւորին ամուսնութեանը վրայ:

Մեր գիտաւորը՝ քսանը եօթը հազար տարիէ ի վեր, տիեզերաց միջոցին մէջ, կը տեսնէր բաւական մեծ դանգուածով, պաղպաջուն երկնաբաւ մը: Միայնութիւնը՝ միտքերը իրարու կը մօտեցնէ, կ'ըսեն, և գուցէ ան իր միայնութեանը մէջ դէպի սոկեհներ աստղը ձգուելը կզգար:

Իր ցեղին հոկաներէն մին էր այս երկնաքարը որ 27,000 տարուան ժամանակամիջոցին մէջ հետզհետէ իր շրջագիծը մօտեցուցած էր գիտաւորին՝ շնորհիւ տիեզերական ձգողական զօրութեան (այս երկնային մետաղական քարերը գիտաւորներու նման արեւուն բոլորափքը կը շրջին): Վերջապէս, վայրկեանի մէջ շինդ հազար մղոն արագութեամբ, ձգողական կեղբոնին թանձր խտերը կըտրելով, հերարձակ աստղին հասաւ, միացաւ և յայնըմհետէ անոր զխուռն միջուկը կազմեց:

Արդեօք բոլոր գիտաւորները այս կերպով ծագում առած են...: Պատմութիւնը մօտեջ է այս մասին և այն իմաստունները՝ որոնք ձեռնարկած են այս խնդրին լուծման, այնպիսի անարդարանա-

լի նմանութեանց և համեմատութեանց փաստեր ներկայած են, որ ծիծաղելի չափազանցութեանց մէջ ձգած է գիրենք: Արդ, գիտաւորները ի՞նչ կերպով որ ալ ծագում տա՞նք ըլլան, սա ճշմարիտ և հաստատուած է թէ, Ովկիանոսի ձկերէն աւելի թիւով կը գտնուին երկնից տարածութեան մէջ:

Քերէր(*) ահա թէ ի՞նչ կ'ըսէ, —

«Ի՞նչ պիտի ըլլայ եթէ ասոնց թիւը անսոսման և անընդհատ կերպով բազմանայ: Մարդս բաւական կորովամիտ ըլլալու է, ամենայն պաղարեւոտութեամբ դիտելու այս աստեղաց բազմութիւնը, որ իրենց արագընթաց թռչելի մէջ խոտորնակի կը կտրեն իրարու ընթացքը: Մարդ ապշած կը մնայ երբ կը մտածէ թէ, ի՞նչպէս կրնայ որ այսքան բազում շրջագիծներ՝ կտրելով երկրի շրջագիծը, գրեթէ ամեն կողմէն գիտաւորաց և մտորակաց մէջ աւելի յաճախ ընդհարումներ տեղի չեն ունենար»: Այսպիսի պատահարաց մասին աւելի երկար չպիտի խօսինք:

Մնզի համար ասկից վերջը մեր գիտաւորը կը մնայ ինչ որ էր մինչեւ հիմա և միակ ներգործող անձնաւորութիւնը: Երկնաքարը այլեւս ընկղմած և անձնականապէս անգոյութեան մտանուած է:


Մինչ այս գործողութիւնք տեղի կունենային երկրիս վրայ, ծովը՝ Բարիզի ծագում առնելիք դաշտին վրայէն քաշուած էր. ներկայ ժամանակի գետերէն շատ աւելի լայնածաւալ գետ մը, ներ-

(*)Ման. Քարգ. Քերէր Գերմանացի նշանաւոր աստղաբաշխ մըն է, ծնեալ 1571—1630:

կայ Սեն գետին անկողինը յորդելով կը տարածուէր և ծովը կը թափէր՝ ոչ թէ նշանաւոր Հալրի գետաբերանը, այլ շատ աւելի վեր դէպի Քոնսթանտնուպոլիս հրուանդանը, ընդհակառակն, Ովկիանոսին մէջ երկնցած էր: Ամեն մարդ գիտէ թէ՛ գետերը իրենց բերած աւազովը կամաց կամաց իրենց գետաբերանները լեցնելով ցամաքը կը յառաջացընեն. մինչդեռ ծովը ալ իր կարգին, ծովկղերեայ ուղղաձիգ ժայռերը տակաւ առ տակաւ կը ծելով կը մաշեցնէ. ծովկղերեայ աշխարհագրական կերպարանները անդողար ձեւափոխելու վրայ է:

Բնութիւնը արդի վիճակին մօտենալու վրայ էր: Թաշուք կ'երգէին անասուաց մէջ, որ գրեթէ ամբողջովին կը ծածկէին արդի Գաղլիան:

Արջամուկն, Սկիււն, Կրէսն, Կուզըր, ձիերը, շուներ և կատուն՝ այն անվնաս կենդանեաց շարքին նաւակափքը կը կատարէին. որոնք մարդու ըստեղծումի դարէն վերջն ալ տեւականութիւն պիտի ունենային: Առաջին կապիկները լիանի մատաղ ոտներուն վրայ կը մազլցէին. ասոնք էին Բիքիէի և Տրիօբիքիէի և Միգօբիքիէի տեսակները, որոնք այլանդակ կապիկութիւններով և միմտութիւններով մարդկային ապագայ փաստարանից կարապետները կը ներկայանային:



Դ.

Բարիզցիներ նախ քան զԲարիզ

Գիտաւորները իրենց երկարատեւ և համբերատար զննութեանց ժամանակ, սքանչելի սովորութիւն մը ունին, այն է թէ՛ անկողնակալ բանականութեամբ լուսաւորուած, իրենց աչաց տեսածէն զսա ուրիշ բաներու չեն վստահիր:

Նախապաշարեալ չեն և չեն կրնար նաև ամբաստանուիլ թէ՛ պաշտպանի և կամ ինտամակալի մը հաճոյակատարը ըլլան, թէ՛ իրենց մտածածը ազատ չեն սրտայայտեր և կամ չի մտածածնին կը խօսին. անկախ ճամբորդներ են, իրենց կեանքը, բաղդատական զննութիւններով կանցընեն և գուցէ խիստ երկնից է՛ն գիտուն զաւակներն են:

Արդ, օրինակ մը տայու համար թէ ի՛նչ խոհականութեամբ կը գործեն, կը յաւելունք թէ, երկրիս հանդէպ բարեացակամ սիրով հրապուած և իր մտացը մէջ անոր գեղեցկազարդ մակերեւոյթին վրայ, իմացական առաջին էակ մը սղջունելու հաճելի փափագը ունենալով հանդերձ, մեր գիտուողը, երրորդական դարուն վերջաւորութեանը ժամանակ փնտռեց, (այսինքն 104, 490 թուականին) միւս աշխարհաց մէջ իշխող էակաց առաւել կամ նուազ նմանութեամբ, բարձրագոյն բնակիչ մը քայց չկարենալով նշմարել և ո՛չ մի նշոյլ փափագած էակին, անկեղծութեամբ և իրաւամբ համոզուեցաւ թէ, այդ էակը ստուգապէս գոյութիւն չու-

նէր, և թէ, երկիրս պէս պէս գեղեցկութեամբ զարդարեալ, պարզապէս կոյր միջոցին մէջ կը փայլէր:

Գաղղիական կղզին ջրերու մէջէն դեռ նոր երեւան եկած էր:

Ինչպէս կը պատահի բարձր հանձարներու, որոնք խոնարհագոյն էութեանց ապագայ ճակատագրին նախազգացումը կ'ունենան, մեր գիտաւորնալ ձգուեցաւ մասնաւորապէս դէպի Երկրիս այս մասին վրայ:

Արդէն ծովը երկիցս տարածուած էր այդ սղ-նըւական հողին վրայ. անոր երկրարանական ծովեզերեայ ձեւակերպարանը մշտատեւ ըլլալու բնոյթը հազիւ թէ ստացած էր և բազմախտոն բնակչութիւն մը կը տիրէր հն:

Այն կէտին վրայ՝ ուր Բարիզ քաղաքը պիտի կանգնուէր, գիտաւորը նշմարեց արդի Բարիզցիներուն հնագոյն նախնիքը. ճահիճներու տղմին մէջ պոռչտացող ձիազետիները, մեծագաղանները, ուղտերը, և այլեւայլ որոճացող անասուններ, որ դաշտերու մէջ կը թափառէին. հսկայ եղջիւրնեքով զարդարուած եղնիկներ իրարու կը հանդիպէին անտառներուն մենաստաններուն մէջ: Սին գետին եզերքի դաշտերուն վրայ. ուր սպառազայ փափկասուն վայելչագեղներ իրենց պաճուճանքը պիտի ցուցադրէին, ունայնութեան պատկերը եզող սիրամարդներ կը տեսնուէին. անոնց քով կը նշմարուէին նաև խորխտաքայլ մեծամեծ արագիւններ:

Բնակչութիւնը, ինչպէս ներկայիս մէջ, խառ-

նիխուռն հաւաքածոյ մըն էր. ճագարներ և կրիաներ իրարու կը հանդիպէին. շուները արհամարհանքով կը նայէին կատուններուն, պղախկ թռչունները մեծերուն կը հետեւէին, ճայը զեռ չէր սուվորած օտարաց փետուրներով զարդարուիլ: Բաց դաշտերուն մէջ ձիերը՝ իրենց ծածանող սպիտակ բաշը ձգած, ազատօրէն կ'արշաւէին, արօտաց մէջ՝ եզները երամակ կազմած կ'արածէին. երինջները, հեղեղատաց եզերքը ջուր խմելու կ'իջնէին և մէկ մարդագետնէ միւսը կը յաճախէին. այն ատենուան երիցագոյնը եղող ծանրարարոյ փիղը, խաղաղաւէտ պետութեան վրայ իշխանարար կը հըսկէր: Այս համայնապատկերին յետին նկարագիրը ըլլալով, որ մարդուս ներկայութեանը յոյս կուտայ, հեռաւոր լեռանց ձիւները հորիզոնին վրայ կը բարձրանային. սեւ նոճիներ անառաջ կ'իշխէին և նշգրտեաններ ու կաղնիներ բլուրներու կողերը կը զարդարէին. լորիներ կը պճնէին գետեղրները. դաշտերու մէջ կազմախմբներ կը ծառանային և ուռիներ, կարկաջանոս աղբիւրներու վրայ կը հակէին:

Մէկ աշխարհէ միւսին մէջ տիրող պէսպիսութիւնը, շատ մեծ տարբերութիւն ունի. մէկ երկրի մը վրայ բնութեան արտայայտութիւնը չնմանիր ուրիշ երկրի մը մէջ եղածին: Էութեանց կազմիչ նիւթը բացարձակ հնազանդութեամբ կրաւորական է և հրաշալիօրէն կը կաղապարուի զայն կառավարող զօրութեան քմահաճոյքին:

Եւ ահա այս պատճառով, այլ և այլ գունտերու վրայ, տարբեր աստիճանաւ գտնուած բը-

նական ուժերը՝ այդ գունտերուն մէջ մէկմէկէ իսկապէս զանազան էակներ յառաջ բերած են: Անհրաժեշտ և անսահման այս պէսպիսութեամբ հանդերձ, մեր գիտաւորը դիւրութեամբ հասկըցաւ թէ երկիրս իր վերջնական վիճակին կը մերձենար, որուն՝ տիեզերաց մէջ եղած միւս ընկերներ արդէն հասած էին և անոնց մէջ տանուտէրը իր փականութեանը կը տիրանար: Յիրաւի միւս մուրաբաններուն չէր նմաներ, բայց ինքնայատուկ նկարագիրը պահելով, ըրած պատրաստութիւնները ակներեւ էին տանելիք մը գալստեան. ինչպէս տարբեր ճաշակաւ և այլազան նորածեղութեամբ յարդարուած և նոյն իսկ ներհակ նկարագրով օժտուած, շարք մը յարկարամիներու զօրգարանքը, մօտալուտ հիւրի մը գալստեան համար պատրաստուած ըլլալը կ'ապացուցանեն:

Բայց սակայն, արդեօք կարելի՞ է հաւատալ, որ մեր գիտաւորը, երեք հազարեան երեսուն տատարիներ եւս սպասեց իր գոհունակութեան սկզբնաւորութիւնը տեսնելու համար: Իր շրջանի յաջորդական անցքերուն մէջ յաճախ խարուսիկ գիւտեր ըրաւ. շատ անգամ մարդկային ձեռագործի հեռքեր նշմարել կարծեց, ուրիշ անգամներ, այն հեռաւորութեան մէջէն, ուր կը մնար միշտ, նորանոր էակաց, շիմբանգեներու, կոբիլներու, մաքաճներու կամ օրանկօրաններու խուճեր կը տեսնէր, որոնց վրայ իր փափագած արտայայտութիւնը կուզէր տեսնել, բայց միշտ անմիջապէս յուսախար եղած, պատրանաց զո՞հ եղած ըլլալը կը զգար:

ժամանակ մը՝ այսինքն 44, 164ին, 41099ին, 38, 034ին և 34, 969ին (միշտ Քսէ. առաջ) այս ժամանակամիջոցներուն կատարեալ յուսոյ և ակնկալութեանց մէջ ապրեցաւ :

Ինչպէս Սպրիլ ամսոյ մէջ գեղեցիկ և լուսաւոր ամառնային օրերու երեւումը կսկսի՝ լոյսը, ջերմութիւնը և անուշահոտ բուրմունք դաղջ մթնոլորտին մէջ կ'իջնեն, այնպէս ալ երկիրս իր ապրիլը կանխող դարագլուխ մը ունեցաւ :

Ներկայիս մէջ կորուսեալ մեծ երկրի մը գեղածիժազ դաշտերուն վրայ կը ծաղկէր արարածոց ցեղ մը որ կարծես իշխանութեան հանգամանքը ունէր. երամակներ, գոգցես թէ կամովին ծաղայութեամբ, անոր շուրջը պատած կը թուէին տարերք արդէն յարմարագոյն պատրաստակամութիւն մը ցոյց կուտային, մեծ թագաւորին նպաստաւոր և վայելուչ հաստատմանը :

Բայց այս ամենը տհաս պտուղներ էին և գիտաւորը լաւ հասկցաւ թէ՛ ասոնք մաղղիկ չէին : Գուցէ կարելի ըլլայ այս նախնական արարածները Այրաբնակ անուանել, որովհետեւ բնական այրերու և քարանձաւներու մէջ կամ լերանց կողերուն և կամ անտառաց միայնութեան մէջ կ'ապրէին, և երբէք քար քարի վրայ դնելով ամենակոշտ շինւածք մը անգամ կառուցած չունէին : Գուցէ ասոնք պիտի ըլլային մարդկային ցեղին բունը, կազմելով միութեան գիծը՝ որ կը կապէ նախնական կենդանեաց ցեղերու հետ, վասն զի բնութիւնը nusում չընէր :

Բայց, մեր ուշադիր ուղեւորը, չկրցաւ լուծել

այս մեծ գաղտնի խորհուրդը : Եւ վերոյիշեալ չորս տարիներուն (իրեն) մէջ դիտեց զանոնք, առանց վերահասու ըլլալու անոնց իսկական բնութեանը և երբ Քս.է առաջ 31, 904ին վերադարձաւ եկաւ իր մերձակէտին, զանոնք անհետացած գտաւ և իզուր աշխատեցաւ երկրիս վրայ, անոնց սերունդին յաջորդութեան հետքն իսկ նշմարելու :

Կոյս անտառաց բացատմաններուն մէջ՝ երբեմն կը տեսնուէին կապիկներ, մէկ մէկ գաւազան ի ձեւին, երբեմն ալ ասոնցմէ խումբեր կազմւած, ծառի հասա ճիւղերով զինուած, անտառաց եղերաց վրայ, իրարու դէմ գաւազանաշարժութիւններ կը կատարէին. երկու կողմանէ մեռեալները և վիրաւորեալները՝ առանց ամենափոքր արգահաստանաց, դաշտին վրայ մոռացութեան մէջ կը ձգէին : Այլուր՝ ուրիշ տեսակ կապիկներ բարեկամական սիրով և անմեղաբար իրարու հետ խաղերով կը կատակէին, թէպէտեւ ի հարկին, երբեմն նենգամիտ շարժումներ ալ կ'ընէին և այս ալ իրենց գոյզն ուշիմութեան ապացոյցը կրնայ համարուիլ :

Այս չարածձրներէն երբեմն խումբեր՝ թմրած կոկորդիլոսի մը քունը խանգարելով կը դուսնուին. բայց սա ալ ստուամով արթնցած սարսափահար, ի փախուստ կը դարձնէր զանոնք և ինքն ալ իր կարգին՝ զուարճանալու համար, երբեմն անոնցմէ պզտիկները կամ անձրկաճները թաթովը կորզելով գլուխնուն համը կը նայէր : Դարձեալ ուրիշներ՝ տօնական խրատմանութիւններ կը կատարէին, սարքելով՝ հաւանականաբար իրենց ընկերութեան

աւազանւոյն հարսանեաց հանգէսը : Ճշմարիտ ըսե-
լով, այս միակ էակներն էին՝ որ գիտաւորին հե-
տաքրքրութիւնը կրնային շարժել և այնպէս որ
կրնար դիտել զանոնք յիտուն հազար տարիներ ա-
ռանց ձանձրանալու :

Ուրիշներ ալ կային՝ որ ասոնց ուշիմութեան
և ո՛չ իսկ քառորդը ունէին : Ձիերը, փիղերը, շու-
ները և կատունները աւելի հլու և համբոյր էին,
զուցէ որ մը մարդու ձեռամբ կրթուելով այս ըն-
տանի ցեղերուն կարողութիւնը բարձրանար, կա-
պիկներէն աւելի ուշիմ հանդիսանալով : բայց առ
այժմ այս վերջինները՝ անվիճելիօրէն այս դարուս
արարածոց առաջին կարգը կը գրուէին :

Աւելի վերջերը, մեր գիտաւորը, հասարակա-
ծի այրեցեալ գօտիին վրայ, ուրիշ արարածներ
նշմարեց, որոնք թէպէտ նախկիններուն հետ շատ
նմանութիւն ունէին, անոնց պէս թաւ էին, պըզ-
տիկ ընտանիքներ կազմելով կիրճերու և անտառ-
ներու մէջ կը բնակէին և երբեմն երբեմն իրարու
հետ կը բանակցէին, թոչուններ կ'որսային և գի-
շերները կը պահուըտէին : Բայց երկու կէտի վրայ
առաջիններէն կը տարբերէին, այն է թէ՛ առա-
ջինները շատ զուարթ էին, իսկ ասոնք աւելի դա-
զանարարոյ և դժնեայ ըլլալ կ'երեւէին, և երբեմն
փայտի կոճղերով հրաբխածեւ կրակ կը վառէին,
մինչդեռ առաջինները՝ այդ բանը բնաւ, ո՛չ մտա-
ծած, և ո՛չ ալ փորձած էին. ասկից դատ ասոնք
ամենքն ալ երկու կաթիլ ջուրի պէս իրարու կա-
տարեալ նմանութիւն ունէին :

Բարեբաղդ զուգադիպութեամբ մը, որ միայն

վէպերու մէջ կ'երեւի, մեր գիտաւորը որ՝ ինչ-
պէս՝ ըսինք, արեւէն (15, 387, 800 . 400) տասնըհինգ
միլիաւ երեքհարիւր ութսունը եօթը միլիոն ութը
հարիւր հազար չորս հարիւր միսն կը հեռանայ գէ-
պի միջոցին մէջ. այս զիտողութիւնները կատա-
րած տարին իսկ, զուգորդ(*) շրջագիծ ունեցող,
ուրիշ մեծ գիտաւոր աստղի մը հանդիպեցաւ որ՝
Յուշկապարիկ(**) համաստեղութեան ալՅա Արեւին
կողմէն կուգար :

Այս արեւը մեր դրութեան դրացի եղած ա-
րեւն է, և մեղմէ՛ 8, 603, 200, 000, 000 միսն հե-
ռու է :

Այսպիսի հազուադէպ հանդիպումէն օգուտ

(*) Զուգորդային գիտաւոր կ'ըսուին այն գի-
տաւորները, որոնք փոխանակ արեւուն բոլորսիք
փակեալ քաղաքի մը քաղաք եւ պարբերաբար
վերադառնալու միեւնոյն միջավայրին մեջ, ձուա-
նել քաղաքի ենդելով. կը հեռանան այլ եւս չը
վերադառնալու համար :

Այսպէս՝ արեւուն ձգողութեան սահմանէն դուրս
եյնելով կը հեռանան անոնք անորո՞ւ սահմաներու
մեջ. երբեմն ուրիշ արեւու մը սահմանը կտրելով՝
ժամանակ մը անոր ազդեցութեան միջավայրին մեջ
մնալի վերջ, կիլիան կարծեալ մեկ ուրիշ արեւու
մը դուրսեան մեջ եւ այսպէս կը շարունակեն ի-
րենց անկանոն քափառական ընթացքը :

(**) Հարաւային կիսագունէին մեջ համաստե-
ղութիւն մըն է :

քաղելով, երկու հերարձակ աստղերը, զուգընթաց ճամբորդեցին և մինչև Եկատնի շրջագիծը՝ Յուշկապարկի գիսաւորը ընկերացաւ մեր գիսաւորին ։

Այս զուգընթացական ժամանակամիջոցին մէջ, այսինքն երեք հարիւր իննսուն տարի միայն կրցան իրարու հետ տեսակցիլ . և այս կարճ ժամանակը բաւական եղաւ մեր գիսաւորը ուրախութեամբ լիցընելու . վասն զի իր ուշիմ ընկերակիցը զինքը ապահովցուց թէ՛ քանի որ երկրիս վրայ կրակ վառուիլը տեսած էր, ա՛յ իրաւամբ կրնար հետևցընել թէ՛ հոն ստուգապէս ուշիմութեամբ օժտեալ արարած մը կար ։

Ա՛ սկսած էին իրարու հետ անդրադարձնելով թագաւորութեանց վրայ խօսակցիլ և զուգորդաշրջան գիսաւորը՝ իր խորին հմտութեան և փորձառութեան ապացոյցը տուաւ, վասնզի չիք ինչ աւելի յարմարագոյն քան ամենամեծ և երկարատեւ ճամբորդութիւնները որ՝ այլ և այլ երկիրներու բազմատական արժէքին վրայ կատարեալ հմտութիւն և գաղափար մը կուտան . բայց միւս կողմանէ երբեմն ալ, ազգայնականութեան գաղափարէ անկախ ըլլալով, բացարձակ ճշմարտութեանց վրայ մեր ունեցած դատողութեանը նուազ հաստատութիւն կուտան ։ Եւ այս պատահական գիսաւորն ալ սոյն ճշմարտութեանց ծանրակշիռ խնդրոյն վըրայ անստուգութեան մէջ կը տատանէր ։ Եւ ահա այս պատճառաւ մեր գիսաւորը, որոշեց զգուշանալ անծանօթին ձգողական հրապուրանքէն և չուզեց երբէք իր շրջագիծը փոխելով, զուգորդ շըրջագծի մը վերածել ։

Հոս, անդրադարձնելով միջոցին մասին իրենց մէջը ունեցած վիճարանութեանց վրայ չպիտի ճառեմ, վասն զի մեր հայեցողութեան սահմանէն դուրս է ։ — Մերտեսողութիւնը (հեռագիտակալին տեսողութեան վրայ է խօսքս) Եւսթանիէն (Նեպտոն) անդին չ'անցնիր . անոր կայսերական մականը 2.300,000,000 մղոն միջոցի վրայ միայն կ'երկարի ։

Մեր անվեհեր գրասաշրջիկը իր յաջորդ գալըստեան, երկրիս մօտենալու ժամանակ, զուշակեց արդէն թէ՛ այդ սիրելի աշխարհը, իր արեւածագին ժամանակ, այնպիսի հաճոյական և մեծաշուք կերպարան մը պիտի ընծայէր, որ ո՛չ երբէք նախապէս տեղի ունեցած էր ։

Անի, պարզ երկնից տակ, իր երիտասարդութիւնը և պայծառափայլութիւնը կը ցոլացնէր ։ Առաւօտեան ցոգով զովացեալ, կանանչագեղ դաշտերը կը փայլէին, ծաղիկները կը բացուէին և դաշտային վարդենիները կը փթթէին՝ փշեղէն թըփոց վրայ տարածուելով ։

Արդ ուրեմն, ի հարկէ դարագլխոյն վերջն հասած էր և չորրորդական. դարագլուխը կըսկսէր ։

Եթէ լիւնաշղթաներու վրայ դեռ բազմաթիւ հրաբուխներ կը մնային, եթէ կարմրագոյն շոգիներ պըստուտակածեւ յերկինս կը բարձրանային, եթէ երկիրս դեռ կը զողզար և իր թմբած անդամները ձգտումներ ունէին, եթէ դեռ թանձրամորթները ծաղկաւէտ գետինները կը կոխտէին, մինչդեռ առիւծը և վագրը ընդարձակ անտառաց խորը կը մոնչէին, եթէ մեծամեծ թեւաւոր սրսորդներ, պատառելոն

համար պղտիկներուն վրայ կը խոյանային, մինչդեռ ազի արիքները անողոքելի հրէշ գաղաններ կը թագուցանէին, պատճառը այն էր թէ՛ երկիրս երբէք ամենակատարեալ աշխարհ մը չպիտի ըլլար, այլ պիտի ըլլար և մնար ստորին աշխարհ մը միայն՝ յորում աւաղ... մահու օրէնքը պիտի իշխէր, իբր կեանքի գերագոյն պայման:

Բայց յայտնի կերեւէր որ՝ նախնական տգեղ դէմքերը անյայտացած էին և աւելի յստաջողէմ բնակիչներ յաջորդած էին անմեց, ի հարկէ սասոյգ և վերջնական հիման վրայ հաստատուած: Լեռներէն մինչև զաշտերը, անտառներէն մինչև ի ծով յայտնի կերեւէր թէ՛ այսպիսի բնակարանի մը արժէքը ըմբռնող էակի մը տիրապետութեան դարը ապագային վերապահեալ չէր այլևս, հապտաներկայիս մէջ էր:

Մեր ուշադիր Գիսաւորը՝ անյագարար կը հսկէր և կը փափաքէր տեսնել երկրիս վրայ այն էակները՝ որք կարող ըլլային ըմբռնել այս հսկայ տեսարանաց գեղեցկութիւնը. աղնուական և զօրաւոր արարածներ՝ որոնց ճակատը մտածութեան սրբազան ճաճանչով լուսաւորուած ըլլար:

Յիրաւի գիսաւորական վեց տարի առաջ (18,390 տարի) տեսած էր մազոտ երկոտանիներ, որոնք մէկ քարայրէ միւս քարանձաւը կ'անցնէին, կատաղարար որսեր կ'ընէին. դարձեալ տեսած էր նաև յաջորդ տարին (իրեն, այսինքն 3065 տարի վերջը) աղեղներով, նետերով, կացինով և գայլախաղեայ դաշոյնով զինեալ արարածներ, որ երբեմն տղմապատ վայրերու մէջ, նոյն իսկ կուզ-

բերու նման, լիճերու վրայ կը բնակէին. այսուամենայնիւ, չէր կրնար համոզուել թէ՛ մարդկային ցեղը սուրիշ աւելի կատարեալ ներկայացուցիչ մը չունենար: Ամեն անգամ որ իր մերձակէտէն կանցնէր. չհրմայէս կընդգրկէր իր տեսութեամբը աշխարհիս բովանդակութիւնը, բոլոր բաժանմամբը, և սիրար յայնժամ կը բարօխէր ամեն անգամ որ խորեպատիր գիւտեր կ'ընէր:

Յիսուն հազար տարիէ, մանաւանդ տասը հազար տարիէ ի վեր. կըստպատէր մարդու երեւմանը: Ճշմարտիւ, ա՛յ արժանի էր իր համբերութեանը վարձատրութիւնը ստանալու:

Հիւսիսայս լեռանց բարձրաբերձ շղթային անդի կողմը, Քանգէս և Էնտուզի բերրի և արգագաւանդ հովտաց մէջ, մշտատեւ և բարերար գարուն մը ափրէր: Իրանական զօղիակոտը իր ծագումնաւէր երկնից այն կէտին վրայ, ուր 19,337 տարւոյն արեւադարձը կ'որոշուէր:

Երկու մեծամեծ ցեղեր աստղաբաշխական ժամանակագրութեան ճագումին հետեւեցան և ապրեցան: Այն միջոցին, որ մեր գիսաւորը կ'անցնէր, այս երկու ցեղերը միասին էին. թափառական Արիական ցեղերն էին զօրս երբ տեսու մեր բարեկամը, անմիջապէս անդրադարձաւ թէ՛ նախապէս տեսածներէն շատ աւելի բարձր էին. իրենց արտաքին երեւոյթին յաւաքիմութեանէն զատ՝ աներկրայելի մտաւորականութեան մը նշաններ կարտայայտէին. ընտանիքներ միանալով, ցեղեր առաջ կուգային և այս նախնական ազգային կեանքը երկրէ երկիր տեղափոխուելով, դէպի Ա-

րեւը կը դիմէր: Արեւելքի ճնուռնդն էր այն, որ երեւան կուգար և գուցէ մարդկութեան որորանը ըլլայով:

Արդեօ՞ք Աստուած, իր ձեռքը կարկառած իր վերջին արարածին ճակատին վրայ, խղճի յաւիտեանական անջնջելի կնիքը պիտի դրոշմէ՞ր, թէ ո՛չ դեռ չէր դրած իր մատը այս շատ երիտասարդ արարածին սկար ճակտին . . . :

Իմացականութեան գործածութիւնը նորածին երեխային ծննդեան երկրորդ օրը երեւան չգար:

Երբ խողկաղին մը նետուի բարեբեր հողի մէջ, տարիներ պէտք է անոր գաղտնի սերմը ճմլելու և ծլելու, սէպք է շատ ձիւներ անտառաց հողը ձերմելոցնեն, շատ մը գարնանային ցօղեր հասին, Յուլիսի խել մը փրկարար ջերմութիւն անտառաց փանծրախիտ բարձանց վրայ ճառագայթին և թաասանցեն: Եւ այսպէս երկար և երկար ժամանակէ յետոյ՝ կանանչագեղ մատղաչ կաղնի մը, հովերու ուժէն կը տատանի և փոքրիկ թռչուններ թառելով վրան, կը խոնարհեցնեն անոր կակուղ ճիւղերը: Եւ երբ դարեր ալ կ'անցնին այդ մեծապանծ ծառոց գագաթներուն վրայէն, այդ գարաւոր ժամանակամիջոցէն, մեծատարած ճիւղաւորմամբ, կաղնիին ճշմարիտ մեծութիւնը երեւան կուգայ: Շատ մը սերունդներ կուգան հանգչիլ անոր շուքին տակ և թուանշաններ չեն բուեր անոր տաքիքը հաշուելու:

Ինչպէս բնութեան մէջ ամեն բան կ'աճի գանդաղութեամբ, այնպէս ալ աստուածային գոր-

ծառնութեանց մէջ ամեն բան կը յառաջդիմէ գարերու աղնուակական երկարատեւ յաջորդութեամբ:



Ե.

ԱՐԵՒԵԼՔ

Մեր լուդահեր ասողը, որ դորովագութ հոգածութեամբ մը, երկրիս ստեղծագործութեան յաջորդական զարգացման կը հետեւէր, տեսաւ որ այս վերջին ժամանակներս, այսինքն մէկ դարագլըխէ միւսը, շատ աւելի արագ յառաջդիմութիւն մը կատարուած էր հոն:

Սակայն և այնպէս երեք հազար տարին այնքան խեղճուկ տեւականութիւն մըն է, որ այդ կարճատեւ ժամանակին մէջ յառաջ եկած զարգացումը շատ սկար էր: Երեք հազարեան բազում տարիներու րոտրմամբ միայն, մեր քննիչ ասողը կրցած էր ստուգել ստեղծագործութեան աճումը և անոր բարձրացումը գուցէ դէպի անսահման կատարելութիւն:

Առաւել քան երբէք քաջալերեալ իր ակնկալութեանց մէջ, մեր փիլիսոփան, աւելի եւս ուշադիր եղաւ Հնդկաստանի նահապետական ցեղերը քննելու, որոնք սակայն շատ հեռի էին դեռ, միջոցի միւս աշխարհաց բնակչութիւններէն, որոնց հետ հնուց ի վեր ծանօթացած էր:

Որքան հեռի էին ճշմարիտ մարդկութեան ժամանակէն, ուր գիտութիւնը, գրականութիւնը, արուեստները ազգաց բարգաւաճման ողջակներն են:

Թէեւ հոգին այդ խեղճ գանկին տակ, զարթում առած և ինքնաճանաչութիւն ունեցած էր, բայց դեռ զիշերային անուրջներու ազդեցութեան տիրող դարէն չէր ելած: Մշտապես երկիւղի մէջ կ'ապրէր: Փոխանակ բարձրագոյն զօրութեան, տարերաց և անկենդան նիւթերու և բնութեան երեւոյթներուն կ'ազերսէր. բայց այսուամենայնիւ արդէն սկսած էր մտածել, բանաստեղծական գրականութեան միջոցաւ ամեն բանի տիեզերական Ազրիւրին հետ յարաբերութեան մէջ մտնելով:

Քս. է 13514 ասորի առաջ միայն՝ մեր զիսուորը, առաջին անգամ ըլլալով, նշմարեց մարդկային ձևապահեցող քաղաքի նմանութեամբ բան մը և այն ալ մի միայն քարէ տաղաւարներու ածել հաւաքածոյ մըն էր: Այսուամենայնիւ այս իմացական ընտանիքին զգալի յառաջդիմութիւնը տեսնելով, անկարելի էր նկարագրել զիսուորին զգացած հրճուանքը և ի՞նչ աստիճան երջանկութեամբ զանի ողջունելը:

Երկրագունտիս մակերեւոյթին՝ մեծագոյն մասը, ահազին տարածութեամբ, ծածկող զմրուխտագոյն ջրոց ջէն, անկանոն եռանկիւնաձև դեղին ցամաք երկիր մը անշտառուած էր. այդ երկրին տափարակ մասը նուազ բերրի կերեւէր քան իր աջակողմը գանուած երկիրը յորում կը բնակէին միշտ՝ նախապէս զիսուած հեղկային

ցեղերը: Բայց անոր հիւսիսային ծայրը արտաքոյ կարգի արգասաբեր, բերրի և հարուստ մաս մը կար: — Կարծես թէ մարդս երկրագունդի մակերեւոյթին ամբողջութիւնը՝ միանուազ անստեղծութեամբ ընդգրկած, և անոր մասերը բաղդատելով, միշտ ամենագեղեցիկ և ամենահաճելի մասն ընտրած էր: Դիտողութիւն մը որ կապացուցանէ թէ՛ ի՞նչ վեհագոյն իմացականութիւն մը կայ ամեն բան կառավարող:

Այս առանձնաշնորհեալ մասին մէջտեղէն մեծ գետ մը կիջնէր՝ որ ծով թափելէն առաջ, երկու ճիւղի կը բացուէր և ճիշտ այդ երկու ճիւղերուն ձեւացուցած եռանկեան վերեւն էր՝ ուր նախնական քաղաքը կերեւէր այդ Մեմփիսը՝ որ իր արքայական գերագահութիւնը պիտի թողուր՝ վերին Եգիպտոսի Թիս քաղաքին և ապագային մէջ՝ Թեպպիսն այդ երկուքն ալ պիտի նսեմացնէր:

Երկնից զիսողը՝ յիրաւի դեռ մարդկային ձերմակ ցեղը չէր տեսած, բայց ստեղծելով դեռ տէր թէ՛ մեծագոյն զարգացում մը տեղի կունենար. տեսաւ թէ՛ մարդիկ միանալով՝ մասնաւոր ընկերութիւններ կը կազմէին յատուկ աշխատութեանց համար և կարծես թէ՛ արդէն տեսակ մը միութիւն գոյանալով, ընտանիքներ իրարու կապելով, ժողովուրդ մը կարաողութեւն:

Երկիւղին հրը իր փառահեղ լոյսը կը ցոլար հորիզոնին վրայ, կը տեսնէր թէ մարդիկ, առաջնորդուած ուրիշներէ, կուգային՝ Նեղոսի եզերայ վրայ ծնրաղբելով, ջրոց մէջ, ակնակառոյց, իրեն ցորացումը կը դիտէին: Գիշերուան ժամանակ ալ՝

տարրեր տարազով զգեստաւորեալ մարդիկ՝ բըր-
 փռած և բլրակներու վերեւէն աստեղաց մէջ անոր
 զիրքը կ'որոշէին: Եւ ահա այս էր հետազոտու-
 թեան սկզբունքին ծագումը և միանգամայն՝ լիրբ
 և անամօթ բռնաւորաց, երկչոտ և տգէտ ժողո-
 վրդոց համար հնարած ստիկութեան սկզբնաւո-
 րութիւնն:

Գիտաւորին երկրիս վրայ երեւումները՝ մեզ
 համար այնքան երկայն ընդմիջեալ ժամանակներու
 մէջ կը պատահին որ՝ զիւրին է երեւակայել թէ՛
 մարդուս գոռոզութեամբը զարդարուած, աշխար-
 հիս պատմութեանը վրայ, տարտամ զաղափար մը
 միայն կրնար ունենալ: Ան՝ ընդհանուր կերպիւ
 արարչագործութեան յաջորդական զէպքերը երկ-
 նային նայուածքով մը կը զլուէր և ս'չ թէ այնպիսի
 խաբեպատիր միջոցներով՝ զորս մարդիկ իրենց հա-
 մար նպատակները մեծցնելու և օտարը նսեմացը-
 նելու կը ծառայեցնեն:

Գիտաւորը՝ չէր կրնար պարծենալ պատմու-
 թեան մանրամասնութեանց ծանօթ ըլլալուն, ի-
 բնէն համար բնական արզելք մը կար այդ մասին:
 Բայց ինքը՝ երկրիս նկատմամբ, կրնար թարգման
 կանգնիլ երկնից միւս մեծամեծ աստղերուն քով
 (ինչպէս շատ անգամ պատահած էր արդէն), և ա-
 նոր պատմութեանը մասին՝ մարդկանց պատրան-
 քէն զերծ և յանձուստ բարձր և գերիվերոյ ճըշ-
 մարտութեամբ՝ կրնար պարզել անոնց: Ուրեմն
 զարմանալու չէ թէ մեր զիտողը, առաջուան պէս,
 երկրիս կենաց աննշան մանրամասնութեանց մէջ
 չէր մտնէր, իր հետազոտութեանց զրութիւնը փո-

խած չէր և մարդկային ցեղին ծագման պատճառաւ
 չէր որ՝ իր երեւմանց մէջ պատահած փոփոխու-
 թիւնները, իրարու կը մերձեցնէր:

Արդ, 10449 տարւոյն անցքին ժամանակ՝ չէր
 կրնար ճշգիւ թէ՛ աստուածպետական Եգիպտոսը,
 իր տարիները, Ֆդալի և դարագլխո՞ւն մէջ Ֆրէի
 կամ Շուկալի և կամ Սեպի դարագլուխներուն մէջ
 կը հաշուէր. բայց միայն աստղարաշխօրէն զիտէր
 թէ՛ մեզի զրացի Արեւ մը, որուն մասին, անկից
 եկող գիտաւորէն շատ բարի լուրեր և տեղեկու-
 թիւններ առած էր, մեծ և գեղեցիկ Շնիկ աստղը
 կարող եղած էր վերին և ստորին Եգիպտոսի քուր-
 մերուն միաքը, հիացումը և համարումը գրաւելու:

Նմանապէս չէր կրնար ըսել նաև թէ, ման-
 ւանդարաններուն հնդկակական դարագլուխը սկըս-
 ւած ըլլայ, զողիակոսական ծագմամբ, առաջին
 Մանու-Մուա-Յանպնուայի կողմանէ. և թէ նոյն-
 պէս 19337 տարին, Ոսիրիսի սրղիքը՝ կարող եղած
 ըլլան, որոշել ամառնային արեւադարձին կէտը
 Նաբադրա-Ասվանիի և Նաբադրա-Պիարանիի միջև
 բայց անկասկածելիօրէն զիտէր թէ, ջերմապէս կը
 պաշտէին զԱրեւը, Ակնին, հոյ Աստուածը, և թէ
 կ'երկնչէին կայծակի աստուածէն, Ինգրաէն: Ուղ-
 դակի զիտողութեամբ, զիտէր թէ լուսաւոր Արե-
 ւելքը, իր անբիծ լոյսին մէջ, նորածին իմացա-
 կանութիւնը կը մոռցանէր, որ ապա պիտի գար
 դէպի Արեւմուտք՝ ուր կը գտնուինք: Կ'ըմբռնէր
 նաև թէ, եթէ երկիրս սահմանուած ըլլար միայն
 իմացական վայր մը ըլլալու, արժանի բողոքատման
 դրացի Լուսնթագի և Երեւակի, ելն ելն հետ, այն

ալ երկու օրուան մէջ չէր, որ պիտի կարենար իրականանալ և թէ, պէտք էր երկայն դարերու վարժութեան մը:

Աշխարհիս քաղաքակրթութիւնը երկայն դեգերանքի կարօտ է:

Գիտաւորը՝ տեսականօրէն իր երեք հազարեան տարիներովը կը հաշուէր և կը մտածէր թէ չորս կամ հինգ տարիէն, երկիրս հազիւ իր մանկութենէն կրնար ելլել: Չորս տարի վերջը ըսուածը այն տարին է ուր կը գտնուինք այժմ, այսինքն 1811 Քրիստոսի թուականին:

Արդե՞օք գիտաւորը կը սխալէր...: Անի մտածեց թէ գործնականապէս պէտք էր շատ աւելի երկայն ժամանակ մը. վասն զի ինչպէս որ կ'երևէր, մարդիկ կատարելագործուելու շատ փափագող չէին թուեր, ընդհակառակն աւելի զիրար կտարելու, ջարդելու կը հակամիտէին: Համարձակօրէն խօսելով, ահա թէ ի՛նչ էր աչքի զարկածը, որ յայնմ հետէ իր անտութենէն չվրիպեցաւ: Երկնից բարձրութենէն դիտած, այն ինչ նախնական դարերէն սկսեալ, անդի ունեցած մեծ արիւնայի և անդ պատերազմաց առաջին ազդեցութեան տակ կը մնար միշտ. այդ ազդեցութիւնը, փոխանակ ժամանակաւ սպիտանալու, միշտ նորոգուեցաւ, վասն զի զգայուն Աստղը, մինչդեռ անգամ մը եւս չէր վերադարձած, յորմէ հետէ մարդս երկրիս երեսը ծընունդ առած էր, չէր տեսած անդ մը ուր մարդ արարածը զիրար ջարդէր:

Այ այնպէս թուեցաւ իրեն թէ, մարդիկ՝ երբ բաւական թիւով կը գտնուէին, փոխանակ, ինչ-

պէս միւս աշխարհաց վրայ, համերաշխարար մէկ ընտանիք կազմելու, միմիայն իրենց զօրութեան ոյժը ցոյց տալու և իրարու դէմ գործելու համար ծնած էին. թէ՛ երկրիս մարդկութիւնը յաւիտենապէս բաժանեալ թագաւորութիւն մը կը կազմէր ինքն իրեն դէմ. սյս հաշուով համոզուեցաւ թէ, քառասպտակ դարերու շարք մը պէտք էր մարդուս փրկութեան համար:

Հոս պարզապէս փակագծի մէջ կը նշանակինք անակնկալ զէպք մը, որ գիտաւորին դիտողութեանց շարքը ընդհատեց:

Քրիստոսէ առաջ, իր երեւմանց 7384 տարւոյն մէջ Լուսինը անոր ամբողջ ուշադրութիւնը գրաւեց, այնպէս որ՝ երբ այն տարին ինը ամիս երկրիս մօտերը գտնուեցաւ, ժամանակ չունեցաւ զերկիրս քննելու:

Այս թուականէս (իր տարիներուն) տասնը եօթը տարի առաջ, այսինքն 59489 (Ն. Ք.) թուականներուն, մեր երկրին մօտ մէկ աստղ մը նշմարած էր, որ անդադար, իբր հաւատարիմ արբանեակ, կընկերանար անոր. և դիտած էր թէ, այդ լուսնական աստղին ընդհանուր մակերեւոյթին վրայ, շարժում մը և անսովոր բաժանում մը յառաջ եկած էր: Իսկապէս տարբեր երկու բնութիւնք կը տիրէին անոր երկու կիսազունտերուն վրայ. բնակիչները, որոնք մէկ կիսազունտէն միւսը կ'անցնէին, կարծես բոլորովին տարբեր և նոր աշխտո՞ մը մտած կըլլային: Արդ, որովհետեւ խառնուածքի զօրութեանց հաւասարակչութիւն չկար երկու կիսազունտից բնութեանց մէջ, աւելի զօրութեամբ

հարուստ մասը՝ առ ինքն կը ձգէր աղքատ մասին զօրութիւնները և այնպէս, իբր թէ անդգամ լարար կը ծծէր տկարին կենսական հիւթը և առանց ընդդիմութեան, տկար մասին, մարդկային պետութեանը վրայ կիշխէր: Այնպէս որ, բոլոր ծորանները և հեղուկները, կազային վիճակի վերածուած, Լուսինին՝ երկրիս նայող կիսագունտէն, հակոտնեայ կիսագունտը քաշուեցան:

Ճիշդ գիտաւորին այս անցքի ժամանակին էր որ լուսնարնակները՝ կը գաղթէին դէպի այն կիսագունտը, ուր բնակեցութիւն մնացած էր. ամենքը մեծ և պզտիկ, հարուստ թէ աղքատ դէպի հորիզոնի շրջանակը գիմելով կը փոխադրուէին նոր երկիրը. այնպէս որ անկից ի վեր, երկրիս նայող զժբազդ կիսագունտը, կատարեալ ամալի անապատ մը դարձաւ և այսօրուան օրս մենակեաց ժայռեր տխուր լուսնեան մէջ գիրար կը դիտեն(1):

Ուրիշ դէպք մը եւս՝ քիչ մնաց որ. վերջ պիտի տար գիտաւորին դիտողութեանց և ուսումնասիրութեանց շարքին:

Իր վերջընթեր անցքին նախընթաց անցքին ժամանակ՝ կարծեց թէ երկիրս իր հոգեւարքի վերջին շունչը կուտար: Ահագին մակընթացութիւն մը և ջրոց հոսանքներ ներքին ցամաքները կը յափըշտակէին. կարծես դաշտավայրերն ու լեռ-

(1) Ծ. Թ. Հեղինակը կ'ուզէ այս բացատրութիւններով ապացուցանել րէ՛ Լուսնին միայն մեկ երեսը կը տեսնենք մեզնի եւ միւս երեսը անձանօք է մեզ:

ները ընկղմած էին ջրոց ներքեւ, իբր թէ ծովը, իր իշխանութեան սահմաններէն անցնելով, տեղափոխուած, հին աշխարհին վրայ իր մահացու տիրապետութիւնը կ'ուզէր տարածել: Բայց երկկոյնն՝ երբ երկիրս 180 աստիճան շրջեցաւ և միւս կիսագունտը ի տես բերաւ, գիտաւորը, ա՛յ ապահով եզու թէ՛ ջրհեղիղը փեղերական չէր, այլ Ասիական նախնական երկրին վրայ էր միայն տարածուած և թէ՛ Սմերիկեան երկու հսկայ եռանկիւնածեւ երկրները ազատ էին այդ ազեանէն և Արեւու լոյսին մէջ կը փայլէին: Հարուստ և ըստ քանիչի բուսականութիւն մը տիրապետութեան գազաթնակէտը հասած էր և բնութիւնը սլաշտող մարդկութիւն մը կար հոն:

Այդ մարդկութիւնը Թօլքեհներու նախահայրն էր, որուն պիտի յաջորդէին Շիւթսեհները նախ և ապա Ալքեհները. ասոնցմէ ետքը պիտի գային Թաբանեհները, Քօլիլները և Թլարեյօլունները, Լեն. Լեն. որոնք պիտի հիմնէին Թեգուէֆօ լճին եզերաց վրայ, Թեգօքեյա երեւելի քաղաքը. այդ կղզիներն իսկ օր մը միանալով, հաստատ հիմ մը պիտի տային Մեքսիքոյի մայրաքաղաքին: Դեռ կը տեսնուէին այն լեռները, որոնց վրայ օր մը Մանֆօ-Քարաֆ Ինֆալի արեւապաշտ հասարակապետութիւնը պիտի հիմնէր և ուր Բիլլար պիտի երեւէր Բերուի յաղթանակը տանելու համար: Նաեւ երկու Ամերիկայից միջեւ խել մը փոքր պետութիւններ կ'երեւէին իրարմէ անջատօրէն կազմակերպուած:

Գիտաւորը իրաւամբ անդրադարձաւ թէ՛, նոյն իսկ եթէ Ասիական աշխարհը դժբաղդութեամբ մը,

Ջրոց անդունդին մէջ անյայտացած ըլլար, Ամերիկեանը կարող էր անոր տեղը բռնել և անմիջապէս վստահեցաւ թէ մարդկութիւնը վստահուած չէր ։

Մինչդեռ այր երկիրը կ'արթննար, հին աշխարհը իր կարգին կը բարգաւաճէր, բայցի այն փոքր մասէն որ պատահարաւ ջրասոյզ եղած էր ։

Եգիպոս կատարեալ քաղաք մը ունէր յորում կը տեսնուէին պոլտաններ, աշտարակներ և տձեւ քանդակագործութեան մը սկզբնաւորութիւնը, մեծամեծ բուրգեր իրենց զիրքերը կը ճշդէին ։ Եւրոպան իսկ՝ սկսած էր իր գոյութեան ճանաչողութիւնը ունենալ ։ լուսաւոր երկնից տակ բանալով իր աչքերը, տեսաւ թէ կատարեալ առաւում էր, և ուզեց ի վեր կանգնիլ ։

Մեր գիտաւորը՝ Աւստրալիոյ մէջ՝ վիթխարի կապիկներէն զատ սերիշ բան չէր տեսներ, որոնք իրարու դէմ ամենատեսակի միմոսութիւններ կ'ընէին ։

Այս այնքան բազմազան մարդկային արարածներու քով օտարտաի կենդանիներ կը տեսնուէին, որոնք այսօր գոյութիւն չունին այլեւս ։ Նախածին փիղը կամ մամուրը, այն փիղը որ 15-18 սանաչափ բարձր և չորս մէրը երկայն կորածեւ երկու ահագին ժանիքներով զինուած է ։

Յետոյ երբ այս կենդանեաց քարացած ոսկորները մարդկային ոսկերտեաց հետ խառն գտնուած են, քսան սանաչափ բարձր հսկաներու ոսկերտեաց մասունք կարծուեցան ։

Դարձեալ, խիստ բրդոտ ռնդեղջիւրներ կը տեսնուէին՝ որոնք Կոլուացիներու գերեզմանատիպ

քարանձաւաց առասպելական վիշապի վէպին ծընունդ տուած են ։

Քարայրներու արջը՝ որ հսկայական առիւծներու հետ Մօնմարդրի մէջ կը պարտէր. նախնական կան եղը՝ որոնց Յուլիոս Կեսար վերջին անգամ ըլլալով, Պիպրաքէն վերադարձին հանդիպեցաւ ։ Մեծեղջիւր եղնիկներ, որոնց կոտոշները 3-4 մէրը տարածութիւն ունէին, որոնք առաջին աղեղնաւորաց որսերը եղան. վերջապէս հիտաեսիլ թռչուններ, որ կորսուած են հիմայ. Տիւնրիսը կամ եփիւնրիսները որոնց հաւկիթները 25 հարիւրորդամեղը երկայնութիւն ունէին և հսկայ ջայլամներ, այս ամենքը միտսին գեղեցիկ տեսարան մը կը պարզէին մարդուս աչքին ։

Հնդկագերման ցեղէն մեր նախնիք. Կեդսէ կը ճանչնային այս նախաջրհեղեղեան պատկառելի տեսալներու վերջին շառաւիղները ։ Այն հնորեայ կենդանեաց նախնիք, արժանի եղան գիտաւորին ուշադրութեանը ։ Ինչպէս հարիւրհազար տարի առաջ մեծալազանցները և Սոսկազանները արժանացած էին արդէն ։ Ուշագրաւ սերիշ կէտ մ'ա կայ, սա է թէ, այն գիտաւոր աստղը, որուն վրայ բազում աչքեր սեւեռած են դարերէ ի վեր մարած աչքերու և տարիներու անդունդին մէջ յաւէտ կորսուած ցեղերու կողմանէ եւս, դիտուած և գննուած էր ։

Ահա՛ այսպէս վաղանցուկ էակներ, աներեւոյթ և առժամանակեայ գոյութիւն մը ցոյց տալով, կ'անցնին կերթան, մինչդեռ տիեզերական բնութիւնը, զոր մեր մտայնութենէն կը վրիպեցընենք շատ ան-

գամ, կայ և կը մնայ մշտնջենապէս իր յաւիտեան խաղաղ մեծութեանը մէջ :

Գրիստոսի ծննդեանէն 1254 տարի առաջ, յարգելի ճանապարհորդը, իր վերջնութիւն անցքն ըրաւ ի տես երկրիս : Մեր նախնիքը (գաղղիացիք) դեռ նախնական բնական կեանքով, այն հովանաւոր անտառաց մէջ կը բնակէին, ուր յետոյ այսօրուան Գաղղիան պիտէ ձեւանար, սահմանափակելով իրենց փառասիրութիւնը, այն եզերաց վրայ ուր ծնած էին, երկրիս պարզեւնեքովը և երկնից լոյսովը խաղաղութեամբ կ'ապրէին : Իրենց մեծ հօրեղբայրները, զորս նշմարեցինք քանի մը հազար տարի առաջ Աւեւելքի մէջ, զուարթ և աշխարհակալութեան փոթորկայոյզ կեանքը կը վարէին . մինչդեռ մերայինք, հանդարտութեամբ իրենց որդեգրած հայրենիքին անտառաց մէջ կը կենակցէին : Ի մօտոյ զէպի հարաւ պիտի իջնեն, ետեւին ձգելով Գիւմրեանները, Սփոսիսները, Թոբեկները Պոյեկները և Գիւմրերը . բայց դեռ կուզեն մանկութեան առանձնաշնորհումը վայելել, անոնք ալ մեծութեան փառաց պիտի բարձրանան :

Վերջ՝ էս, անոնք՝ զորս տեսանք նախապէս, հեղձահատէ ապաւեցան և կործանեցան . Եգիպտացիք կը ննջեն, եմփիս մեռաւ, Թիս կը խոկայ, հարիւր-դռնեան Թեպալիսը մերձ է ի կորուստ . բայց ընդհուպ այս ամենքը անապատի խորշակէն պիտի տարուին, ահա՛ այդքան քաղաքակմտութիւնք կորսուած են :

Բարեկոն՝ որ 1500 տարիէ ի վեր հիմնուած, արդէն ինկած է, Նինուէ՛ որ անոր յաջորդեց,

աւերակ դարձած է : Եկրատան՝ երևան պիտի գար, յետոյ կորսուելու համար ի նպաստ Պերսեպոլոյ, որ ինքն ալ պիտի կործանի իր կարգին : Ասորեստանցիք, Պարթևք, Մարք, Պարսիկք, Քաղզէացիք այլ ևս մէկ մէկ բեկորներ են : Միւս աշխարհին մէջ՝ Ամերիկա դանգազութեամբ կը յառաջանար :

Չինաստան կը յաջորդէր Հնդկաստանի և Արևը իր խաղաղ ճառագայթները տարածելով խաղաղաւէտ լոյսով՝ բովանդակ անհուն բնութիւնը կը շրջապատէր : Քիչ առաջ փոքրիկ ժողովուրդ մը Եգիպտոսէն, ելած, հիմայ ծովեզերքին վրայ կը հաստատուի բայց դեռ թագաւոր չունի . վերջապէս Եւրոպայի վարի կողմը պղտիկ կղզի մը, որու բնակիչները ութը հարիւր տարիէ ի վեր միայն հոն հաստատուած էին . ինքզինքնին նախ քան զլուսին ըլլալ և ճպուռին պէս երկրիս տիղմէն ծնած ըլլանին՝ իրենց պարծանք կը սէպէին և ի յիշատակ այդ բանին՝ կանայք զանի իրենց մազերուն մէջ կը պահէին իբր զարդ :

Այս երկրին բնակիչներն այն ատեն մեծ դէպքով մը զրազած կ'երեւէին : Բարիս անուն անձ մը առեւանգած էր գեղեցիկն Հեղինէ, Սենիլաոս թագաւորին օրինաւոր կինը և տարած էր Փոքր-Ասիոյ մէկ փոքրիկ քաղաքը : Բոլորը ազգովին սուքի վրայ էին : Ակնթարթի մէջ ամեն ատակ զէնքեր կազմուեցան, ձիեր թամբուեցան, թուրեր սրուեցան, կապարճներ զինուեցան, վահաններ դարբնուեցան, յիզակներ շինուեցան . երկաթապատ լախեր զործուեցան և բեռներ պատ-

րաստուեցան. մեր Գիսաւորը երբէք այդպիսի պատրաստութիւն տեսած չէր: Դժբաղտարար կամ գուցէ բարեբախտարար չկրցաւ պատերազմին ամբողջութեան ներկայ ըլլալ, վասն զի քաղաքին պաշարումը տասը տարի երկարեցաւ և այդ տասը տարուան մէջ մեր Գիսաւորը 85. 000. 000 մղւն ճամբայ կարած էր արդէն ատկերաց միջոցին մէջ: Բայց այս արգելք մը չեղաւ իրեն յիշելու թէ՛ ոչինչի համար մեծ ավճուկ հանած էին և կը մըտածէր թէ՛ եթէ երկրիս բնակիչները այսպէս արդայական չնչին բանի մը համար՝ իրարու հետ պիտի պատերազմէին, այլ ևս որոշեց իր հողածութեամբը չպատուել զանոնք.

2.

Գիսաւորը Զրնեղեղի ժամանակէն ուսում մը կրնէ 1811 Քրիստոսի բուականին

Տէր Աստուած, ինչ փոփոխութիւն անցեալ տարիէն ի վեր, գոչեց բորբոքաներ արարածը՝ երբ պատմական վերջին երեւման ժամանակ երկիրը տեսաւ: «Այս է այն աշխարհը . . . որուն երբեմն երկչոտ մանկութիւնը՝ որորած էի բոցա՝ « ճաճանչ լուսապսակիս մէջ: Այս այն ժողովուրդն « է զոր տեսայ՝ որքան ողորմելի և փոքրոզի, « նոյնքան երկչոտ և տկար: Արդ մեռա՞ն ուրեմն « բոլոր անոնք՝ զորս հոս տեսայ և լսեցի. մար-

« զիկներ, ժողովուրդներ, քաղաքներ, հայրենիք, « ամէն բան յեղաշրջուեր է: Ո՞ւր են վիպասան- « ները՝ որ զիս ի վկայութիւն կոչեցին կեղտական « օրինաց մէջ: Ո՞ւր են երեքվէմեան մահարձանք « և սեղանք . . . ինչքան տակնուվրայութիւնք « իմ մեկնելէս ի վեր. չեմ կրնար այլևս ճանաչել « հոս՝ ո՛չ կեղտերը, ո՛չ Քիմրիզները. հոն՝ ո՛չ « Պարթեւները, ո՛չ Յոյները . . . : Այս ո՞ր քա- « ղաքն է արդեօք . . . բայց այս իմ զիտցած և « ճանչցած երկիրս չէ . . . »: Գիսաւորը չէր կըր- նար ուշարերիլ:

Յիրաւի շատ մեծ փոփոխութիւն կար իր վերջին երեւումէն ի վեր, վասնզի այս անգամ- ւան երեւումը Փրկիչի թուականին հազար ուրբ հարիւր տասն մեկին էր որ Գիսաւորի ուղղածից Բարիզի վրայ կը փայլէր: (1)

(1) Այս նախապահորդ աստղը՝ որուն պատուիրները կրնեմ հոս, ճիշտ 1811 բուականին տեսնուած Գիսաւորն է: Ամէն մարդ գիտէր թէ՛ ինչ մեծ ազդեցութիւն քաւ այս փառաւոր աստղին 1811 մարտի 28ին գիւտեռուան յանկարծակի սեւեռելի երեւումը: Անոր ազդեցութեան վերագրեցին նոյն յիշատակելի տարուան ամառնային բեղմնաւոր ջերմաւրիւնը, զինիին առաստօրիւնը եւ պնդութիւնը: Բոլոր լրագիրները անոր վրայ խօսեցան մեկնութիւններ տալով. ամէն լեզուով խօսուեցաւ եւ գրուեցաւ, ամէն պարագայի մէջ. ոմանք զանի զգուցին, ոմանք ալ կ'երկնչէին, ոմանք Օրվայի մըջ- սրնջեմական մարգարեութիւնը կը կարդային, ոմանք

Ընդհանրապէս բոլոր աստեղաց ի մասնաւորի գիտաւորաց համար, երեք հազար տարին մեծ բան մը չէ. յաւիտենական տարեցոյցին համար՝ մէկ մանրերկրորդ անգամ չէ, բայց մարդուս համար, ինչպէս դուք ալ գիտէք, ս'վ գիտնական ընթերցողներ, թէ՛ երեք հազար տարին շատ մեծ և շատ մեծ բան է:

Ո՛րքան սերունդներ երկրիս թատերարէմէն անցան (1245 Ն. Ք.) տարիէն ի վեր: Յունաստան, Լատին և անոնց թագաւորները լատինական հասարակապետութիւնը, Կարկեթոն, հիւսիւսային կողմը Հռովմէական կայսրութիւնը, անոր անկումը, բարբարոսները, Արեմտեան կայսրութիւնը, Փըրանկաց, Գերմանաց և Անկլո-Սաքսոն թագաւորութեանց հիմնարկութիւնը, Կաթաչասոթիւնը, Քրիստոնէութիւնը, Մահմետականութիւնը, հերձուածները, վերածնունդը, աւատականութեան մեծութիւնը և անկումը, միապետութիւնը, հասա-

Հռովմի քաղաւորին (Նաբօլեոնի որդի) ծնունդը կը սօնէին:

Նաբօլեոն Թիւլլերիի պալատն պատահաբար պատեցամին յենած՝ իր մօտեկորը Քարսինալ Ֆեօի կը հարցնէր քե՛ ի՞նչ կարծիք ունի այս նոր աստիկ վրայ: Բոլոր Բարիկ կը դիտէր զայն ամբողջ ամառը: Նորածնութեան համար գիտաւորի փողկապեր, գիտաւորի գլխարկներ եւ ամեն տեսակ նիւթեր, գիտաւորի տեսակէն շինուեցան: Այս ամենքը վերցուեցան, այնքան աղմուկ հանեցին՝ որ երեկուան պէս ամեն մարդ կը յիշէ:

Քակապետութիւնը և կայսրութիւնը: Բոլոր ասոնք յաջորդարար դանդաղօրէն սահեցան անցան մեր երկրին վրայէն (Գաղղիա) բայց Գիսաւորը բանէ մը խապարիկ չունէր:

Հոս միայն մեր եւրոպական ցամաքին դէպքերը յիշեցինք, հապա եթէ բոլոր աշխարհիս դէպքերը յիշենք՝ որքան բազմազան յիշատակներ պիտի գտնենք: Հապա՞ սակայն մարդուս կենաց պատմութեան բոլոր այն մասը՝ որ այս երկու ժամանակակէտին, այսինքն — 1254 և × 1811 տարիներու մէջ կը գտնուի, որ Գիսաւորին համար մի միայն տարի կը ներկայացընէ:

Ուրեմն Գիսաւորին զարմացումը արդարաւնայի և ներողամտութեան արժանի է: Մէկ օրէ միւսը՝ առանց անդրադառնալու, Տրովաղալի թագաւորութեանն՝ Գաղղիոյ կայսրութեան, Ագամենոնէն՝ Նաբօլեոն անցած էր անյիրաւի ասկէ աւելի սքանչելի ոստում մը կատարել կարելի չէ:

Քաղաքներ ու ժողովուրդներ փոխուած էին, ոմանք բոլորովին կորսուած և այլք ծնունդ առած: Յայտնապէս մարդկութիւնը քայլ մը առած էր անկից ի վեր, բայց արդե՞օք դէպի յառաջ՝ թէ՛ յետ ընկրկած: Նրբամիտ աստղը՝ փոքր ինչ իրաւունք ունեցաւ կարծելու թէ յետ ընկրկած չէր:

Բայց՝ ոչ միայն մարդուս պատկանեալ մասանց մէջ փոփոխութիւն կար, այլ նոյն իսկ բնութիւնն անգամ փոփոխութիւն կրած էր, որ ժամանակի արդիւնք չլլալով, ուրիշ պատճառէ մը առաջ եկած կերէր:

Անտառները պակասած էին, նախկինին պէս ընդարձակ տեղեր ծածկուած չէր այլևս, մարդկանց ձեռամբ պեղուած ջրանցքներ՝ որք բնական ընթացից մէջ, այլազան կերտարան մը կը ներկայէին: Ճահիճներ ցամքեցուցուած. ծովեզերներ պաշտպանուած, դաշտերը ճերմակ ճամբաներով ստոսյնանկուած, լեռներու կողերուն վրայ գիւղորայք շարուած էին: Մեծ դետերու արագրնթաց ջրեզերքներուն վրայ ճարտարարուեստական քաղաքներ հիմնուած էին. պարտէզներ և ծառատունկներ մարդկային բնակարանաց բոլորտիքը կը զարդարէին: Ճշմարտի՛ պէտք է խոստովանել թէ, կիսագունտին այս փոքրիկ մասին վրայ, մարդս իր ներկայութիւնը բացարձակապէս ի յայտ բերած էր:

Բայց . . . (ո՞ր բանի մէջ արդեօք բա մը չկայ): Աւա՛ղ . . . Գիտաւորը կը լսէր զինուց շառաչումը: « Գարձեա՛լ . . . հառաչեց, ա՛լ կը « հաւատամ թէ՛ մարդիկ այլ ես՝ այս բանս ու « նուկութիւն ըրած են իրենց: Խե՛ղճ մարդիկ . . « սուկայն չեմ կարծեր թէ՛ այս երկիրը այնքան « վտաթար և տգէտ ըլլայ . . . ինչո՞ւ համար « այսպէս արիւն կը հոսեցնեն իրենց խաթարուած « դաշտերուն վրայ, աւելի լաւ և աւելի գեղեցիկ « չէր ըլլա՞ր արդեօք՝ ուրախ և զուարթ՝ արեւուն « տակ խաղաղութեամբ աշխատիլ: Բայց արդեօք « լաւ գիտակցութիւն ունի՞ն իրենց ըրածին վրայ:»

Լուռ և անհուն միջոցին մէջ՝ հեռաւորութիւն ըսուած բան չկայ, ամենատկար կտր ձայները զգալու համար ստեղծուած ականջը՝ անթափանցելի

եթերին միջոցաւ, կրնայ լսել: Ամեն բան յարաբերական է, աղմուկի մը ուժգնութիւնը՝ ինչպէս և լոյսինը: Երբոր զիտաւորները՝ իրենց ամենամեծ հեռաւորութեանց անապատական միջավայրը՝ կը հասնին, իրենց գնացքը կը դանդաղեցնեն, իբր թէ միջոցին խորութեանցը մէջ. աւելի ուշադիր կերպիւ անձանօթին ունկնդրել ուզէին: Ինչպէս կըսուի երբեմն՝ աքսորանաց մէջ գտնուող անձանց պէս, անոնք իրարու կ'եղբայրանան և իրենց աղաւորութիւններն իրարու կը հաղորդեն անհունութեան մէջէն, և էութեանց բնութեան և այլ և այլ էակներու վրայ խօսակցելով, միայնութեան ձածրոյթը և խաւարներու թանձրութիւնը կը հեշտացնեն:

Քանի մը տարի առաջ, մեր Գիտաւորը, անդրորանտեսան անապատաց մէջ, իրմէ նուազ աղնուական՝ բայց ընդհանրութեան մէջ մեծագոյն, Հալլէյ գիտաւորին ծանօթութիւնը ըրած էր: Այս երկու ճանապարհորդները սկսան մտերմաբար իրարու պատմել իրենց յիշատակները:

— Ի՞նչ վերջին ճամբորդութենէս ի վեր, երկիրը շատ փոխուած գտայ, ըսաւ մեծ և տարէց գիտաւորը (մեր պատմութեան գիտաւորը), այդ աչխարհին վրայ ամեն բան աճապարանօք կը կատարեն. կ'երևուի թէ իմ մէկ տարւոյս մէջ անոնք 3600 տարի կը հաշուեն և թէ այս խեղճուկ ժամանակամիջոցին մէջ, իննսուն սերունդներ ժամանակ ունեցած են ծնանելու և մեռնելու, ինչ տարբերութիւն Պոսիդոնին հետ, ուր վեց հազար տարիէ ի վեր նշանախեցի մը չափ փոփոխութիւն եղած չը տեսայ:

— Յարգելի՛ իշխան, պատասխանեց միւսը, (Հայլէյ) իմ տարիներս շատ աւելի կարճ և արագ են քան ձերինը, վասն զի մեր փայլուն թագաւորին շուրջը ունեցած շրջագիծս մէկ անգամ բոլորելու միջոցիս, երկրացիք եօթանասուներ հիկնգ տարի կը հաշուեն. բայց և այնպէս, ճշմարտան ըսելու համար, այդ կարճ միջոցին մէջ նաև, երկրին վրայ դարձեալ ժամանակ կը գտնեն նոր բան մը կանգնելու և շատերը կործանելու. ես համոզուած եմ թէ երկրացիներուն ունայնութեանը վրայ զարմացումս ձերինէն նուազ չէ.

— Խօսքը մէջերնիս, այդ մարդիկը կամ շատ ծանծաղամիտ են և կամ վերջին աստիճան գործունեայ. երկրին վրայ մարդը երեւնալէն ի վեր, ակնթարթի մէջ փոփոխութիւն կ'ունենայ: ժամանակով, այս կենդանային ստեղծումէն առաջ, կը յիշեմ թէ՛ քսան, երեսուն ճամբորդութիւն ըրած էի առանց մեծ փոփոխութիւն մը նշմարելու այդ երկրին երեսը. միայն հինգ ասորի է ի վեր է (գիսաւորը 15000 ասորի առաջուան համար կ'ըսէր) որ՝ միջոցը գտան կանգնելու և կործանելու, պեղումներ ընելու և լեցնելու, հայրենիքը կերքանափոխելու իրր թէ, ճիշդ ստուերտպատկերի դարձուգարձեր կատարէին:

— Իշխան, ձեր վերջընթեր ճամբորդութիւնը երկրային ո՞ր տարին պատահեցաւ:

— Բարի զաւակս, որչափ կը յիշեմ, կարծեմ իմ վերջին անցքս երկրային երեսուն դար կայ որ անդի ունեցաւ, վասն զի յիրաւի անոնց փոքրիկ ժամանակագրական դրութեանը շատ տեղեակ չեմ

որոշելու համար ճիշդ ժամանակը. բայց գիտեմ թէ (245) երկու հարիւր քառասունը հինգ տարեկան էի, որովհետեւ իմ յիշողութեան զարթումին 46րդ տարին էր որ առաջին անգամ երկիրը նշմարեցի և անկից ի վեր հարիւր անգամ վերադարձայ եկայ:

Փոքր գիսաւորը, որ շատ լաւ հաշուել գիտէր, առանց դժուարութեան գտաւ, որ այդ վերջընթեր երեւումը, Քս. է առաջ, երեք ասասներորդ դարուն մէջ անդի ունեցած էր. իր յաճախակի այցելութիւնները զինքը ընտելացուցած էին մեր հաշուակերպին, որուն համեմատ հեթանոսական և փրկչական տարիներու կը բաժնուին մեր ժամանակագրական հաշիւները: Այնպէս որ փոքր ինչ ծրարեցաւ յարգելի ընկերակցին այդ քան ժամանակէ ի վեր եղած փոփոխութեանց մասին ունեցած զարմայմանը վրայ: — Իր սեռին անդամներուն պէս, շատախօսութեան (*) վերին աստիճան մարմաջն ունէր և ուրախ էր անմիջապէս երկրիս մարդկութեան վրայ իր անձնական խորհրդածութիւնները պարզել:

Մեծ գիսաւորը արդէն անդրադառնալով, — թէ անի փափաղող է խօսելու, աւելցուց:

— Սիրելի ճանապարհորդ, դուք պէտք է որ ինձմէ շատ աւելի տեղեկութիւն ունենաք այդ

(*) Ծ. Թ. Գաղղիերէն լեզուին մէջ գիսաւոր բառը իգական բլլալուն, փոքր գիսաւորը կանացի սեռին բնաւորութեամբ օժտուած նկատելով՝ բանասեղծ պատմագիրը այս կատակաբանութիւնը մէջ բերած է:

նիւթերուն վրայ, որովհետեւ դուք ինձմէ աւելի յաճախ հանդիպած էք երկրին կողմերը և շատ աւելի մօտէն հետեւած պէտք է ըլլաք անոր պատմութեանը: Արդեօ՞ք քիչ մը առաջ տեսած (1814 տարւոյն համար է խօսքը) բաներս անմիջական շարունակութիւնը չեն իմ նախորդ անցքիս ժամանակին ցոյց տուածներուն (Տրովադայի պատերազմին ժամանակ): Ինձ այնպէս կուզայ թէ, ընդհատուած մը կայ միայն այս երկու թուականներուն մէջ և ձե՛զ անկ է այս ընդհատման ժամանակի պատմութիւնը լրացրնել:

— Ձեր վերջընթեր ճամբորդութենէն ի վեր, պատասխանեց փոքր գիտաւորը. ևս քառասուն անգամ երկրին մօտէն անցայ և ամեն մէկ անգամուն, ճշմարիտը ըսեմ ձեզ, միշտ փոփոխութիւն գտայ: Մարդիկ այնքան կարճ կեանք մը ունին այս գունդին վրայ, որ խիստ քիչերը կան որ կարենան պարծենալ զիս երկու անգամ յաջորդաբար տեսած ըլլալուն. և թէ մեծագոյն մասը և ո՛չ իսկ մի անգամ կրցած է զիս տեսնել. մինչդեռ, աւելցուց հառաչագին շեշտով մը, իմ տարիս ձերինէն քառասուն անգամ կարճ է: Իմ զանազան երեւումներէս՝ զորս աւելի լաւ կը յիշեմ, Քս. է. առաջ 12 և յետոյ 837, 1066, 1456, 1531 և 1759 թուականներուն վերադարձներս են, որոնց մէջ իմ երեւմունքս, այնպիսի դէպքերու տեղի տուած են որոնք շատ մեծ ազդեցութիւն բրած են իմ վրաս: Եթէ ձեր հետաքրքրութիւնը կը շարժի, այնքան հաճութեամբ կը պատմեմ որքան որ նուազ պաւտեհութիւն կ'ունենամ:

Իշխան գիտաւորը, որ այնքան կը շահագրգռուէր մարդկային գործառնութեանց և որուն հաճելի էր երիտասարդ գիտաւորին ընկերութիւնը՝ իրենց գանուած խորին մենութեանց մէջ, արտակարգ ուշադրութիւն մը նուիրեց զրօսաշրջիկին պատմութեանը:

Այն ատեն այս վերջինը, սկսաւ պատմել թէ՛ ինչպէս Չինական երկնային կայսրութեան մէջ Ք. է. տասներկու տարի առաջ՝ Չիներու յաջորդ Հան փառահեղ հարստութեան ժամանակ, կայսեր հրամանաւ Փոնկ-Սիանկ-Շի՛ գիտաւորը զխաելով, Չին-չի-հոանկ-թի կայսեր վրայ՝ երկնային անէժքի նշան մը ըլլալը գուշակեց, որ՝ ո՛չ միայն Վուվանկ կայսեր կանդնած Հոգեաց Աւսարալը այրել տալով գոհացած էր, այլ կայսրութեան մէջ գանուած չորս հարիւր յիսուն զիանական գրադէաները գըլխատել տուած էր. և մահուան պատժի սպառնալիքով հրաման արձակած որ՝ քառասուն օրուան մէջ, բոլոր կայսրութեան բարոյական, փիլիսոփայական, աստղաբաշխական և պատմական գրութիւնները այրելով բնաջինջ ըլլուին: Պատմեց դարձեալ թէ՛ ինչպէս այս կայսերական աստղաբաշխը, (Փոնկ Սիանկ Շի) խրատեց և համոզեց կայսրը, որ ինչպէս ձմեռը, հիմա ևս, խաւար պայտաին ձախակողմեան սրահին մէջ առանձնանայ և հոն զոհ մատուցանէ Հիուեհմեկի և գիտութեանց, գրականութեան և արուեստից դարազլուխը վերանորոգէ պատշաճ կրրդով:

Պատմեց նաեւ թէ՛ ինչպէս Թաձուակ-Բէ Ժնզոված էր բոլոր Մանտարինները կայսերական գա-

հուն շտրջը, ինչպէս վերջին խաւարման ժամանակ, բայց ոչ թէ աստղին օգնելու, այլ զանի պատուով սղճունելու և յարգելու. և թէ՛ ինչպէս այս վերակացու աստղարաշխը, յաջողած էր զարնել ապ կայսեր՝ կայծակի քմբուկին վրայ, Հրաճի Դափիւնը(*). և թէ ինչպէս երկնային երկու ամբաներ ամբողջ Չինաստանը սաքի վրայ մնաց իր երեւման պատճառաւ: Պատմեց դարձեալ թէ, ինչպէս 837 ին Մեծն Կարուսի սրդին և յաջորդը, Լուդովիկոս Տէպոնէր, իր պալատան ասնիքին մէկ մթին անկիւնը, գիտաւորին զէմ ծնկագուճ, կ'աղերսէր անոր՝ թէ ինչ լուր բերած էր յերկնից, թէ ինչպէս եկեղեցական հայրերը, մուշղ գիտաւորին փոխանորդարար, պատասխանեցին. և թէ, ինչպէս այդ հեղարարոյ կայսրը իր կենաց մնացած երեք տարիները, գոթաձեւ եկեղեցիներ, ճոխ արքայարաններ ու ընդարձակ վանատուններ հաստատելու ծառայեցուց և այդ եկեղեցեաց և վանորէից եկամուտներ սահմանեց:

Շարունակելով պատմեց, թէ ինչպէս 1066 ին Կիյոմ Յաղթողն դուքսը՝ Նորմանտիոյ մէջ, «Նոր Ասիզ... նո՛ր քաղաւոր» հռչակեց և թէ, ինչպէս զինքը առաջնորդ առնելով, իր նովանուոյն ասկ յառաջացաւ Անգլիոցուց յաղթանակելու. և այսօր իսկ դեռ կարելի է տեսնել ասիկա Պէյօի երեւելի կապերաին վրայ, յորում յաղթողին կինը, Մաթիլ-

(*) Մ. Թ. Կ'երելի քե արսկարգ եւ մեծ դեպքի մը պահուն նոյն իսկ Կայսր մուկեսիկուքեան պալատներ կը կասարէր:

տա թագունին, յաղթութեան զլխաւոր շէպքերը և գիտաւորին ճշգրիտ պատկերը նկարեց, այդ կապերաին նկարին վրայ կը տեսնուի բազկատարած աննայիչ բազմութիւն մը, որուն զլխուն վրայ գիտաւորը կը փայլատակի:

Պատմեց մասնաւորապէս, թէ ինչպէս 1456 ին քրիստոնեայ և մահմետական, որոնք պատերազմի մէջ էին, տեսան բոցատեսիլ սուրը և իրր սոսկալի թշուառութեանց գուժկան նկատեցին զայն: Մեհմետ Բ. յարձակմամբ Կոստանդինուպոլիսը առնելով կ'երդնուր՝ երթալ մինչեւ ի Հուսլմ և հոն Ս. Պետրոսի եկեղեցուոյն սեղանին վրայ, ձիուն ջուր խմցընել և ճանապարհին Պէլկրաար պաշարել:

Պատմեց նաեւ թէ, Գալիքսդ Գ. Պապը, տեսնելով երկնից երեսը թրքական թուրը, իր ահ ու սոսկումը կրկնապատկուեցաւ և զայրանալով զանի և զթուրքերը բանադրանաց ենթարկեց և թէ՛ ինչպէս հաստատեց «Հրեճակ Տեառն» աղօթքը, որ միջօրէին ի ձայն զանգակի կ'արտասանուի, երկնից օրհնութիւնը հայցելու համար: Թէ՛ ինչպէս այն մեծ կոտորածին սկիզբը, որ անընդհատ երկու օր տեւեց, Ֆրանչիսկեան եղբայրները՝ (1) միակ զէնք ըլլալով, ըսաչ ի ձեռին, առաջին կարգերուն վրայ անցնելով, պապական բանադրանքը կը կրկնէին գիտաւորին զէմ, որով կ'ուզէին երկնային երեւման ազեատաւոր ազդեցութիւնը իրենց թշնամեաց վրայ տեղացընել:

(1) Այս օրուան Ֆրանչիսկեան կոչուած կրօնաւորներ այն les freres mineurs կոչուէին:

Պատի՛ղ գիսաւորը շարունակելով իր պատմու-
մութիւնը, ըսաւ թէ, այնքան այլազան եղած է
իր ազդեցութիւնը՝ որ 1531 տարւոյն երեւման ժա-
մանակ, Պրանչիսկոս առաջնոյ մայրը, Լուիզ ար
Սալուա, իր մահուընէն երեք օր առաջ, իր սե-
նեկին մէջ լուսաւորութիւն մը տեսնելով, վարա-
գոյրը բանալ տուաւ և երբ գիսաւորը տեսաւ,
այնքան զգածուեցաւ անոր տեսութենէն որ՝ բա-
ցազանչեց «Ահա նշան մը, որ ստորին անձանց
« համար չէ. Աստուած զանի ցոյց տուաւ մեզի
« մեծամեծացս համար. գոցեցէ՛ք պատուհանը, գի-
« սաւոր աստղ մընէ՛ որ իմ մահս կը ծանուցանէ.
« ուրեմն պատրաստութիւն տեսնենք»:

Պատմեց վերջապէս թէ, ինչպէս 1682ի երեւ-
ման տարին իր աստղաբաշխական պատմութեան
թուակիւնը սկսաւ. վասն զի այդ տարուան գի-
տողութեանց հաշիւներէն է որ ճշգրտեցաւ և հաս-
տատուեցաւ թէ՛ 1531ին և 1607ին երեւցած գի-
սաւորները նոյն ինքն էր. և թէ այդ երեւմունք
Հալլէյ նշանաւոր աստղաբաշխին սասարեցին, գի-
տութեան տարեգրութեանց մէջ նշանակելու զին-
քը և աստղաբաշխին անուամբ յորջորջուելու, և
1759 տարւոյն մէջ ալ իր վերադարձը նախագու-
շակելու:

Վերջապէս Հալլէյ գիսաւորը, պատմեց իր
անդրանիկ գիսաւորին համաժամանակեայ դէպքե-
րու յաջորդական ընդհանուր պատմութիւնը, սկըս-
եալ 1254 տարիէն (Քսէ առաջ) մինչև վերկշական
ըջանի վերջին երեւման տարին 1835:

Մեր մեծ գիսաւորը, յանձունս զարմացման

մասնուեցաւ թէ մարդիկ ո՛րքան արագ կը հիւ-
սէին և կը խզէին ազգութեանց կենաց ուստայնը:
Սոյն որ աւելին և ցաւօք սրտի զարմացուց զինքը՝
այն էր թէ, ինչպիսի միջոցներ կը գործածէին մար-
դիկ փոխադարձ յաղթութիւններ ձեռք բերելու
համար... երկաթ... արիւն և խժողութեանց և
պժգալի չարութեանց մեծագոյն նրբացումներ...
այսքան փոքրիկ մարմնոյ և այսքան չնչին և զիւ-
րաբեկ արարածի մը մէջ: Մեծամեծաց յաւակնու-
թիւն և բնածին տկարութիւն: Մարդկութեան
ընդհանուր պատմութիւնը շատ շինիչ և շահեկան
երեւոյթ մը չունեցաւ իրեն համար և եթէ իր բարձ-
րութեան մէջ ի ներքուստ արձամարձոյ չըլլար մարդ-
կային փցսնութեանց, մէկէ աւելի անգամներ,
փոքր գիսաւորին սոսկալի պատմութեանցը ժամա-
նակ, իր երկայն մաղերը պիտի ցցուէին գլխուն
վրայ:

Այսպէս միասին ճամբորդելով, առանց զգա-
ու, Պոսիդոնը անցան և Հալլէյ գիսաւորը, շա-
րունակեց իր աշխարհաքաղաքացիական կենսադ-
րութիւնը հետեւեալ կերպով: —

«Աստղաբաշխական ուսումը, այնքան յառաջ-
դիմութիւն ըրած է քանի մը 75 տարիներէ ի վեր,
որ իմ 1682ի երեւմանս, այն տասեղագէտը, որ
իր անունը ինձի տուաւ, իմ 1759ին վերադարձս
հուշակեց, բաւական մեծ յանդգնութիւն էր ըրածը
կարծեմ: Առանց ձեզի չափ միջոցի անապատին
մէջ մխրձուելու — վասն զի մօտ 15 տարի վերջը,
1873ին պէտք է որ վերադառնամ, մինչ գուք պի-

տի շարունակէք ձեր՝ ճամբորդութիւնը դեռ 1500 տարի — գիտէք սակայն թէ, երկրէն 1.200,000,000 մղոն կը հեռանամ: Մեզի համար ասիկա բան մըն չէ, բայց երկրին բնակչաց համար ահագին բան մըն է: Այս ժամանակամիջոցիս մէջ, ասիական թերակղզաց կողմանէ, երբեմն կարգիւելիմ և բռնադատուեալ կ'ստիպուիմ դանդաղել ընթացքս՝ իրենց միջավայրէն անցած ժամանակս:

Արդ, աստղաբաշխական զիտարանաց պարունայք խիստ նուրբ տեսողութիւն մը ունին կամ աւելի աւ ըսեմ, կարծես վերացական իմացողութեամբ մը օժտուած են: Ուստի՝ Լուսնիմագի միջավայրին հասած ժամանակս, արդէն շատոնց երկրացիներուն տեսութեան սահմանէն դուրս ելած եմ, նոյն իսկ իրենց ամենազօրաւոր հեռադիտակաց ազդեցութենէն, և կը յուսայի թէ, կտտարելապէս փախուստ առած էի իրենց գնահատութենէն, բայց այնպէս չէր. Լուսնիմագը, 518 օր յետաձգում պատճառեց ինձ և Երեւակն ալ 400 օր. այս ամենը որոշ կերպով նախատեսուեցաւ և հրշակուեցաւ, մերձ մէկ ամսուան սխալմամբ: Այլ գաղտնիք մը չունինք աստղաբաշխներուն համար:

Բարեբաղդութիւնն ունեցայ որ 15 տարի առաջ գուշակուեցայ ամենազեղեցիկ բաշի մը պատճառաւ, վեցճիւղեան բաշ մը (կը խոստովանիմ որ այդ բաշը իմն չէր): Անցեալ օր տեսաք այդ գաղտնամասը, որ մէկ պեսութենէ միւսը կ'անցնի, որուն շրջագիծը զուգորդի վերածուած է և կարծեմ նշմարած էք թէ՛ ինքն է միայն որ վեցաձաձանչ բաշմը ունի: Ուրեմն ան է որ՝ իմ կարա-

պեաս եղած էր 1744ին. ան էր նաեւ երկրային 18րդ դարուն մէջ տեսնուած զիսաւորաց զեղեցկագոյնը: Անոր երեւման առաջին զիշերը իր ճառագայթումը այնքան շոգշողուն էր, որ երկրորդ տրեւ մը կարծուեցաւ:

Քիչ առաջ կ'ըսէի թէ, ամեն մէկ վերադարձիս միշտ նորութիւններ տեսած էի սովորութեանց, բարքերու, և ազգաց ոգւոյն մէջ. այս խորհրդածութիւնս ո՛չ երբէք այնքան յայտնի եղած էր, որքան իմ վերջին երեւմանս:

Երկրին միջավայրէն 1759ին մեկնելով, 1835 թուականին պիտի վերադառնայի: Նախապէս հաշուուածէն շատ աւելի յաւ կերպով հաշուած էին Լուսնիմագի, Երեւակի և Ուրանոսի, ինձ պատճաճառելիք յետամնացութիւնը և նոյն իսկ գծած էին, երկնից կամարին վրայ, իմ անցնելիք ճանապարհիս այլ և այլ դրեց կէտերը. այնպէս որ 1835 օգոստ. 20ին պիտի անցնէի Յուլ համաստեղութեան Զեքա աստղին քովէն, նոյն ամսոյն 28ին, Երկուորեակ և Կառալար համաստեղութեանց մէջտեղէն. հոկտ. 3ին Լիկելեւի, Հոկտ. 6ին Մեծ Արջեկ, 12ին Ագնարածեկ, 13ին Պապեկ, 15ին Վահագնի և Օձակալի մէջտեղէն. 19ին Օձակալի, 16 նոյեմբերին նոյն աստեղակոյտին էքաի քովէն. դեկտեմ. 26ին Կարին համաստեղութեան Անդարեւի քովէն. բնականապէս խիստ ուշիմութեամբ գրծւած այս ճանապարհէն կէտ մը անգամ չչեղեցայ:

Արդ ըսի ձեզի թէ, կենացս մէջ, ո՛չ մի ժամանակ և ո՛չ մի աշխարհի մէջ, այսքան գաղափարաց յեղափոխութիւն չէի տեսած, որքան այս

վերջին ճամբորդութեանս մէջ, որն որ ճշմարտութեամբ, զիս խորապէս օխրեցուց, այնքան ախուր էի որ կարծեմ թէ հաւաստիօրէն երկրին բնակիչներն անդրադարձած էին(1) :

Ինչ գործ տեսած էին երկրին վրայ 1759էն մինչեւ 1835. Ինչ յեղափոխութիւն կատարուած էր մարդկային ցեղին մէջ : Ո՛րքան պատճառները և միջոցները հետազօտեմ, այնքան մթութեանց մէջ կը խորասուզուիմ. . . Կարօյս Ե. Ի Գիսաւորը պիտի շուարէ՛ր . . . »

(1) 1836ի էսինպուրկ Ռըվիուի մէկ յօդուածը. —

«Հալլէյ գիսաւորը, նոյն իսկ այն գիշերը, ուր աւելի պայծառ կը տեսնուէր այն երեւման ժամանակ, միտ տօգոյն եւ աղօտ եր. աւելի հետաքրքրութիւն կը պատճառէր քան հիւսցում: Հեռադիտակով դիտեցինք զանի, չեմք կրնար նկարագրել քե, ինչ աստիճան ազդեցութիւն քաւ անոր մեղամաղձոտ լոյսը: Ո՛րքան զննես այդ տեսակ առարկայ մը՝ այնքան անվերահասու կը մնաս անոր բնութեան հանգամանացը, կապարագոյն լոյս մը եւ տարած, կիսով մը մարած, մթազին ամպեղին պատեանի մէջ. ահա՛ այս է որ կը տեսնուի այժմ մեր աչացը:

Այս լոյսին յասկուրիւնը օտարոտի է, ո՛չ արեւուն լոյսին կը նմանի, ո՛չ լուսինին եւ ո՛չ ալ աստեղաց. եւ սչ իսկ Ծիրկաթինին միգամած լոյսին ցոլացման: Զօրաւոր հեռադիտակով՝ երեւակը պէտք է տեսած ըլլայ որո՞ զաղափար մը կազմելու համար այդ կապարագոյն լոյսին վրայ՝ որ գիսաւորը կը ցոլացրնէ: » - ՀԵՐՇԷԼ:

— «Այդ ի՞նչ է . . . ի՞նչ է, ո՛վ է այդ Կարօյս Ե. ըսածդ, հարցուց մեծ Գիսաւորը» .

— Ո՛հ, ներեցէ՛ք, յարգելի՛ր իմ, մուցայ թէ՛ երկրային գործունէութեանց անտեղեակ էիք: Կարօյս հինգերորդ ըսուածը՝ կայսր մըն է, որ երբ՝ 1556ին՝ երկրին մօտերէն պատահամբ անցնող և երկրին գոյութիւնէն անտեղեակ բոցեղէն մեր ընկերներէն մին տեսաւ, Ալմանական թագէն հրատարեցաւ: Սոյն ընկերակիցը՝ ժամանակին զրպարատուցաւ նաև ջրհեղեղը պատճառած և յետոյ Կեսարի մահուան օլ շարագուշակ ըլլալուն: Այս գիսաւորը երեք հարիւր տարի վերջը, այսինքն 1856ին պիտի վերադառնար գար ի տես երկրին. բայց յորմէ հետէ որ գիտցաւ կայսերաց՝ անմիտ յանձնապատասանութիւնը, որք ինքզինքնին երկնային մտածութեանց և կամաց կեդրոնը կը համարեն, մնաք բարեաւ ըսաւ այս փոքրիկ ունայնամոլ երկրին և որոշեց աստեղային ուրիշ գրութեան մը մէջ անցնիլ. առ այժմ հիսսիսային աստղին մօտերը կը գտնուի: Մարդիկ պարսպ տեղը կսպասեն անոր վերադարձին, չպիտի գայ այլևս: Բայց այս սարօրինակ գիսաւորին խնդրով ընդհատումէն վերջը՝ խօսակցութեանս շարքին վերադառնալով, կըսէի թէ՛ ախրած և շուարած էի, իմ բացկոյտութեանս ժամանակ, երոպական ընկերութեանց մէջ տեղի ունեցած փոփոխութեանց պատճառաց վրայ:

— «Զաւակս, կրկնեց մեծ գիսաւորը, հիմայ ա՛լ իմօ է կարգը քեզ տեղեկացընելու թէ՛ յիրաւի մեծամեծք շատ անգամ բարձրէն կը ծախեն ինք»

գինքնին ստորնագրունից մէջ տեղի ունեցած ան-
ցուղարձը դիտելու և գնահատելու՝ ինչ որ իրենց
ազէտալի տգիտութեան գրոշմը կը կազմէ և ար-
գահատելի է մեզ համար, բայց երբեմն ալ այն-
պիսի դէպքերու միջամուխ կըլլան՝ զորս յայնժամ
գերազանցօրէն կը դատեն։ — Փոքր ինչ որ զի-
տեմ, տնա պիտի ծառայէ քու ծանօթութեանցդ
պակասը յրացնելու։ Սա գիտեմ որ՝ 1811ին
Ֆրանսայի մէջ այլևս «Շնորհիւ Ասուծոյ» թագաւոր
չկար, հապա կայսր մը, նոյն իսկ իմ երեւմանս
առաջին շարաթր՝ այս կայսեր որդի մը ծնաւ։
1811ի Մարտէն մինչև 1812 Ապրիլը երկրէն տես-
նուած մնացի։ Տեսայ որ Ֆրանսան՝ այն ժամա-
նակ իր դրացիները կը սարսափեցընէր, յաղթու-
թեամբ իր սահմանները արտակարգ կերպով ըն-
դարձակելովը, և առ այդ հաստատուեցայ տես-
նալով որ՝ այդ ինքնակայը՝ 450, 000 հոգինոց
բանակ մը կազմելով, այդ կէս միլիոնով ճամբայ
ելաւ դէպի Ռուսիոյ սափաստանաց կողմը. ա՛լ
չեմ գիտեր թէ՛ ի՞նչ եղաւ. վասնզի 1812 Յուլիս
ամիսէն ի վեր չէի կրնար այլևս շատ բան նըշ-
մարել երկրային գունտին վրայ»։

Գիտաւորները շատ տրամաբան են, իրենց
յիշողութեանց դիմելով և ժողովրդոց վրայ բրած
գիտողութեանց բնկորները իրարու հազօրդելով
և այսպէս իրարու օգնելով՝ գրեթէ ամբողջովին
կը կազմակերպեն մեր պատմութիւնը, աս ալ
նորաձև հաւաքաբանութիւն մը ընել է։

Գիտաւորաց մին կըսէր թէ՛ 1759ին Ֆրանսայի
մէջ փոտած և մգլտած ընկերական կազմակեր-

պութիւն մը կար, զոր մուրճ կոչուած փլիխո-
փաներ, մին քան զմիւսն աւելի ուժգին կը հար-
ուածէին։

Իսկ միւսը կ'ըսէր թէ, 1811ին մեծ կայսր
մը կար և մեծ պաշարոււմ մը։ 1815ին, կրկնեց
առաջինը, սահմանդրական թագաւորով մը խիստ
խաղաղ Ֆրանսա մը կար։

Այս երեք ծանօթութիւններով, ընդհանուր
առմամբ, Ֆրանսայի ամբողջ պատմութիւնն ուր-
ուագծին վերահասու եղած էին։ Իրենց խոսակ-
ցութիւնը հաւասարապէս տարածած էին նաև միւս
ազգաց պատմութեանց վրայ, վասն զի գիտաւոր-
ները զանազանութիւն և խափր չեն դներ և առաջ-
նութիւն չեն տար այս կամ այն մըջնակոյտին (ժո-
ղովրդոց)։ Բայց որովհետեւ բոլոր մերձակայից
պատմութիւնները ամէնքն ալ իրարու կը նմանին
և թէ՛ նուազ հետաքրքրական է մեզ համար
(Ֆրանսացւոց), ուստի այդ օգային խօսակցութիւն-
ները չենք ի մէջ բերեր։

Ահա՛ այսպէս, միջոցին մեծամեծ գործառնու-
թեանց վարժուած երեւելի հետազօտիչները մեր
գանուած գունտին գործերը իրենց եթերական կը-
չիռով կը կշռէին։

Յայնժամ հալլէյ գիտաւորը, իր շրջագիծը գո-
ցելու համար, իր հեռակէտին վրայ, ծռեց իր
ճամբան, մինչդեռ 1811ի գիտաւորը շարունակեց
իր ընթացքը ուղիւ դիծով, վասն զի արեգակնա-
յին դրութեանէն հեռանալուն վերջ պիտի տար մի-
այն 3343ին և նոյն դանդաղութեամբ վերադառ-
նալով դէպի մեզ գալու համար 4876ին։

Գուցէ այս միջոցիս, ներաստողային անապա-
աաց մէջը կը դիտէ, մեզի անձանօթ աշխարհներ-
հինաւուրց գուճտեր, որոնց արեւը մարած է, ո-
րոնք միջոցին մէջ լսիկ մնջիկ կը թաւալին, հե-
տերնին քարշելով տիեզերական աւերակները և
մեռեալ մարդկութեանց գերեզմանները:



Վ Ե Ր Չ Ա Ր Ա Ն

Երբ 1835 ի գիտաւորը վերադառնայ՝ (Փրկչի
թուական 1911) գուցէ միմիայն 75 տարի աւելի
ծերացած պիտի գտնայ Երկիրս՝ տարիներու աննշա-
նակելի խաղալիք...

Բայց երբ, իր յարգելի 1811ի ընկերը, այս
կողմերէն անցնի (մտաւարտագէս 4876ին), արդ-
եօք զո՞վ և կամ ի՞նչ պիտի գտնէ մեր տեղը . . .
Այս փայլուն մայրաքաղաքը, ուր ենք, արդեօք
պիտի գտնէ՞ . . . : Ո՛ւր են այսօր մեծ գիտաւորին
անցեալ տարուան տեսած (էբ) մայրաքաղաքները
Տրոլադայ՝ . . . Նինուէ՛ . . . Թէրայի՛ա, և զեռ-
ուրիշ հարիւրաւորներ, որոնց անուններն իսկ ա-
ւերակաց վրայ մնացած չեն: Արդեօք սոսկ միայ-
նութեան հո՞վը պիտի փչէ այդ ամանց վրայ, ուր
երբևի՛ Ծրանսա մը կար. արամագին և լայագին
դռինե՛ր պիտի հակին լուռ ու մունջ երբեմնի
Սենի վրայ:

Արդ, երկարաչրջան գիտաւորը, որ երկու անօ

գամ յաջորդաբար տեսած չէ միեւնոյն քաղաքը, և
միեւնոյն ազգը, արդեօք պիտի տեսնէ՞ Ծրանսան
և Բարիզը, Անգլիան և Լոնտոնը, Իտալիան և
Հուովը:

Եթէ շարունակենք այս վէպիկը (մենք կամ
ուրիշներ) քանի մը յիսուն հազարական տարիներ,
միթէ պէտք չպիտի՞ ըլլայ արդեօք նորագոյն դէպ-
քեր աւելցնել որոնք ոչնչացուցած ըլլան նախկին-
ները. և արդեօք երկրիս պատմութիւնը կործան-
ման և աւերելոյթ վերանորոգման պատմութիւնը
չպիտի՞ ըլլայ միշտ ևւ յորածամ:

Գիտաւորները մարգարէական աստուածասուր-
ծիրքը չունին:

Բայց սակայն այս պատմութեան հեղինակը
բազաւոր է մէկ քանի անգամներ ունեցած ըլլա-
լու իր առանձնացուցին մէջ և որովհետեւ 1844ին
չառ փոքրիկ տղայ էր, այդ տաք տարւոյն մեծ և
հպարտ գիտաւորը դիտելու անկարող էր, վերջերս
համարձակեցաւ առաքելու խարտիչաներ պատ-
գամաւոր մը, այդ երեւելի ճանապարհորդին, յան-
ձնարարելով իրեն հարցնել մտերմաբար թէ, իր
յաւաջիկայ գալստեան ժամանակ ի՞նչ կը յուսայ-
գտնել երկրիս երեսը:

Այս ճշգրիտ պատմութեան հեղինակս, հա-
ճելի պատասխանով մը վերջացնելուս բազաւոր-
կը սեպեմ ինքզինքս:


Մեծ գիտաւորը յիրաւի, ոչինչ ճշդեց. և այդ
է նշան իր արժէքին մեծութեան և իր ծայրագոյն-
խոհեմութեան: Բայց պատասխանեց պատգամաւոր-
պատի գօտաւորին թէ ծիծաղերես պիտի վերա-

դառնար առ եղական աստղարաշխին որ զինքը
 զրկած էր, և աւելցուց իրեն յատուկ ձայնովը .
 « Ըսէք իրեն թէ, մարդկութիւնը որ շատ ծերա-
 ցած կ'երևի իրեն, զեռ իր մանկութեան մէջ է,
 դեռ կը պայքարի և առաջին երկուեքով է որ
 կը տառապի, բայց կը յուսամ որ՝ ասկից հարիւր
 հազար տարի չանցած, կերդնում գէտիս վրայ,
 որ ո՛չ միայն բանականութիւն պիտի ունենայ՝
 այլ ձրի և պարտաւորիչ կրթութիւնը, բնդհանուր
 ձեռնհաս բուեարկութիւնը, վնուական հանրա-
 պետութիւնը, խղճի ազատագրութիւնը և վերջապէս
 զինուորագրութեան, երամակայ: « վարիչներու և
 մարդկային սպանդանոցի ջնջումը ձեռք պիտի
 ձգէ:»

Ահա այս եղաւ վերջին մտածութիւնը և վեր-
 ջին խոսքը ճանապարհորդ մեծ գիտաւոր աստղին՝
 որ երկրիս մարդկութեան պատմութիւնը վերէն
 ուսումնասիրելու վարժուած է:

Ասկից կը հետեւցնենք իրրիւ եզրակացութիւն
 թէ՛ տիւղերաց, սննունութեան մէջ, շատ ոչինչ
 բան մըն ենք: Բայց միայն թէ՛ եթէ մեր իմացա-
 կանութիւնը օգտակար կերպով գործածենք, կա-
 րող ենք այնպիսի արժանիք մը ստանալ՝ որ զմեզ
 անարգ նիւթէն պիտի զանազանէ, և հոգեկան
 էակներ կըլլանք: Ահա՛ այդ պէտք է բլլայ, ինչ-
 պէս կըսէ գիտաւորը. մեր ճիգերուն մշտտեւ
 նպատակը:

Վ Ե Ր Զ



ԱՆՅՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՆՇՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ (")

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.

Հեղինակը նախ եւ առաջ կը պատմէ այս նախաբանին մէջ, թէ հետեւեալ *Անհունութեան մէջ դրուագը*. Ի՛նչ կերպով եւ ի՛նչ պարագայի մէջ յայտնուած է իրեն:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Շատ տարիներէ ի վեր էր որ Լուսինի հետ յարաբերութիւն ունեցած չէի. թէպէտեւ յաճախ մտածած էի լուսոյ, անցեալին տեսողութեան և նախակենցաղութեան նկատմամբ, և անոր ըրած օտարոտի յայտնութեանց վրայ:

Երբ երեկոյ մը, այն ժամուն որ սովորութիւն ունէինք խօսակցելու, (ամսոյն երրորդ օրը. երբ տրտում մահիկը արեւմտեան կողմը կը սաւառնի), ի մէջ այլոց, այն քաղցր և խաղաղ ժամուն, շուրջըս սօսաւիւն մը լսեցի. կարծեցի թէ նորեկ անձ մը չոր տերեւոց վրայ կը քայէր: Բայց ես պատշգամիս վրայ թիկնաթոռով նստած էի և հոն չոր տերեւներ չկային: Այդ շուկը դարձեալ կրկնըւեցաւ: Յայնժամ ոտքի ելայ և պատշգամիս շուր-

(*) Գրեալ 1872ին

ջը դարձայ և ո՛չ ոք տեսայ, արդէն ո՛չ ոք, առանց իմ գիտութեանս, չէր կրնար հոն մտնել: Մեծ հեռադիտակին գմբեթաւոր յարկը զայն և յանկարծ գաղափարն ունեցայ Ուրանի(1) միջոցաւ լուսնական գեղանկարները դիտել որոնք Արեւուն ճառագայթներէն շեղակի լուսաւորուած էին: Այլ մտացայ քիչ առաջ լսած եզական շշուկս, որ զիս խուկումէս արթնցուցած և տեղէս վեր հանած էր: Մէկ ժամէն աւելի լուսնագիտութեան ուսումնասիրութեամբ զբաղեցայ, և մասնաւորապէս Չուարբուքեան ծովակին (mer de la sérénité) (2) բարձրաբերձ եզերքներուն մէկ նկարն առնելու պարապեցայ: Երբ լուսինը մարը մտաւ, հեռադիտակը դարձուցի զէպի Լուսնիագ մոլորակը, տեսայ որ, անոր հասարակածին վրայ շրջող ճերմակ գօտիները, աւելի քան երբէք, փայլուն էին. այնքան ճերմակ և փայլուն էին որ, նոյն ժամուն, մոլորակին վրայէն անցնող իրեն արբանեակներէն մէկը սեւ կէտի մը պէս երեւցաւ ինծի. թէպէտև ան միշտ ճերմակ է, երբ մոլորակին սկաւառակէն դուրս է:

Եւ որովհետև այն ժամանակները, Արեւուն վրայի բիծերը շատցած էին և քիչ առաջ Եւրոպայի մէջ, ամեն տեղէ, սքանչելի հիւսիսայգ մը տեսնուած էր, Արեւուն բիծերուն բազմանալուն և

(1) Մ. Թ. հեռադիտակին անունը Ուրանի (Uranie) դրած էին:

(2) Մ. Թ. Աստղաբաշխները լուսնոյ մէջ տեսնուած այլ եւ այլ լեռներուն մէկ մէկ անուն տրուած են ի դիւրութիւն ուսումնասիրողաց:

հիւսիսայգներուն՝ քանի մը տարիէ ի վեր, յաճախակի երեւմանց զուգադիպութիւնը, մտածել տրուաւ ինձ թէ՛ մի գուցէ ներկայիս Լուսնիագի վրայ, հիւսիսայգները՝ անոր միջոցին մէջ, ցոլացուցած բուն իր լոյսին վրայ, առաւելապէս տարբեր լոյս մը տեսցուցած ըլլան:

Այս կերպով ամբողջ իրիկունը դիտողութեամբ անցուցած էի: Ժամը տասնին մօտ, ջերմաչափը զգալապէս իջած էր. մերձակայ սննեկին՝ յախճապակեայ վառարանը վառեցին, երբեմն երբեմն դիտողութիւններս ընդհատելով, կուգայի սաքերս տաքցընելու:

Սիրելի ընթերցո՛ղ, ի հարկէ կը մտածես թէ ի՞նչ պէտք կայ այս մանրամասնութիւններուն, որոնք զքեզ չեն հետաքրքրեր. զանոնք հոս կը յիշեմ, վասն զի յետագայ ընկիւններուս բացատրութեանը կը ծառայեն:

Արդարեւ՝ իմ ընկերներէս մին. կէս գիշերին մօտ, քովս եկաւ և խօսեցաւ կրկնեակ աստղի մը մասին, որ քիչ ժամանակէն միջօրէականէն պիտի անցնէր: Խօսակցութեանս միջոցին միտքս խնկաւ, Չուարբուքեան ծովակին բարձրաբերձ եզերքներուն գծած նկարս ցոյց տալ իրեն և հարցընել թէ՛ ճիշտ են: Գրասեղանիս վրայ փնտռեցի զայն և զարմացայ չգտնելուս. յախճապակիէ վառարանին վրայ դրուած էր. «Ահա՛, ըսի, հեռուն կը փնտռենք, «մինդեռ տէքիս առջեւն է եղեր, տե՛ս ի՛նչպէս առ զէկ լուսաւորուած է Ռօեմեր (Roëmer) լեռը, «Պոսիդոնիոսի խառնարանը, որ կիսով լուսաւորուած է, Երազոց Լճին (lac des songes) հզերք»

« ներք, բազում ճեղքերով լի են: Լը-Մոնիէր
 « (Le Monnier) և Վիտրիվի (Vitribe) կրկէսները
 « սքանչելիօրէն . . . բայց ինչո՞ւ ձեռքս բռնած
 « կեցած եմ այս թուղթը, փոխանակ քեզի ցոյց
 « տալու: Ա՛ն և քննէ՛, հանդիստ կերպով դիտէ՛,
 « մեր արբանեակին միջօրէականը որ ներկայիս
 « արեւածագէն կը լուսաւորուի»:

Ընկերս առաւ թուղթը, և ես գտցի հետադի-
 տակը ուղղելու դէպի այդ կրկնեակ աստղին, հինգ
 վայրկեան պէտք եղաւ գործիքը հարկ եղած դիր-
 քին մէջ դնելու համար. այս միջոցին մէջ, ընկերս՝
 ո՛չ հաստատական և ո՛չ ալ քննական բառ մը ար-
 տասանեց: Երբ ես վերագործայ դէպի իրեն և
 հրաւիրեցի որ ինքն ալ երթայ դիտէ այդ կրկնեակ
 աստղը, սկսաւ քրքջալիբ խնդայ, ըսելով — « Բա՛-
 « ւրջ, խենդեցօ՞ր դուն . . . այս թուղթին վրայ
 « ո՞ր է ըսած նկարդ. հոս լուսնական նկար մը
 « չկայ, աստղագէտի կամ ալքիմիագէտի մը խառ-
 « նափնդոր այլանդակ նշանագրութիւն մը, որմէ
 « Մեծն Ալպերդի կախարդներն անդամ, բան մը
 « չեն կրնար հասկընայ ու կը շուարին»:

— « Ինչպէ՞ս, պատասխանեցի, բայց ստիպան
 « նկարս ա՛յնքան անճոռնի չէ. անգիտակ չեա թէ,
 « շատ ասնէ ի վեր, լուսնոյ այդ մասերը կը հե-
 « տադատեմ: Վաղը իրիկունայ կը դիտենք Լիցեի
 « լեռը՝ թէ միշտ մի և նոյն է՞. վասն զի Արեւը
 « վաղը պիտի սկսի լուսաւորել զայն»:

— « Արդ, խնդրե՛մ, ըսէ՛ ինձի թէ այս թուղ-
 « թին վրայ, ո՞ւր է Պոսիդոնիոսի խառնարանը»,
 ըսաւ ընկերս, թուղթը ձեռքս տալով: Թուղթին
 վրա նայածիս պէս՝ աննամայ զարմանքէ մը բըւ-
 նուեցայ, այնպէս որ կարծեցի թէ կ'երազեմ:
 Սիրելի ընթերցող, ա՛լ կրնաս հասկնայ իմ ապշու-
 թիւնս, երբ խոստովանիմ թէ, յիրաւի թուղթին

վրայ մատիտով գծած նկարս չկար, այլ՝ մելանով
 գրուած խառնալիցրու նշանագրեր, անընթեռնի,
 նշաններ: Նաև. ենթադրեցի թէ՛ սխալմամբ, նկա-
 րած պատկերս ներկայած չէի ընկերոջս: Բայց որով
 հետեւ, նախապէս պնտր բոյր մանրամասնութիւն-
 ները դնեմ էի, ա՛լ այս ենթադրութիւնս անտեղի
 էր: Սա ալ կայ որ. այս գրութիւնը վրիպած էր
 աչքէս: Ի՞նչպէս եկած էր, չեմ գիտեր: Բայց վեր-
 ջապէս, նոյն թերթն էր, որուն վրայ գծած էի
 նկարս, զի թերթին վերեւ անուանագրերս կային
 և նկարած ժամանակս պարզ մաքուր թուղթ մըն էր:

Չեմ գիտեր, ի՞նչ բացատրութիւն պէտք էր
 տալ այս երեւոյթին:

Ահա՛ այն նշանագրութիւնը, որ իմ լուսնական
 նկարիս հետ փոխանակուած էր:

Π ⊙ √ δ Δ + Δ Π ? Ψ ? + ! > Ի ◊ δ Ի ☆ ◊ ⊙ ⊙ δ ? √
 Ի ⊙ ☆ ? & ⊙ Π ! ? Ψ √.

δ ? ⊕ + ◊ ⊕ + ⊕ & δ ? Ի ! ? > + ⊕ ! Ի : ◊ ? Ի : ◊ ⊕ √
 ! ◊ > ? √ ◊ ⊕ 2 ◊ ⊕ ☆ ⊕ ⊕ δ ? √ ⊙ ⊙ 2 Ի > Δ ◊ Δ +
 ◊ ⊕ >.

√ ⊕ ! Ի ⊙ √ δ ⊕ γ Δ δ Δ + ! Ի ◊ ◊ 2 ☆ > Δ ⊕ ! ? ! Δ +
 √ ⊙ γ Δ ⊕ > ◊ ⊕ + √ ☆ ? 2 ! ? ◊ ⊕ > ? ☆ ! ⊕ Δ +,

Ի > Ի Ի ⊙ > ? ! Δ ⊕ ⊙ Ի ☆ Δ Π ! ? > Π + ? √ Ի > ⊕ !
 □ Π ⊕ √ ⊕ ⊕ ! ◊ ? ⊕ Π ☆ Δ Π Ի.

⊙ Ψ ⊕ + Ի ⊕ !, ◊ ⊕ + √ Π + ? δ Π + ⊕ ⊕ √ Δ +, ! Π
 δ ? Ի + ! ? + ◊ > ⊕ √, ☆ Δ 2 Ψ ? ! Π Ψ ? ⊕ √ ⊙ Ի ! > ?
 ◊ Δ ⊕ √ ? + ! ? + ◊ Ի. ☆ ? ! ? √ ? > ⊙ Ի δ Π √
 Ψ Δ ⊕. ☆ ⊙ > + ? + ? ◊ Δ ⊕ √ Ի δ Ի √ ! ? + ! > ?

! ? + ⊕ > ?

Կոստ ? .

Բացարձակապէս անկարելի էր՝ իմ նկարիս-
 դոյզն ինչ հետքը գտնել այս գրուածքին մէջ ։
 Ի հարկէ՛ արձանագրութիւն մընէր սա և կ'ըն-
 դունիմ թէ, ճշմարիտ ծածկագիտական անընթեւ-
 նըլի կապալական (cabalestique) գրութիւն մը : Ես
 ինքս՝ տեսնուածէն աւելի, դարմացման մէջ մնա-
 ցած էի այս հզական կերպարանափոխութեան վը-
 րայ : Խոստովանեցայ ընկերոջս թէ, ես այ բան մը
 չեմ կրնար հասկնալ ասկից և կարծեցի թէ նկարս
 ուրիշ թերթի մը վրայ գծած էի և թէ առժամապէս
 կուրսուած էր ան :

Երբ ընկերս հեռացու քովէս, թերթը ձեռքս
 առի և դարձուցի (ա՛լ չեմ գիտեր, ի՛նչ պատճա-
 ռաւ, մինչ ցայն վայր չէի դարձուցած) և տեսայ
 իմ գծած նկարս, թերթին հաւելի կողմը, թէպէտ
 քիչ մը նուազ շեշտուած քան ինչ որ, մատիտով
 թեթեւապէս գծած էի նախապէս :

Բայց, ինչպէ՞ս կըլլայ որ, նկարած ժամանա-
 կըս, չէի տեսած այս կապալական գրութիւնը՝ որ
 այնքան որոշակի մեխնով գրուած էր հաւելի կողմը :

Յայտնի է թէ, նախապէս չկային : Ենթադ-
 րութեանց մէջ ընկզմած էի, երբ քունը կո-
 խեց գլխուս և քննութիւնս վաղուան թողուցի,
 ըստ առածին թէ՛ «Գիբեբները խրատսու են» :

Երկրորդ առաւօտը զարթումիս, առաջին
 գործս հղաւ դարձեալ այդ խորհրդաւոր թուղթը
 ձեռք առնել և խնդրոյն լուծումը փնտռել :

Այլ, սքանչելի . . . լուսնական նկարս այլ ևս
 բացորոշապէս տեսանելի հղած էր և ծածկագրու-
 թիւնը անհետացած և ամենեւին հետքը մնացած չէր :

— Ա՛լ այս անգամ . . . բացագանչեցի, տնա
 շատ լաւ յաջողած խաղ մը կը խաղայ իմ ընտանի
 հողիս : Բայց ի՛նչ պատճառ կայ այսպէս ընելուն . . . :
 Ա՛լ սկսայ հաղարուձէկ ենթադրութեանց մէջ տա-
 տանիլ, բացատրութեան մը յանդերու համար : Այն
 ժամանակ մտաբերեցի, վառարանին և համակրա-
 կան միլանի յատկութիւնը, որ ջերմութեան հե-
 տեւանքով անոր գոյնին փոփոխում կը բերէ, և
 անմիջապէս մտածեցի թէ, մի՛ գուցէ այս նշանա-
 գրերն այդպիսի մեխնով մը գրուած ըլլան . և սկը-
 սայ այդ թերթը տաքցընել և ապշած մնացի, երբ
 տեսայ թէ, քանի՛ թուղթը կը տաքնոր, այնքան
 այդ խորհրդաւոր գրութիւնը որոշապէս երեւան
 կուզար : Երբ այդ արձանագրութիւնը կատարելա-
 պէս տեսանելի հղաւ, պարաք սեպեցի անմիջապէս
 ընդօրինակել, որպէս զի ծածկագրութեան կանոն-
 ներով կարենամ կարդալ :

Այս գրութեան քննութեանս ժամանակ, ա-
 ռաջին դիտելի կէտը, որ աչքիս զարկաւ, անոր
 ստորագրութիւնն հղաւ : Այս բառին հինգ տառէ
 բաղկացած ըլլալը (Lumen) անունը միտքս բերաւ
 և անդրադարցայ թէ՛ մի՛ գուցէ անդենական հոգե-
 կան բարեկամս ըլլայ այս արձանագրութեան հե-
 ղինակը : Յիշեցի անմիջապէս առջի իրիկուան եւ
 զական շշուկը, որ երկու անգամ լսեցի, զինքը
 մտածած ժամանակս . ա՛լ ուշադրութեան անարժան
 ենթադրութիւն մը չէր այս :

Այսու ամենայնիւ առժամանակեայ պարզ են-
 թադրութիւն մը կրնայի ընել, փորձելով միայն
 այդ ստորագրութեան հիւնգ նշանները, փոխանա-

Կելով Լումեն (Lumen) բառին տառերովը: Եթէ այս ստորագրութիւնը Լումենի անունը ցոյց կուտայ, անոր հինգ զիրերը պէտք է համապատասխանեն ծածկագրին ստորագրութեանը նշանագրերուն:

Հեղինակը այդ արձանագրութիւնը լուծելով հետեւեալ իմաստը գտած է: (1)

« Գուն շատ երկար մտածեցիր միջոցին և ժամանակին վրայ:

« Անհունութիւն և յաւիտենականութիւն, « ա՛նձ՝ երկու դժուարաթափանցելի խորհրդաւոր

(1) Ծ. Թ. Յիրաւի հեղինակը, այդ կասկածալ Լումեն (Lumen) ստորագրութեան նշանագրերը կը փոխանակէ գաղղիներէն՝ սառերով եւ այդ Լումեն բառին համապատասխանող սառերը, իբր բանալի առնելով, երկայն եւ երկայն խարխափումով, այբուբենի սառերը մի առ մի փոխանակաբար փորձելով եւ շատ անգամ ալ հետեւութեամբ նշանագրերուն համապատասխանող սառերը գործածելով, սառանելի եւ մեծ համբերատարութեամբ, ամբողջ խորհրդաւոր նշանագիր արձանագրութիւնը կը յաջողի լուծել: Այս լուծման գործելակերպին մանրամասնութիւնը քեպէսեւ հեղինակը, մի առ մի գրած է, բայց մենք յարմար չլսեցինք զայն քարգմանել, սա բանաւոր պատճառաւ որ. նախ շատ երկայն եւ ձանձրանալի պիտի ըլլայ ընթերցողաց, երկրորդ եւ գլխաւոր պատճառ, այդ խորհրդաւոր արձանագրութիւնը գաղղիներէն գրուած ըլլալով, մեր հայերէն քարգմանութեան մեջ, մեր սառերուն չպիտի համապատասխանէ, որով անհասկանալի եւ խառնափնդոր գրուածք մը պիտի ըլլայ:

« գաղանիքներ: Եթէ դուն կամք ունիս, գիտու
« թիւնդ բազմապատկելու այս ուղղին մէջ, պատ-
« րաստուէ՛ ունկնդրելու Հոգիի մը որ շատ բան
« գիտէ:

« Լուսնական շրջանի մը մէջ կէս գիշերին պի-
« տի ունկնդրես անոր, ինչպէս ժամանակաւ ինձ
« ունկնդրեցիր:

« Ասկից վերջը ես չպիտի գամ, քանզի ա՛յլևս
« ես քեզի հետ չպիտի խօսիմ:»

Գրեթէ մէկ ամիս, կամ աւելի ճիշտը, 20 օր անցած էր այս եղական պատահարէն ի վեր, երբ լսիկ և գաղջ գիշերով մը, գեղեցիկ և պայծառ լուսնով, միայնակ կը գտնուէի Դիտարանիս դատաստիին վրայ: Կոթնած էի փոքրիկ շէնքի մը, որուն մէջ կը գտնուէր գիտաւորաց յատուկ գիտակը. հոն կեցած էի յանկայս և կը գիտէի Բաբիղեան մեծ քաղաքը, որուն խուլ շշնջիւնը, ծովու ալեաց մանչման նմանութիւնը կը բերէր: Ինչպէս ժամանակաւ Քաղղէացիք, բարեկական աշտարակին բարձրէն, պերճափայլ և ոգեւորեալ քաղաքը կը գիտէին, այդպէս, ես ալ գիշերային անհուն շողջողուն Բարեզը կը զիտէի:

Լուսնական մահիկը, շրջակայ տուներուն մոխրագոյն տանիքներուն վրայ տարտամ լոյս մը կը սփռէր: Հիւսիսային կողմը, հեռուն, երկնից խորը, Վալ-տը-Կրասը իր գեղեցիկ կերտուածքովը կը բարձրանար. Պանթէոնին բարձր գմբէթը, մթնոլորտին մէջ կը նկարուէր. Կլովիտի աշտարակը Սէնթ Փընէվիէվի բլրակին վրայ, Ապէլլարսի ըրած բանախօսութիւնը կը յիշեցնէր. Սեն-Սիւլբիւր իր թխագոյն կարողիկէն և իր երկու խոշոր

աշտարակածեւ զանգահատունները ցոյց կուտար : Այցելուբեան փոքրիկ տաճարին գմբէթը , կը փայլէր . այս ամենքը գիշերային արծաթափայլ աստղին շողովը կը լուսաւորուէր : Ծառուղիին հնօրեայ շաքանակենիները լռիկ մնչիկ կը բարձրանային և միայն հիւսիսային արեւմտեան քաղցր , անուշաբոյր զեփուրը զգալի կ'ըլլար :

Սըր-Հմֆրի-Տավի կը պատմէ թէ՛ երբ երեկոյ մը , լուսնի լուսով , Կօլիսէոնի աւերակաց վրայ նստած էր , ինքզինքը պատատուած զգաց , լուսեղէն հոսանքէ մը . քնարի ներդաշնակութեան նման ձայներ լսեց և հիացման մէջ , ի քուն ինկաւ և այդ վիճակին մէջ , Հոգի մը՝ յաջորդաբար ցոյց տուաւ իրեն , մարդկային պատմութեան այլ և այլ փուլերը , սկսեալ քարէ դարուն վայրենիներէն մինչեւ արդի փայլուն քաղաքակրթեալ վիճակը : Մի և նոյն ատեն , Հոգին ցոյց տուաւ մեր դրութեան շատ մը մտլորակաց բնակիչներուն արդի վիճակը և բաձրաձայն բացասեց , երկրաւոր մարդկութեան և մերձակայ գուճտերուն բնակչաց պատմութիւնը :

Համանման զգացումով մը՝ զորմէ խօսեցաւ գիտուն քիմիագէտը , չրջապատեալ զգացի արդէն երազներու մէջ ընկղմած ինքնութիւնս . բայց Արխայական Բնգետութեան (Société Royale) նախագահին առանձնաշնորհման կէսին միայն արժանացայ , քանզի տեսողութեան տուրքը չունեցայ . արթուն մնացի և մի միայն վերոյիշեալ տեսարանները կը մնային աչքիս առջեւ :

Ականջս միայն կը լսէր մարդկային ծանր , խո-

րունկ , միանգամայն հաճելի և իրօք համակրելի ձայն մը . բանախօսութիւն մը արտասանեց զոր պիտի արտագրեմ : Ծակտիս վրայէն կարծես թէ շունջի մը անցնիլը զգացի և ինքնաբերաբար զըլուխս զէպի ձախ դարձուցի և զգացի թէ Լուսնի յանձնարարած Հոգին հոն էր :

Յիրաւի՝ բնութեան վրայ ըրած իմ անձնակաւն հետազօտութիւններս և Լուսնի հետ ունեցած խօսակցութիւններս , ինձ յիշեցընելէն վերջը , յայտնեց ինձ թէ՛ պիտի ներկայէր ինձ այնպիսի աստղաբաշխական հեռանկար մը՝ որուն մեծութեանը վրայ երբէք գաղափար մը կազմուած չէ :

Արդ , մէկ ժամուան չափ պատմուածէն կրնայ զատուիլ , զոր զրեթէ նոյնութեամբ կ'արտագրեմ և որ ահաւասիկ է :



ԱՆՆՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ



ԺԱՄԱՆԱԿԻ ԵՆ ԱՆՍԱՀՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ ՎՐԱյ
Ոգւոյ մը կողմանէ եղած յայտնութիւնք

Բարձրասլաց թոշուներու արագութեամբ, ձեր ամենասրբն թաց շոգեկառաց արագութենէն աւելի մեծ վաղքով մըն է՝ որ կուգամ Աստղէ մը Միծեանակէն աւելի արագ սրացայ, սուրճանդակ աղանիէն աւելի շուտ, աւելի սրաթուիչ քան սրսին վրայ խոյացող Գոնսօրը, միջոցը կտրեցի այն միակ վայրաշարժին արագութեամբը՝ որ մէկ վայրկեանի մէջ չորս քիլոմէտր կ'առնէ. — մաներկորդի մէջ՝ 80 մեղր արագութեամբ Աղլանտականի միջոցորտը ճեղքող մրրկէն տարուող օդապարիկին վաղքէն աւելի բարձր արագութեամբ սրացի:

Ահա այսպէս ճամբորդեցի առանց դադարի՝ ժամը հազար քիլոմէտր կտրելով.....:

Այս մշտատեւ արագութեամբ հանդերձ՝ 55,475,700,000 դարէ ի վեր է որ կ'ուղեւորիմ. այսինքն՝ սրովհետեւ մէկ տարուան մէջ 8766 ժամ կայ, 12,157,600,000,000,000,000 մղոն տեղ կտրեցի՝ ճամբայ ելած վայրկեանէս ի վեր:

Այս թուանշանները ճշդել չառ դիւրին է, վասնզի մի անգամ ընդ միշտ. ձերինին համանման տիեզերքէ մըն է որ կուգամ. ձեր Միրկաթինի նման աստեղակոյտ մ'է, որ 8ասը վայրկեան (աստիճանաց վայրկեան) անկիւնի մը տակ կ'երեւի ձե-

զի, ինչպէս բոլոր հեռաւոր աստեղակոյտերը, Միր-
կաթինի արամագծին 334 անգամը հեռու է ան,
որն որ մօտաւորապէս 36,400 եռամիլիոն մղոն է,
(36,400,000,000,000,000):

Ուղիղ գիծով եկայ ասկից առանց շեղելու:

Այդ վայրերը՝ ձեր աստեղային տեսնելի տիե-
զերքին վերին սահմանաց մէջ են, զոր պարզ աչօք
կարելի չէ նշմարել: Բայց շնորհիւ ձեր տեսողական
գործիքներու գիւտերուն, որով հարիւրապատկեց
ձեր աչաց զօրութիւնը, և շնորհիւ ձեր հաշուական
մեթոսներուն և ձեր մղած հեռագօտութեամբ կա-
րող եղաք ծանօթանալու թէ՛ Երկիրը մօլորակ մ'է՛
որ ուրիշներու ընկերակցութեամբ, մի և նոյն
աստղին, այսինքն ձեր Արեւուն բոլորաիքը կը
չըջագայի. նոյնպէս կրցաք ստուգել թէ՛ ամէն
մէկ աստղ, ինքնարուզիս լուսով. մէկ մէկ Արեւ-
նեք են. դարձեալ ճշդել թէ՛ ձեզի ամենէն մեր-
ձաւոր աստղը 10,000,000,000,000 մղոն հեռու է
ձեզմէ. դարձեալ կարող եղաք դիտելու թէ՛ բոլոր
աստղերը միասին մէկ ամբողջութիւն մը կամ կոյտ
(amas) մը կը կազմեն: Գուշակեցիք թէ՛ ձեր տիե-
զերքը ահագին անապատային պարապութեամբ մը
չըջապատուած է. կրցաք դիտել նաև՝ հեռաւոր
աստղակոյտերը, որ ոչ նուազ բնակիալ են. վեր-
ջապէս կրցաք հասկնալ թէ՛ այդ կոյտերէն հեռա-
ւորագոյնները՝ վերայիշեալ սահմաններուն վրայ կը
գտնուին, ուսկից անդին ալ ստեղծագործութիւնը
կը շարունակուի յանհունս, բայց անկից անդին
ձեր հիւծեալ երեւակայութիւնը այլ եւս անկարող
է բան մը գուշակելու:

Արդ, այս աստղային տիեզերքին մէկ սահմա-
նէն միւսը կ'անցնիմ: Հայկ (Orion) համաստեղու-
թեան մէջէն տեսնուող տիեզերքէ մըն է որ կուգամ,
և կ'երթամ. ձեզի նկատմամբ ընդդիմակաց, Օֆիուխ
(ophiuchus) համաստեղութեան մէջի մէկ աստեղա-
կոյտը: Կը տեսնես որ անսահմանութիւնը կը թա-
փանցնեմ մէկ կողմէն միւսը:

Պահ մը կանգ կ'առնեմ ձեր արեգակնային դը-
րութեան մէջ՝ որ գրեթէ կէս ճամբուս վրայ կը
գտնուի: Այս ճամբորդութիւնս՝ արդի աստղա-
բաշխական գիւտերուն միջոցաւ յայտնուած մեծու-
թեանց չափը ցոյց կուտայ:

Որքան ալ խորհրդածէք այս խնդրոյն վրայ,
անտարակոյս չէք կրնար ըմբռնել ճշմարտապէս ա-
նոր ունեցած տարածութեան մեծութիւնը և չէք
կրնար այնքան որոշ և բացարձակ ծանօթութիւն մը
ունենալ, քան անի որ անձնական դատողութեամ-
բը կ'ստանայ:

Վճիտ միջոցին մէջ ըլլալով, աւելի լաւ կը
դատեմ և իմ տալիք չափերուս մեծութիւնը աւելի
եւս պիտի գրաւէ քեզ:

Ճաստ անգամ ուսողութեան համար, քու լուռ
ու մունջ իղձերուդ ունկնդիր եղած եմ. և երբ
«Լուսմեծ»ը հրաւիրեց զիս, որ որ մը՝ միջոց մը
քեզի հետ երկնային ճշմարտութեանց վրայ տեսակ-
ցութիւն մը ունենամ, սիրով և համակրանօք ըն-
դունեցայ իր հրաւէրը, վասն զի գիտցայ որ՝ իմ
խօսքերս պիտի ընդունուին քու հոգիէդ և չպիտի
կորնչին . . . այլ՝ պիտի հասկցուին կատարելա-
պէս:

էյ ուրեմնարեկամս, նախ սա հարցընեմ քեզի-
թէ՛ Անհուհին (infini) ի՛նչ ըլլալը գիտե՛ս, կըմբռնե՛ս:
Միջոցը անվերջ է, անչափ և առանց չափակցու-
թեան (dimensieons), Բաւական կը հասկընամս ա-
սիկա: Առանց չափակցութեան . . . այսինքն՝
եթէ տեսանելի երկնից մի ո՛ր և է կէտէն մեկնիս,
և թէ ո և է արագութեամբ, ո՛ր և է ժամանակ, մի
և նոյն ուղղութեամբ ճամբորդես, երեւակայածիդ
չափ երկայն դարերով, դարձեալ թիզ մը ճամբայ
կարած չես ըլլար, ոչ մի յառաջդիմութիւն դէպի-
անհուն սահմանը, որ աւելի եւս կ'ընկրկի անդա-
դար: Եթէ կ'ուզես ուրիշ օրինակ մը եւս տամ:
Ենթադրէ՛ թէ Երկիրդ՝ որուն վրայ կը բնակիս այս-
դարուս մէջ, իշնայ միջոցին մէջ (արդէն նոյնը
կ'ընէ ամբողջ աստեղակոյտը՝ որուն մաս կը կազ-
մէ Արեւը), ուրեմն ենթադրէ թէ ան կ'իջնայ ա-
մենաստակալի անկումով և ուղիղ գիծով կամ պը-
տուտակածեւ, որքան միլեառ դարու տեսողու-
թեամբ որ կ'ուզես. և մշտորաց խորխորատին մէջ
կը գահավիժի, օրական մէկ միլիոն, կամ եթէ
կրնաս երեւակայել, աւելի մեծ արագութեամբ,
միլեառ ու միլեառ դարերու անկմանէն. յետոյ,
դեռ անգնդոց յատակին մօտեցած չըլլար և անհու-
նին առջեւ կը մնայ այնպէս եթէ միշտ անշարժ կե-
ցած ըլլար:

Այս անվախճան յաւիտեանական, անեղ և ան-
հրաժեշտ կարեւոր միջոցին մէջ՝ կրնար ըլլալ որ՝
ո՛չ մի բան գտնուէր և թէ յաւիտենապէս այս
անհուհը կատարելապէս պարապ ըլլար: Ուսկի՞ց է
ուրեմն՝ որ այս ընդարձակութեան մէջ «բան մը».

կայ. ուսկի՞ց է որ լուսաւոր և խաւար գունտեր
կան և ասոնց վրայ ամեն ձեւով, ամեն տեսակ և
ամեն մեծութեամբ հաստատուն մետաղներ,
բուսականութիւն, կենդանիներ և մարդիկ կան:
Այո՛, ստուգապէս ինքնայատուկ զաղանիք մըն է,
որուն առ այժմ աւելորդ է խորը թափանցել:

Ի՛նչ որ այ ըլլայ արեգերքի գոյութեան պտու-
ճառը, մի միայն անոր կայ ըլլալը կրնանք ստու-
գել և ըմբռնել անոր գործելակերպը:

Քեզի համար ամենէն կարեւոր կէտը սա է.
ջանալ լաւ մը բմբռնել այս անհուն միջոցը, որուն
ընդարձակութեան մէջ գտնուած լուսեղէն կըզ-
ղիացեալ և առանց ո՛ր և է յենարանի կախուած
գունտերուն վրայ, հրաւիրեցի քու բովանդակ ի-
մացական տեսութիւնդ:

Ասոնք են աստղերը կամ արեւները, (այս եր-
կու բառերը մի և նոյն նշանակութիւնը ունին)
որոնք անհունին մէջ համասփիւռ՝ անազին ան-
ջրբանակներով իրարմէ զատուած կը մնան:

Ո՞վ է այդ գունտերը՝ պարապութեան մէջ
բռնողը: Այս բանիս համար, բացարձակապէս ո՛չ
մէկ ուժի պէտքը կայ:

Երեւակայէ՛ անգամ մը, ամեն յատկութենէ
զուրկ անգործ (inerte) նիւթը, այս գունտերը՝ որ-
քան մեծ, որքան ալ ծանր կարենան ըլլալ, միշտ
անեւարժ պիտի մնան իրենց կեցած կամ կազմուած
տեղւոյն վրայ: Նիւթը՝ ամեն յատկութենէ և կամ
ազգու ուժէ զուրկ ըլլալով, ուրիշ ի՛նչ պատճառ
կրնայ ըլլալ որ զանոնք իրենց զանդաղ վիճակէն
կարենայ դուր հանել և շարժել տալ: — Ո՛չ ի՛նչ և
ո՛չ մի:

Ի՞նչալ բայը, գիտես արդէն, բացարձակ գազափար մը չտար և մի միայն յարաբերական գազափար մը յայտնելու կը ծառայէ, քանի որ տիեզերքի մէջ ո՛չ վեր կայ և ո՛չ ալ վար: Այնպէս որ՝ նոյն իսկ չես կրնար ըսել թէ, ո՞ր ուժն է որ արգելք կրնայ ըլլալ աստղերուն անկմանը. վասն զի նոյն իսկ այս հարցումը ենթադրել կուտայ թէ՝ տիեզերքի մէջ ասորնագոյն մաս մը կայ ուր կը դիմէ ամեն մարմին իրեն յատուկ ծանրութեանը թողուած:

Բայց այսպիսի վիճակ մը գոյութիւն չունի:

Զեղի այնպէս կերելի թէ, Երկիրդ՝ տիեզերքին վարի մասը կը կազմէ, վասն զի դուք անոր երեսին վրայ կը բնակիք, բայց անդրադառնալով թէ, 24 ժամուան մէջ ինքն իր վրայ կը դառնայ, թէ բոլոր աստղերը հեռո՛հեռո՛ք ձեր գլխուն վրայէն կ'անցնին, կզգաք արդէն թէ անտեղի է երեւակայել, որ այդ տիեզերաց ենթադրեալ տիեզերք մը վեր ի վայր տեղափոխուի ամեն օր:

Ասկից զատ՝ զգայարանաց պատրանքը այնպէս երեւակայել կուտայ ձեզի թէ, Երկիրդ՝ տիեզերաց կեդրոնը կեցած գունտ մըն է. կեդրոն մը ուր կը ձգտին երկնակամարին բոլոր մարմինները: Բայց քանի որ գիտենք թէ Երկիրը, մէկ տարուան մէջ Արեւուն բոլորափքը կը շրջի, վերոյիշեալ երկու ենթադրութիւններն ալ մերժելու կտալուինք, և պէտք կ'ըլլայ ընդունիլ թէ, բոլոր երկնային գունտերը, երկիրն ալ միասին, կղզիացեալ և անհուն ընդարձակութեան մէջ՝ առանց յենարանի, ինքնին կախուած մարմիններ են: Բոլոր աշխարհներ

րուն բնակիչները՝ նաւակին (nacelle) մէջ եղող օդանաւորդին նման, միջոցին մէջ կը տարուին, ինչպէս թնդանօթի գնտակին վրայ փակած փոշիները:

Մեր շուրջը տեսնուած միջոցը Երկինք կ'ըսուի: Ըսի քեզի թէ՝ եթէ բնութեան մէջ ուժեր չգտնուէին, այդ նիւթական և անդործ մարմինները պէտք էին անհրաժեշտօրէն անշարժ մնալ իրենց յատուկ կէտերուն վրայ, ուր աստուածային ձեռքը կախած է զանոնք:

Բայց ուժեր կան. և ամենէն զօրաւորը և ամենէն կտրեւորը, այն որ բոլոր սիեզերքը շարժման մէջ կը դնէ, և կենաց մեքենականութիւնը կը կազմէ, Զգոյութիւնը (attraction) է: Երկնային մարմինները բոլորն ալ իւրաւ կը ձգուին իրենց զանգուածին մեծութեան ուղիղ համեմատութեամբ, և խոսք համեմատութեամբ իրեց հեռաւորութեան քառակուսուց:

Այս ուժին գոյութենէն կը հատուի թէ անհունութեան մէջ ցրուած աստղերը, զիրար փոխադարձաբար կը քաշեն:

Եթէ ենթադրենք՝ որ այդ աստղերը, կազմ և պատրաստ սակզուած ըլլային, և միջոցին այլ և այլ կէտերուն վրայ ցրուած, և յետոյ ենթարկուած ըլլային ձգողական զօրութեան. անմիջական կերպով ամենքը միասին շարժման պիտի սկսէին, իւրաքանչիւրը ամենամերձ և ամենածանր զրացւոյն ձգողական ազդեցութիւնը կրելով, նոյն իսկ՝ եթէ այդ զրացին, հազարներով միլիառ մղոն հեռուն ըլլայ: Սրդ, մէն մի աստղ, նախ թեթեւ ճոճու՛մ մը կուենայ, ապա ուրիշ մը, դարձեալ

միւս եւս, վասն զի միայն մէկ մարմնոյ մը ձգու-
ղութիւնը չէ՛ որ կ'զգայ իւրաքանչիւրը, այլ եր-
կուքի, առանի, հարիւրի, հազարի, բայց և այն-
քան տկարացած՝ որքան առաւել հեռաւորութիւնէ
գայ այդ զօրութիւնը:

Երկնային մարմնոց այս առաջին շարժման
պիտի հետեւէր ընդհանրական մեկնում մը, իւրա-
քանչիւրը դէպի այն մարմնոյն գտնուածը, որուն
ձգողութեան ազդեցութիւնը միւսներուն ազդե-
ցութեան վրայ պիտի յաղթանակէր:

Ամենէն ծանր աստղերը դէպի իրենց պիտի
քաշէին ամենաթեթեւները, հեռաւորութեան քա-
ռակուսիին խոտոր համեմատական ազդեցութեամբ:

Այս դրութեամբ աստեղաց ընդհանուր գնաց-
քը պիտի դիմէր իրարու ամբողջական միացման
մը. մին միւսին վրայ պիտի խոյանար. և մինչ
երկու արեւներ՝ իրարու զիմելով, նոյն իսկ մի-
լիոնաւոր աստղեր գնելու ըլլան իրարու հասնե-
լու, սակայն վերջնական արդիւնքը պիտի ըլլար
երկնային մարմնոց՝ մին միւսին վրայ գահավիժե-
լով, մոլեգնաբար բաղխումը: Այսպէս, օրինակի
համար լուսինը՝ երկրէն կը քոչուի, եթէ այն բար-
ձրութիւնէն՝ ուր կը գտնուի, (96. 000 մղոն) իյ-
նար երկրին վրայ՝ որ իրեն ձգողութեան կեղբոնն
է, չորս օր, 19 ժամ և 55 վայրկեան պիտի դնէր.
Նախապէս անկման առաջին մանրկրորդին մէկ
հազարորդամեզրն և երկու երրորդ արագութեամբ
և հեռզհեռէ աւելնալով ընթացքը, գունտիդ երեսը
կը հասնի, թնդանթի գնտակէն 100 անգամ ա-
ւելի արագութեամբ: Լուսինը 72 վեցամիլիոն

քիլոկրամ կը կշռէ իսկ երկիրը 5875 վեցամիլիոն:
Ուրիշ օրինակ մը. Երկիրը Արեւէն կը ձգուի, եթէ
այն բարձրութիւնէն (37, 000, 000 մղոն) իյնար
Արեւուն վրայ՝ որ իր ձգողութեան կեղբոնն է,
64 օր, 12 ժամ պիտի դնէր հոն հասնելու, անկման
առաջին մանրկրորդին 3 հազարորդամեզր միջոց
կտրելով. արագութիւնը աւելնալով վերջապէս կը
հասնի անոր՝ մանրկրորդի մէջ 600, 000 մեզր
արագութեամբ: Ալ կրնաս երեւակայել թէ՛ ինչ
անաղին բողխում մը կրնայ պատճառել երկրին,
5875 վեցամիլիոն քիլոկրամ ծանրութիւնը, Արե-
ւուն վրայ, որ 2 իննամիլիոն քիլոկրամ կը կշռէ:
(2, 000, 000. 000, 000, 000, 000, 000, 000,
000, 000): Դեռ ուրիշ օրինակ մը, ենթադրէ որ
բաւական մօտաւոր աստղ մը՝ որուն տեղադրու-
թիւնը մէկ մանրեկրորդ ըլլայ (էսպէս այդ-
քան մօտ աստղ չկայ) և թէ այդ աստղը, ձեր Ա-
րեւուն չափ կարեւորութիւն ունենայ (էսպէս չա-
տերը Արեւէն չատ աւելի կարեւոր են). եթէ այդ
աստղը և ձեր Արեւը՝ այսօր սկսէին իրարու մեր-
ձննալ, հնազանդելով իրենց փոխադարձ ձգողա-
կան ազդեցութեան, օր մը իրարու պիտի հանդիպին
իրենց հեռաւորութեան միջին մէկ կէտին վրայ,
այսինքն իւրաքանչիւրը մէկ միլիոն տարւոյ մէջ,
3,700,000,000,000 մղոն տեղ վազելէ վերջ:

Այս երկու հսկայից իրարու վրայ խոյացու-
մէն յառաջ եկած բաղխումը՝ կարող է զանոնք
փչրել անմիջապէս: Ես անոնց շարժման յանկար-
ծական դադարումն այ՛ այնպիսի ջերմութիւն մը
կ'արտադրէ, որ կրնայ զանոնք շոգիացնել. այն

ժամանակ այլևս միմիայն կազային ահազին ասող մը կը ձեւանայ :

Այդպիսի բաղխումներ սեղի ունեցած են , ձեր մոլորակէն իսկ նշմարուած և գիտուած են եզական և սաստիկ փայլմամբ մը , երկնից երևաին այն կէտին վրայ , ուր այդ դէպքը սեղի ունեցած է :

Բազում Նոր Աստեղի կոչուած աստղերը , որոնք ժամանակ մը փայլելով , քանի մը ատրի , նոյնիսկ քանի մը ամիս յետոյ կորսուած են , ասոնք հետեւանք են աւելի կամ նուազ կարեւոր աստղաց իրարու բաղխման : — Բայց մինք դառնանք երկնային շարժմանց խնդրոյն : Եթէ ձգողական զօրութիւնը՝ ախտերքը կառավարող միակ ուժը ըլլար , և անոր հնազանդելով բոլոր աստղերը իրենց անշարժ վիճակէն հեռանային , ամբողջ ախտերքը պիտի դիմէր դէպի մէկ զանգուած ձուլելու և ի վերջոյ հաստատուն ամբողջութիւն մը կազմելու : Բայց արարչագործութեան նպատակը այդ չէ :

Բոլոր աստղերը կը շարժին , բայց՝ ո՛չ ուղիղ գծի վրայ , այլ կոր շրջագիծով . երկրորդ , անոնք սրճնց ընթացքը կատարելապէս վերջնական կերպով չափուած , հաշուուած է , փակ շրջագծի մը կը հետեւին :

Քանի մը գիտաւորներ միայն զարտուղութիւն կը կազմեն , և այս քմահաճ թափառականները , աշտարակներու վրայ խոյացող չղջիկներու նման , կը թռին , և որոնք յանկարծ ընդ կրուսկն դառնալով , զուգորդ շրջագիծով մը , անձանօթ ուղութեամբ կը հեռանան :

Այսպէս լուսահեր գիտաւորները՝ մէկ աստղային զրութենէն միւսը կ'անցնին անտարբերաբար . բայց այն գունտերը , որոնք զրութեան մը հիմը կը կազմեն , փակեալ շրջագիծերու հետեւելով կը շրջագային , արբանեակները մոլորակներուն , մոլորակները արեւներուն և այս վերջիններն ալ՝ աւելի կարեւոր կեդրոններու շուրջը կը զլորին :

Այս փակ շրջագիծերը երկրորդ ուժի մը ծընունդ կուտան , ձգողական զօրութեան հակառակ , որ է կեդրոնախոյս զօրութիւնը :

Ինչպէս իր անունը ցոյց կուտայ , այս զօրութիւնը կը ջանայ աստղերը հեռացընել իրենց կեդրոնէն որուն շուրջը կը դառնան . ինչպէս պարսաւիկին մէջի քարը , որ կը ջանայ միշտ հեռանալ , այնպէս ալ մոլորակները միշտ կը փութան հեռանալ արեւուն ձգողական զօրութենէն և արբանեակներն ալ , մոլորակաց աղղկցութենէն : Եթէ միայն այս վանողական զօրութիւնը գոյութիւն ունենար և կամ միայն ինքը աւելի զօրաւոր ըլլար քան ձգողական զօրութիւնը , այն ժամանակ ընդհանուր ախտերքը՝ ներկային հակառակ վիճակի ձգտում մը կ'ունենար . բոլոր երկնային մարմինները շօտափոյիմ (tangente) ուղղութեամբ հեռանալու պիտի ջանային , փոխանակ ըստ մեր ենթադրած առաջին զրութեան , որ բոլոր մարմինները ի մի զանգուած ձուլելու և ներսմէք (convergent) ընելու կը ձգտի , ընդհակառակն , սարսմէք (divergent) ըլլալով՝ զանոնք հեռահեռ ընդարձակող պարուրածեւ շրջագծի մը վրայ , միշտ դէպի դուրս պիտի մղէր , ծովեղերեայ ալիքներու

պէս երթալու, կորնչելու անհունութեան մէջ: Բայց ինչպէս որ անհունութիւնը սահման չունի, անոնց՝ կեդրոնէն անջատմամբ, հեռացումը կրնոր յաւիտենապէս շարունակուիլ և կերպով մը պարագութիւն մը յառաջ բերել տիեզերաց կեդրոնին մէջ և մզել բոլոր աստղերը դէպի արտաքին շրջանակ մը, որ բնաւ երբէք անհասանելի և միշտ ընկրկող պիտի մնայ:

Բայց մի միայն այս կեդրոնախոյս զօրութիւնը չէ՛ որ կը վարէ բոլոր աստղերը, և ո՛չ ալ ձգողական զօրութիւնը բացարձակապէս: Այս երկու հակառակ ուժերը իրարու հաւասար են:

Արեգական ձգողական զօրութեամբը, Երկիրը դէպի Արեւ կը ձգուի, շարժման առաջին մանրերկրորդին 3 հազարորդամեդր ուժգնութեամբ, իսկ վանողական զօրութիւնը՝ որ իր շարժումէն առաջ կուգայ, կը ձգաի՝ հակառակ ուղղութեամբ հեռացընել, նմանապէս շարժման առաջին մանրերկրորդին 3 հազարորդամեդր արագութեամբ:

Այս կրկնակ ազդեցութեանց արդիւնքը կատարեալ հաւասարակշռութիւնը կ'ըլլայ որուն շրջնորդի մոլորակները ո՛չ կրնան մտանալ Արեւին, ո՛չ ալ հեռանալ անկէ: Ահա՛ այս հաւասարակշռութիւնն է որ միջոցին մէջ, կանգուե կը պահէ գերկիրը և բոլոր աշխարհները:

Ապա ուրեմն, բարեկամդ իմ, յուսամ թէ ձեզիւ հասկցար հիմայ այս գաղափարական կազմակերպութիւնը: Ո՛չ Երկիրը և ո՛չ ալ հազար հազար միլիոնաւոր բնակեալ աշխարհները, նիւթական ուժով մը բռնուած չեն: Կերպով մը գաղա-

փարի մը վրայ է որ երկնային մարմինները կեցած են և թէ՛ աւելի հաստատուն և թէ՛ աւելի լաւ ամբողջութիւն են այս անսոսանելի ուժին վրայ՝ քան երկաթէ կամ պղնձէ ամենազօրաւոր պատուանդանի մը վրայ, որուն՝ ձեր նախնիքը, անհրաժեշտ պէտքը կզգային՝ աշխարհին հաստատութիւնը մեկնելու համար:

Արդ, այս մտգական հաւասարակշռութիւնը մի միայն սիեզերական մտեցնելաւոր շարժման գոյութեամբը կրնայ իրականութիւն ունենալ: Ահա այս պատճառով՝ աշխարհիս մէջ չկայ հիւլէ մը որ շարժման մէջ չըլլայ. ամեն բան շարժուն է, մըշտընջնական շարժման մէջ:

Երկիրը իր վրայ կը թաւալի 24 ժամուան մէջ, իսկ լուսինը՝ 27 օրուան, Երկիրը կը վազէ միեւնոյն ժամանակ ծիրի մը վրայ 365 օրուան մէջ, կեդրոն ունենալով զԱրեւը. իւրաքանչիւր մոլորակ՝ իրեն հեռաւորութեան համեմատ, շրջագծի մը վրայ կը գլորի Արեւուն շուրջը. ամենէն մօտաւորը՝ Փայլածուն 88 օրուան մէջ կը շրջի. իսկ հեռաւորագոյնը՝ Նեպտոնը 165 տարուայ պէտք ունի իր շրջանը լրացնելու: Արդ Արեւը՝ որ մոլորակային զօրութեան կեդրոնին վրայ կայուն կ'երեւի, 25 ու կէս օրուան մէջ ինք իր վրայ կը դառնայ, մոլորակներուն պէս արեւմուտքէն արեւելք: Ասկից գտա ինքն ալ տիեզերաց միջոցին մէջ կը քալէ, հետը քարշելով ամբողջ մոլորակային զօրութիւնը: Երկիրը՝ իր տարեկան շրջանին մէջ, օրական 644000 մղսն կը վազէ. իւրաքանչիւր մոլորակ՝ համանման շարժմամբ, կ'ընթանայ իրեն հե-

աւարութեան և ընթանալիք ճամբուն երկայնութեան համեմատութեամբ: Արեւուն՝ իր դրութեան հետ միասին, միջոցին մէջ, կարած ճամբան տարւան մէջ 60 միլիոն մղոն է. այսպէս իր գոյութեան վայրկեանէն ի վեր կը վազէ. և ներկայիս Հայկ համաստեղութեան աստեղաց կողմը կընթանայ:

Այս արագութիւնը ձեր չափերուն հետ բաղդատելով, շատ կարեւոր է, բայց միջոցը այնքան ընդարձակ է որ՝ նոյն իսկ ենթադրելով թէ, ուղիղ գիծով Հայկի վրայ խոյանայ, մէկ միլիոն տարի վերջը դեռ անոր մէկ աստղին հասած չըլլար. վասն զի անի 60,006,000,000,000 մղոն հեռու է անկից՝ Տիեզերաց մէջ ամեն մէկ աստղ, ամեն մէկ Արեւ, իրենց մուրակային դրութեանց հետ միասին, այսպէս կը թռին միշտ և յաւիտեան:

Անհունութեան մէջի բոլոր աստեղաց այս արագ շարժումն է որ, հաւասարակշռութեան մէջ կը պահէ զիրենք. տիեզերական ձգողութեան անյաղթելի և անելանելի ցունցէն անջատ և հեռու կը պահուին և այս շարժման շնորհիւն է որ՝ կ'ապրին: Ձեր Արեւը ամենէն նուազ թուշող աստղն է: Արեքիւրիսի յատուկ շարժումը 1,800,000 մղոն է օրական: Կրինիջի դիտարանին ցուցակով, թիւ 1830 աստղին օրական շարժումը, 2,822,000 մղոն է, և այսպէս միւս աստղերունը: Բայց սակայն, այդ աստղերը հաստատ կեցած կ'երեւին՝ գիշերային խաղաղաւէտ երկնից երեսին վրայ. և տարիներէ, դարերէ ի վեր զիտելով հանդերձ, կարծես ամենեւին տեղափոխուած չեն:

Երկիրը՝ ձեր ոտքին տակ հանդարտ կեցած և Արեւը ձեր դրութեան կեդրոնը հանդիստ կեցած կ'երեւին. Այս հանդարտութեան և անշարժութեան համոզիչ երեւումին պատճառը ի՞նչ է. վասն զի այս ահագին շարժումները՝ ա'յնպիսի տարածութեան մը և ա'յնպիսի հեռավորութեանց մէջ կը կատարուին՝ որոնք աննշմարելի և անզգալի են:

Ձեզի մտաւորաբոյն աստղէն նայելով՝ Երկրիդ. չըջարտորակը, (orbite) որուն արամագիծը 74 միլիոն մղոն է, 125 մեղր հեռուէն դիտողի մը տեսութենէն, մէկ հազարորդամեղր հաստութեամբ թելով մը կը պարտկուի:

Ձեր աստեղակոյտը կազմող եօթանասունը հինգ միլիոն արեւներուն ամեն մէկը, տարբեր դրութեամբ օժտուած է իր հետը տանելով, տիեզերաց անապատին մէջ, իրենց մակերեւոյթին վրայ ծնած մարդկութիւնները: Ամենամեծ պէսպիսութիւն մը կը տիրէ երկնից արագորութեանց մէջ:

Ձեր բնական աստղին վրայ, Արեւուն լոյսը ճերմակ է, իր ջերմութեան տարեկան միջինը, սանդիկրաս 30 աստիճանը չանցնիր. տարին 365 օր կը տեւէ, օրը 24 ժամ: Մարդուն միջին ծանրութիւնն է 60 քիլոկրամ, հասակը 5 ոտք երեք չորրորդ. կենսական ջերմութիւնը 36,50 աստիճան է. միջին հաշւով 39 տարի կապրի, և մէկ դարու մէջ երեք սերունդ կունենայ:

Ուրիշ երկրի մը վրայ, Արեւուն լոյսը, կապոյտ է և ուրիշ գոյն ալ չկայ, իր միջին ջերմութիւնը, զրոյէն վար 50 աստիճան է. տարին 60,000 օր է և օրը 7 ժամ. մարդը 1500 քիլոկրամ կը կշռէ հոն,

հասակը 50 մեղր է, արիւնը՝ անոր երակաց մէջ, սառույցքէն աւելի պաղ է. չորս դար կտարի միջին հաշուով: Ընդհակառակն ուրիշ աշխարհի մը վրայ, երեք Արեւ կայ, երկուքը կտրմիր և միւսը մանուշակագոյն. տասներկու լուսին ունի այլ և այլ գոյներով. մարդկանց արեան ջերմութիւնը 300 աստիճան, և մարդը կազային զուցի մը կը նմանի, որ օճառի պղպջակի նման մթնոլորտին մէջ կը թռի և կը լողայ:

Նիւթը, ծանրութիւնը, խտութիւնը, ջերմութիւնը, լոյսը, տարին, եզանակը, մեղր և ին և ին և ին բոլոր տարրերը յանձուռն կը տարբերին, անհաշիւ, պէս պէս դրութեամբ օժտեալ աշխարհաց մէջ:

Աստղերը համահաւասար մեծութեամբ չեն, նոյնպէս իրենց փայլը հաւասար չէ. և միայն իրենց հեռաւորութեանց տարբերութենէն չէ որ, իրենց առ երեւոյթ մեծութիւնները կը տարբերին:

Ամենէն փայլուն աստղերը, զորս առաջին աստիճանի կանուանենք, մերձաւորագոյները չեն, և ամենէն պղտիկներն ալ հեռաւորագոյները չեն:

Ինչպէս Երկրին արտադրութեանց մէջ անվերջանալի պէտպիսութիւնք կան, նոյնպէս արեւորաց մէջ. աւելի եւս փոփոխուանք բազմաատեակ են: Աստղերէն շատերը ձեր Արեւէն աւելի մեծ և աւելի լուսաւոր են. և ուրիշներ ալ կան որ շատ աւելի ստորին են:

Երկրին տարեկան շարժումը, իր շրջագծին վրայ, որ 74 միլիոն մղոն արամագիծ ունի, իրեն մերձաւորագոյն աստեղաց վրայ աւերեւոյթ շար-

ժում մը կարտադրէ: Ինչպէս երբոր կը ճամբորդես, կարծես թէ մերձակայ ծառերը և տեսարանը հորիզոնին վրայ, հակառակ ուղղութեամբ, սեղանփոխութիւն կընեն. այդպէս ալ վրոյշիչաւ մերձաւորագոյն աստղերը, հեռաւորագոյններուն նկատմամբ, որ հաստատ կը կենան, տարեկան պղտիկ քերտ (ellipse) մը կը գծեն երկրին ոլորտին համապատասխան հեռանկարը (perspective) ըլլալով: Ամենէն մոտաւորագոյն աստղը Յուշկապարիկը (centaure) այս կերպով քերտ մը կը գծէ, որուն արամագիծը, լուսնին առ երեւոյթ արամագծին 900րդ մասն է, չափազանցօրէն փոքր բան մը:

Բայց այդ հեռաւորութիւնը (ամենէն մերձաւորագոյնը ըլլալով) այնքան մեծ է որ նոյն իսկ Նեպտոնի ոլորտին, (որուն շառուիղը 300 անգամ մեծ է քան ձերինը) ձեւացուցած քերտէն անգամ հազիւ բաղդատելի է այդ պղտիկ թերատին հետ: Եթէ երեւակայէք հսկայ Արեւ մը, որ այդ ոլորտին պարունակութեանը չափ մեծութիւն ունենար, (Նեպտոնի ոլորտին) այդ աստղէն (Յուշկապարիկէն) նայուած ժամանակ, ձեզի տեսնուածէն 9 անգամ պղտիկ սկաւառակ մը պիտի ներկայացընէր: Եթէ Արեւնիդ՝ ինչ որ է, Յուշկապարիկ ալֆա աստղին տեղը փոխադրենք, իրեն փայլը, բաղդամամբ ներկային, մէկ 52,900,000,000րդ կոտորակով մը կը ներկայանայ: Իսկ, այդ ալֆա աստղէն ձեր ընդունած լոյսն ալ, մէկ 16,950,000,000րդ կոտորակով կրնայ բացատրուիլ, միշտ Արեւուն լոյսին բաղդատմամբ: Ասկից կը հետեւի թէ՛ այդ աստղը, մոտաւորապէս երեք անգամ աւելի լոյս-

կ'արձակէ քան ձեր Արեւը, իր զանգուածը, մի և նոյն համեմատութեանց մէջ է, իր տրամագիծը ձեր Արեւուն հետ 17 առ 10 համեմատութեամբ է:

Չեր տեսանելի երկնից ամենէն փայլունները Գանօբուս (Canopus) և Շնիկ (sirius) աստղերն են: Առաջինը Յուշկապարկի ալֆայէն երեք անգամ աւելի փայլուն է և որովհետեւ երկրից անդափոխութիւնը ամենեւեւն փոփոխութիւն մը չընդհատ աստղին դիրքին վրայ, ուստի կը հետեւի թէ՛ անբաղդատակի կերպով աւելի հեռու է և դարձեալ անբաղդատակիորէն աւելի լուսատու և աւելի մեծ զանգուած մը ունի: — Շնիկը չորս անգամ աւելի փայլ ունի քան Յուշկապարկի ալֆան. և այնպիսի տարեկան տեղափոխութիւն մը կը ներկայէ, որով կրցած էք հեռաւորութիւնը չափել և հաշուել, ուստի նկատելով այդ հեռաւորութիւնը, կը գըտանենք որ՝ իրեն յատուկ լոյսը, Յուշկապարկի ալֆայէն 64 անգամ աւելի է և 192 անգամ աւելի քան ձեր Արեւուն լոյսը: Այդ աստղին տրամագիծը, ձեր Արեւին տրամագիծէն 14 անգամ մեծ է և հետեւապէս իր զանգուածը 2688 անգամ աւելի մեզի, թէպէտ ձեր Արեւը՝ 1,279,000 անգամ ձեր երկրէն մեծ է:

Միւս կողմանէ, Կարոպ համատեղութեան 64րդ աստղը, Յուշկապարկի ալֆայէն աւելի հեռու ըլլալով և նուազ հեռու Շնիկէն, կրկնակ աստղ մըն է, որուն ամեն մէկը, Շնիկէն հարիւր անգամ նուազ լոյս կուտայ ձեզի: Այդ ալֆա աստղը եթէ 64րդի հեռաւորութեան մէջ գտնուի, յիշաւի ինը անգամ նուազ փայլուն պիտի երեւայ քան ինչ որ

կ'երեւի հիմայ. բայց տասնըմէկ անգամ աւելի փայլուն եննայ քան իւրաքանչիւրը՝ որ կը կազմեն այդ 64րդ կրկնակ աստղը: Անոնց իւրաքանչիւրին տրամագիծն, Յուշկապարկի ալֆային տրամագիծին մէկ երրորդը իսկ չէ, զանգուածնին ալ մէկ երեսուներորդը. երկուքին զանգուածոց գումարը Արեւուն մէկ երրորդին չափ է: Ահա՛ ուրեմն երկու լծորդ արեւներ, որ ձերինէն շատ աւելի փոքր են:

Այս տուած օրինակներէս, զորս քու ուշադրութեանդ կը յանձնարարեմ, կրնաս հասկընալ թէ՛ ինչպիսի տարբերութիւններ կան Արեւներուն մէջ: Շնիկը 2688 անգամ աւելի զանգուած ունի քան ձեր Արեւը՝ որ վեց անգամ աւելի մեծ է քան Կարոպի երկաթեակ արեւներուն իւրաքանչիւրը, որով Շնիկը 1600 անգամ աւելի մեծ եղած կըլլայ քան զանոնք: Ահա այդքան և աւելի տարբերութիւններ կան՝ ձեր աստղային տիեզերքին արեւներուն մէջ, քան ինչ որ՝ ձեր արեգակնային դրութեան մոլորակաց մէջ տարբերութիւններ կը գտնուին: Արդէն Լուսնութագի պէս գուհտ մը ունիք որ Երկէն 1400 անգամ մեծ է, և նոյն ժամայն հեռադիտակային պզտիկ մոլորակներ կան, ինչպէս են Սիլվիա և Քամիլլա, որ հազիւ ձեր գաղղիական մէկ գաւառին մեծութեամբ են:

Թէպէտեւ լուսոյ քանակութիւնը, միշտ նշան մը չէ զանգուածի մեծութեան, վասն զի ամեն աստիճան փայլով, տարրալուծական, ամեն տեսակ բազալդրութեամբ, բնագիտական ամեն վիճակով և այլ և այլ խտութեամբ օժտուած բազմաթիւ աստղեր կան: Ոմանք ահագին մեծութիւն ունին,

բայց թեթեւ ուրիշներ փոքր բայց ծանր, ոմանք հակայական, բայց զրեթէ խաւար, նոյն իսկ բուրբովին խաւարներ ալ կան, որք միայն ջերմութիւն կ'արտադրեն: Ոմանք ալ փորիկ, բայց շացուցիչ լոյս մը կը ցոլացնեն անհուն տիեզերաց մէջ, Այս տարրալուծական, ջերմարանական, ելեքարական տարրեր վիճակները՝ Արեւներուն մէջ, գոյներու պէտքիսութիւններ կարտադրեն, նորինջագոյնէն սկսեալ մինչեւ զմրուխտագոյնը և Շափիւղան երկնային պարտէզին մէջ, ամեն տեսակ ծաղիկներ կը փթթին, փայլուն կարմիր վարդէն սկսեալ, մինչեւ երկչոտ և խոնարհ մանուշակը:

Այս ընդարձակ միջոցին մէջ ուղեւորութիւն մը՝ հեռանկարները և զազափարները բոլորովին վերի վայր կը յեղաշրջէ:

Իմ գնացքիս մէջ՝ երեք աստեղակոյտի մէջէն անցայ. որ՝ երկնից օվկիանոսին մէջ, արշիպեղագոսներու կղզիներու նման ցրուած են:

Աստեղակոյտերը և տիեզերքները, միլիոնաւոր արեւներէ բաղկացած են իրենց յատուկ մարբակային դրութիւններով. և այս ամեն մէկ տիեզերքը, շրջնապատեալ է անհուն և անսահման անապատային պարապութեամբ մը:

Սրբ, առաջին աստեղային տիեզերքը ուր միւրընտեացայ ճամբորդութեանս մէջ, 2 հնգամիլիոն մղոն հեռու է իմ ճամբայ ելած կէտէս. երկրորդը՝ 5 հնգամիլիոն և երրորդը՝ 9 հնգամիլիոն մղոն: Երբ հասայ, ձեզմէ 36 կամ 37 քառամիլիոն մղոն հեռաւորութեան, ձեր գիւղին կամ աւելի լաւ ըսեմ, ձեր աստղային քաղաքին արուարձանին առաջին ընակարանները սկսայ գտնել, և այդ ժամանակէն ի վեր մինչեւ

այսօր ձեր տիեզերքին կէսը միայն կրցայ անցնիլ, ժամը 100 մղոն կտրելով հանդերձ՝ 415 միլիոն դարէ ի վեր է որ ձեր տիեզերքին մէջ մտած եմ: Ծամբուս վրայ հետզհետէ կրկնակ, երրեակ, բազմապատիկ արեւներու հանդիպեցայ, որք իրենց մոլորակային դրութիւններովը իրարու շուրջը կը դառնային: — Մենակեաց արեւներ ալ կը թռչէին աներեւակայելի արագութեամբ, քարշելով հետերնին իրենց իշխանութեանց հնազանդող աշխարհները: Երկնեքանդ արեւներ, գոյներու եզակիս խառնուրդով լոյս մը կը ցոլացնէին: Կատարելապէս կազային դրութիւններ, մի միայն չոգիացեալ գունտերէ կազմուած, կը թռչտէին: Ազոգային գունտեր, նաև ածխային թթուէ գիսաւորներ կային:

Միջոցին մէջ աստղերուն դիրքը, կախում ունի դիտողին կեցած տեղէն: Ուղիւ կամ բեկեալ գծերը և այլ և այլ ձեւերը, քառանկիւնի, քառակուսի, աղեղ, պսակ և այլ և այլ ձեւերը՝ որք կէտէ մը նայելով այդպէս կերեւին, ուրիշ կէտէ մը նայելով, այդ ձեւերը բոլորովին կը կորսուին: Երբ ձեր արեւուն դրութեանը մէջ հասայ՝ զիտեցի ձեր առերեւոյթ երկնակամարը, ձեր համաստեղութիւնները: Անոնք մի և նոյն են՝ Լուսնէն, Արուսեակէն կամ Հրատէն և նոյն իսկ Նեպտունէն զիտուելով. վասն զի երկնային հեռանկարը չփոխուիր պարզապէս քանի մը հարիւր միլիոն մղոն տեղափոխութեամբ. բայց երբ եռամիլիոններով մղոններ և մանաւանդ քանի մը հարիւր եռամիլիոններ ըլլան՝ տեղափոխութիւնը զգալի կ'ըլլայ և համաստեղութեանց ձեւերը կը խանգարուին, մանաւանդ երբ անոնց կը մօտենանք և կամ անոնց մէջ կը մտնենք:

* * *

Հոս Ոգին լուց : Եւ բաւական երկար ժամանակ լուռ կենալէն վերջ վերակառւ խօսիլ հետեւեալ կերպով :

« Այ հիմայ հասանք ձեր սեպհական աիեղերքին մէջ : Եթէ լաւ ըմբռնեցիր քիչ առաջ ներկայած պերճախօս թուանշաններս , պարզելով քու հոգւոյդ առջեւ այնպիսի մեծամեծ քանակութիւններ որ այլ եւս դիւրին պիտի ըլլայ քեզի՝ արեգակնային իշխանութեան տարածութիւնը լաւ մը ընդգրկելու մինչեւ հիմայ՝ հակառակ քու երկայն խոկուններուդ , չէ իր կրցար լաւ մը պատկերացընել զայն մտացդ մէջ » :

Այդ տարածութեան մեծութիւնը զայն ցոյց տալու համար , բազում օրինակներէն առնենք 1680 տարւոյն , Երկրին մօտէն անցնող , Գիսաւոր ոլորտը : Այս Գիսաւորը՝ 28 անգամ աւելի հեռուն կընդարձակէ իր գնացքը քան Նեպտոնի հեռաւորութիւնը , որուն շրջագծին շառաւիղը՝ արդէն գիտես , 30 անգամ մեծ է երկրիդ շրջագծի շառաւիղէն :

Յուշկապարկի ալֆային հեռաւորութիւնը , 270 անգամ աւելի մեծ է քան այս Գիսաւորին հեռակէտական (ophelique) շառաւիղը . որ արեգակնային զրութեանդ փոքրագոյն շառաւիղը կրնայ նկատուիլ : Կը տեսնես որ մեծ տարածութիւնները իբր բազդատութեան միութիւն առնելով , միջոցը կրնայ եղեր չափուիլ . առանց շատ մը թուանշաններ շարելու , որ շատ անգամ գնահատումէ կը վրիպին :

Ինը միլիոն ութը հարիւր հազար (9,800,000) տարի դրի գալու համար , ո՛չ թէ այդ աստղէն (վասն զի այդ աստղին կողմէն չէ որ կուգամ) , այդ

ձեզի մերձաւորագոյն աստղին հեռաւորութենէն : — Այս մեծ Գիսաւորին հեռակէտէն՝ հոս գալու համար , (36,300) երեսունը վեց հազար երեք հարիւր տարի պէտք եղաւ թռիլ . և յիսուսի այդ կէտը Արեւէն երեսուն երկու միլիառ (32,000,000,000) մղոն հոռու է . և այդ անջրպետին խորութենէն անգամ Արեւը զօրութիւն ունի դարձեալ առ ինքն կոչելու այդ Գիսաւորին տկար միգամածը , որ թէպէտ տարածուած , բայց այնքան թեթեւ , այնքան ճապող և այնքան ճնշին ըլլալով հանդերձ , այդ անապատին մէջ , իր ընթացից վերջակէտը հասնելուն , կը դողդողայ՝ երբ Արեւը կը հրամայէ իրեն վերադառնալ դէպի իրեն , և անմիջական հնազանդութեամբ՝ բոցածածանջ Արեւուն վրայ կը խոյանայ . բայց իր արագութիւնը հեղհեռէ աւելցընելով հանդերձ , 44 դարու պէտք ունի հասնելու համար իր նպատակին :

Ինը միլիոն եօթը հարիւր վաթսուը չորս հազար (9,764,000) տարւոյ մէջ կարեցի անցայ Արեգակնային պետութիւնը շրջապատող ահագին ամայի միջոցը , որ կերպով մը կ'անջատէ զայն Յուշկապարկի պետութիւնէն , իւրաքանչիւր դրութիւն համանման անապատներով շրջապատուած է , որով մէն մի Արեւ՝ իրեն գաւառին մէջ , ինքնիշխան թագաւոր կը մնայ : Այս ճամբորդութեանս ժամանակ . ընդարձակութեան մէջ չհանդիպեցայ այնպիսի կարեւոր երկնային մարմնոց մը , որուն ձգողութիւնը կարող ըլլար . ձեր Արեւուն կառավարած մարմնոց վրայ ազդելու :

Բայց , միայն կործանած աշխարհաց բեկոր-

ներ գտայ որոնք ամենայեան դանդաղութեամբ, միջոցին մէջ կիշնային. այնքան դանդաղ կերպով որ կարծես անշարժ էին. վասն զի այդ անջրպետող անապատամիջոցներուն մէջ, գրեթէ ոչ մի սասողի ձգողութեան ազդեցութիւնը չկայ այլ եւս:

1680ի Գիսաւորին հեռակէտին վրայ, Արեւուն ձգողութիւնը, մի միայն 0 մեղք 000,000,008,333, որով իր առաջին մանրերկրորդին անկման արագութիւնն այ մեկ հազարորդամեղքին 416,100,000րդն է, այնպէս որ, թեթեւ ուրուականի մը նման, իրրեւ մեռեալ, մութ պարապին մէջ կախուած կը կենայ:

Բոլոր այս մարմինները, որ կը թուին մինչեւ այդ հեռագաւառները, ա՛յլ եւս դամբանային ուրուականաց դանդաղ թափօր մը կը կազմեն:

Գիսաւորին հեռակէտէն հարիւր անգամ աւելի հեռաւորութեան մէջ, Արեւուն ձգողական ազդեցութիւնը, մի միայն 0 մեղք 000,000,000,000,8333 կը մնայ: Ուրեմն, Արեւուն և Յուշկապարկի ալֆային, երկու ձգողութեանց չըջապատին միջեւ, երկնային շարժումը կառավարող զօրութիւնը, կերպով մը կ'ոչնչանայ և եթէ մարմին մը, այդ հեռաւոր կէտին վրայ գտնուի, հաղաբաւոր տարիներ առանց շարժելու կախուած կը մնայ, կարծես ոչնչութեան կամ քառսի կը մօտենայ այդ վիճակը: Բայց այդ միայնութեան միջոցը անցնելէ վերջ, ուրիշ նոր զրութեանց մէջ կը մըացուի:

Վերջապէս, երբ Անդր-Նեպտոնեան շատ մը մուրրակներու շրջագծի ցանցերը անցայ, որոնց վերջինը Հիբերիոն. երկրից ոլորտի ճառագայթէն 48

անգամ հեռաւորութեան մէջ կը գտնուի և 335 աստուան մէջ կը բոլորի Արեւուն շուրջը. այսօրւոնէ 13 դար առաջ հասայ Նեպտոն մոլորակին, որ հոսկից 1147 միլիոն մղոն հեռաւորութեան մէջ կը գտնուի:»

Ինչպէս խօսակցութեան մը ժամանակ, երբ խնդրոյ մը մէկ մասը բացատրելէն վերջը ճառախօսը քիչ մը կանգ կառնէ՝ այնպէս ալ Ոգին փոքր ինչ ընդհատեց իրը ճառը:

Յիրաւի իր ճամբորդութեան պատմութեանը մէջ բոլոր երկնից կազմակերպութիւնը ներկայացուցեցա՞ծ էր ինձ, սկսեալ սասողային կոյտերու սահմաններէն, որուն մաս կը կազմէ մեր Արեւը, օտար և հեռաւոր արեղերքներէն մինչեւ մեր սեփական մոլորակային զրութիւնը, ուր հասաւ իր պատմութեանը մէջ:

Կրօնական ջերմեռանդութեամբ մը մտիկ ըրած էի և կամաց կամաց թափանցած մեծամեծ թիւերու քանակութեանց, զորս իր բացատրութեանց մէջ հեռո՞հեռէ պատմեց, սկսեալ անհունութեան խորութենէն մինչեւ մեր երկրին բնական երկնային միջավայրը և երբ ինձ ըսաւ թէ՛ մինչև այսօր ծանօթ մոլորակ Նեպտոնին հասած է միայն 13 դար առաջ, մտածեցի թէ այդ զէպքը մեր Զ. Գարուն պատահած պիտի ըլլար և ըսի իրեն.

— «Առ այժմ փրկչական թուականին 1872 տարին կը գտնուինք, ուրեմն Շիլպերիկի(1) և Ֆրէտէկոնտի ժամանակ անցած էք Նեպտոնէն: Այդ ժամա-

(1) Շիլպերիկ և Ֆրէտէկոնտ Գաղղիոյ նախնական քաղաւորներն են:

նակէն ի վեր, ժամը հարիւր մղոն արագութեամբ կը վազէք և միայն ա՛յս տարի հասաք Երկրիս»:

— «Ինչպէս որ քեզի հասկըցուցի, պատասխանեց Ոգին, միջոցին մէջ մինք ժամանակ չենք հաշուեր. երկրային մոլորակիդ և անոր քաղաքական ու պետական հարստութեանց պատմութիւնը՝ բացարձակապէս աննշան բան մըն է մեզ համար: Քրիստոնէական ժամանակագրութիւնն իսկ, որ աւետարանեալ ազգաց համար այլ և այլ նկատումներով, անոր երկնից մէջ գոյութիւն ունենալը օրինաւոր դատուեր է, միւս աշխարհներուն մէջ բոլորովին անձանօթ է: Բայց Երկրին Արևուտն շուրջը գլորման հաշուով՝ իրաւ է թէ 1308 տարի կայ որ Նեպտոնէն անցայ:»

— «Արդ ուրեմն, կրկնեյի, աւելի լաւ կերպով հաստատելու համար թէ, միջոցը՝ ժամանակի ձեռամբ կը չափուի. եթէ մէկը այսօր Երկրէս ճամբայ ելլայ և ուղղուի դէպի ծանօթ մոլորակին սահմանները, դէպի Նեպտոնը երթայ, այդ սահմաններուն կը հասնի, ժամը հարիւր մղոն արագութեամբ, 1308 տարուան մէջ, այսինքն 3180ին»:

— «Շատ ձիշդ ըսիր: Այդ չափը՝ արեգակնային դրութեան վերջին ծանօթ մոլորակին ոլորտին կէս տրամագիծն է. այսու ամենայնիւ այս 1308 տարին Նեպտոնական ութը տարին միայն կը ներկայացնէ»...:

Մէկ մոլորակէն միւսը՝ միշտ օրացոյցի դրութիւնը կը փոփոխի: Բայց սակայն նեպտոնական մէկ տարին, իրեն բնակչաց համար աւելի երկայն չէ քան ձեր մէկ տարին ձեզի համար: Բացարձակ

աեսակէտով, ոչ-մարմնացեալ Ոգիի մը համար, այդ երկու երկայնութիւնները ոչինչ են և իրենց անգոյութեան մէջ հաւասար են:

Ժամանակը՝ նիւթական մարմնոց պարբերական շարժումէն կ'արատազրուի և փոփոխութեան ենթակայ, նիւթական մարմիններն են միայն, որ անոր ենթակայ կրլան: Ուժերը, նիւթէն անկախ իրական էութիւնները (entité), որք կանգուն կը պահեն ծանրութիւնը, այս ամենքը գրեթէ անկախ են ժամանակի ազդեցութենէն. վասն զի այնպիսի արագութեամբ կը փոխանցուին անոնք որ յանկարծական կրնան սեպուիլ: Մարդուս հագին թէպէտ պարփակուած է ծորանաւոր (fluidique) նիւթէ մը, որ երկրի վրայ, հոգոյն և մարմնոյն մինչեւ անհրատեշտ յօդակապը կը կազմէ, որ երկրաւոր մարմնոյն մահուընէն ետքը, վերապրելով կառչած կը մնայ հագիկ սն մեցասարբին (monade). հոգին, կըսեմ, միջոցին մէջ կրնայ մէկ տեղէ միւսը փոխադրուիլ, լուսնոյ և երեքտրականութեան արագութենէն աւելի մեծ վազքով, ըսելու համար, յանկարծակի:

— «Ո՛վ Ոգի, քանի որ հոգին կրնայ ճամբորդել այդքան արագութեամբ, պատճառն ի՞նչ է ուրեմն որ այդքան դարբը դրիք աստեղական տիեզերաց սահմաններէն գալու համար:»

— «Կրնայի այդ անցքը քանի մի աւուր մէջ ալ կատարել, պատասխանեց Ոգին բարեսրտութեամբ, բայց կը կրկնեմ, օր կամ դար՝ Ոգւոյ մը համար, երկայնութեամբ չեն տարբերիր. և թէ աւելի ժամանակ մը դրած չեղայ և չէի ըլլար, եթէ

նոյն իսկ յանկարծ եկած ըլլայի՝ նախագոյ Հոգին՝ տարիք չունի մարմնանալու վայրկեանին, նոյնպէս տարիք չունի երբ կեանքը կը դադրի, և պարզապէս երկրային պատեանէն դուրս կելլէ: Դարձեալ տարիք չունի, երբ վերստին կը մարմնանայ, ըլլայ երկրից վրայ, ըլլայ ուրիշ մոլորակի մը վրայ: Յաւիտեանս չծերանար. դարերու վաղքը՝ նուազ հետք մը կը ձգէ անոր վրայ, քան մաքուր անձրեւաց առատութիւնը ձերմակ մարմարեայ արձանի մը ուսերուն վրայ:

Բայց միեւնոյնը չէ շնչաւոր մամնոց համար, հիւլէներու բազաղրութեանց, մասնիկներու միացման, նիւթական աշխարհաց և բոլոր աստղաց համար, որ նիւթական տիեզերքը կը ձեւացընեն: Ժամանակ ըսուած բանը աշխարհներուն համար է և այն ալ իրենցմով կը գոյանայ: Արեւները գիշեր չունին, մշտնջենական ցերեկ մը կը վայելեն, արդէն այս վիճակը քիչ շատ յաւիտեանակամութեան պայմաններուն կը մերձենայ, բայց անոնք գլորումներ և ջերմութեան տարբերութիւններ և այնպիսի փոփոխումներ ունին, որ իրենց ժամանակի չափերը կը հայթայթեն թէպէտե զանդադ՝ բայց իրական: Անոնք մշտապես չեն, այլ կը ձերանան և կը մեռնին ալ: Մոլորակային աշխարհները, ցրեկ և գիշեր, ամիսներ, եղանակներ և տարիներ ունին:

Զիրենք թուցընող շարժումներն են, որ իրենց զանազան օրացոյցները կը կազմեն, բաժնելով, Երկրին համար, տարին 365 օրուան, որով կը չափուին ինչ որ կը կատարուի հոն. — Լուսնի ժա-

գին համար տարին 10400 օր, Երեւակին համար 25,421 օր. իսկ Արեւուն և իր մոլորակային դուրսութեան ամբողջութեանը համար ալ ձեր 200,000 տարիէն աւելին յատկացնելով: Ժամանակաւ աստղերը իրենց տեղերը կը փոխեն և համաստեղութիւնները կը տարածուին և ամբողջ դուրսիւններ կը քակտուին. մոլորակներ կան, որ կործանմամբ կը փոշիանան և Արեւներ նսեմացած կը շիջանին: Ուրեմն ժամանակը այսինքն շարժումը նիւթական մարմնոց համար միայն գոյութիւն ունի, — Բացարձակ տեսակէտով ժամանակը գոյութիւն չունի. զի, վճիտ միջոցին մէջ, երկնային մարմնոց համար ո՛չ ժամանակ կայ և ո՛չ ալ չափ: Նմանապէս Ոգին ալ ժամանակի ենթակայ չէ, և անի՛ միայն երկնից, դարաւոր ժամացոյցն եղող, մոլորակային շարժումներով է որ կը չափէ: Որով 138 Երկիրոն դարերը, որ իմ աստղային ճամբորդութիւնս ընելու ծառայեցին, ինձի համար նիւթական աշխարհաց մէջ հաշուածին պէս չեն սեպւել, և թէ ճամբայ կլլալէս ի վեր աւելի ծերացած չեմ: Ահա՛ այս է մեծ և գլխաւոր սկզբունքը, որուն վրայ քու մասնաւոր ուշադրութիւնդ կը հրաւիրեմ: Նիւթական տիեզերքը, փոփոխական բնակարանն է Ոգիներուն օրք չին ծերանար:

Ոգւոյ մը կենացը մէջ, կամ աւելի ճիշտը խօսելու համար, Ոգւոյ մը մշտնջենաւոր կեանքին մէկ փուլի (phase) ժամանակամիջոցին մէջ, Երկրիք նման, նոյն իսկ Երեւակի կամ Լուսնի թի կարեւորութեամբ աշխարհ մը կընայ ծնանիլ, ապրիլ և մեռնիլ, կընայ մարդկութիւն մը երեւան

գալ, և անոր ամբողջ պատմութիւնը կատարուիլ, քաղաքականանալ և հասնիլ իր գաղափրականէտին և անհետանալ: մինչդեռ մէն մի Ոգի, որ հոն ընկած էր, բազմիցս վերստին ծնանելով նոյն մուրակին վրայ և մէկ մուրակէ միւսը անցնելով, նոյն իսկ միջոցին մէջ հանգչելով, անվթար կը մընայ առանց ծերանալու:

Ստեղծագործութեան մէջ սրոշակի երկու տեսակ աշխարհ կայ. Ա. Հոգեկան աշխարհ, որուն համար նիւթական արայմանները, ինչպէս ժամանակ, միջոց, զանգուած, ծանրութիւն, խտութիւն, գոյն ըսուած բաները գոյութիւն չունին, այլ հոն կ'իշխեն արդարութիւն, ճշմարտութիւն, բարւոյն և գեղեցիկն սկզբունքները, որք յաւելտակից են Աստուծոյ: Բ. Նիւթական աշխարհը, որուն համար, ո՛չ բարի կայ և ո՛չ չար, ո՛չ արդարութիւն և ո՛չ ալ անարդարութիւն, ո՛չ գեղեցիկ, ո՛չ ալ տգեղ, այլ նիւթական իրականութեան սկզբանց, ժամանակի, միջոցի, չափակցութեան, ծանրութեան և լին և լին վրայ կը հիմնուի:»

— Այս դասակարգութիւնը լսելով, «Ո՛վ Ռարբի, պատասխանեցի, եթէ բնական և նիւթական աշխարհին տարբերը այդքան բացարձակապէս օտար են հոգեկան աշխարհին, ի՞նչպէս կըլլայ որ ախեղերքին վրայ ծանօթութիւն ունին, աշխարհները կը տեսնեն, կը դիտեն և մէկէն միւսը կը ճամբորդեն, նոյնպէս ինչպէ՞ս կըլլայ որ մարմնացման ժամանակամիջոցին մէջ ալ, արտաքին ախեղերքը կըմբռնեն:»

— «Միջնորդ եզոզ սկզբնատարրերով, պա-

տասխանեց անտեսանելին, այս միջնորդ սկզբնատարրերը ուժերն են, ինչպէս ձգողութիւն, լոյս. ջերմութիւն և ելեքրականութիւն:

Նոյն իսկ մարմնացած Ոգին, նիւթին վրայ չկրնար ուղղակի ազդեցութիւն ունենալ: Եթէ քու հոգիդ զբաղի, աստղաբաշխութեամբ, բնագիտութեամբ, տարբաբանութեամբ և վերջապէս դրական գիտութիւններով, գերբնական ազդեցութեամբ չէ որ կզբաղի, այլ այդ միջնորդ ուժերուն շնորհիւն է:

Միւս կողմանէ, քու մարմինդ ալ, նոյնպէս չկրնար գործել առանց այդ ուժերուն: Այդ զօրութիւնները ախեղերաց ներդոյացութիւնն (substratum) են, որ կան առ հասարակ. ախեղերապէս, համատարած բոլոր միջոցը լեցնելով, ուր հիւլէները կը լսգան: Կտոր մը երկաթը, մարմարը և կամ հողը, մասնիկ մը ջուրը, օդը, թթուածինը և ջրածինը ձեւացնող հիւլէները, տեսնուածին պէս, իրարու հետ հաստատուն կերպով զօղուած են, ինչպէս մոլորակները և բոլոր ախեղերքի աշխարհները: Բացարձակ հաստատուն բան չկայ, այլ յարբերական, ահագին անջրպեաներ և միջոցներ կան ամեն մարմնոց կազմութեան հիւլիներուն միջև, ըլլա՛ն կենդանական, ըլլա՛ն անկենդան, այնքան ճշմարիտ է այս որ, օրինակի համար, ջերմութիւնը, կը հեռացընէ, կը մերձեցընէ, կ'ուռեցընէ կամ կը խտացընէ անոնց զանգուածները, որով կը ձեւանան առերեւոյթ հաստատ մարմիններ, հեղուկներ և կազեր. այսինքն, մի և նոյն նիւթին երեք այլ և այլ վիճակները, որոնք մի միայն

ջերմացուցիչ ուժին արտադրութիւններն են :

Երբ աչք մը , առարկայի մը հիւլէական (atomique) կազմուածքը կը զննէ , չկրնար նաեւ այդ առարկայն ամբողջապէս ընդգրկել իր տեսութեանը մէջ , իր տեսութիւնը հոն կընկղմի : Այսպէս ալ դուք , ձեր արեւելքին հիւլէները միայն կը տեսնէք , պէտք է շատ և շատ հեռուէն նայիլ , արեւելքի մը , կամ աստեղակոյտի մը , անոր որոշեալ ձեւին ծանօթանալու և դայն բմբռնելու համար :

Արդ ուրեմն , օրինակի համար , երբ լուսոյ ճառագայթ մը կ'ընդունիս , այդ ճառագայթը ակնակապիճիդ նոյն իսկ քու զգայարանքիդ կազմութենէն ներս կը թափանցէ , ջղին վրայ ազդելու համար , ան ոչ մի զգացում չփոխանցեր , եթէ կեանքը ոչնչացած է . վասն զի Հոգիդ ներկայ չէ , արուած ցնցումը մեկնելու և լոտուսը թրթումանց որք տեսողութեան ջղին միջոցաւ կը թափանցուին , իմաստը բացատրելու : Տեսնուած առարկային և քու աչացդ միջեւ միջնորդ ազդակ ուժ մը կայ , այն ալ այս պարագայիս մէջ լոյսն է , տոանց որու , քու հոգիդ չէր կրնար յարաբերութեան մանել առարկային հետ :

Ձեր արդի ունեցած յօրինուածութեան պէտք չկայ այս դործը կատարելու , լոյսը , ինչպէս նաեւ ջերմութիւնը , ելեքարականութիւնը և ուրիշ ձեղի անձանօթ ուժերը , որոնք շարժմամբ և կամ ծածանմամբ է որ կը փոխանցուին , քու հոգիդ կըրնալ զանոնք ընդունիլ , առանց արդի զգայարանացդ պէտք ունենալու :

Տեսնելու համար՝ աչքի պէտք չկայ , աչքէ

տարբեր ուրիշ զգայարանք մը կրնայ անոր տեղը բռնել , և այդ զգայարանքը կրնայ՝ օրինակի համար , զգայուն ըլլալ ընդունելու դանդաղ վեհերը (onde)՝ որով հոգին ջերմութիւնը կ'զգայ և կամ կարող կ'ըլլայ արագ վեհերը ընդունելու՝ այն ժամանակ տարրարանական ազդեցութիւնը կը տեսնէ , և այսպէսով Հոգին՝ մերձաւորագոյն գազափար մը կ'ունենայ անձանօթ էութեանց մէկ մասին՝ վասն զի ձեր վիճակին մէջ՝ զանոնք զնահատելու զգայարանք չունիք : Անտեսանելի աշխարհի մը միջալայրին մէջ կ'ապրիք դուք , յորում Ոգիները ձերինէն տարբեր զգայարանքներով օժտեալ՝ անհամար թիւով իրականութիւններ կը տեսնեն , որոնցմէ դուք չէք կրնար ծանօթութիւն ունենալ :

Արդ ուրեմն արեւելքած մէջ կան .
Ա. Նիւրի տարրը՝ որ միջոցին մէջ որոշ պայմաններու կը հնազանդի , ամենափոքր հիւլէներու բաժնուած , մեծութեամբ և զանգուածով անփոփոխ մնալով : Բ. Ծարժուցիկ (dynamique) տարրը՝ որ ընդհակառակն որոշ պայմաններու չը հպատակիր : Գ. կենսունակ տարրը (animique) , Հոգին , միջոցին մէջ իսկապէս անհատականացած և նիւթին հակառակը ըլլալով , որոշ սահմանի և ձեւի ամեն գազափարէ զերծ է :

— «Որ Ոգիդ անձանօթ , որ հետս կը լսօսիս , ս'ի որ ալ ըլլաս , յարգանօք ունկնդիր եղայ քեզի , երջանիկ եմ որ այդ ամբողջ կազմակերպութիւնը կըցայ հասկընալ և բմբռնելի : Տեսայ աստղերը և հիւլէները , տեսայ զանոնք բոնող ուժերը որ կը կառավարեն կշռելի մարմինները . տեսայ Ոգիները՝ որ աշխարհաց և կամ միջո-

ցին մէջ կը մնան : Տիեզերքը՝ նոր լուսաւորութեամբ մը պարզուեցաւ աչացս առջեւ, սնոր վեհութեան և գեղեցկութեանը վերահասու եղայ, բայց զԱստուած ցոյց չտուիր ինձ» :

— «Այդ բանը անկարելի է, կրկնեց Ոգին, նոյն իսկ ոգիներուն անգամ անհնար է գտնել անսահման էակը : Մինչև հիմայ ձեզի ստորեցուցած են մարդու նմանութեամբ աստուած մը պաշտել և յանդգնօրէն ուրացած՝ բնութեան Արարիչին գոյութիւնը, քանզի չէին ճանչնար դանի :

Ո՛չ պաշտօնական աստուածարանութիւնն վարդապետութիւնը և ո՛չ ալ ուրացող անաստուածութիւնը ճշմարիտ է :

Աստուած նոյնքան ներկայ է տիեզերաց ամեն մի կէտին վրայ՝ որքան ներկայ է Երկրի վրայ, կամ աւելի ճշգրտութեամբ խօսելու համար, ո՛չ մի տեղ այնքան տեսանելի է քան աստ : Անհունութեան սահմանաց ո՛չ մի կէտին վրայ, չկայ որոշ տեղ մը, շափեղայտվ և գոհարեղէնով զարգարուած, ուր ԲԱՐՁՐԵԼՈՅՆ աթոռը հաստատուած ըլլայ . միջնադարեան հրեզէն Երկինքը գոյութիւն չունի, ինչպէս յունական Ողիմպոսը՝ իսկ Մահմէտին արքայութիւնը, միմիայն անոր տաք գլուխ յաջորդաց երևակայութեանը մէջ փայլած է : Պուտաայի եօթնայարկ երկինքը նոյնքան գոյութիւն չունի, որքան Չինական և Ճաբոնական ուրուատեսիլ նկարներուն առած գագափարը : Դէմ յանդիման զԱստուած տեսնել բացատրութիւնը, պարզապէս խորհրդուոր նշանակ մըն է : Հրեշտակային և փառաւորեալ մարմնոյ աչքերն անգամ այդ անտեսանելի Անճաւորութիւնը չեն կրնար

վայելել և սքանչանալ : Երկինք ըստածը գոյութիւն չունի, և աստեղային միջոցը անհուն և անսահման է : ԱՍՏՈՒԱԾ անխառն, անապակ, վճիտ Ոգի մըն է . կամ աւելի լաւ՝ ինքնագիտակցութեան և ամբողջ տիեզերաց մէն մի յանհունս փոքր քանակութեան, միակ անապակ պարզ ՈԳԻՆ է . ԱՆՃԱՆԱՐՈՒՔԻՆ մը, բայց առանց ձեւի, անսահման և յաւիտենական . այսինքն առանց չափի, անվախճան, որքան իրապէս ներկայ աստ ի Բարիզ ուր քեզի հետ կը խօսիմ, նոյնքան ներկայ ամենափայլուն աստեղաց վրայ . որքան զործող աշխարհիդ բնութեան աշխատութեանց մէջ, նոյնքան քարձրագոյն հոգեկան գունտերու սքանչելի յայտնութեանց մէջ :

Անսահման էԱԿ . պատճառ պատճառաց, սկզբնապատճառ ամենայն էութեանց, բարութիւնն իսկ, նեցուկ տիեզերաց, բացարձակ ինքնիշխան . յաւիտենական և անսահման էակը՝ արդէն իսկ անխառնալի և անըմբռնելի է ձեզի համար, ինչպէս և հնձ ու բոլոր էութեանց :

Իւր գոյութիւնը աներկբայելի է, վասն զի առանց Անոր՝ կարելի չէ բացատրել արարչագործութեան մէջ իմացականութիւնը, մաթէմատիքական ուսմանց (որ մարդիկ չհնարեցին, այլ գտան), մտաւորական և բարոյական ճշմարտութեանց գոյութիւնը :

Բայց ամեն բաներու հեղինակն ու գերագոյն Դատաւորը մեր մտաց յղացումէն գերիվեր է : Արդէն կ'ըմբռնենք թէ՛ իրեն համար, ոչ մամուշակ կայ և ո՛չ ալ միջոց, ամեն բան միանգամայն

կը տեսնէ: Աստեղագիտութիւնը սորվեցուց քեզի թէ լոյսը՝ որ բոլոր արեւներէն և մոլորակներէն կը ցոլանայ, անոնց հին պատմութիւնը միջոցին մէջ կը տանի, այնպէս որ՝ Երկրէդ հարիւր տարեառաջ ցորացող լուսոյ ճառագայթի մը, այսօր հասած կէտին վրայ եթէ գտնուիս, այդ տարւոյն մէջի և բնակչաց վիճակը կը տեսնես և այնպէս ալ բոլոր անցելոյն համար՝ հետզհետէ բաւականաչափ հեռանալով անկից. նոյնպէս ալ բոլոր միւս աշխարհաց համար, այդ ամեն զէպքերը մնայուն կ'ըլլան անհունութեան մէջ և յԱռաւուռ:

Արդ, կրնանք նաև ըմբռնել թէ՛ ապագան արիւն համար, ներկայ է ինչպէս անցեալը, վասն զի այն զէպքերն. որ հետզհետէ սեղի պիտի ունենան, արդէն նոյնքան տիեզերաց արդի վիճակին մէջ ամփոփուած են, որքան անցեալը, իւր արդեանցը մէջ ներկայ է հոն:

Բայց հետամուտ ըլլալ, հասկընալու համար Անոր ինքնագոյ բնութիւնը և անսահման էակին գործելակերպը ըմբռնել՝ աւելորդ և կատարեալ ամուլ աշխատութիւն մը եղած կ'ըլլայ:

Զաւա՛կս, այլ եւս, հոգիդ ծանօթացաւ և զգաց միջոցիմ անսահմանութեան էութիւնը. արդեօք ճշտապէս հասկցա՞ւ նաև տեղողութեան անսահմանութիւնը, կրնա՞ս երեւակայել բաւականապէս, յաւիտեականութիւն բառին գաղափարային վեհութիւնը:»

— Ինձ համար, պատասխանեցի, անվերջ տեղողութիւնը աւելի դժուար է երեւակայել քան՝ անվերջ միջոցը. զիւրաւ կ'ենդադրեմ անհունութեան

մէջ՝ հասած ըլլալ երեւակայեալ սահմանի մը առաջ և անկից անդին ալ երեւակայել աւելի հեռուոր սահման մը. հասնելով դարձեալ հոն եւս, կրկին ուրիշ հեռուոր սահման մը ենթադրել և անկից անդին ալ դարձեալ միջոցը և այսպէս հետըզհետէ առանց համեմուտ՝ ոչ մի ուղղութեամբ, ասիմանի մը որ գոյութիւն չունի: Բայց կը խոստովանիմ թէ՛ անվերջանալի ժամանակը՝ կամ թէ աւելի լաւ, անսահման յաւիտեականութիւնը զարմացուէս աւելի զիս կը սարսափեցընէ, այնպէս որ՝ միտքս հազիւ թէ կարող է այդ խնդրոյն վրայ մտածել:»

— «Միջոցին մէջ, միշտ ընկրկող սահմանի մը գաղափարը, կրկնեց Ոգին, կրնաս յաւիտեականութեան պարագային ալ պատշաճեցընել. ինչ որ ալ ըլլայ երեւակայած ժամանակիդ տեղողութիւնը, միշտ կրնաս ենթադրել թէ՛ հասած նոն հոն և ըստուգել թէ՛ այդ անցած ժամանակէն վերջ, չես կրնար տեղողութիւնը վերջացած սեպել և ժամանակը դարձեալ միշտ պիտի ընթանայ: Տեսնելով աւելի հեռուն այդ երեւակայեալ սահմանը, անկից վերջն ալ դարձեալ ժամանակ մը կայ և այսպէս հետզհետէ, առանց կարելի ըլլալու վերջ մը գտնել: Բայց աղէկ մտածէ. այս բաղդատութիւնները, մի միայն գաղափարները աւելի զգալի ընելու համար են, վասն զի իրականապէս անհունութիւնը ինչպէս յաւիտեականութիւնը չափի ենթակայ չեն:»

Անսկիզբն, անվախճան և անչափ յաւիտեականութեան մէջ՝ նիւթական տիեզերքը, իւր շարժումներովը չափակցութիւն և ժամանակ կ'ար-

տաղըէ, բայց այդ չափերը ինքնին, բացարձակ բաներ մը չեն: Եթէ Երկիրը երկու անգամ կամ հարիւր անգամ աւելի կամաց դառնայ՝ օրերը երկու կամ հարիւր անգամ աւելի երկայն կ'ըլլան, բայց ձեզի համար միեւնոյն բանը կ'ըլլայ: Եթէ Երկիրը հարիւր անգամ, հազար անգամ աւելի փոքր ըլլար, ձեր շարժումը և ձեր հասակը նոյնքան փոքր ըլլային, ձեզի համար միեւնոյն բանը պիտի ըլլար, մեզրին երկայնութիւնը դարձեալ Երկրիդ միջօրէական շրջանակին քառորդին տասը միլիոներորդ մասը պիտի ըլլար. աւարկաները՝ դարձեալ միեւնոյն անկեան տակ պիտի աննէլիք ելն ևլն: Այն ամեն գաղափարները՝ զորս մինչեւ հիմայ իբր բացարձակ կը նկատելիր, պարզապէս ձեր ապականացու Երկրին կը վերաբերին:

Ոգիները՝ անշարժ յախտենականութեան մէջ կը մնան և նիւթական իրերը կ'անցնին:

Բայց ահա արշալոյսին նախաշաւիղն յայտնուեցաւ (1), ժամ է արդ, որ իմ թոխչքս առնելով, շարունակեմ երկնային ճամբորդութիւնս: Ըսի քեզի թէ՝ տիեզերքը մէկ ծայրէն միւսը կը թափանցեմ և թէ փոքր ինչ հոս կանդ առնելէ վերջ՝ պիտի շարունակեմ ճամբաս դէպի Հայկ համաստեղութեան ընդդիմակաց՝ Օձակալ (ophiuchus) համաստեղութիւնը: Վերջը պիտի վերադառնամ, դարձեալ հոս և անկից ալ դէպի նախկին չուկէսս:

(1) Ոգին այս բանախօսութիւնը գիշեր ժամանակ կատարած է եւ առաւօտեան դէմ կ'ուզէ վերջ տալ:

Երբ վերադառնամ, երկնից այն թաղին մէջ, ուր Արեգակնային դուրբութիւնը կը տատանի, երբ իմ աստեղային ուղեւորութիւնս զիս հոս, այս հանգրուանը վերադարձնէ, ուր այսօր ժամանակ մը կանդ առի, այս հանգրուանը ալ եւս գոյութիւն չպիտի ունենայ»:

«Հիմայ՝ երկնային գնացքս կ'ուղղեմ դէպի ձեր տեսանելի տիեզերքին սահմանները, և դեռ այդքան ճանապարհ ունիմ ընելիք, որչափ որ ըրի մինչեւ հոս զալու համար, այսինքն ըսել կ'ուզեմ թէ՝ իմ ճանբորդութեանս նպատակին պիտի հասնիմ մերձաւորապէս, 438 երկմիլիոն դար վերջը, միշտ շարունակելով թոխչքս, միեւնոյն անփոփոխ, ժամը 100 քիլոմէրը արագութեամբ»:

Միաք ունիմ 100 դար հոն մնալու, մէկ նոր մարդկութեան մը կազմութեանը առաջնորդելու համար, որ կը յուսամ թէ պատուով պիտի ժառանգէ միջոցին այդ գաւառը: Յետոյ ուղիղ գիծով պիտի գամ, ոչ միայն հոս, այլ մինչեւ մեկնած կէսս:

«Արդ երբ հոսկից անցնիմ և այդ 277,380,789,300 դար վերջը, այդ ժամանակին, Երկիրը ի չիք եղած պիտի ըլլայ»:

«Այո՛, այդ գեղեցիկ մոլորակը, այսօր այդքան կենդանի, այդքան ճառայթարձակ կայտառութեամբ գործող, այդքան աղմկալից և հարուստ, այդ մոլորակը՝ որուն մակերեւոյթին վրայ սերունդերը արագաբար իրարու կը յաջորդեն, այո՛, այդ մոլորակը մեռած պիտի ըլլայ և ստուգի՛ւ մեռած. ա՛լ աւելին կայ, աւեր և քանդ»:

Ինչպէս որ իր ծոցին մէջ կը թաղուցանէ իր ծագման տարրերը և թուականները, նոյնպէս իր անկման և վերջաւորութեան ծիլը կը պարունակէ :

Ո՛չ միայն ինքը, այլ բոլոր իր ընկերակիցները • իր կրտսերը և իրեն շատ նմանող Արուսեակը, որ ներկայիս հզակտան մարդկութիւն մը ունի • աւրագընթաց ֆայլածուն • Հրատը, իր հետաքրքրաշարժ աշխարհագրական կերպարանովը • վեհ գնացքով՝ ազնուական Լուսնթագը, ութը արբանեակներով և երեք մանեկաւ Նրեւակը • դանդաղ և պաակառելի Ուրանոսը և Նեպտոնը, որոնց տարին, դարերէ կը կազմուի, այս ամեն աշխարհները մեռած պիտի ըլլան : Ի՞նչ կըսեմ . . . : Բոլորն ալ տաքութիւննին կորսնցուցած, ջուր, օդ, հեղուկ, կազ, յարակցութիւն, մասնկային ձգտութիւն, ամեն կենակցութեան տարր էութեանց և կեանք, ամեն ինչ կորսուած պիտի ըլլան, և Արեւուն արկարացած ճառագայթից՝ մի միայն ստուոյցներ և լերկ ժայռեր ցոյց տալով, իբր լսին անապատներ, ախուր միջոցին մէջ պիտի գլորին : »

«Մեռէորայք, հողմերը, անձրևները հարթած պիտի ըլլան լեռները և դաշտերուն վրայ տարածւած, և ծովերու յատակները բարձրացնելով, Ովկիանոսի մակերևույթը ընդարձակած՝ որ արդէն երեք չորրորդը կը ծածկէ, մինչև որ ամբողջովին գրաւէ» :

«Արեւուն բիծերը պիտի աւելնան և այդ հագին մարմինը պիտի պաղի, միջոցին մէջ յարատեւ ցորացումովը : Նախ այդ բիծերը պիտի մեծնան երկու գօտիանման գիծերու վերածուելով,

անոր հասարակածին երկու կողմը պիտի բռնեն • մեռէորարանները պիտի դիտեն անոր տաքութեան և լոյսին զգալի նուազումը : Միլիոնաւոր տարիներու կուտակմամբ, ցրտանայը այնքան պիտի ըլլայ որ մտրակային կազմակերպութիւնը պիտի վտանգուի և այդ ցուրտին մէջ ապրելու կարող նոր էակաց ծնունդ պիտի տայ : Բայց ժամանակ մը պիտի գայ, ուր Արեւը պիտի կարմրի, յետոյ պիտի նսեմանայ և վերջապէս պիտի զաղրի կեդրոն ըլլալէ, այն ընտանեաց, որուն շատ ժամանակներ, մաքնիտականութիւն և կեանք պարգեւած էր և այլ ևս զժգոյն և ազիտաբեր լոյս մը պիտի արձակէ : Օրերը գիշերուան պիտի վերածւին, այլ ևս ո՛չ գարուն և ո՛չ ալ ամառ պիտի ըլլայ : Իբր ծանրաբայ և խաւար աշխարհներ, իբր սեւ գնտակներ, պիտի գլորին ուրիշ սեւ գնտակներու շուրջը, այս դրութեան համար տիեզերական գիշերը պիտի տիրէ : Նրկիբը, լուսինը, մուրակները միջոցին անհունութեան մէջ պիտի տանին իրենց վերջին բնակչաց գերեզմանները :

«Յանժամ տիեզերաց ուրիշ շատ մը արեւները, որ այսօր վայրեն աստղեր են, ձեր Նրկրին վիճակը պիտի առնեն, մինչդեռ ուրիշներ պիտի սկսին վառիլ :

Գարձեալ այսօր տեսնուող աստղերը տեղափոխուած պիտի ըլլան և համաստեղութիւնները ձեւափոխուած : Մեծ Արջին կօթը աստղերը, նոյն իսկ առանց մտրելու, սոյլածեւ մը չպիտի կազմեն • հիւսիսային Սայլակը(1) խախտուի պիտի և անոր

(1) Հիւսիսային Սայլակ կ'ըսուի այն համաս-

ասաղերուն յատուկ շարժմանցը հետեւանօք, իրարմէ պիտի հեռանան, այնպէս որ նախ պիտի ձեւանայ՝ քաբէգ մը, յետոյ անազին եռանկիւն մը, վերջապէս աձեւ բեկեալ գիծ մը: Հարաւային գեղեցիկ համաստեղութիւնը, Հայկը, ժամանակի քայքայումէ մը պիտի ազդուի, երեք թագաւորները⁽²⁾ իրարմէ պիտի անջատուին, Ռիկէլը⁽³⁾ պիտի նսեմանայ, Ալտեպարանը պիտի փախչի Յօթնաստեղանէն (Pleiades=Եէտիքարտաշար), Շնիկը իր կարեւորութիւնը կորուսած պիտի ըլլայ, հագնի (Hercule) ասաղերը առաջին կարգի ասաղեր պիտի ձեւանան:

Երկնակամարը անձանաչելի վիճակ մը պիտի առնէ. և Երկիրը խարխարուն, չորցած, քայքայեալ, կատր կատր պիտի թռչի իր սլորան երկայնքը, որք պիտի շարունակեն վազել մեռած Արեւուն շուրջը, իբր մանրիկ կմախքներ հսկայական կրմախքին բոլորակք. իբր երկնաքարեր, ամենելով հեաերնին, գիշերային մթնութեան մէջ, հնօրեայ բնակեալ երկրի մը մասունքը: Կարելի է որ ո-

սեղութիւնը որուն մեկ աստղը Հիւսիսային Աստղ կ'ըսուի, եւ Երկրիս առանցքը այդ աստղին ուղղուած է:

(2) Փառաւոր Հայկ համաստեղութեան մեջ երեք հաս կարգաւ շարուած աստղեր կան որ թագաւորք անուամբ յորջորջուած են եւ Հայկայ գօտի ալ կ'ըսուի:

(3) Հայկ համաստեղութեան ամենէն փայլուն աստղերէն մին է:

մանք՝ անդրաձգական (Hyperbolique) գիտաւորէ մը յափշտակուելով. տարուին ուրիշ դրութեան մը մէջ մանելու կամ անձանօթ մոլորակի մը վրայ իջնալու, որոնց բնակիչները՝ զանանք հաւաքեն իրենց թանգարանաց մէջ գնելու և տարրաբանական գործողութեան ենթարկեն՝ առանց գիտնալու և առանց վերահասու ըլլալու անոր պատմութեանը և ո՛չ ալ, թէ ո՞ր երկրէն ծագում առած են անոնք. ինչպէս դուք կը պահէք երկնաքարերը, առանց գուշակելու անոնց ծագման խորհրդաւոր զազանիքը

«Ահա՛ թէ, ինչ վիճակի մէջ պիտի դառուի Երկիրդ և իր բնակիչները, երբ նա իմ երկնային պաշտօնէս վերադառնամ:

Մարմինները ի հօդ դարձած պիտի ըլլան»:

Երբ Ոգին այս խօսակցութիւնը վերջացուց, ամբողջ մարմինս սարսուռ մը առաւ. . . . Ըմբռնեցի ըրած յայտնութեանց խորհրդաւորութիւնը որոնց ուշի ուշով ունկնդիր եղած էի:

Ապագան տեսայ, աստեղք տեղափոխուած, համաստեղութիւնք կազմալուծուած, արեգակնային դրութիւնը կործանած, Արեւը նսեմացած, Երկիրը՝ ուր ներկայիս հանդարտիկ մը կը բնակինք, ինքնին ոչնչացած, միջոցին մէջ ամեն ինչ իր արգի տեղէն խախտած: Զգացի որ այդ հեռանկարը ճշմարիտ էր, նկատելով որ՝ Ոգին այնպէս մը կը խօսէր այդ օտարտաի դարերու վրայ, որ կարծես թէ չէր զգար, ո՛չ ժամանակը և ո՛չ ալ ձերանալը: Արդ, սկսայ մտածել, ո՛վ ընթեր-

ցող, թէ, յառաջիկայ յաւիտենականութեան մէջ, մեր իւրաքանչիւրիս հոգին ի՞նչ պիտի ըլլայ և թէ նոյն իսկ ես, ի՞նչ պիտի ըլլամ այդ վախճանման ժամանակ... և երբ կայծակէ մը զարնուած՝ ինքնաբեր ճիչ մը արձակեցի, որ շատ ոքոջ կերպով իմ յեղակարծ անձկութիւնս կը մատնէր, ճիչ մը որ ի հարկէ ամենքնիս ալ պիտի հանէինք մի և նոյն կերպիւ... :

- «Հա՛պա ե՞ս... ի՞նչ պիտի ըլլամ...»
- «Հապա դո՞ւ բա՛րէ պատասխանեց Ոգին, դու ալ ինձի պէս, դու ալ անմահ ես, անջնջելի, անեղծ...»

— «Անջնջելի՞... անե՞ղծ, գոչեցի... կեանքիս մէջ առաջին անգամն է որ այդ շնորհաց օտարութի բարեքը զգացի: Բայց՝ օրինակի համար ո՞ւր պիտի ըլլամ ասկեց դար մը վերջը:

— Միջոցին մէջ... ո՛չ ոք ասկից կրնայ դուրս ելլել— յաւիտենականութիւնն է: Հաւանականաբար դարձեալ ձեր մոլորակին դրութեան մէջ պիտի մնաս:

- Հապա հազար տարի վե՛րջը:
- Պիտի շարունակես ապրիլ:
- «Հապա հարիւր հազար տարի վե՛րջը»:
- «Միշտ պիտի ապրիս: Ի հարկէ պիտի ճամբորդես, աստղաբաշխի մը համար անախորժ բան մը չէ կարծեմ»:

— «Ո՛վ Ոգի՛, խնդրեմ մի՛ կատակաբաններ քեզի ընտանի եղած իրաց վրայ: Բայց ես կը սուկամ քու ըսածներուդ վրայ... Է՛հ, ո՞ւր պիտի ըլլամ միլիոն մը տարիէն, յաւելցուցի դողալով»:

— «Պիտի շարունակես ապրիլ անհուն միջոցին մէջ, և այսպէս տասը միլիոն տարի, հարիւր միլիոն տարի, և հարիւր միլիոն տարիէն վերջը՝ այսօրուընէ աւելի տարեքստ չպիտի ըլլաս: Պիտի վերսկսիս ուրիշ հարիւր միլիոն տարիներ ապրիլ և այսպէս հետզհետէ շարունակարար»:

— «Առա՛նց մեռնելո՞ւ», գոչեցի, Ոգիին այդքան պարզ և դրական կեոպիւ յայտնած սոսկալի ճշմարտութիւններէն սարսափած... :

— «Ամբողջ յաւիտենականութեան համար միշտ անմահ և անեղծանելի մնալով: Ոչ մի արարած հոգի՛ ո՛չ կրնայ ծերանալ և ո՛չ ալ մեռնիլ: Ի միտ ա՛ռ, մի անգամ ընդ միշտ թէ միլիոնաւոր, միլեառ դա՛րեր յաւիտենականութեան մէջ ոչինչ են և անոնց լրանալէն վերջը նորէն կը վերսկսին իբր թէ այդ դարերը անցած չըլլային և թէ՛ քու գոյուութիւնդ յայնմհետէ անվերջ է»

— «Կեանք յաւիտենական»
 անվերջանալի կրկնեցի, կը ջանամ հասկընալ թայց ուղեղիս պայթիլը կ'ըզզամ գտնակիս մէջ
 Ա՛հ
 Եւ մեռած մարդու մը պէս տապալեցայ
 Բայց սակայն՝ ինձ այնպէս եկաւ որ, ձայն մը ինձ կը խօսէր. «Հանգիստ քուեր՝ Ոգիներուն համար « ալ, ինչպէս մարմնացելոց, գոյութիւն ունի: Աչք « խորհային ժամանակը աստղաբաշխական շար « ժուլմեքով է որ կը չափուի. իսկ անդրաշխարհ « հային յաւիտենականութիւնը չափ չունի և ոչ ո՞ք « կարող է զայն երկայն համարել»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՍՏԻՎՍՏ ԱՍՏՆԵՐ (ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏՐ)

Անունը	Տեղադրանքի համարը	Ատմամբ փոխյալ	Հեռավորության հարկը		Լույսի ցրվելից համար ժամանակ
			Մետր	Ամիս	
Փրոքսիմա (այժմ Յուշկա)	0'', 919	Ա	8,313,900,000	6	3
Կարկիտ	0'', 193	Ա	39,546,000,000	8	46
Ծնիկ աստղ	0'', 180	Ա	42,402,000,000	11	47
Վեկա	0'', 127	Ա	61,742,000,000	5	25
Արքղիւրիս	0'', 076	Բ	100,041,000,000	10	49
Հեռավորյն աստղ	0'', 046	Ա	170,392,000,000	8	71
Գափիլա	0'', 092	Գ	85,196,000,000	9	35
Վիշապի (կամեա)	0'', 153	Գ	59,000,000,000	3	24
Մեծ Արջի (տօլմա)					

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԵՋԵՐԻ ՄԱՐՄՆՈՅ ՉԱՓԵՐՈՒՆ



ԱՐԵՒԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մղոն (1)

Երկրիս արամագիծը	3.183
Օդայլին մթնոլորտին թանձրութիւնը	12
Միջին հեռավորութիւն Լուսնոյ	96.409
Փոքրագոյն հեռավորութ. Սրուսեակի	40.700.000
« « Հրատի	44.000.000
« « Փայլածուի	20.000.000
Միջին հեռավորութիւն Արեւու	37.000.000
Փոքրագոյն հեռավորութ. Լուսնի թաղի	446.250.000
« « Երեւակի	345.000.000
« « Ուրանոսի	666.000.000
« « Նեպտոնի	4.073.000.000
Հալլէյ գիսաւորին հեռակէտը	4.309.000.000
4844ի « «	45.387.800.000
4680ի « «	32.000.000.000

(1) Մեկ մղոնը չորս ֆլումկոր :

ՀԱՅԱՍՏԱՌԻՆ ԸՆԹԱԿԱԾ ԱՍՏՂԵՐ (ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏՐ)

Անունը	Տեղադրումները	Աստիճանի փայլը	Հեռավորությունը հարթ մերձ	Լայրիկը Կամեր ժամանակ		
				Տարի	Ամիս	
Փրփրաբեր (այլիա Յուշիա)		0", 919	Ա.	Ա.	6	3
Կարկի		0", 193	Ա.	Ա.	8	46
Շնիկ աստղը		0", 180	Ա.	Ա.	11	47
Վեկա		0", 127	Ա.	Ա.	5	25
Արքղիւրիս		0", 076	Բ.	Ա.	10	49
Հիւսիսային աստղը		0", 046	Ա.	Ա.	8	71
Գափիլա		0", 092	Գ.	Ա.	9	35
Վելապի (կամեա)		0", 153	Գ.	Ա.	3	24
Մեծ Արջի (եթեա)						

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏԻԵՋԵՐԻ ՄԱՐՄԵՆՈՅ ԶՄՓԵՐՈՒՆ



ԱՐԵՒԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	Մղոն (1)
Երկրի տրամագիծը	3.483
Օդային մթնոլորտին թանձրութիւնը	42
Միջին հեռավորութիւն Լուսնայ	96.409
Փոքրագոյն հեռավորութ. Սրբուհակի	40.700.000
« « Հրատի	44.000.000
« « Փայլածուր	20.000.000
Միջին հեռավորութիւն Արեւու	37.000.000
Փոքրագոյն հեռավորութ. Լուսնիթաղի	446.250.000
« « Երեւակի	345.000.000
« « Ուրանոսի	666.000.000
« « Նեպտունի	4.073.000.000
Հալլէյի գիսաստղին հեռակէտը	4.309.000.000
1814ի « «	45.387.800.000
1680ի « «	32.000.000.000

(1) Մեկ մղոնը չորս ֆիլոսֆոր :

ՀԱՄԱՏՈՒՆ ԸՆԹԱԴՍ ԱՍՏՆԵՐ (ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԻՐ)

Անունը	Տեղացան- ները	Ատտիճանի փայլի	Հեռաւորութիւն Նայար սիջն	Լային երկիր Նայար ժամանակ	
				Տարի	Ամիս
Փրփրեմ (այլա Յուշկա պարկի)	0'', 949	Ա.	8,313,900,000	6	3
Ճնիկ տաղը	0'', 193	Ա.	39,546,000,000	8	46
Վեկա	0'', 180	Ա.	42,402,000,000	11	47
Արքղիւրիս	0'', 127	Ա.	61,742,000,000	5	25
Հիւփրային տաղը	0'', 076	Բ.	100,041,000,000	10	49
Գափիլա	0'', 046	Ա.	170,392,000,000	8	71
Վէլչապի (կամոս)	0'', 092	Գ.	85,196,000,000	9	35
Մեծ Արջի (Կ.թա)	0'', 153	Գ.	59,000,000,000	3	24

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԵՂԵՐԻ ՄԱՐՄՆՈՑ ԶԱՓԵՐՈՒՆ



ԱՐԵՒԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Մղան (1)

Երկրիս տրամագիծը	3.483
Օդային մթնոլորտին թանձրութիւնը	42
Միջին հեռաւորութիւն Լուսնոյ	96.109
Փոքրագոյն հեռաւորութ. Սրուսեակի	10.700.000
« « Հրատի	44.000.000
« « Փայլածուի	20.000.000
Միջին հեռաւորութիւն Արեւու	37.000.000
Փոքրագոյն հեռաւորութ. Լուսնիթազի	446.250.000
« « Երեւակի	345.000.000
« « Ուրանոսի	666.000.000
« « Նեպտունի	1.073.000.000
Հալլէյ գիսաւորին հեռակէտը	4.309.000.000
1811ի « «	45.387.800.000
1680ի « «	32.000.000.000

(1) Մեկ մղանը չորս փլոմկոբ :

ՀԱՄԱՏԱՏՈՒՆ ԸՍՈՒՄ ԱՍՏՆԵՐ (ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏՐ)

Անունք	Տեղադրումներ	Ատման փայլ	Լային երկր չափեր	
			Տարբ	Ամիս
Փրփրաբան (այգա Յուշկա)	0'', 949	Ա	6	3
Կարկի	0'', 193	Ա	8	46
Շնիկ աստղ	0'', 180	Ա	11	47
Վեկա	0'', 127	Ա	5	25
Արքղիւրիս	0'', 076	Բ	10	49
Հեւոտային աստղ	0'', 046	Ա	8	71
Գափիլա	0'', 092	Գ	9	35
Վիշապի (կամմա)	0'', 153	Դ	3	24
Մեծ Արջի (եթիս)				

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՐՄՆՈՅ ԶԱՓԵՐՈՒՆ



ԱՐԵՒԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	Մզոն (1)
Երկրիս տրամագիծը	3.183
Օդային մթնոլորտին թանձրութիւնը	12
Միջին հեռաւորութիւն Լուսնոյ	96.409
Փոքրագոյն հեռաւորութ. Սրբուհակի	40.700.000
« « Հրատի	44.000.000
« « Փայլածուր	20.000.000
Միջին հեռաւորութիւն Արևու	37.000.000
Փոքրագոյն հեռաւորութ. Լուսնիթաղի	446.250.000
« « Երևակի	315.000.000
« « Ուրանոսի	666.000.000
« « Նեպտոնի	4.073.000.000
Հալլէյ գիսաւորին հեռակէտը	4.309.000.000
4811ի « «	15.387.800.000
4680ի « «	32.000.000.000

(1) Մեկ մղոնը չորս ֆիլովեդր :

Դեռ՝ այս առաղերը մեզի ամենեւնի մերձաւորագոյններէն քանի մը հատերն են, որոնց հեռաւորութիւնները կարելի է չափել: Բոլոր միւսները՝ որ միլիոնաւորներ են, անբազտասելիօրէն աւելի հեռուն կը գտնուին:

Այնպիսի տատղեր կան, որոնց յոյսը՝ մանրերկրորդի մէջ 75,000 մզոն անդադար արագութեամբ հանդերձ, մեզի հայրեր, հօգար, տասը հազար տարուան մէջ կը հասնին:

Կայսր, մեր մաս կազմած փիեղերքին (Միւրկաթին) մէկ ծայրէն միւսը թափանցելու համար զրեթէ 15,000 տարի կը դնէ: Իսկ միզամածներէն մեզի հասնելու համար, գոնէ 300 անգամ աւելի ժամանակ պէտք է. զուցէ հինգ միլիոն տարի:

Մարդս այս ճշմարտութեանց վրայ մտածելով, փիեղերաց մեծութեան, փառահեղութեան և անոր օրինացը վրայ՝ որոշ և վեհ գաղափար մը կ'ունենայ. նոյն ժամայն երկրային տարերաց բացարձակ ոչնչութեան, փրցունութեան և մարդկային խեղճութեան ու տառապանաց վրայ ալ արգահատանք կ'ունենայ:

Վ Ե Ր Զ





ՅՈՒՑԱԿ ՎՐԻՊԱԿԱՑ

Պրակ	Էջ	Տող	Վրիպակ	Ուղղիղ
1	Ե	7	ի ոմբէի	ի բոմբէի
2	20	4	ագէսը	ագէսը
2	22	10	երկնային	երկրային
2	29	17	անձնութիւնը	անձնաւորութ. ը
3	38	20	սարակերպութեամբ	սարակերպութեամբ
3	38	27	և	
4	52	12	հարաւային	հիւսիսային
4	53	11	անզազանութիւնը	տեղազանութիւնը
4	61	3	ո՛հ	ո՛հ
5	70	31	անսարանէս	զիտարանէս
5	75	15	կենդանախոյս	կեղբոնախոյս
5	75	16	չկեցընէ	չկեցընէր
5	77	10	աննջող	ննջող
6	81	9	Տընի-Օկի.-Ա.Ֆի	Տընի-Օկինւտա-Ա.Ֆի
10	148	22	73	72
10	151	19	չիրմին	չեմին
10	154	2	մերկ	մերձ
10	157	19	բլրկաց	բլրակաց
10	158	1	(արունակել	չարունակել
10	159	18	ունկցած	ունկցած
12	178	23	և բոլոր զիրքի	և բոլորաիրքի
12	185	12	իս	և
12	187	20	դատողաց	տատողաց
13	207	17	առջև	միջև

Պրակ	Էջ	Տող	Վ.րիպակ	Ուղիղ
15	226	2	բնանան	բնական
15	227	13	կլուսոյ	լուսոյ
15	240	9	նախնակին	նախնական
16	241	13	ժամանակէն	ժամանակէն է:
16	241	16	թողուած	թաղուած
16	242	5	Պոսիպոնի	Պոսիտոնի
16	245	1	ամարած	արարած
16	252	7	բսուած	սրուած
17	264	3	եկար	ակար
17	264	12	բոնուած	գոնուած
17	264	21	որնախապէս	նախապէս
17	265	25	հրազազան	հրաշազան
17	266	30	ձրի	ջրի
17	267	10	ծովին	թովիչ
17	270	30	ինքզին	ինքզինքն
17	271	17	ըերատ	թերատ
17	271	18	աներենակայելի	աներեւակայելի
18	273	28	երկ .)	երկրային օր-
18	276	2	րկիրս	երկիրս
18	277	9	ունր	ունի
18	278	5	այդ ու	այդու
19	290	13	Ս.	Ս.լ
19	291	30	պատասերոն	պատասերու
19	294	17	փանձրախիտ	թանձրախիտ
19	295	2	աղնուկական	աղնուական
19	295	10	լուգաներ	լուսաներ
19	295	10	զորովազութ	զորովազութ
19	296	27	զեղ —	զեղնազոյն
19	299	6	և	

Պրակ	Էջ	Տող	Վ.րիպակ	Ուղիղ
19	299	6		և
19	304	4	այր	այս
20	305	5	կան	
20	306	24	խփիս	Մեմփիս
20	309	15	գլխուորի	գլխուորը ¹
20	310	17	աւատանութեան	աւատականու-
20	311	10	×	+
20	311	12	տարի	մէկ տարի
20	311	17	անյիրաւի	ան , յիրաւի
20	312	29	կար	
20	314	16	կենդանային	կենդանիին
21	322	27	զաղտնամասը	զաղտնամեսը
21	334	18	գննես	քննես
21	335	30	lac des songes	lac des songes
22	341	14	կոթնած	կոթնած
22	347	5	(op iuehus)	(ophiuchus)
22	349	30	դուր	դուրս
22	350	18	ախեզերաց	
23	362	22	մեղի	մեծ է
23	366	15	ոլորտը	աստղը
24	375	19	են	չեն
24	381	17	ան	ես





80

ՍՈՒՐԲ ԵՆՐՄԸՆ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

« Ազգային գրադարան

NL0374618

❦ 10 10 ❦